N 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

N 30

ՅՈՒՂԱԲԵՐ

ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

30



61
Г-4Б
2/28
1545-ԱԿ
30

ԲԺՇԿԱՆԱՆՈՒԹԻՆ

ԲԱԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐՍ

Ինքնաջան աշխատասիրութեամբ ՊԱՐՈՆ ՄԻՔԱՅԷԼԻ ԲԷՍՏԷՆ Տէր Պետրոսեան Բժշկի Եգիպտական Բդեշխին, և յատուկ ծախիւք Հեղինակին տպագրեալ։

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Յորում այբբենական կարգաւ հաւաքեալ դնին բառք վերաբերեալք առ բժշկականութիւն։

1008
35969

2004

Ի ՎԷՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՄՈՒ

1822

61

ԲԱՌԱՐԱՆ

Անուանց զանազան ախտից, դեղորէից, բուսոց, հանքաց, հեղանիւթ ոգեաց, օդային, ցամաքային, և ջրային կեն-դանեաց ոմանց, և ս ուրեք ուրեք ա-նուանց անդամոց, նշանակեալ 'ի լա-տին, յիտալական, 'ի գաղղիական, յանգղիական, 'ի յունական, յարա-բացւոց, 'ի պարսկական, 'ի տաճկական, և 'ի հայ բարբառ, հանդերձ բա-ցայայտութեամբ նոցին:

Ա

Աբա. բառ իտալական. տե՛ս Աբիս:

Աբբէթիթուս քանիս: Է բառ լատինական. զոր իտալացիք՝ աբբէթիթօ քանինօ, կամ ֆամէ քանինա անուանեն. և յոյնք՝ պուլիմիա. և տաճիկք՝ էյ-նիհան, կամ ըստ ռամկաց՝ իթ իշտահը. և արաբա-ցիք՝ էքիալ կամ ապտ իլ պաթն, կամ նէֆս իլ գէլբ. և պարսկացիք՝ բուկուս՝ կամ բիւս, կամ ժիրէթ, և կամ շաքլիւլ. իսկ ըստ մեզ՝ շնքաղց: Է տեսակ իմն ախտի, որով ոք զգայ յար զքաղց անյա-գուրդ:

ԻԻՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

Աբբիս. տե՛ս աբեւում ։

+ Աբեւ, լտ։ էինիւսալէ, իտ։ սանկլիճ. գալ։ եաղան տօմուզու, տճ։ խնձոր ճէպէլի, արբ։ գհազի եաղանի, ալբ։ սխտորօս կամ՝ քաբուօս, յն։ և լատ մեզ՝ վարազ կամ կինճ, և կամ խոզ վայրենի ։ Է սեւ սակ մի քառոտանի կենդանւոյ՝ լատ ձևոյ և լատ մեծութեամբ նմանի հասարակ խոզի. որոյ վանն և կոչեցաւ անուն նորա. այլ սակաւ նորա առաւել կարծր է և խոշտաբերատ. գոյնն մազին կարմիր, կամ թաւալ. մորթին կարծր է յոյժ, ընդ որ գնտակ հրացանաց ոչ ներխին՝ եթէ ոչ հարցի ՚ի մօտոյ. առամունքն ամրագուռ՝ սրածայր՝ սուրալ և երկայն՝ իբր մի և կէս տանաջափ, որ և են գլխաւոր զէնք նորա ։ Բնութիւն է յոյժ զայրագին. և բազում ինչս հասուցանէ քնակչաց երկրին, պատառելով զանասունս նոցա, երբեմն նաև զմարդիկ՝ յորժամ գտանին յանտառս ։ Մի սուրս՝ եթէ չկայէ ծերացեալ, առաւել ախորժաճաշակ է քան զընտանեաց ։ Առամունքն լսեալ ՚ի փոշի մանրամասլ՝ լինին դեղ կլուացաւութեանց, մաղատախտան արլուն թքանոզաց, և հոսման հիւթոց գաղղևականն, զի է ձգօղ բնութեամբ ։ Ձաին՝ ՚ի 10 կշիռս ցորենոյ մինչև ց20 ։ Ճարպ սորա օգտաւէտ է ընդդէմ չղացաւութեանց, ոսկրացաւութեանց, երակացաւութեանց, յօդուածոցաւութեանց, ոտնատութեանց, ձեռնատութեանց, և թուլութեանց միջաց և չղայ, օծեալ տալսա զախտացեալ մասն մարմնոյ, և առեալ չփեալ առհասարակ, զի ճարպն այն ընդմտանէ ՚ի ծակուկս մորթոյ, որով և փարատէ. այլև զձմերուկն պատճառեալ ՚ի հարուածոյ՝ բուժէ ։ Իսկ սուրն ըստ ոմանց է դեալ ՚ի վերայ խոզից, այսինքն սրտաճոյկ՝ ապաքինէ ։

+ Աբէռնէնա, լտ։ աբէրթիլլօ, իտ։ աչքճը, տճ։ և ըստ մեզ՝ բացողական։ Ասի ամենաներուժ բացողական և թափանցիկ դեղոցէից, որք միանգամայն արձակեն և լուծանեն զնացիս մարմնոյ, ՚ի դուրս վանելով ՚ի միջանց ձանապարհէ, և՛ն. որպիսի են՝ ամենաերբ խարտեաշն երկաթոյ, գոյացուքնն գինւոյ, արքանս տուփլիքսաթօ, և՛ն ։

++ Աբխուզ, լտ։ աբբիս կամ շէլէռս, իտ։ էքէլօս կամ սէլինօն, յն։ աշ կամ սէլըռւն, գլ։ սոնլինճ, անգլ։ գէրֆա կամ գէրեբա, արբ։ գէռէյվէ, պր։ դէրեվինգ, տճ։ և ըստ մեզ՝ նեխուր կամ կարտս ։ Է

բոյս յազգէ խաւարտից ծանօթ ամենեցուն. որոյ արմատն օգուտ ընդդէմ վնասից թոքոց, և վարաւոյ պնդլարդեբութեան և զնքախտութեան, ևս ցրուէ զտոչնա՝ որ ՚ի կուրծս. զի և խթիչ և միզեցուցիչ բնութիւն. վասն որոյ կարգէ ՚ի դասս հինգ բացոտական արմատոց: Է նորա և այլ տեսակ կոչեցեալ ՚ի լատինացոց՝ աբեռում կուավէօլէնս, որ սովորաբար բուսանի ՚ի ձախճախուտ տեղիս. ըստ որոյ և իտալացիք՝ աբբիս բալուսիտուէ կոչեն. որոյ սերմն վոչնացուցեալ և տրբուցեալ, լինի դեղ ջրգողութեան, և վնքախտութեան. զի և խթիչ և միզեցուցիչ բնութիւն: Ճաչին ՚ի 20 ցորեննոյ մինչև ց60 կաւուրն, խառն ընդ շաքարի, և կամ ընդ այլ յարմարաւոր դեղոց կից:

Աբիա կամ աբէա, լտ: աբա կամ աբէ, իտ: ապէյլ, գալ: մէլնասա, կն: առը, տճ: զէնոյուռ կամ նահլ և կամ տասպուռ, արբ: և ըստ մեզ՝ մեղու: Է միջատ թևաւոր և խայթոցաւոր, ըստ մեծութեան՝ ոչնչ ասելի քան զմեծ ճանճ. ունի զբերան երկատոաձնատոր և զպատիճ միանգամայն. բերանովն հատաքէ զնիւթ մոմոյ, և պատճառն ծծէ զհիւթ մեղր ՚ի քաղցրահոտ ծաղկանց: Բնութիւն ժրաջան, մաքրասէր և ճարտարարուեստ: Բազումք հաստատեն՝ թէ տևէ սա մինչև ցեօթն ամ. զոր ըմբռնեալ արկանեն յիւղ ձիթապտղոյ, կամ ջրացուցեալ յարևուս լտեն ՚ի փոչի մանրամասլ, և լինի դեղ ընդդէմ հերաթափութեան, դոյզն ինչ օծեալով կամ ցանելով ևեթ զայնս:

Աբօբէնախա կամ բարաբէնախա, իտ: մօռպուս ռէբէնթինուս, լտ: ֆէլիճ, կամ ֆալիճ, արբ: նֆլիճ, պր: և ըստ մեզ՝ անդամալուծութեն, կամ անդամալոյծ գօսութեն. զորմէ տես հտ. ա. երես 222: տես և բարբէնախա:

Աբսէնթէմա, լտ, և յն: բսինթէմա, իտ: չխպան, տճ: տխումխուլ, արբ: չէթիւմ կամ պինաւէա, պր: և ըստ մեզ՝ խաղաւարտ, կամ պալար շարաւալից, որ սակս պատուհի անձանց վնճակելոյ խոնաւուտ բնութեն:

Աբսինթիտ: Է անուն ընդհանուր նչանակիչ դեղորէից, որք խափանեն զհոսուն արտաստուց յաչացն. որպիսի են ջուր ջզախոտոյ, արջասպն, Թուզիան, էուֆռասիան, և՝

Աբօֆլէկմաթիպօնթա. է անուն հասարակ նշանակիչ ամենայն փռնչացուցիչ, և սարսեցուցիչ դեղորէից, որպիսի են՝ էուֆօռպիում, և՝ ։

Աբօֆսէմաթիզմօ. է անուն ընդհանուր նշանակիչ ամենայն տեսակ դեղորէից, որք առթեն զլորձունս և զթուքս, և արտահանեն արտաքս 'ի բերանոյ. յայսմ կարգի են սնդիկն, ճինէփռօն և՝ ։

Ագուա, լտ։ աքգուա, իտ։ իտօռ կամ նէռօ, յն։ օ, գաղղիական։ վուօթըր, անգղ։ մօյ, արբ։ ապ, պր։ սու, տճ։ և ըստ մեզ՝ ջուր։ Է թեթև քան զհող, շարժուն, լոյծ, միամած, և թափանցիկ, և բնութ՝ սնուցիչ, աճեցուցիչ, զովացուցիչ, միանգամայն և խթիչ. քանզի եթէ սրսկեսցի քանի մի շիթ ցուրտ ջուր յերեսս կամ 'ի կուրծս առն զրկելոյ 'ի զգայութեանց, անդէն վաղվաղակի զգաստացուցանէ զնա, ուր ոչինչ այլ արտաքին խթան կարօղ է ցուցանել զայսպիսի զարմանալի ներգործութի։

Ագուա աչիտուլա, իտ։ ագուա սքսիքառպօնաթա, լտ։ Է ջուր ինչ ախորժահամ, բարկ, անհոտ, և շառագոյն, միանգամայն և դեղ ազդու ընդդէմ ցաւոց ոտամոքսի, փսխման, փորահարուն՝, խթից, փքախտութն՝, միզարգելութն՝, երիկամնաժետութն՝, հարբուխային թոքաժետութն՝, ապականութն՝ արեան, և ախտից մորթոյ։ Արդ՝ ջուրս այս շահաւէտ է յոյժ՝ որպէս ասացաք, և չափաւորապէս արբեալ՝ այսինքն 'ի կէս լիպրայէ մինչև ցչորս յաւուրն՝ լինի և դեղ զովացուցիչ, և լուծիչ քարանց գոյացելոց յերիկամունս մարդկան։ Իսկ չափազանցն՝ առթէ զուրախութի, և զյորդառատ հոսումն միզի։ Եւ 'ի մասնաւորի 'ի բուժել զվէրս քաղցկեղայինս, և զխղխայթս, լուանալով։

Ագուա բիքս լիգուիտա, լտ։ աքգուա տի քաթռամէ, իտ։ գաթռան սուի, տճ։ և ըստ մեզ՝ ջուր գազի խժոյ։ Օգտաւէտագոյն է 'ի դիպուածս ցաւոց երակաց, ջրգողութն՝, փքախտութն՝, և կէլինճիկ անուանեալ ախտի, մաքրէ և զարիւն, ցրուէ զվնասաբեր հիւթս խառնեալս յարեան, և ապաքինէ զախտս արգանդի։ Չափն 'ի յերկու ունկւոյ մինչև զչորս յաւուրն։ Օրինակ կազմելոյ զջուրս զայս։ Արկ զգազի խէժն յանօթ ապակեայ ըստ կշռոյ երկու լտեր, յերեք բինթտ ցուրտ ջրոյ. զկնի 48 ժամուց՝ հեղ զգուշութ՝ զհեղուկն յայլ ապակի տնօթ,

այնպէս զի մի խառնեսցի մրուրն ընդ պայծառ հեղանիւթոյ ։

Ագուա էբաթիքա, կամ ագուա կազֆլօկօ սուշֆուռաթա, լտ ։ աքգուա էբաթիքա, կամ աքգուա կազֆլօկօ սօլֆօռաթա, իտ ։ է ջուր ինչ քաղցրահամ, և ախորժահոտ. միանգամայն և դեղ ընդդէմ հարբուխային թոքաժետութեան, ախտից մորթոյ, թունից մկնդեղոյ և սնդկի ։ Չափն 'ի չորս ունկւոյ մինչև ցվեց յաւուրն ։

Ագուա թէռմօքսիճէնաթա, լտ ։ աքգուա թէռմօսսիճէնաթա, իտ ։ է հեղանիւթ ինչ անհոտ և դառնահամ. միանգամայն և դեղ ջրդողութեան, նուազութեան ամսական պարտուց կանանց, անախորժութեան, ցնցման ստամոքսի, և այլ սոցին նման ախտից, որոց նախնական պատճառն գտանիցի լինել տկարութիւն ջղաց. զի է խթիչ բնութիւն ։ Չափն 'ի մի լտերէ մինչև ցերեք յաւուրն ։

Ագուա լաուռօ չէռասի. տես լաուռօ չէռազի ։

Ագուա լումինօզա ֆալլօբիօ, իտ ։ Ջուրս այս ունի զարմանալի ներգործութիւն 'ի բուժել զայտոյցս ելէփանդականս, որք 'ի վեր երևին եթէ 'ի կոկորդս, և եթէ 'ի ծննդական անդամս ։ Նոյնպէս և ապաքինէ զքաղցկեղն, եթէ 'ի կիր արկանիցի 'ի միասին ընդ երկու կամ երեք մասն ջրոյ սքապիօզաի ։

Ագուա մառցիալէ, կամ ագուա օքսիքառպօնաթիս օքսիտուլի ֆէռռի, լտ ։ աքգուա մառցիալէ տի սփա, կամ աքգուա տի օսսի քառպօնաթօ օսսիտուլօ տի ֆէռռօ, իտ ։ չէլիք սույու, տճ ։ Է ջուր հանքային, բղխեալ 'ի լերանց սփաւոյ, որ է յստակ, փոքր մի թթուահամ, և սեղմիչ. միանգամայն և դեղ ախտից մորթոյ, տկարութեան ջղաց և մկանանց, ջրդողութեաց, ջղային դժուարամարսութեաց, ախտից արգանդի, ցաւոց յօդուածոց, թանչացաւութեաց, նուազութեան ամսական պարտուց կանանց, հնագոյն փորհարութեանց, տկարութեան աղեաց, և ընդերաց, սերմնակաթութեան, և լուծման արգանդի կանանց, յորում դիպուածի փոխանակ տեռատեսական արեան հոսի հիւթ սպիտակ հարեալ 'ի գոյն դեղին, և այլ սոցին նման ախտից, որոց նախնական պատճառն գտանիցի լինել թուլութիւն. զի է խթիչ և զովացուցիչ բնութիւն ։ Չափն 'ի կէս լիպրայէ մինչև ցվեց, զոր օրէն է խառնել ընդ նոյնաքանակ հասա-

բակ ջրոյ, և տալ ըմպել անասունին ՚ի միջոցի 24 ժամուց: Սակայն ՚ի ձեռն պետպէս մարմնոց և բաղդրութենց մարթ է կազմել ջուրս արուեստական: Այլ զի մի՛ ջուրս այս վասն դիւրաշնչութե՛ն շոգեացն կորուսցէ զկաղ, այսինքն զակնդէն ածխային՝ զատրունակեսցէն յինքեան, պարտ է քաջ խփել զանօթ նորին, և ջրջուն պահել յայլուստ անօթի՝ որ լի եցէ ցուրտ ջրով:

+ Ագուա մինթա բիբէուիթիտա, լտ: աքգուա տէ մինթա բիբէուիթիտէ, իտ: ինկիլնալ նանէսինին սույու, տճ: և ըստ մեզ՝ ջուր ածանխոյ անգլիոյ. որ է դեղ յոյժ օգտակար ՚ի դիպուածս ախտից և ցաւոց ստամոքսի, ջղային փսխոտութե՛ն, և ջղային կամ չար տենդից, և այլ սմին նման ախտից պատճառելոց ՚ի տարուիթէ. զի է թեթևապէս խթիչ բնուիթե՛ն: Զսովն ՚ի ջրս տրամ, յաւելլով ՚ի նոյն երեք ունկէ ջուր հատարակ, և առեալ լինի ըմպելիս այս ՚ի միջոցի 24 ժամուց: ՚Ի սոյն կարգս դասի և ջուրն հատարակ անանխոյ:

— † Ագուա մօռաւզուա, լտ: աքգուա մէթիթիքա տէ լէմէռի, իտ: Ջուր ինչ բաղադրական, կազմեալ ՚ի վեց տեսակ նիւթոց. և է բնուիթե՛ սեղմիչ, որով արգելու զհոսումն արեան ՚ի ռնգացն՝ օծեալ մատամբք գծականի. բուժէ և զճեղքեալ նեարդս և երակս, միայն եթէ ՚ի գործ արկանիցի ձեռամբ խոհեմ վիրաբուժի: Նոյնպէս և օգտակար է ՚ի դիպուածս վախման արեան, արիւնային փորհարուիթե՛, յորդահոսման դաշտանի, և թքման արեան: Զսովն ՚ի կէս տրամէ մինչև ցերկու յաւուրն խառն ընդ ջրոյ բօլիկօնօի:

— Ագուա նաբհէ. տե՛ս ագուա ֆլօռ ատուանթէ օռումմ:

+ Ագուա էնուամմի, լտ: աքգուա տի էնուամմօ, կամ տի քանէլլա, իտ: Թատղին սույու, տճ: մոյ իլ կռֆիլ, արբ: և ըստ մեզ՝ ջուր կենսամոն: Ունի սա գերակայ ինն օգտաւէտուիթե՛ ընդդէմ վշտաց և անանդորրուիթե՛ խախտացոյն, արգելականուիթե՛ մէզ, ջղային տենդից, հոսման դաշտանի, թանչից, և փորհարուիթե՛, և այլ ոգին նման ախտից, որոց նախկին պատճառքն գտանիցին լինել տկարուիթի՛ք. որովհետև է խթիչ բնուիթե՛: Զսովն ՚ի մի տրամէ մինչև ցւն յաւուրն, խառն ընդ հատարակ ջրոյ, և

ընդ այլևայլ զօրացուցիչ և խթիչ դեղորէից։

Ագուա պաքքատուում եումնիբէդի, լտ։ աքգուա ան պաքքէ ան ձինէբուօ, իտ։ ատուրճ ատուխ, ոճ։ Է լաւր գինդայ՝ եկուզեալ ի ձեռն ցքահան գործեաց. օգտակար է ընդդէմ կծկողութենց, ընչարգելութենէ, և հարբելոց ատեթելոց ի թուլութէ. զի է խթիչ, և միզացուցիչ բնութ։ Ջափն ի կէս ունկուոյ մինչև ցչորս յաւուրն, խառն ընդ այլ յարմարաւոր դեղոցն։

Ագուա քալչիա, լտ։ աքգուա ան քալչէ, իտ։ քիրէճ ատույս, ոճ։ ժոյ իլ կիր, արբ։ և ըստ մեզ՝ ջուր կրի։ Օգտաւէտագոյն է ի դիպուածս ջլացաւութենէ, ախտի ցնցականի, փորհարութենէ, հեծկլտանաց, ձգտման, փսխման, սրբեն թքման, քաւթախտէ անուանեալ ախտի, երիկամնաժեռտութենէ, ախտի փամփչոյ, ցաւոց յօդուածոց, և ոտնատութենէ. զի է ձգօղ և ընկլուզիչ բնութ։ Ջափն ի 48 տրամէ մինչև ցերկուս լիտր յաւուրն՝ խառն ընդ հաւասարակ ջրոյ, կամ կաթին։ Նոյնպէս ապաքինէ նաև զվէրս աքօռպուսութեականս և աղտաղտայինս, և խղնայ թայինս՝ լուանալով ևեթ զայնս։

Ագուա քանֆօռաթա, լտ։ աքգուա քանֆօռաթա, իտ։ քաֆիրի ատույս, ոճ։ և ըստ մեզ՝ ջուր քափրոյ. զոր մարթ է ի կիր առնուլ ի դիպուածս ջլային աւենդից, գալարման ջլոց, մանեակաց կաթուածոց, ցնորման, կատաղութենէ, ցաւոց արգանդի, քաւախալճիս անուանեալ ախտի, հեծկլտանաց, բաբախման սրտի, և փսխման մաղձի աւելեալոց ի ստամոքսենէ. զի է խթիչ բնութ։ Ջափն ի վեց ունկուոյ մինչև ցշտ յաւուրն՝ խառն ընդ հաւասարակ ջրոյ։

Ագուա օֆթհալմիքա, լտ և իտ։ է կապատագոյն ջուր ինչ բալադրական. յոյժ մանաւանդ է սորա գործունէութիւն ի դիպուածս բազմատեսակ ախտից աչաց. զի է սրբիչ, մաքրիչ, զովացուցիչ, կակղացուցիչ, և ցամաքեցուցիչ բնութ։

Ագուա ֆլօռ աւռանցիօռում, կամ ագուա նանֆէ, լտ։ աքգուա տի ֆիօռի տի աւռանչիօ, կամ աքգուա տի նանֆէ, կամ լանֆա, իտ։ էինէք ատուխ, ոճ։ ժոյ իլ զահր, արբ։ և ըստ մեզ՝ ծաղկի ջուր. որ է անուշահոտ, թափանցիկ, և փոքր ի չիք ամենայն ժանգամոյն և դեղ տկարութեան ջղաց, և սրտի

ևս յիշողութիւն, և նուաղման սրտի՝ առթելոց ի տկարութիւն. զի է խոժիչ, և զօրացուցիչ բնութիւն: Ձափն ի 16 սրամէ մինչև ց 78՝ խառն ընդ այլ յարմարութեան ոտր ներևանութեանց:

Ագուա փօռթիս, լտ: աքգուա փօռթէ, կամ օսան սէբեօնիքօ տի լուիլեօ, իտ: մոյ իլ հայլ, արբ: թիզ ատ, պր: գէզատ, տճ. և ըստ մեզ՝ ժանտաջուր, կամ այրիչ ջուր, և կամ արքայաջուր: Է բաղադրուի ինչ կապուեալ ի աչիտօ նիթռիքօէ, և ի հասարակ ջուց. աչիտօ նիթռիքօն յինչ ջափ և էյէ, պարտի լինել երրորդ մասն ջրոյն. իբր զի՝ եթէ աչիտօ նիթռիքօն էյէ տասն տրամ, ջուրն պարտի լինել երեսուն տրամ: Եւ ի գործածութիւնէ պարտ է պահել զջափ քանակուէ, որով սովոր եմք ի վար արկանել զաչիտօ նիւթռիքօ, որպէս և ներգործութիւնն նման է ներգործութեանէ նորա:

Ագուիլա, լտ և իտ: նիար, կամ էնուկ, կամ ռախամ, արբ: գառւթալ, կամ գառւագուշ, տճ: խոթէհուուշ, կամ տայլ, և կամ ռախիմ, պր: և ըստ մեզ՝ արծիւ: Է թռչուն զօրաւոր և մեծագոյն՝ գէշ ճաշօղ, և բարձրաթռիչ, որոյ ապաւուն լինի գետ բորոտութէ, և քոտոտութէ:

Ագուիլէձիա, լտ: ագուիլինա, իտ: անքօլի, գլ: քօլըմպային, անգլ: Է բոյս բազմածիւղ. որոյ ցօղունն է երկայն իբր մի և կէս ոտնաչափ, նուրբ, կարծր, թաւամազ, և կարմրագոյն. տերև նորա է բոլորակաձև, երկայնականի, և եզերահերձ, նման ըստ իմիք տերևոյ խոշոր ծիծեռնախոյ: Ծաղիկն գեղեցկատեսիլ, երկթերթեան, և կարմրերանգ. պտուղն թաղանթաւոր, գնտաձև, և բազմասերմն: Իսկ արմատն սպիտակ, թելաւոր, և քաղցրահամ: Բուսանի յամառն յԵւրոպիա՝ յանտառս, և ի բուրաստանս. լի է խլորվ և ցնդական աղիւ. միանգամայն և դեղ գալկան, խցանաց լերդի և փայծելոյն, զի է թուլացուցիչ, քրտնեցուցիչ, և բացողական բնութէ:

Ագօռլ, իտ: այսու անուամբ իմանի՝ ազգ ինչ մանրիկ պալարոյ ի վեր երևելոյ յայտս և ի գլուխս, մանաւանդ ողայոց:

Աեուվօռիս: Բառիս այսու նշանակին երկու տակերք բալկին՝ յօդեալք ընդ միմեանց:

Ազիմա. տե՛ս ազմա:

Ազինուս, լտ: ազինօ կամ ջինքօ, իտ: ծնօտ կամ

ջայտուռւի, յն: մերքէպ, կամ էշէք, և կամ չեմՊՆ-
տէր, տճ: խուռմսլը, արբ: խայր, պր: և ըստ մեջ
էշ կամ յաւանակ: Ն կենդանի ջուական, երկայնա-
վիզ, և երկայնունկն, որոյ բարքն բիրտ է և արտուռ;
որպէս և ձայնն անհեթեթ: Կեան իբր 'ի բազում
առաւել քան զամն քան, և գտանին յաւէտ յա-
սիա, յարաբիայ, և յեգիպտոս: Նոքն այսր կեն-
դանւոյ՝ զոր լատինք լաք ապլինինուս կոչեն, Ն յատակ,
թեթև, դիւրամարս, առողջարար, զօրացուցիչ, զո-
վացուցիչ, և մաքրիչ արեան. յայն սակս առէք
'ի վար արկանի 'ի բժշկութիւն միզարգելութեան,
թոքաժեռտութեանէ, յօդուածացաւութենէ, խոցուածոց
լերդի և թոքոց, ոլք սովոր են գալ զկնի կշտացու-
թենէ, և ցաւոց աչաց. բայց օրէն Ն 'ի գործ ար-
կանել զայն սակաւ քանակութեամբ, և որքան մարթ
եցէ՝ այնպէս Ն ըմպել բնաւկան ջերմութեամբ. այսինքն
զկնի կթելոյ. կէս սխտիկուէ վան չափահասի քա-
ւական Ն, զոր պարտ Ն բաժանել յերիս կամ 'ի
չորս մասունս յաւուրն: Չմեզ նորա ոմանք շահա-
ւէտ համարին ընդդէմ անդամազօսութենէ, ցաւոց
յօդուածոց, և բորոտութենէ: Չքաւորն լոաեալ 'ի
փոշի մանրամամալ՝ առնեն դեղ հաւանն աքեան: Իսկ
զեղունգն 'ի գործ ածեն 'ի դեղ ակաորութենէ ջղաց և
ուղղոյ, և անդամալուծութենէ:

— Ապլինո. տես ապլինուս:

Ապմա, կամ ապլմա, և կմ տխաբնէա, լտ: կէնիս
հիլլեթի կամ թէքնէֆէս, տճ: լահա, կամ թէկվա-
ճիարի նէֆէս, կամ զըռք իլ սուար, արբ: տէրակ
աինէ, պր: և ըստ մեջ՝ ընչարգելուն, կամ գժուա-
րաշնչութեան. տես հտ. ա. երես 183:

+ Ապս, կամ էս, կամ քուբռուս, և կամ վէնուս,
լտ: ռամէ, իտ: պոպըռս, տճ: նահաս, արբ: միս, պր:
և ըստ մեջ՝ պղինձ: Ն ազգ ինչ անմաքուր հրահա-
լելոյ, ծանօթ ամենեցուն. յորմէ յօրինին ազգի
ազգի անօթք: Բնութիւք Ն արկասպային, և կիզիչ.
զորոյ զկիզեալն 'ի վար արկանեն ըստ օրինակի քիչ
մի ինֆէուռնալէի՝ առ 'ի տպատել զմամռլեալ մա-
սունս վիրաց: 'Ի սմանէ կազմեն և ոգի ինչ ազգս,
որ լինի դեղ հիւռոֆոպիա անուանեալ ախտի, լացա-
նաց, և լուանոտութենէ, զոր Ն կիզացուցիչ, քրանե-
ցուցիչ, և սառակիչ ջաջաց: Ջափն 'ի վեց շրթէ մին-
չև ցուշ: Ջայս ազգ հրահալելոյ երթէ ձուլեսցեն

ընդ անագի, լինի ձայնեղ նիւթ զանգակի և հրացանի. եթէ ընդ կադոնեան հողոյ, կամ ընդ գաղամինար յորջորջեալ քարի՝ լինի արոյր. և եթէ ընդ կապարի՝ լինի թուճ:

Աէրուկօ կամ էրուկօ, կամ վիռիտէ էրիս, լտ: վէռտէ ռամէ, կամ էրուկօ, և կամ ծիմար, իտ: ճէնկիառ, կամ ժէնկեառ, տճ: կէնզառ, արբ: և ըստ մեզ՝ ժանկառ, կամ ժանդառ: Է նիւթ ինչ կանաչ՝ թափանցիկ՝ և թիւնաւոր, արտահանեալ 'ի կարմիր պղնձոյ՝ լուծեալ մաշելոյ 'ի գինի, զոր ուրեք ուրեք 'ի կիր արկանեն արտաքուստ առ 'ի ծախել զմսամոլեալ մասունս վիրաց: Եւ եթէ կերիցէ ոք 'ի սմանէ ըստ պատահման, պատճառէ զտապութի և զկծուութի վերին ծայրին ստամոքսի, զժայթքումն, զսաստիկ ցաւ, և զբորբոքումն ստամոքսի և ստորին որովայնի, զցնցումն մկանանց, և ջղաց, զուժգին ցաւ գլխոյ, զբզզումն ականջաց, զպապակումն, զհեծկլտանք, զուշագնացութիւն, զցուրա քիրտն, զքաղցկեղ ստամոքսի և ստորին որովայնի, և վերջապէս զմահ: Բայց գիտել արժան է, զի եթէ նախ քան զանցանելն կէս ժամու նպաստամատոյց լիցի 'ի ձեռն կարևորագոյն դեղորէից, որպիսի են՝ օսսի քարպօնաթօ տի բօթասսա կամ տի սօտա, կամ օլիօ տի ռիչինօ, կամ իբէքաքուանա, և այլ ամենայն կերպ հիւթք իւղայինք, յայնժամ մարթ է յուսալ 'ի փրկութի:

Աէրօֆօպիա, լտ, և իտ: և ըստ մեզ՝ օդավախութի: Է ազգ ինչ մտաթափութե, որով ոք երկնչի յօդոյ:

Աթանասիա, իտ: է դեղ ինչ քնաբեր, և օգտակար արդանդացաւութե: Դարձեալ, է խոտ ինչ, որ և կոչի՝ թանաչէթօ, տե՛ս և անդ:

Աթթէնուանցիա, լտ: ռառէֆաչիէնթի, իտ: Է անուն հասարակ նշանակիչ ամենայն դեղորէից, որք անօսրեն և նրբացուցանեն զարիւնն և զհիւթն մարմնոյ. որպիսի են՝ պարտանան, սաստաֆռաս չէօբչինա, սալ վօլաթիլէ և՝ն:

Աթլացիօ. բառիւս այսու ըստ անդամազննաց իմանի՝ վերջին ողն պարանոցին մերձ 'ի թիկունս: Սա կոչի 'ի տաճկաց՝ ատլազ:

Աթռօֆիա. անուամբս նշանակի՝ անտածութի: Է անհնարին հիւծութիւն՝ առ 'ի չգոյէ տածողու-

թեան, կամ անդեան: տե՛ս թիզնիքէցցա նէռվօզա:

Աթրա պիլնա, լա: մալինքօնիա, իա: պարա աէվաա, ած: ըսա մէզ՝ սեաւ մալչ:

Աթօնիա. է բաւ նօրոց, որ ստուգաբանի՝ ակալուսթե, կամ թուլուսթե, կոչի և ըստ նոցա առէնամիա, կամ առթէնիա և կամ տէբուխէնթ:

Աւստուա, կամ կաչէուիթաա, և կամ քաասիթա, լա: լօռօլա կամ աչլօռօչա, իտ: ջայիր գուչու, ած: և ըսա մէզ՝ արտուա: Ի թուչըն փոքրիկ, սրաթուիչ, և զուարճաձայն, որոյ մին կարծր է և դժուարամարս, այլ սիրտ նորա և արիւն են դեղք փքոխատուԹե, խթից տովային, երիկամնաժեռուե, և միզարչելուե. լուծանէ նաև զքար ևթէ գոցի ընդ անցա միզն: Բայց յարտաւել արժան է առ քանի ինչ ամիաս:

Աչէս ֆառմաքօ. տե՛ս անթիռօօթուա:

Աչթէա, կամ պիամալվա, կամ իբիսքուս, լա: աչթէա, իտ: կիմօվ, դղ: մալուչկելօ, անգղ: ալտէնին, ըն: հաթէմ՛ չինչէն, կամ կիւլ հաթէմ՛, ած: զահր խաթմի, կամ վէռա աֆռիկա, արբ: և ըստ մէզ՝ տուղտ: Է բոյս յատգէ մուլուչն, որոյ ցօղունն է երկայն իբր երեք և կէս ոտնաչափ, ուղիղ, թաւամազ, և մէջն դատարկ: Տերևն նման է տեւրևոյ թթենւոյ, բայց փոքրիկ և կարծր քան զնա. ծաղկին լայնաբաց, տափարակ, մածուցիկ, և կապտուն. այլ ջուրն մաշնաւոր ինչ հոտ. տեսլեամբ նման ծաղկանց մեկոնի. դառնով սպիտակ. բայց յոմանս տեղիս լինի և մնացդոյն, ծիլանապղյն, դեղնագոյն, և խայտաբղետ: Պտուղն փոքրիկ, և տափարակաձև, նման ըստ իմիք մուլուչի: Իսկ արմատն երկայն, ստուար, սպիտակ, կարծր, թեւլաւոր, և մածուցիկ, վիտնգամայն և դէղ ախտից կրծոց, հազից, փողացաւուԹե, և միզարգելուԹե՝ առնելոյ յուժգնուԹէ. զի է թուլացուցիչ, և կակղացուցիչ բնուԹե: Ձափն՝ի վեց տրամէ մինչև ցուԹ յաւուրն՝ խառն ընդ մի լիտր ջրոյ: Ա՛յս բոյս բուսանի յամենայն ուրեք. և՝ի պաւառա ինչ՝ի ասիական բարբառս մեր անուանի՝ ձնձղկաթըխ:

Աչիմէնէթուա՛, լա: նուԹռիմէնէթօ, իտ: պէռէչիկօ, իտ: պէռէչիկօ, ած: և ըստ մեզ՝ անուանի՝ ծովակարկաւն կերակրոց և ջրոց՝ի գոյացուն: Ա՛ստ՝ ասի է մին՝ի գլխաւոր երբեակ կարգաւորաց բնուԹեա

կենսականքն. այսինքն անդրական, աճողական, և ծննդական: Բայց յերից առաւ գլխաւոր կարողութիւնց պարզևեցան բնութիւնս այլ ևս քառեակ կարողութիւնք երկրորդականք, առ՝ ի կառավարելոյս պահպանութիւն բնութիւնն. որք են ձգողականք, ըմբռնողականք, մարսողականք, և արտաքսողականք: Առաջինն կարողութիւնքն ձգին կերակուրքն՝ ի մասունս երկրորդականաւն ըմբռնին ըստ պիտոյից, իսկ երրորդականաւն հալին՝ տրորին՝ և քայքային: Չորսկ յեղոյ երրորդականաւն հաւաքել նիւթքն զառաջ՝ ի կարևորագոյն և յընտրագոյն մասանց՝ աւելորդքն մերժին արտաքս, և կարևորագոյնքն փոխին՝ ի կաթնորակ հիւթ լինի՝ մամաց կոչեցեալ, և՝ ի նուրբ ցնդելի ոգիս, որք սպրդեալ ընդ ծակուխս մարմնոյն տարածին և անուշանեն զայն: Իսկ մամացն զոր լաւնացիք կոչեն՝ քիլուս, մտեալ յերակս և խառնեալ ընդ արեան փոխի առ սակաւ սակաւ յարիւնն, և արիւնն հետ զհետէ՝ ի մարմին, և՝ ի կենսական ոգի, որ է պահպանիչ կենաց և պատճառ շարժմանց մարմնոյ: Այլ պիտեալ արժան է աստէն, զի վերոյլ ընդ քառեակ կարողութիւնքն ընդունին զպօրութիւնս իւրեանց՝ ի ջղից տարերաց անտի, հուրն ջերմ և ջոր հաղորդէ զներգործութիւն իւր ձգողականին, հողն՝ ըմբռնողականին, օդն՝ մարսողականին, և ջուրն՝ արտաքսողականին:

— Ալիս. տե՛ս ալվուամ:

— Ալանթօխտէ. այսու անուամբ լինին՝ մին յատկէց կամ՝ ի թաղանթից, յորում պատեալ է սաղմն յարդանդի բազում կենդանեաց:

Ալհարիա. տե՛ս էրխամուամ:

+ Ալվուամ, լտ: ալիս, իտ: ալբ կիճ այլ, գղղ: կարկին, անգղ: ալբօտսն, յն: սարմուսաք, տճ: թօմ կամ տուամ, և կամ ֆուամ, արբ: սիր, պր: և ըստ մեջ՝ խառոր: Է տունկ լինչ ծանօթ ամենեցուն. որոյ բնութիւնն է խթիչ, գրդռիչ, և ճճէհալած. և չափաւորապէս կերեալ՝ դիւրապատրաստէ զհոտումն միզին, զօրացուցանէ զտկարութիւն ստամոքսի, և դիւրաւոտ մարսել զկերակուրն. և ապաքինէ զջրգողութիւնս, զախտս փայծեղան, և զտենդ: Իսկ չափաւ զանցն՝ վնաս է գլխոյ. խանդարէ զտեսութիւնն աչ ջոյ. զայրացուցանէ զմտաղձն, և վրդովէ զստամոքսն:

— Ալլուամ. տե՛ս ալլումին:

Ալձէռէ, լտ: ապաւինիւատէ, և կամ ակկիա-
ձիատէ, իտ: ազդուժանք, տօնմանք, տճ: և ըստ մեզ՝
տառիլ կամ պաղիլ. որ յոճախ պատահի՛ի կողմանս
հիւսիսոյ. և նոյն խառուն ցրտութենէ յորով անգամ
հարկանէ զծնօտս և զունգուններ մարդկան. զոր եթէ
ոչ ճշտապարեալ փութով դարմանեսցեն, ի քաղցկեղ
փոխարկեալ անկանին ծայրք ընչաց՝ և ցցուեալ տե-
ղիք ծնօտից: Ալ դարման այսր ընտուր դիւրին է.
զի առեալ փոքր ինչ ձիւն կամ ցուրտ ջուր՝ ուժգին
ճմլեսցի ի վերայ տառուցեալ տեղւոյն, մինչև ջերմ
մասցի, և ի միջոցի տակաւ ժամուց անդրէն հաս-
տատի. իսկ ընդ հակառակն՝ եթէ լուասցի կամ դիցի
ի վերայ նորա ջերմ և ոգեղից ձօմէնթօ, անդէն առ
նմին ձգեն յինքեանս զքայլցկել:

Ալուէն, կամ օքսի սուլֆաս, օքսիտուլում ալ-
լուինա էթ բօթասսա, լտ: ալումէ կամ օսպ սոլ-
ֆաթօ, օսպիտուլօ ո՛ ալլումինա, իտ: սդիբդիւռիա
կամ սոսպպ, կամ՝ ալմի, յն: չապ, տճ: շէպ, արբ:
պաբ կամ զէմհ, պլ: և ըստ մեզ՝ պաղլեղ: Ե ազգ
ինչ հանքային թթուահամ աղի. որ սովորաբար դտա-
նի ի գաղղիա, յանգլիա, և յիդալիա. բայց գտա-
նի և արուեստականն, որ յոգնատեսակ է յոյժ
ըստ պէսպիսութենէ նիւթոց և յեղանակէ կազմուածն.
զոր յօրինեն յայլ և այլ տեղիս եւրոպիոյ. ընտիր
համարի՝ եթէ իցէ սառնատեսակ զօրէն ական վան-
ւոյ. յորմէ կազմեն դեղ ի ներքուստ առ ի յարգե-
լուլ զնոսուսն արեան, և ի փարատել զհարբուխային
ախտս արտանդի, և զնեթս պատճառեալս ի թիւ-
նէց կապարի. զի է սեղմիչ և լուծիչ բնութեբ: Չափն
յերկու ցորենոյ մինչև ց 20 երկու կամ երեք անգամ
յաւուրն՝ խառն ընդ բաւականաչափ ջրոյ: Նոյն-
պէս և օգտակար է ուընայաւութենէ, և յորդառատ
հոսման լորձանաց, եթէ խառնեալ ընդ ջրոյ վարդի
կամ սամպուքօի ողողեսցի ուընն. մաքրէ նաև զդէրտս
առամանց. և սպառեալ ծախէ զմնամոլեալ մասունս
վէրաց, եթէ կիզեալ զայն և աճիւնացուցեալ արկա-
նէցի ի վերայ նոցա: Պաղլեղն վարի և ի զանազան
ներկս, և է մի ի գլխաւոր նիւթոց անտի:

Ալէ կամ ալէս. յայս անուն կոչեցեալ ի գեր-
մանացւոց՝ է զոր գաղղիացիք անուանեն էլան, և
յոյնք՝ ալէի. իսկ տաճիկք՝ ոզն, կամ կիւր: Ի տե-
սակ մի վայրենի քարոտատեղւոյ ի չափ մեծ եղջերուի.

որոյ գլուխն ատուսար է նման երիվարի. մորթն և ականջքն՝ երոյ. աչքն կայծակնացայտ. շրթունքն մեծ և թանձր. ատամունքն միջակ. մօրուան երկայն յոյժ, և կարծր. եղջիւրքն բազմաձիւղք՝ զորէն եղջերուց այծեման. բայց մեծ են յոյժ, մինչև կշռել 12 լիտր և առաւել. վոտն մեծ ըստ կովու, միան հաւել, արունքն երկայն և նուրբ. ոտքն սեաւ և կճղակաբաշխ ըստ եզանց. եղունգքն կարծր և սպիտակ. իսկ ճեան փոքրիկ: Սա թեթևաչարժ է և արագընթաց. ընդ գետս լողալով անցանէ: Դոանի հասարակօրէն յեւրոպիա, նայաւէտ յերկիրն պուռսիոյ և շվեսաց: Եղնգունք այսր քառոտանւոյ՝ զոր լսաինք ունկու. լա աչէս կոչեն, դեղ են ազդու ընդդէմ դժնդակ ախտին լուանոտուԹեան կամ վերնոտուԹե, և այլոց ամին նման նուաղեցուցիչ ախտից. միայն Թէ կրկնել լն է այդ գոնէ մինչև ցերկու ամիսս: Ջնոյն գոր ծուռնէուԹե ունին նաև ականջքն:

+ Ն լսում կուէքուս, կամ ալպուս քանիս, և կամ էինօքուօքուս, լս: մեռա ոիս չինն պլանչ, գլ: դու աքիլես ասպուս, յն: դէօքէին աքԹէրսի, տճ: խառոսպիաԹ իլ գէլը, արբ: և ըստ մեզ սոուգաբանի՝ սպիտակ ոջեն չան: Օգտակար է սա՝ ի դեղատածս վոջացաւուԹե, զոր օրէն է լսել՝ ի վոչխն մանրամատ, և վչել եղեգամբ՝ ի ներքս ուլանն. եղբեւին մարթ է և սա՝ ի վար արկանել՝ ի ԹանձրաԹեանս. օգտէ և կջռացաւուԹե և խԹանաց որովայնի: Ջաւն՝ ի 20 ցորեննոյ մինչև ց 80 խառն ընդ հասարակ ջրոյ:

— Ականի գլուքսուս, կամ ալվի սօլուցիս, լս: գլուսաս ոս ոի վէննԹուէ, կամ սպուսաքքէռուուէ, կամ սոնսաս ոի քորքս, խս: տեա՝ ի բառն՝ ոիսուէյա:

+ Ականի, կամ ալուսմէ ոի գաԹինս, խս: կոչի և ըստ նորոց՝ քաուպօնաԹս ոի սօտա: գալիսաԹաչը, կամ գալուէԹ քիլի, տճ: չապխասֆուր, արբ: խշխար, պր: և ըստ մեզ՝ կալաքար, կամ կալէքար: Ն սեսակ ինչ ոջի, զոր արտադրեն քիմիական արուեստիս յայրեցեալ մոխրոյ սօտա անուանեալ բուսոյ. յորմէ կազմեն դեղ ընդդէմ խայԹուսածոց խժից, և այլ Թունաւոր օձից: Ջաւն՝ ի 10 ցորեննոյ մինչև ց12 յաւուրն խառն ընդ. արգանակին սամպուքոի: ՚ի ամանէ կազմեն և ազգի ազգի դեղորայս. որպիսի են աղբալի վօլաԹիլէ գլուսուէ. որ է դեղ միզացուցիչ և քրանեցուցիչ, կամ քաուպօնաԹս ոի ամմօնիաքս ևն:

Ալբէբէնձի, կամ Ֆիւռլիս ալբէբէնձի, լտ: ալբէբէնձի, իտ: քանիավօ կամ ալս, յն: Ֆէնէռ էվէլ, ատ: և ըստ մեզ սատւպաբանի՝ բոպտեւրածալ ղևկ: Ե բոյս ինչ բաղմացօղուն և կարմրերանգ, որ յառաջ բուսանի 'ի ցանկապատ և 'ի սուսերամած տեղիս իբր մի և կէս ոտնաչափ բարձրութիւ: Տերևն նման է սերևոյ սօչանուժ անուանեալ խոտոյ, բայց մեծ քան զայն: Ծաղկին լոպտերաձև կամ անուաձև, կարմրերանգ և սպիտակաբիծ: Պտուղն դնտաձև կաձև մեծութիւ 'ի չափ հասարակ ընկուզոյ, կանաչակեղև. այլ 'ի հասանիլն փոխի 'ի գոյն կարմիր. մէջն հիւթալից, և տոպահամ, միանդամայն և դեղ միզարգելութիւ, ջրպոլութիւ, և երիկամնաժետութիւ առնելոց յուժգնութիւ. վն է թուլացուցիչ, ղովացուցիչ և միզաբեր բնութիւ: Ձաւին յերկու տրամ մինչև ցվեց յաւուրն խառն ընդ հասարակ ջրոյ:

Ալբիմիլա վուլկարիս, լտ: ալքիմիլա քօմունէ, իտ. կոչի և բիէան ոկ լէօնէ: բիէ որ լիօն, գաղ: լէտիս մէնդըլ, անգլ: բուս, կամ լէօն, յն: և ըստ մեզ՝ սատլանիչ: Ե տունկ նուրբ, բազմաճիւղ, թաւամած և գառնահամ, որ հասարակօրէն բուսանի 'ի ջրարբի և 'ի խոտաւէտ տեղիս իբր մի ոտնաչափ բարձրութեամբ: Տերև նորա է կոր, վահանաձև, մազոտ, և երկայնականի ըստ նմանութեան մըլչի: Ծաղկին մանր, աստղաձև, և բացապոյն դեղին. որ 'ի վեր երևի 'ի վերայ ճիւղոց հանդերձ բաւեակ տունկիւք. բերէ սերմանս մանուանս, բոլորակս, և դեղնագոյնս: Խակ արմատն երկայն իբր մատնաչափ, աստաղ, թնձլակից և սեաւ: Վն է խաղով, այլ նուազ ազնս. ունի մանաւանդ գործանէութիւն 'ի խափանել զյորդատատ հոսումն միզի, քլտանց՝ և արեան. վն է սեղմիչ և դոյզն ինչ գրգռիչ բնութիւ: Ձաւին մի ունկի խառն ընդ մի լիտր ջրոյ:

Ալքօհօլ, լտ: ալքօօլէ, իտ: տուա սբիրիթօ ան վինո:

Ալօէ, լտ. և իտ: ալօէա, գաղ. և անգլ: ալօի, յն: աստու ասավար, արբ: աստը ատպա, տճ: և ըստ մեզ՝ հալուէ: Ե չոտւագոյն և ամենագործն հիւթ ինչ. զոր արտադրեն 'ի սերևոց և 'ի ցօղնոց երիք տըն կոյ ամերիկոյ, եւրոպիոյ հնդկաստնոյ, և աֆրիկոյ. որ լինի սպիտակածաղիկ, երկայնատուբ, ոտ-

բանականութիւն, և ստուարութեամբ, և այն հիւթ ունի զբազում ուժ ներսից. յորս լուծողական այն է, որ լինի մաքուր, փայլուն, թեթեւ, դեղնագոյն, և դիւրաւ փխրելի. յորմէ յօրինեմք դեղ ակտուսէ ստամոքսի, նուազութեանէ աննպաստ պարտուց կանանց, դալկութեան, և կալուածոց թանչից տրեխելոց յոտիցն. զի է լուծիչ և թուլացուցիչ բնութեամբ. զորդուն և զՀիս որովայնի: Զաման՝ ի 5 յորենոյ մինչև ց 15 խառն ընդ այլ յարմարաւոր դեղոցն: Եւ եթէ փոշիացուցեալ յանկի՝ ի վերայ վերաց, մաքրէ, և երբեմն փարատէ զնոսին:

ԱԿԱՆԹՈՒՍ, կամ ՄԵՍՔԻՐՈՒՍ ազգաւորեաց, լս: ածծէռուօլա կամ լածծէռուօլա, խս: ազըռօլիկ, գղս: նիկբօլիթէն մեխլըր, անգլ: հաըդ, տճ: և բաս մեղ՝ աշտ. է տեսակ մի գղերոյ՝ ի յոյն հնդկայն ընկուզոյ, կարմիերանգ, հիւթալից, և քաղցրահամ, միանգամայն և զովացուցիչ և վուարձացուցիչ բնութեամբ:

ԱԿԻԿՈՍ. ըստ անգլացոցն նշանակի՝ երակն այն, որ ելանի ընդ ներ շնչերակ, որպէս գայլ երակս:

ԱԿԱՆԹՈՒՍ, կամ պօչԷԹուս բուսական, և կամ Ֆունկուս լառնչիս, լս: ականթօ, խս: ակառնք, գղս: էկէրնք, անգլ: ակառնքօ, յն: կառկոն, տճ: ազարիքուն, արբ: և բաս մեղ՝ տարտղ: Է անկանման նիւթ ինչ՝ արտադրեալ առ բնութիւք հնագոյն կաղնեաց, և մայրից, մանաւանդ լառնչէ անուանեալ ծառոյն, որ է սպիտակ, թեթեւ, դիւրաքերելի, հոտաւէտ, և փոքր ի քաղցրահամ, ունի և թեզս կամ ջնջատուչ պաճիպս և նաւրըս: Ի նիւթոյ ասոյ կազմեն դեղ վասն մաքրելոյ զկուրծս, լուծելոյ զնպացոնս լերդի և փայծէլան, և միանգամայն փարատելոյ զՂօդուլըթիւն. և ի մանաւանդ ի ստամոքէ զՀիս և զորդուն դուռս որովայնի, և յանօսրել զԹանձրամածութեան տղուանէ. զի է լուծիչ և միզացուցիչ բնութեամբ: Զաման՝ ի կէս տրամէ մինչև ցմի և կէս խառն ընդ այլ յարմարաւոր դեղոցն. վարի և արտաքուստ՝ ի յարգելոյ զյորդառատ հոսուն արեանն:

ԱԿՆՈՒՍ քամԹուս կամ վԻՆԹէքս ակնուս քամԹուս, լս: ակէռօ ակլ էքէք, խս: ակնիւս քամՀիւս, գղս: էյադրի, անգլ: լիո կամ ակօ, յն: խամՀր, արբ: Ի ծառ փոքրիկ, գեղեցիկ տեսլեամբ, հոտաւէտ, և գորշակերպ. ունի և ոստս յոդնաԹիւս,

ետուրքա, կրկնածոյա, և գժուարաբեկա: Տերևք սո-
րա կարպաս բուսանին առ միմեամբք՝ հանդոյն տե-
րևոց կանեփոյ. և են երկայն, ուղղորդ, սրածայր,
և ազուամազուտ: Ծաղիկն կարմրագոյն, և տապա-
համ: Իսկ սերմն որ գտանի 'ի ծաղկի անդ, է բո-
լորշի, գորշագոյն, ստուար, տապահամ, և համե-
մայնի, զօրէն պղպեղի: Բուսանի յատկիս 'ի թուր-
քաստան. որոյ ծաղիկն, տերևն, և սերմն ուռնին ըզ-
գործուածէուն 'ի բանալ զմանրագոյն ծակիս երա-
կաց, և 'ի դիւրաշարժ յօրինել զարտաչնջութիւնս
մարմնոյ: Ներգինք 'ի կեր արկանէին սաոի 'ի պէս-
պէս դեղորայս, նաև 'ի գրգռել զսաղմն, զմէզն, և
զդաշտանս կանանց. բայց զարդիս ոչ հաճարի այն-
քան 'ի յարդի:

Ականթա, կամ ուվա աշէուպա, լս: ակռէսթօ,
իտ: ակուռիտա, և կամ աքիս, կամ օմֆաքս, յն:
վէռժիս, գղղ: գէտպ, կամ հօսուռամ, արբ: կու-
ռէ, կամ գէննէշտուս, և կիմ գէննէշու, պր: և ըստ մեզ՝
ազոխ: Է ոհաս պտուղ որթոյ, որ 'ի հասանելն լե-
նի խաղող. զօրութեն սորա է սեղմիչ և զովացուցիչ,
որով բարեխառնէ զկծուռւլն մաղձի, արգելուս զքրո-
հարուածն, և հնձուցանէ զջերմութեն արեան:

Ականճնիա, լս և իտ: հկռըմռաան, գղղ: քըմիլըն
հկրիմըննկ, անգղ: աքս, յն: գօխեն օթու կամ հկէր
օթու, տձ: Է խոտ գլանաձև, կարծր, ճիւղալից,
թաւխշաւոտ, և փոքր ի քաղցրահամ, որոյ տերևն է
երկայն և եղերահերձ: Ծաղիկն ապխտակ, ճուռաձև,
և հինգ թերթեան. բերդ և պտուղս երկայնաձևս և
մեծն կարմիրս, յորս են սերմունք: Իսկ արմատն
երկայն, ստուար և սեռս: Բուսանի յեղերս ճանա-
պարհաց և ագարակաց, որոյ տերևն եփեալ 'ի ջուր
և արբուցեալ՝ դեղէ հոսման որովայնի, և այլ հիւ-
թոց պատճառելոց 'ի թուլութէ. ղեկ է սեղմիչ և
խթիչ բնութէ: Ճաշն 'ի վեց տրամէ մինչև ցուէթ
խառն ընդ կէս լիտր ջրոյ:

Ականճօսիա, լս: աղաճ գավուն էքչիսի, տձ:
է ըմուելի ինչ բաղադրական, կազմեալ 'ի ջրոտունկի
հաստուածոյ կիտրոնի, 'ի մի լիտր մաքուր շաքարէ,
և 'ի բաւականաչափ ջրոյ, որ չինչուցանէ զտապ սեռ-
դեց. բարեխառնէ զվրդովումն սեաւ մաղձի, հորդէ
ճանապարհ միզի. և դիմակալէ փտախտից, զի է զո-
վացուցիչ և թուլացուցիչ բնութէ: Ճաշն 'ի մի

ունկուց մինչև ցերկու խառն ընդ հասարակ ջրոյ։

Ամեռամեծուխ, կամ աքիլէա ամեռամեծուխ, լտ։ Հուբամեծուխս ան մեսուէ, խտ։ եխուաս, յն։ աշիլէք վխաքէօզ, գրզ։ մօտլէն, անգլ։ Ի խոտ, որոյ տերևքն են երկայն և գառնահամ, որք խիտ առ խիտ ածուին ջերեսօք գետնի. և 'ի միջոյ տերևաց ելանէ ցօղուն փոքրիկ, որ 'ի ծայրան բերէ ծիրանագոյն ծաղիկ լայնաբաց, և յոյժ հոտաւէտ. զկնի ծաղկանց յարջորդէ սիւնակ երկայնաձև և թաղանթաւոր, յորում են սերմունք մանրիկք։ Բուսանի 'ի լերինս և 'ի մարգագետինս, մանաւանդ 'ի կողմանս եւրոպիոյ, որոյ տերևն եփեալ 'ի ջուր և արբուցեալ՝ դեղ է ջրային դժուարամարսուածե, փքային խթից, և ցաւոց գլխոյ առթիչոց 'ի թուլութէ. զի է խթիչ բնութէ։ Ձափն ի սրամ ընդ ութ ունկի ջրոյ։

Ամարանթուս կամ ֆլօս ամօրիս, լտ։ ամարանթօ, խտ։ անթհօամարէնօ, յն։ գաւնիֆէ չէչէկ, տճ։ ըստ մեզ՝ Թարգմանի անթառամ ծաղիկ, յորում ստուերէ երկայն երբ երեք ոտնաչափ և ծիրանագոյն։ Տերևն լայն է և երկայն ըստ նմանութէ տերևոց ճակնդեղի, բայց ստուար, և մթին կանաչ. քան զնա։ Ծաղիկն գեղեցիկ է և ծիրանագոյն, ունելով 'ի միջի հատ շրջապատեալ բազմաթելովք։ Պտուղն փոքրիկ, թաղանթային, և ատամաձև։ Իսկ սերմն, որ լինի 'ի պտղոյ անտի՝ է բոլորակ, սեաւ, և շողշողուն։ Ըստ ան կարմրագոյն թանձր, և հիւթալից ըստ նմանութէ ճակնդեղի։ Սովորաբար բուսանի 'ի բուրաստանս, և յայգիս, բնութէ է յուրա և զովացուցիչ. և է դեղ ազդու ընդդէմ հոսման արեան, և փորհարութէ. սովորաբար զտերև արկանեն 'ի կիր արկանելմէ։

Ամարա տուլչէս. տես Տուլքամարա։

Ամարտաքուս. տե՛ս Մատեորանա:

Ամարի անծանաքիչէ, կամ անծանաքիւթ, իտ: ածէ ժիտէվի, տճ: ըստ մեզ թարգմանի՝ դառն ատամնաբեան, կիմ ատամոքսային: Է անուն ընդհանուր նշանակիչ դառնահամ դեղերէից, որք զօրացուցանեն զակաղուճի ստամոքսի և մարսողական զօրուճեն, և բանան զախորժակս կերակրոյ, և ժանգամային գիմնաչալեն ախտից փորաուեաց, և խախտացոցի. որպիսի են քինաքինան, խաչնդեղն, ճէնցիանան, կեղևն նարնջոյ, և կիտրոնի, օշինդր, սերբէնթարիա վերճինիանան, կոճապղպեղն, չէնթաուրիա մինօրէն. և այլն և այլն:

Ամարում. տե՛ս տուլքամնրա:

Ամբէլնթես կամ ֆարմանթէլնա, լտ: ամբէլնթէ կամ ֆարմանչէնթէ, իտ: ֆարմաքօն, յն: Է հոդ ինչ ուեաւ, մածուցիկ որպէս զկուսպր յաճախեալ՝ի հանքաքարանց. բնուճեբ է ջերմ. ճոխապոյն է ծծմբային մասամբ և աղւս. ժանգամայն և դեղ ատամնակիչ ճաճեաց և որդանց որովայնի, օգտէ նաև ընդդէմ ախտի հերթաափուճեան, ատէպ ներկելով սովաս գհերս և գյօնս:

Ամֆիսպէնա, կամ ամֆիչէֆալօս, լտ: Է տեսակ մի փուքրիկօձի, երկայնուճիւն նորա սովորաբար չէ ինչ աւելի քան մի և կէս ոտնաչափ, գոյն նմանակ և շուշտուն, ունելով՝ի վերայ նիչս, և գլծա կարմրերանգս, այտն ատուսր, և թանձր, տուան փուքրիկ, և սրածայր, թոյնն գժնդակ, և մահաբեր, և է կատաղի յոյժ. խայթէ չարաչար զամենայն որ ինչ ընդառաջ ելանէ նմա, թէ մարդ լիցէ, և թէ անասուն: Այս օձ ատաստ է թուչնական աղւս և իւղով, որոյ միսս լեարդ, և սիրտ՝ի նմին արկանի ըստ օրինակի խժի, որ լինի դեղ ազդու ընդդէմ խայթուածոց թիւնաւորօձից, և տուպուճէ հիւճոց. բանայ և զանգս լերանց, և դիւրաշարժ յօրինէ զտուրևատուճի ընդոյ, և ապաքինէ զիղձաժետուճիւն: Այս օձ գտանի անխոնի ընդ ամենայն տեղիս՝ի կղզին անուանեալ Լեմնոս:

Ամեթիստա կամ ամեթիստուս, լտ. և իտ: մեթհի, յն: Ճէմելէնդուն, արք: և ըստ մեզ՝ տուտսակ կամ մեղեսիկ, և կամ ամեթօս: Է ազնուագոյն անկն ինչ կարծր, պեղեցկատեսակ, և թանկագին. որոց տեսակք են կարմիր և վարդագոյն. կէսք՝ի գոյն ծաղկանց

դեղձի, ունանք մանուշակագոյն, և ունանք սպիտակ
եբրև զանպատմանդ, և շուշտուն: Ջորութիւնք ասցա
ձգօղ, սեղմիչ, և սթափիչ, որով արգելուն վհատումն
որովայնի, և ծծեն զթթու հիւթս ստամոքսի, և
միանգամայն դիմակալեն արբեցութեանէ:

Ամիլում, լտ: amylum, իտ: amido, յն: նշաստա,
ոձ: նշաստէ, պր: նիշէ, արբ: և քսան մեզ նիշհի
կիտ օսլայ, որ է բնութիւն կակղացուցիչ և յոյժ պատշա-
ճաւոր դեղի ի դիպուածս ամենայն սուտակ այտուց-
ցից. քաղցրացուցանէ և զարիւն ի խժային թթու
հիւթոց, և տպաւորէնէ զցաւս աղեաց. միանգամայն և
կակղէ զկուրծս. զի է առատ խղոյ, և գոյացական
աղիս: Սակս նիւթ ոչ այլ ինչ է բայց եթէ նրբագոյն
և սպիտակագոյն ծուծն թրջեալ և նեխեալ ցո-
րենոյ:

Ամիկտալուս ամարուա, իտ: amaro, լտ: ման-
րալա ամառա, իտ: ածը պատեմ, ոճ: լէօզ մօռ: և
ըս մեզ՝ նուշ դառն: Է ապտ ինչ ինչ, որոյ մէջն դառն
է եբրև զկորիզ դեղձի. հնչակաւոր է ի մանին
օգտաւէտութիւնէ ի դիպուածս ակարութիւնէ ստամոքսի,
և ցաւոց որովայնի. Թէպէտ սա մարդկան օգտակար
է, այլ ձձեաց, և ձադուց աղուխտուց մահաբեր է:
Ի պաղոյ ատեն արտահանեն իւղ ինչ դառնահամ,
զոր լատինք կոչեն օլէում ամիկտալի ամարէ. յորմէ
գործեն դեղ ազդուական ընդդէմ ցաւոց ականջաց,
զի է մեղմիչ: Ծառ նորա բուսանի յամենայն ուրեք.
նա յաւէտ յերկիրս վինաւէտաց ջերմագին օդոց: Տե-
րեք նորա երկայնաձև և սրածայր, և դառնահամ:
Իսկ ծաղկին նման է ծաղկանց դեղձենւոյ:

Ամինաթուս կամ ասպէնթուս, և կամ ասպէ-
թէս լաբէս, լտ: amianthus, իտ: amianto կամ մին-
նո, և կամ զվէնիմի, յն: Է քար կամ նիւթ ինչ հանքային
սպիտակ, և յղկեալ զօրէն ալումէն բլուսկուս վէր-
ուսմի. զոր ի ծեծելն՝ լինի երբ բամբակ ընդունակ
մանելոյ, և ասպնջելոյ, յորմէ գործեն և ի տեղիս
տեղիս կտաւ գործեալ, նման պատմուճանի ամբողջ.
զոր ի կամիլն լուանալ՝ որկանեն ի հուր, որ բառ-
նայ զամենայն աղտն, և զկտաւն թողու չիւրում պայ-
ծառութիւն: Սա ըստ ոմանց նախնի հեղինակաց՝ ունի
և զօրութիւն մաքրողական, և դեղաբուխական. քայց
կարծիքս այս չէ այնքան հաւանական:

Ամիտօ. տես Ամիլում:

— Ամպի, կամ աւմպօս, լս: ամօս, յն: է սերմն ինչ վտքրիկ նըրև 'ի ջաի աւազոյ. որոյ համ և հոտ նման է զսպայի. օգտաւէտ է ընդդէմ ցաւոց գլխոյ, և արգանդի, և սկարուէթէ աուտմոքսի և ալեաց. պն է խթիչ բնութեամբ: Եւս դեմոկալէ Թուռնից: Տուռնիկ նորա բարձր է և ոաոսախոտ: Տերևն նման է աեղևոյ սամթի: Ծաղիկն վտքրիկ և սպիտակ: Իսկ սպիտան սաուար և փոքր մի կարծր, սովորաբար գտանի 'ի պաղկիա, և 'ի կրետէ: Ջափն 'ի 5 ցորեն նոյ մինչև ց20:

— Ամոնիաքում կոմմի. տե՛ս կոմմի ամոնիաքում:

— Ամոնիօսէլինում. տե՛ս թաս:

✗ Ամուքա, լս: Ֆէէչիա տի օլիո, կմ մօրքիա, իտ: համօռիկի, յն: եաղըն Թօռնեուտս, տճ: ըատ մեզ՝ մրուր կամ դերտ խոզոյ, որ 'ի պարզինն խոզոց կիջանէ 'ի յատակս անօթոյն. բնութեբ է հակզացուցիչ, և միանգամայն ապաքինէ զցաւս գլխոյ, եթէ ջերմացուցեալ արկանիցի 'ի վերայ ձեռաուոն:

— Ամպարա չինէրիա. տե՛ս Ամպարում կրիզէում:

— Ամպարէ կամ ամպէրէս, լս: է ծառ երկայն, և սուսար, յաճախեալ 'ի հնդկաստան: Տերևք նորա ըստ երաց ինչ նման են սերևոց ընկուզոյ: Ծաղիկն վտքրիկ է, և սպիտակ, զոր ճմլեալ մատամբ՝ արձակէ զհոտ ամպարի, օրպէս և սերևք նորա. նմին երի կոչի ծառ ամպարի: Իսկ պտուղն սուսար 'ի չափ հասարակ ընկուզոյ. նախ քան զհասանելն է կանաչագոյն, իսկ յետ հասանելոյն փոխարկի 'ի գոյն դեղին. մէջ նորա կարծր, ճաշառուտ, և տոպահամ, շրջապատեալ նուրբ կճեպ. ուստի ապեա կամ քացախեա թացեալ Թողուն առ ժամանակ մի 'ի բարեխառնել զտտպուածն նորա, որ լինի դեղ սկարուէթէ ստամոքսի, որ և զկերակուրն սուց դիւրաւ մարսել, այլ յաճախակերութեն գրգռէ զմարզն:

✗ Ամպարում կրիզէում, կամ ամպրա կրիչէա, և կամ ամպարա չինէրիցիա, լս: ամպրա, կամ ամպրա օտօրօզա, իտ: ամվարը, յն: ամպէր, տճ: խոմպլիմ կամ հիւտ, կամ գուռթը, կամ գեռահ, կամ էլէնճիւճ, արբ: տարտու կամ բաթպու, և կամ մեղ տէլ, պր: և ըստ մեզ՝ ամնպար, կամ ըստ ոմանց բուրկեն: Է նիւթ մինչ ազնուագին, ջուր, թեթև, ալօտ, փոշեշագոյն, քաղցրահոտ, և կարծր որպէս զքնքուշ քար. 'ի սկզբան է դանդաղամած, և ապա

առ ասկաւ ասկաւ այնպանայ, բայց բաղուամ անգամ խառնեն ՚ի բուն ամպարն զայլ մածուցիկ նիւթ ինչ որ ելանէ ՚ի ծովէ. նմին իրի հատիւ երբեք պատնի առ մաքուր և ազնիւ. որոյ ազնիւ և ընտրագոյնն է սպիտակախատան դեղին, և թեթև և յոյժ, ունելով նրբագոյն ներչս, և երակս, որք ափուեալ կան ընդ բովանդակ զանգուածն նորա. զոր ասէպ ՚ի գործածեն ՚ի ծխանելիս հանդերձ բալասդրութիւն այլոց: Հռչակաւոր է ՚ի մասին օգտաւէտութե ՚ի դիպուածս տկարութեան սրտի, ուղղոյ, աստամոքսի, և պգոյացիան երակաց. այլև է դեղ ընդդեմ թունից: Զայն ՚ի կէս ցորենոյ վինջև ցբորս: Բազուամք ՚ի նախնի դերահռչակ հեղինակաց կատեցեալ հետազօտել ըզբուն, և զչքդրիտ գոյացութիւն այսր ամպարի, յայլ և այլ կարծիս անկան, և տակաւ ուրեմն ծանեան թէ ոչ էր այնպէս որպէս կարծէին, այլ մեղր և մոմ, որպէս տեսցի ՚ի ստորագրութիւնե սորա: Քանզի յաշխարհն հնդկաց ուր ամն ծովու են մեծամեծ և բազմատեան ծառք ՚ի ծուին կոյս խոնարհեալ, յորս անհամար յօրովութիւն մեղուաց գործեն մեղր և մոմ, և լուծեալ ՚ի տօթոյ արեգական մեղրն և մոմն ՚ի միասին ՚ի վերուստ անտի հոսին ՚ի ծուին. զորս ուսանին ահագին ձկունք ամկիանոսի, և երբեմն անմիջապէս ՚ի բերան նոցա հոսի. զկնի քանի ինչ աւուրց ոչ կարացեալ մարսել զմոմն, ժայթքեն արտաքս. և ահա այն է ամպարն պատուական, որ այնչափ ՚ի յորգի է յափրկէ, և ընդ հաւօրէն տախտ, մինչև կշռով ոսկւոյ վաճառել զայն: Գիտել արժան է, զի զայս երբեմն հնարիւք կապլմնն, և դիւրագին վաճառեն, որ է գլխաւորն անպիտան. վասն որոյ մեծի ըզգուշութե պէտք են առ ՚ի զննել զսորա ճշդրտապոյնն:

— Ամպէքի. աճա Մխրօթալանի:

— Ամպիա, լս: է ազգ ինչ կապրաձիւթոյ, որ գտանի յեզերս ծովուց հնդկաց, բուրէ հոտ անոյշ և հաճոյական, իբրև զհոտ թաքջամահուքս անուանեալ ոեանոյ. գոլնոյ է դեղին, և բնութե կակղացուցիչ, զօրացուցիչ, և քաղցրացուցիչ, զոր ջերմացուցեալ ՚ի հուր, և եդեալ ՚ի վերայ ցուրտ այսուցիկ՝ փութանակի ցրուէ կամ հատուցանէ: Նոյնպէս օգտաւէտ է ընդդէմ բորոտութե:

✠ Ամպրա. աճա Ամպարում կրնգէում:

Ամպրա կրէզիա տե՛ս Ամպարում կրնիզեում:
Ամպրա էնթրինա • տե՛ս քարտալէ:
Ամպրա օտօրօզա • տե՛ս Ամպրա:
Ամպրօզիա, կամ քօնիֆա հնբօքրաթիա, կամ սրթհէմիզիա մընօքլօնօզ, և կամ հէրպա վինօզա, լտ: ամպրօզիա, իտ: վրօմա կամ ֆէօս, յն: ի բոյժ բաղմաճիւղ, և քալըրահօտ, յատկութեամբ 'ի բուրաստան և 'ի դաշտատեղի վայրս իբր ոտնաջուխ մի բարձրութիւն: Տերևք նորա սպիտակ են, և ցաւատեաղ ըստ նմանութեան տերևոց օշնդրի: Ծաղիկն մանրիկ, փնջաւոր, լսխտաձև, և դեղնագոյն: Իսկ սրտման երկայն, նուրբ, և փայտային: Այս բոյժ հասով է գառն և ջերմահամ. օգտաւէտ է ընդդէմ տկարութեան սրտի, և ուղղոյ, անօսրէ և զթանձրացմանէ արեան, և ցրուէ զվատթարագոյն հիւթս խառնուածոյ յաբեան:

Ամօմում, լտ: ամօմօ, իտ: ամօմ, գղղ: ոչխարդեղ անօնիարում, անգղ: ամամէ, տճ: կոչի և յոմանց համամում: Ի պտուղ անկանէ, որոյ ձև և գոյն ունի նմանութեան ընդ սպիտակ խաղողոյ • տապակ համ է և հոտաւէտ յոյժ • և 'ի մէջն ունի կորիզս քառանկիւնաձև, և ծխրանագոյնս: Ծառ սորա փոքրիկ է և տակաւաճիւղ, յատկանէ 'ի հասմատարած աշխարհն հնդկաց, մանաւանդ 'ի հարաւային կողմանս: Փայտ նորա կարմրագոյն է և հոտաւէտ: Տերևն երկայն և խիտ: Ծաղիկն տղէտակ և տապաստամ: Իսկ պտուղն խիտ առ խիտ ձեռնէձեալ յողկոյզ իբր կախն գոտւոց ծառոյն • զոր ջրացուցեալ, լինի դեղ օգտակար ընդդէմ թունից, քամոյ, տկարութեան ստամոքսի, և նուազութեան սմսական պարտուց կանանց • քանզի լի է ծուխական աղիւս և խլղով, և բնութեամբ խմբիչ: Ձափն 'ի 5 ցորեննոյ մինչև 30: Սորա է տեսակ մի կոչեցեալ 'ի բարբառ լատինացւոց՝ Ամօմում ֆաբտում, որ է սեաւ և փոքրիկ քան զայն իբրև 'ի չափ պտղոյ գիհւոյ: Այլ բայց 'ի ստացանէ՝ ենթ և այլ երկու տեսակ սյատցիկ պտղոց • մին կոչի 'ի բարբառ լտ, ամօմում բլինի, որ է կարմրերանգ և տոհմատ 'ի չափ կեռասի: Իսկ միւսն՝ կնձռոտիկ է՝ մեծութեամբ 'ի չափ հնդկայնին պղպեղի, տապակ համ, և համեմայնին, ունի և զնուռնագրտաբ հնար-

ձուածս: Երեքին սոքա նոյնպէս առատ դտանին 'ի կողմանս հնդկաց. բայց ոչ են յարմար 'ի դեղորայս:

Անաթրա. տես Անաս:

Անաթրօն կամ նաթրօն, լտ: լաթրօն, արբ: Է ազգ ինչ հանքային աղի, յաճախեալ 'ի վերին եգիպտոս հուպ 'ի նեղոս գետ յարևմտեան կողմն նորա. բուրէ զհոտ զազիր, գոյն նորա սպիտակ է և մաքուր և թափանցիկ: Զսա նախնի հեղինակք դասեցին 'ի կարգս բացողականաց, որք փոխանակ սալնիթռօի 'ի կիր արկանէին, և ոմանք 'ի դասս մաքրողականաց: Զօրութի՞ նորա 'ի մասնաւորի է սրբել զապականութիւն արեան, և ապաքինել զքաղցկեղս: Այլև արհեստաւորք 'ի գործ ածեն 'ի զանազան գործս:

Անակալլիս առվէնսիս, լտ: անակալլօ, իտ: Է խոտ ինչ բազմատեսակ, յորս երևելի քան զամենեսին է անակալլիս մաս. ցօղունք նորա խիտառխիտ սփռեալ են զերեսօք գետնի: Տերևքն փոքրիկ, բոլորակաձև, և դառն միանգամայն և ատիպ, յորմէ կազմեն դեղ ախոնդանոտութե՞, և լուսնոտութե՞: Ծաղիկքն ելանեն առ անթովք տերևոցն, և են կարմրերանգ, և երկայնականթ: Պտուղն փոքրիկ, գնտակաձև, թաղանթային, և բազմակորիզ: Իսկ արմատն սպիտակ և թելալից. միանգամայն և օդտէ ընդդէմ խածուածոց կատաղի շանց, և հնագոյն վիրաց. զի է գրգռիչ բնութ՞: Չափն 20 ցորեան չորս անգամ յաւուրն:

Անակալլիս ադուաթիքա. տես պէք քապունկա:

Անաճիրիս և կամ աքբօն, լտ: է ծառ փոքրիկ, նրբաոստ, և կանաչակեղև, յաճախեալ յերկիրս ջերմագինս: Փայտ նորա կարծր է և դեղին: Տերևքն երկայն, և փոքր մի պարարտ, զոր ճմլեալ 'ի սանդի արձակեն զհոտ այնչափ սաստիկ, և թափանցիկ, մինչև առթեն զցաւ գլխոյ: Ծաղիկն դեղին 'ի ձև ծաղկանց ճէնէսթաի: Իսկ մինչ զթերթսն ծաղկանց 'ի բաց թօթափեն, 'ի վեր երևի պտուղն՝ նման ըստ ամենայնի թարմ լուբայի հանդերձ արտաքին պատենիւն, զոր 'ի բաց հանեալ, զմիջինն 'ի կիր արկանեն 'ի դեղորայս, որ է ժայթքեցուցիչ, և լուծողական: Զնոյն բնութիւն ունին նաև տերևք սորա:

Անանաս, լտ. և իտ: է պտուղ ինչ հնդկային,

որոյ ջոյս ունի նմանութիւն ընդ ընտանի կանգաուխ։ Տերևք նորա կարմրերանգ են և ցցուեալ ըստ նմանութիւն աերևոց արմաւենւոյ։ Իսկ ծաղիկն ծիրանագոյն է և մինթերթեան ՚ի ձև ձագաւուխ։ Եւ ունի նա և բերս սեաւակ. առաջինն կոչի՝ անանաս աքուլէաթուս Փրուքթու օվաթօ, որ քան զամենեսին մեծ է և հռաւէտ, բայց անչաժ և կարծրաթել։ Երկրորդն յորջորջի՝ անանաս աքուլէաթուս Փրուքթու բրիմիաթօ, որ սակաւ մի փոքր է քան զառաջինն. այլ քաղցր է և ախորժելի. և ունի թեպետ կմ՚ ջնդա խիաա և կարծրա մինչև հեռձանել և զննութա։ Իսկ երրորդն անուանի՝ անանաս նօն աքուլէաթուս բինթա սինէնսիս, որ փոքրիկ է քան զերկուսին. բայց ջուն ինչ այնպիսի կարծրաթելա. և ճաշակ նորա քաղցրութ՚ը զանցանէ քան զայլոց սեաւակաց։ Այս սեաւակ պտղոյ գտանի միայն՚ի գաւառն կոչեցեալ սագա յատևելեան հնդիկս, յորմէ բնակիչք երկրին գործեն գինի պատուական, և դեղ ազդուական ընդդէմ միզարգելութ՚ե, և նուազութ՚ե ամաական պարտուց կանանց. բառնայ և զզգուանս ստամոքսոյ, որով և արդելու զծայթքուն։

Անաա, լտ։ անիթրա կամ անաթրա, իտ։ քանատ, պտղ։ նիթեա կամ նէօ կամ բաբխա, յն։ էօրաէկ, տճ։ իվէկս կամ խուտէրլի, արբ։ միւկատ կամ սիւրխաալ և կամ կիւրէկ, պր։ և ըստ մեզ՝ բադ։ Ի թևաւորս և ջրասէր կենդանիս քաջածանօթ յամենայն ազգէ, որոյ կրկին է տեսակ, վայրենի, և ընտանի. վայրենին կարէ թռչիլ, հաճել է և դիւրամարս։ Իսկ ընտանին որ ոչ կարէ թռչիլ, առաւել հաճել է սակս առաւելութ՚ե ճարպոյն որ՚ի նմա. բայց դժուարամարսելի է, մանաւանդ ակարակազմ ստամոքսոց։ Լեարդ սորա և ստամոքս՝ ունի զգործունէութ՚ի՚ յարդելու զհոսումն լերդի, և՚ի փարատել զցաւս կրծոց։

Անաատրքա, լտ. և իտ։ զորմէ տե՛ս Հատ. ա. երես 150։

Անաքարաս. է պտուղ ինչ՚ի չափ մեծուե փոքրիկ շագանակի, կմ ստուար բակլայի, այլ երկայնաձև, որ ըստ զնմանութ՚ենն սրտի թռչնոյ, վասն որոյ և կոչեցաւ անաքարաս, որ է բառ յունական. և ծագի՚ի բառէս քարտիա, որ է սիրտ։ Գոյն նորա է սեաւ, և շոշոլուն, և շուրջ զնովաւ պատեալ կայ կեղև

ինչ նուրբ և կարծր, դրեթէ ըստ կեղևոյ մերսումն բակլայի. բայց ընաստաբեր է, զոր ՚ի բաց հանեալ, զմիջնեն ՚ի կնր արկանեմք ՚ի դեղորայս, որ է զօրաւոր սրտի, ուղղոյ, և ստամոքսի, օգտակար է նաև ընդդէմ աւենդից. յորմէ և սովոր են ՚ի հնդկաստան կազմել ազգ մի քաղցրաւենուոյ, քօնֆէցիոնէ ոմն անուանեալ յիտալացւոց: Ծառ նորա գտանի յաշխարհն հնդկաց, որոյ տերևքն են բոլորշի. իսկ պտուղքն երկու երկու զեռելեալք առ միմեամբք յողկոյզս՝ կախին զոտոց ծառոյն:

Ընկեթուտ կռավէօլէնս, լտ: անկեօ, իտ: անէթ քիւանթ, գղղ: բարութօանս հնթէին. կամ անիւթօս, յն: տարտղօթու կամ տուբտղօթու, և կիմ տուբտքօթու, տճ: չինփուլ, կամ ոէպէթ, կամ շէյպէթ, և կամ չէյպէ, արբ: և ըստ մեզ՝ սամիթ: Ի պարսպատ, փափուկ, անուշահոտ և քաղցրահամ բոյս ինչ, յազգէ խաւարտից, ըստ ձևոյ, և ըստ տերևոյ նման վայրի սամթի, (այն է րէզիանայ): Ծառիկն ելանէ ՚ի պապաթան, և ՚ի վերայ ոստոց, որք ձևանան ՚ի ձև հովանոցի, և են դեղնապոյն, հինգթերթեան, զօրէն վարդի. զկնի ծառիկանց արտադրէ պտուղ փոքրիկ, և խրտաքանչիւր հատ պտղոյ ունի երկու երկու սերմունս ձուաձև, տափարակս, և ոտպահամս: Իսկ արմատն կարծր է և ոևէական, շրջապատեալ բազմաթելիւք: Բուսանի սա ՚ի բուրաստանս: Ծաղիկ առատ է նեղով և ալիս, սակայն գլխովին անպիտան է ՚ի դեղորայս, որոյ սերմն և եթ ՚ի գործ ածի ՚ի դեղորայս, որ է փարատէ քամոյ, և հեծկլտանս. և դրդուէ կաթին, և միզի, և զօրացուցէ ստամոքսի, այլ և արգելու զփսխումն. զի է խթէ բնութէ: Ազգն ՚ի 20 տարեաց ժինջև ՚ի մի տրամ:

Անէթօ. տես Անէթուտ:

Անէմոնէ, լտ. և իտ: անէմօս, յն: նիւման էնէին, կամ էէլինճիկ էնէին, տճ: ըստ մեզ՝ հարանուկ կամ հողմածաղիկ: Ի տեսակ մի կարգաբուսոյ. որոյ տերևքն են բազմապատիկ, փափուկ, եզերատերձ, և երկայնական՝ նման ըստ ինքեանս մոլորշի, և ՚ի միջոյ տերևոց ելանեն ցօղունք. որք ՚ի ծայրսն բերեն ընդարձակ ածիլ ծաղիկս գայթակղական. որոց տունկք են կարմիր կամ ծխագունատ, տունկք սպիտակ, տունկք մանուշակագոյն, և տունկք կապոյտ և այլ գոյն գեղեցիկ. զկնի ծաղկանց կազդուրեն պտուղքն երկայնաձև, և բազմա-

հատ: Իսկ արմատն խորտաբերատ և Թելալից. լինի սա յաճախ ի բուրաստանս, ի դաշտս, և ի լերինս. լի է նուղով և ալիւ և բնութիւք Թիւնաւոր. օգտակար է ընդդէմ վիրաց աչաց, և ուղղոյ:

— Անթաչիուամ, կամ անթալէ, և կամ Թուպուրլուա մարինուա, լս: Է փոքրիկ խեցեմորթ ծովային՝ երկայն իբր մի և կէս մատնաչափ ուղիղ, և սպիտակ հաստել ի գոյն կանաչ, գտանի ի յատակս ծովուց, նուազ է Թռչնական ալիւ, նոյնպէս և նուղով, և բնութիւք լուծիչ, և ջրացուցիչ:

— Անթէլիչէ, հակուլորտ: Ըստ անդամոցննաց ցուցանի նեղքին ընկալտան արտաքին ականջաց, որոյ հակառակն է արտաքին ընկալտան կոչեցեալ՝ էլիչէ, այսինքն ուղորտ:

— Անթէլիթա կի անթաչիթա, լս: Է անուն հատակ գետնէից, որք գիտակալ են Թռչուս ախտից, և մաքրեն զատամոքսն ի կծու հիւթոց, և ի դրտից:

— Անթիաբօբլէասիա, կամ անթիաբօբլէթիւքա: Ասի երկու բառքն ի հելեալ են. քանզի անթի՝ է բառ յն, և նշանակէ գիտակալ. իսկ աբօբլէասիա՝ նոյնպէս բառ յունական՝ Թարգմանի անդամագօսուԹի կամ կաԹուած: Ոսասի սաեչն Անթիաբօբլէասիա, ասի ընդհանուր գետնոցէից, որք գիտակալեն ախտի անդամագօսուԹե, կի կաԹուածոց, որպէս են ագուսա մէլիսաէ, կի սբիւրիԹուս սուքչինուս, և են և են:

— ԱնթիտօԹուամ, լս: ըստ մեզ՝ անդելս կամ գեղ Թափ. է անուն ընդհանուր ամենայն սեռաց գետնոցէից, որք գիտակալ են ընտանեկար զօրուԹեանց Թիւնոց:

+ Անթիմանիուամ կամ անթիալիուամ, լս: անթիմանիօ, ես: ակռիր ոզոյ կամ ոսատրքաԹաշը, ամ: բուհուԹիչ, արք: պէսմէհ կամ բասխուԹ և կամ սիւրք ախտիէ, պր: ըստ մեզ՝ յունաքար, կի ծարիր կամ ծարոյր: Է հանք լինչ՝ բաղկացեալ ի ծծմբոյ և ի անգիէ. լինի զանգուածով մեծ, և ծանր, երանգաւ սեաւ և փայլուն, բնութիւք քրանաքեր, և ժայթքեցուցիչ, որ յաճախակի ի գործ ածի ի գեղոյս հանդերձ բաղադրութիւք այլոց: Ձաւին ի 12 ցորեանոյ մինչև 30. իսկ եԹէ ոչ բարեխառնեացի, վնասակար է կենաց: Սովորաբար գտանի ի գաղղիա, ի սաքսոնիա, և յանգղիա:

— Անթիմանիօ ձիաչինԹինօ, կամ վէսաԹօ անթիմո-

նիւ, նա: պուզլանամըշ էֆտանմն, ած: և ըտա մէղ՝ անգոյր տատուցեալ, զոր եթէ վուչն արտարեալ կամ՝ ի գինի արկեալ՝ ի գործ արկանիցես, լինի դեղ նմն զօրաւոր և տատակ վախեցուցիչ: Զայն ի մի ցօրէ նոյ մինչև ցերկս կամ ցվեց:

Անթխանիս ախաֆօրէթիքօ թէամօսխուս ուի անթխանիս քօնբօշատաս, նա: տէմիր պօզան թէափէչիրի, ած: ըմ մեզ՝ անգոյր քրտնաբեր, զոր ի գործ ածեմք ի քրտնաբեր և ի յարեան մաքրիչ դեղօրայս, որ և բարեխառնէ զարիւնն, և փարատէ զանընդմիջական աւենդն և զախտս մորթոյ: Զայն ի տասն ցօրեննոյ մինչև ցքսան: Այլ զննութեն սորա տես ի Քէամէս մինէուալէ:

Անթխրինում կամ նարթէս, կիւ օս լէօնիս վուլկո, կիւ չինօչէֆալօս, լա: ակինօս կիւ քէֆալի, յն: Ն ապէ լինչ խոտոյ, որոյ ցօղունն է երկայն իբր մի և կէս ոտնաչափ, և ուղղալից. տերևքն նման են տերևոց մանուշակի, ծաղիկն՝ եղեգան. իսկ պտուղն՝ շանագլխոյ. բերէ և սերմունս մանուն: Լինի սա յայնմ ձախ յատարակս, և ի յաւազուտ վայրս. օգտաւէտ է ընդդէմ թունդութեն երակաց և հոսման աչաց: Սորա է տեսակ մի կոչեցեալ ի բարբառ լատինացւոց՝ անտրինում կամ լնքնիս սիլվէսթրիս, որ լինի միապօղան, վոքրատերև, կարմրածաղիկ. այլ ըստ ընդութեն և ըստ ներգործութեն նման նմա:

Անթհէմիս. տես քհամամէլում:

Անթհօրա, կամ աքօնիթում սալութիֆէրում, կիւ նաբէլում մնիսս, կամ անթիթհօրա ֆլօրէ լուքէօ աքօնիթի, լա: է բոյս լինչ վայրի և տևական՝ յաղէ Ա քօնիթում կոչեցեալ բուսոյ. ցօղուն սորա է երկայն իբր մի և կէս ոտնաչափ, բազմանկիւնի, և վոքր մի թաւամամբ: Տերևքն յոդնաթիւ, բոլորակաձև, և դառնահամ, որք կարդաւ շարայարին առ միմեամբք ըստ նմանութե տերևոց քօնսօլիտա անուանեալ բուսոյ: Ծաղիկն դժդոյն դեղին, վերամբարձ, և տատկահոտ. պտուղն գնատակաձև և թաղանթային, սերմն սեաւ, անկիւնաւոր և կնճռաւալից, նակ արմատն բոլորչի, վոքրիկ, թևապոյն, թեւալից, և դառնահամ: Ա յս բոյս յատճախեալ յայլսեան լեռինս, լի է խաղով և ցնդական ազիւ: Սորա արմատ վասն բուսոյն զօրութե խաղոյ մեղմ ջերմութիւն ունի, նոյ աքօնիթումամ անուանեալ բուսոյ. և դիմակալէ

խածուածոց կատաղի շանց, և այլոց թիւնաւոր զեռ-
նոց. բժշկէ նաև զհիւանդութիս պատճառեայս 'ի
ինասաբեր հիւթոց. այլև օգտէ ընդդէմ ժանտախտի
և փքոտուեն: Ջնոյն գործունէութի ունին նաև սորա
տերևքն:

Անթրիսքուս, կամ քէրօֆիլլում սիլվէսթրէ.
կամ չէրօֆօլիում սիլվէսթրէ, կամ աբիում սիլվէս-
թրէ, և կամ տաուքուս սէբիարիուս, լտ: Է բոյս
ինչ, որոյ ցօղունն է երկայն իբր երկու ոտնաչափ,
կամ փոքր ինչ աւելի, բազմաստեղնեան, ուղիղ,
մթին կանաչ, և թաւամազ: Տերևք նորա նման են
տերևոց չէրօֆօլիօի կամ մոլախնդոյ. ծաղիկն ելանէ
'ի գագաթան, և է հինգթերթեան և սպիտակ,
բերէ և սերմունս մանունս, և երկայնս: Իսկ ար-
մատն կարծր, սպիտակ, և համեմային: Լինի սա յա-
ճախ 'ի ցանկապատ տեղիս. Ճոխագոյն է իւղով, և
ցնդական աղիւ:

Անիզում, լտ: անիչէ, իտ: լ' անիս, գղղ: էնիս,
անդղ: էնիսօն կամ եանսօն, արբ: զէմպան, պր:
և ըն մեզ՝ անիսոն: Է բոյս երկայն իբր երեք ոտնա-
չափ, բազմաճիւղ, բոլորակաձև, թաւամազ, մէջն
դատարկ, յաճախեալ 'ի գաղղիա, 'ի կրետէ. և 'ի
մալդա: Տերևք սորա են երկայն հերձոտ, փոքր մի
սպիտակ և հոտաւէտ: Ծաղիկն ըստ իրաց ինչ նման
է ծաղկան բիմբինէլլաի: Իսկ սերմն կամ ունդն է
նոյն իսկ անիսոնն, զոր չորացուցեալ 'ի կիր արկա-
նեն 'ի կերակուրս, նաև 'ի դեղորայս. որ է ցրուիչ
քամւոյ, փարատիչ ցաւոց կրծոց և փորոտեաց, և
զօրատու ստամոքսի և սրտի, զի է խթիչ բնութ՟ն:
Չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի: Ջնոյն գործունէ-
ութի ունի նաև սորա իւղն:

Անիզում ինտիքում. տես ծինճի:

Անիզում քինէ, կամ անիզում քինէզէ, և կամ սէ-
մէն պատիան, լտ: անիչէ սթէլլաթօ, իտ: անիսաը-
լաշին, գղղ: չին անիսօնու կմ ելտըզ անիսօնու, տճ:
Է ազգ ինչ անիսոնի, որ բուսանի 'ի մէջ աստղաձև
իրիք պատենի կոչեցելոյ լատինական բարբառով
Ֆռուքթուս սթէլլաթուս, ձևով և մեծութեամբ
նման է կորիզի քօլլօ գուինթիտայի. իսկ հոտով և
համով անիսոնի, զոր չինացիք, և հոլանտացիք 'ի
կիր արկանեն 'ի տալ զհոտ օշարակի. բայց մեք 'ի
գործ ածեմք զսա վասն փարատելոյ զխիթս, և աճե-

ցուցանելոյ զախտաժահս կերակրոյ, զի է խթիչ բնութ։ Ազին ՚ի 20 ցորեանոյ մինչև ց60 ։ Ծառ սորա սո վորաբար բուսանի ՚ի չին ընդ ամենայն տեղիս, բայց Հրոմ Հիմնական է մինչև, իակ բուն ստուար, ոչ տակից, գորշագոյն, և քաղցրահոտ, բայց ոչ ՚ի կիր արկանի ՚ի պեղորայս, եթէ ոչ ՚ի ապտա չինութեան տեղանոց ։

Անիզում քինէզէ. տես ՚ի վերոյ ։

Անիթրա. տես Անաս ։

Անիլ, կամ ակնիլ. կամ քօաքնրա, կամ աննիլ. կամ ինահիկօ, կամ ինահիքօում, կամ կալի, և կամ հերպա յօզնմարինի Ֆաչիե, լա ։ Հնահիկօ կամ ինատդ, խա ։ չիվիա, տՀ ։ Նիլէ, ալը ։ լեղակա բոյս՝ ըստ մեզ ։ Ի բոյս՝ յատնախեալ յարևելեան և յարևմտեան հնդկաց, և յեգիպտոս՝ երկայն լբը երկու տունաչափ, և հիւթալից. հասն նորա գառն է ժանգամայն կծու ։ Տերևք նորա բոլորակաձև են և ատուալ՝ ըստ նմանութե տերևոց ատաւոտի. և ըստ կանաչութեան գունոյն նմանի տնկոյ ազմարինայի ։ Իակ ծաղիկն նման է ծաղկան ոլեոսան՝ ըստ ձևոյն և ըստ գունոյն ։ Այս բոյս օգտաւէտ է ընդդէմ նեխեալ և փտեալ վերաց, եթէ փոշիացուցեալ ցանիցի ՚ի վերայ նոցա, նոյնպէս և ընդդէմ ցաւոց գլխոյ ։ Ի բուսոյ սատի արտահանեն հիւթ կապտագոյն, յորմէ կազմեն չորսանգուածս պէսպէս ձևով, և առաքեն յայլևայլ տեղիս, որ այն ինքն է լեղակ ։

Անիմէ, կամ անիմէ կումմի, կամ կումմի անիմէ, կամ վինէա կամ անիմէա, կամ միրմա, և կամ անիմաում, լա ։ Է սպիտակ խէժ ինչ ամերիկեան. որոյ ընտիր և ազնիւն լինի սպիտակ, չոր, դիւրաբեկ, մաքուր, անախորժահոտ, և թափանցիկ. օգտաւէտ է ընդդէմ ջնատաբեր օդոց, և գոլորշեայ, որ սպէս ՚ի կիր արկանի ՚ի ծխանելիս. Ճոխագոյն է խադով և թռչական աղիս, և ընութ ջերմ և կակղացուցիչ. զոր եդեալ ՚ի վերայ ցուրտ ուռուցից՝ վաղվաղակի ցուծանէ. Նոյնպէս օգտակար է ընդդէմ ցաւոց կնոց գլխոյ, և սկսարութե ուղղոյ, եթէ ջերմացուցեալ դնցի ՚ի վերայ վշտապնեալ մասին գլխոյ. այլ եթէ փոշիացուցեալ դնցի ՚ի վերայ վնրաց՝ մաքրէ, և երբեմն բուժէ զնոսին ։ Ծառ սորա է միջակ ըստ մեծութեան ։ Տերևն նման է սալորենոյ մրսոյ ։ Իակ պտուղն ստուար յոյժ, որ կուչի լօպուս ։

— Անիմ ակֆիչէրէ, լա: թրամօրթիրէ, կա: ահա ավէնիմէնթում:

— Անիչէ. տե՛ս Անիզում:

— Անիչէաքլօ. տե՛ս զինանակութիւն սորին 'ի բառն քումինում:

— Անկուէ. տե՛ս սէրբէնա:

— Անկուէլլա, լա: ելան պալըղը, տճ: սէմէք իլհայ, կամ սէմէքվլթաապան, կամ հաեաթ, և կամ ճիրիզ, արբ: մաւժահի, պր: ըսա մեզ՝ օձաձուկն: Զևով մնալնոյն և մեծութիք նման է հասարակ օձի, այլ ատուար քան զնա, որոյ վնան և կոչեցաւ յանուն նը- րա. ունի զմորթս խալային, և մածուցիկս, զոր ե- գեալ 'ի վերայ ուռուցից՝ կակղացուցեալ ցրուէ: Մի նորա է պարարտ, փափուկ, և ախորժահամ, բայց դժուարամարսելի, մանաւանդ սակարակաղմ ատամնից: Սորա ճարպ ունի զգործածունէուն յատա- քինել զխլութիւնն, եթէ խուն ինչ ջերմացուցեալ արկցէ 'ի մէջ ականջաց, և միանգամայն սրբէ զբիծս երեսաց և բուսուցանէ զներս գլխոյ. նոյնպ օգտա- կար է ընդդէմ թունից:

— Անկուխա էպքուլաբլի, լա: է տեսակ մի օձի, որոյ չարժուն է յամր և անշնաս. զի գոլով ընտե- լացեալ՝ յամարոյին ժամանակս մտանէ 'ի տուն և 'ի մահիճս. գտանի յաշխս յափրիկէ, յամերիկա, և յասիա, զոր բնակիչք երկրին ատէպ 'ի կիր արկանեն ըստ օրինակի իժի 'ի բժշկուճ հրատապ տենդից, և ժանտախտի. այլ և հաստատեն թէ օգտակար է ընդ- դէմ թունից և ճնտական ախտից:

— Անկուանթուրա. տե՛ս պրուչէա Ֆէրրուճինէա:

— Անհիմա, լա: է թռչուն ինչ ամերիգեան, մար- ճնով մեծագոյն քան զկարապ. գլուխն ատուար՝ գրե- թէ հաւասար գլխոյ պրտղաղն, կատուցն կոր և սեաւ, աչքն շքեղ, և ոսկեգոյն, շրջապատ նոցա սեաւ, նոյնպէս և բնծքն. ունի 'ի գլուխ իւր եղջիւր, որ է բոլորակ, սպիտակ, ատուար, և երկայն իբր եղ- կու մանանաչափ. պարանոց նորա նման է սագի, այլ առաւել երկայն քան զայն. ունի զձայն ախորժե- լի, որ ընդ. ժամանակս ժամանակս ձիշ բառնայ՝ վկ- հմա վհհմա: Եղջիւր այսր թռչնոյ է դեղ օգտաւէտ ընդդէմ թունից, և ցաւոց արգանդի, և միանգա- մայն օգտ տղայաբերից:

†Անձել սալէ, իտ: անկէլօզ Թուզու, տճ: լը մէզ՝ աղանկելուսի, որ է տեսակ մի ազնուագոյն սալի, զոր քիմեական արուեստիւ կարելն յարծաթոյ լուծելոյ այրիչ ջրով, բնաւթէ է մեղմապէս լուծուղական, զբացուցիչ ալեաց, և վիտրիոլային ստուգիչ մեծագոյն ճճեաց որովայնի, այլև օգտաւէտ ախտի լզգլուելոյ: Ազին 'ի 2 ցորենոյ մինչև 4, առաւ քան քարտաւ. զոր պատրաստեն նաև գիտուն մի կամ երկուս հացի:

†Անճէլիքա կամ արքանճէլիքա, լս: անժէլիք, գղղ: էնճէլիքէ, անգղ: մէլախք օթու, տճ: լը մէղ՝ սաու գաբանի բոյս հրեշտակային: Ցօղուն սորա լինի ուղղաբերձ, ստուար, բազմատեան, և հոտաւէտ, և բարձրանայ մինչև ցերեք ոտս. Ներքին կողմն ցօղնոյ է կանաչախատուն կարմիր: Տերևքն երկայնաձիգ, և եզերք նոցա հերձատք և խիր սղոցաբերանք, որք կարգաւ շարայարեալ կան 'ի վերայ ստուց. բերդ բազմակ 'ի ծայրս նորին ցօղնոյ, յորոյ վերայ հովանաձև բուսեալ կան ծաղիկք, որք են սպիտակ, և հինգ թերթեան. պտուղքն գարունագոյն, բոլորակ, և փոքր մի երկայնաձև, որք երկու երկու բուսանին 'ի վերայ միոյ բաժակի: Իսկ արմատն ջերմահամ, ստուար, և գնատակաձև, շրջապատեալ նուրբ և երկայն թելովք, արտաքուստ առ ստակաւ մի սևագոյն, իսկ 'ի ներքուստ սպիտակ. համ նորա քաղցր է, միանգամայն և ախորժելի գառն: Լինի յամախ յանգլիա և 'ի պօէմիա, որք գերագոյն են քան զորս գտանին ընդ ամենայն աշխարհ. զոր և քաղցրաւենիկ կազմեալ առաքեն 'ի զանազան կողմանս, որպս սերմն առանց եփելոյ ուտի, գեղ օգտակար ընդդէմ յոռի օդոց և դալարջեաց: Եւ այն արմատ է դեղ ընտիր և ազդու ընդդէմ ցաւոց գլխոյ, տկարութենէ ստամոքսի, և սրտի, նաև գերագոյն դեղ ընդդէմ վիքսատուութենէ, թունից, ժանտախտի, ջլային գժուարամարսութենէ, մահաբեր առնդից, խածուածոց թունաւոր օձից, և կատաղի շանց, զի է առաւ խմլով և ցնդական ազիւ, և բնութեամբ խթիչ: Ազին 'ի կէս տրամէ մինչև ցմի և կէս:

†Անճինա. առ Սդուխնանցկիա:

†Անհէր, լս: օքա, իտ: քաբրօա, կամ էքհին, և կամ քօբրօա, յն: գաղ, տճ: վըզ, կամ պոթ, և կամ հուրչխուա, արբ: խարբեկթ, պր: ըստ մեզ՝ սագ:

Է թևաւոր կենդանի մի ջրասէր՝ ի ձև քադի, այլ մեծ քան զայն, և փոքր քան զկարապ, յաճախեալ յաշխարհս աւենայն, միան պարարտ և համեղ, որ՝ ի ժամանակս ձմեռան ընտիր կերակուր է մարդկան. քայց յաճախակի ուտելն առթէ զինաս ստամոքսի: Ճարպ սորա քուսուցանէ զհերս, որոց թափեալ եցէ՝ ի պնսակէ. խաղալեցուցանէ զչընջուն և ըզկենդուն ականջաց. մեղմէ զցաւս թանչէց եթէ ջերմացուցեալ դիցի՝ ի վերայ ախտացեալ մասին մարմնոյ: Կղկղանք այսր կենդանւոյ, զոր լատինք քէնոբրուա կոչեն, լինի դեղ ազդու ընդդէմ միզարգելութեան, և կալուածոց գաչտանի կանանց: Ձաւին՝ ի կէս տրամէ մինչև ցմի ամբողջ. և ըստ ումանց նախընի հելինակաց՝ ուստի և զօրութիւն վիժողական: Նոյնակ զմորթ ոտից սորա լուսեալ՝ ի ջուր ըմպեն, և լինի դեղ օգտակար՝ ի դիպուածս հոսման արեան առթելոյ՝ ի թանչէց:

Անատա, լա: Է ծառ ամերիկեան, որոյ փայտն սպանգային է և թեթև: Տերևն երկայն, ջլային, և սայրատուր: Ծաղիկն լայնաբաց, և դեղնագոյն: Նոյնակ պտուղն ուտի զձև կաղնւոյ, պատեալ երկու կեղևովք, այլ ըստ համոյ նման չագանակի, բնութեբ լուծողական, և տաղտկացուցիչ. զոր լուսեալ արկանեն՝ ի ջուր ջերմ, և ելանէ յերեսս ջրոյն իւղ թանձրացեալ իւղ կոչեն՝ օլէում անատա, զոր լցեալ յանօթս առաքեն՝ ի զանազան կողմանս, որ է դեղ օգտաւէտ ընդդէմ տկարութեբ անդամոց, օծեալ նովաւ ըզթուլացեալ մասն մարմնոյ, և չփեալ առ հրով՝ զի իւղն այն ընդմտանիցէ ընդ ծակախս մարթոյ, որով և օդաէ: Ջկեղև այսր պտղոյ՝ որ է լուծողական, և կարի ժայթքեցուցիչ բնութեբ, ՝ի գործ ածեն ձկնորսք ՝ի սատակումն ձկանց:

Անակրա արտօր կամ անձէլին, լա: Է ծառ ամերիկեան, որոյ փայտն կարծր է յոյժ, յորմէ կազմեն նաւ: Կեղև նորա գորշապոյն, տերևքն ըստ կրաց ինչ նման են տերևոց դաբնւոյ: Ծաղիկն ծիրանագոյն, և անուշահոտ: Պտուղն ըստ ձևոյ, և ըստ մեծութեբ նման ձուոյ, կարծրակեղև է և տատասկաւոր, որ՝ ի ժամանակս գարնան ընտիր կերակուր են վայրենի գազանաց, որ և լինի մարդկան դեղ օգտակար ընդդէմ ճաճեաց, և որդանց. քայց մեծաւ զգուշութեբ պարտ է՝ ի կիր առնուլ. զայն՝ ի 8 յորենոյ մին-

եև ցւշ. քանզի յոլով անգամ ջնասաքեր լինի, ևս մահաւելթ:

Անտրօսաչէ, լս: անտրխաքօս, յն: Ե կնիւն ինչ թաւամազ որ բարձրանայ յերկրէ նըր կէս ոտնաչափ: Տերևք նորա են երկայն, լայն, թաւամազ, և ջայլն զօրէն ջղախտոյ, շրջապատ նորա սղոցաձև ատամնաւորեալ: Ծաղիկն վոջրիկ, սալիտակ, և հինգթերթեան: Պտուղն վոջրապոյն, և ատուար հանգոյն ոլեուան, որոյ մէջն լի է կարմիրերանգ և ելլ կայնաձև սերմամբք: Իսկ արմատն նուրբ, և թելաւոր: Սովորաբար բուսանի յայնուն ծովու, և յանտառս. առատ է աղիւ. օգտուէտ 'ի դիպուածս միզ արգելութեան, ջրգողութեան, և յօդուածոցասւոյ թեան:

Անտրօսէմում, կամ քլիմէնում, կամ հէրպա սիքլ լիանա, լս: անտրօս կամ անիր կամ էմիս, յն: Ե տունկ ինչ ձախանային, և ռետնահամ. որոյ ցօղունն ոչ բարձրանայ աւելի քան զերիս ոտնաչափս, և է ուղղաձիգ, բոլորակ, և փայտային: Տերևքն ըստ ձևոյն նման են տերևոց հիբէրիքոսի անուանեալ բուսոյ, այլ քաւտպատիկ երկայն քան զնա. ունի և զհնութա զօրէն բաշտանի. և դոյն նոցա գեղեցիկ կանաչ յամարային ժամանակս. իսկ 'ի ձմեռան կարմիր են, միանգամայն և խոցոտեն: Ծաղիկն բուսանի 'ի գագաթն, և 'ի ծայրս ստեղանց, և է դեղնագոյն, և հինգթերթեան՝ ըստ նմանութե ծաղկանց վերոյհշեալ հիբէրիքումի, բայց լինի մեծ և շքեղ: Պտուղն է հատ փոքրիկ, անկիւնաւոր, և կանաչ. այլ 'ի հասանիլն փոխարկի 'ի գոյն սեաւ, ունելով 'ի միջն սերմն փոքրիկ, և թխագոյն: Իսկ արմատն երկայն, և փայտային: Այս տունկ գտանի յաձախ 'ի կղզիս, և 'ի բուրաստանս. և է դեղ աղդոցական ընդդէմ դժնդակ և մահաբեր սեռից, խածուածոց կատաղի շանց. նաև դիմակալէ ախտից միզարգելութե, և զայրացեալ վնրաց, միանգամայն և լուծանէ զբար գոյացեալ յերիկամունս մարդոյ:

Այլև սատակէ զորդուն և զճճիս որովայնի:

Անտրօսէմում էմինուս, լս: սեաս Հիբէրիքում:

Անքհուսա թինքթօռիա, կամ ալէխիանոն կամ ծնօքիէս, կամ պուխլօսաւում, լս: օռքանէթ, գալ: Է բոյս ինչ վայրի, որոյ ցօղունն է նուրբ և երկայն եթէ մի ոտնաչափ, որ յերկիր խոնարհեալ ձևաց

նայ իբր զաղեղն ։ Տերևն ըստ իմիք նման է տերևոց
վայրենի եզնալեզուի ։ Ծաղիկն ծիրանագոյն և ձա-
գառաձև. 'ի ներքոյ ծաղկան ունի բաժակ, և 'ի
մէջ նորին բաժակի զետեղեալ կայ գորշագոյն սերմն՝
նման ըստ ամենայնի գլխոյ իժի ։ Իսկ արմատն ստուար
իբր բթաչափ, յղկեալ, փոքր մի թեքեալ, և պա-
րարտ, զորս խոցեալ եղեգամբք, արձակէ հիւթ բազմ-
երանգ ըստ նմանութեան բաղադրեալ օղեաց, և բնու-
թեամբ սեղմիչ, միանգամայն դեղ ազդողական ընդ դէմ
որովայնալուծութեան, և թանչից ։ Այս արմատ սկսա-
նի ժողովիլ յաւարտ օգոստոսի՝ մինչև ցսեպտեմբեր,
և չորացուցեալ 'ի հովանաւոր տեղիս լոսեն 'ի փո-
շի, և 'ի գործ ածեն վիրաբոյժք 'ի բուժումն հնա-
գոյն վիրաց ։ Լինի սա յաճախ 'ի լինկուատօքա, և
'ի բրօվէնցա, և յայլ նման աւազուտ տեղիս ։ Է
սորա և այլ տեսակ ինչ, որոյ ցօղունն է առաւել
երկայն, իսկ ստուարութեամբ նման նմա. գտանի յա-
սիա, և մանաւանդ 'ի մեծն պօլիս, որ կոչի անքհու-
սա տի քօսթանթինօբօլի ։ Տերև սորա է լայն, մեծ,
և թաւամազ, զոր 'ի գործ ածեն 'ի պէտս երիշկի.
գոյն նորա սովորաբար է մթին կարմիր, բայց գտա-
նի և ծիրանագոյն, որպէս և ոմանք խայտախարիւ ։
Իսկ արմատն երկայն ստուար իբր զբազուկ մարդոյ,
կարմրակեղև, սպիտակաբոյս, և հիւթալից, յորմէ
կազմեն օղի, որ լինի ընտիր և ազնիւ յոյժ քան զայ-
լոց կողմանց, զոր մինչև յեւրոպիա տանին 'ի վա-
ճառ ։

— Անքհուսա ալչի պիանտօն ։ տես պուկլօսսում ։

— Անքօտինէ կամ անքուտինէ, իտ ։ Է անուն ան-
գամազննական, որով ցուցանի՝ մինն յերից փոքրիկ
ոսկերաց 'ի ներքս ունկան ։

— Անօտինա, իտ ։ Է անուն հասարակ ամենայն
թմբրեցուցիչ և ցաւոց մեղմիչ դեղորէից, որք մեղմ-
օրինակ ներգործեն առանց ինչ ցաւոց, որ ըստ մեզ
առձայնի՝ մեղմացուցիչ դեղորայք ։

— Աշէլլի. տես միլլէբէտէ ։

— Աշէլլուս կամ մէրլանճիուս, լտ ։ նաշէլլօ, իտ ։
Է ձուկն ինչ ծովային, երկայնութիւն ոտնաչափ.
իսկ ստուարութիւն է իբր բազկաչափ. գոյն նորա սպի-
տակ և փայլուն, աչքն մեծ և սպիտակ. բերանն
միջակ, ատամունքն մանր ։ Իսկ 'ի մէջ գլխոյ ունի
երկու փոքրիկ սոկերս կարծրս, լայնս, և երկայնս,

որք ճն գեղ ընդդէմ միզարգելուե, աերունակաթու-
թե, երիկամնաժեռուութե, և որովայնահոսուութե,
միանգամայն և լուծանէ զքար գոյացեալ յերիկա-
մունս մարդոյ. քաղցրացուցանէ նաև զթթու հիւթս
մարմնոյ, եթէ փոշի արարեալ խառն ընդ ջրոյ արբցի.
չափն ՚ի 10 ցորենոյ մինչև 30:

— Աչիթէա: է տեսակ մի ջրգողուե որուլային. զոր-
մէ տեսցես հա. ա. եր. 150:

— Աչիրօն. տե՛ս Հիբէրնիքում:

— Աւրթօուր, լտ: է կեղև ինչ անդամ, յաճախեալ
յասիա, լաւ ձևոյ և լաւ գունոյ նման կինամոնի.
այլ առաւել ստուար քան զայն. ջունի մանաւանդ ինչ
հոտ. չահաւէտ է ընդդէմ քամոյ:

— Աւրա կամ կալլենատա, լտ: է տեսակ մի ար-
ջառոյ ՚ի ջուխ արծուոյ, այլ գունով տեւաւ. կաուցն
կոր հանգոյն թուրթակի, ՚ի գլուխն վոսկանակ վե-
րոյ ունի ալուամազ քնքուշ և կծկեալ, հոտ նորա
զարգիր, թաթք ոտից ճիրանաւորք: Իակ կերակուրն է
ապառաժ, և զեռունք, Ա՛յս թռչուն առաւօրապար
պատանի ՚ի մէքսիքոն և ՚ի նոր ոսպանիայ. լի է ցնդա-
կան ալիւ և խաղով. զմիս նորա եփեալով ուտեն՝ որ է
դեղ ընդդէմ ուրկուութեան, և դալկան:

— Աւրանճիուտ, լտ: նոյն է ընդ բառին Աւրան-
ցիուտ:

— Աւրանթիուտ կամ արանցիուտ, կամ աւրան-
ճիուտ, կամ աւրէուտ մալուտ, կամ մալուտ կամ
էնթուտս աւրանթուտ, կամ քսմուտ նեռանցկուտ,
և կամ նարանճիուն, լտ: օրանժ, գող: է պտուղ
անուշահոտ, որոյ երկու են տեսակք, զառաջինն կո-
չեմք ՚ի մեր քաղքեաս նարինջ, զոր լատինք մալում օս-
պերում անուանեն, և իտալք մելարանչիա, կամ
արանչիա, և կամ մելանիօլա, և յոյնք՝ ֆռաակ. և
զերկրորդն՝ նարինկ, կամ նարնճ, կամ օրանֆ, և կամ
միւթիթէքիա, և պարտք՝ պոմթիւշ, կամ տէպալէ, և
կամ նարէնք, և կամ նարնճ, իսկ տաճկիկք՝ թուռ-
ռունճ: կեղև նորա է ստուար և կանաչախատուն դե-
ղին, և դառնահամ, և խթիչ բնութե, որ լինի դեղ
ընտիր ընդդէմ տկարութե ստամոքսի, ջաց և ուղ-
ղոյ. քանզի լի է խաղով և ցնդական ալիւ: Մէջ
նորա դեղին և հիւթալից, և թթու գրեթէ որպէս
զլեմոն, և բնութե թուլացուցիչ. կորինդոնամն է կո-
րնդի կիտրոնի: Իակ երկրորդն կոչի ՚ի բարբառ լա-

ունացուց՝ Աուրանթիում տուլէ. զոր լատ. արան-
ջիա տօլէ, իակ տճ. քօրթուգալ. որպ կեղևն է
կարմրախառն դեղին փոքր մի քաղցր միանգամայն և
համեմային. մէջն կակուղ, և ջրալիր և առ փոքր
մի թթու, այլ ախորժահամ, որ և բնութէ զովա-
ցուցանէ զտապ արտի, դիմակալէ փտախտութեան,
հանապազօրեայ աենդից, և փորհարութէ, մանա-
ւանդ յորժամ խառնի ընդ շաքարի բաղադրելոյ վար-
դի ջրով: Իակ կորիզն ունի նմանութիւն ընդ վեր-
նոյն: Ծառք սոցա լինին փոքրիկ, վշալից, և մշտա-
դալար. տերևքն ըստ երից լինչ նման են տերևոց
դաբնուոյ, և բնութէ խթիչ և ղօրացուցիչ: Իակ ծա-
ղիկն գեղեցկատեսիլ, հինգթերթեան, սպիտակ, և
հոտաւէտ, որք են դեղք ազդուլականք ընդդէմ տկա-
րութեան արտի և ջլոց, ցաւոց գլխոյ, ստամոքսի,
որովայնի, և արգանդի, զի է խթիչ բնութեամբ:
Ջնոյն ունին գործունէութէ՝ ի ցքահանէ եւրոպիոյ
ջուրքն:

— Աուրանթիում տուլէ, լատ: տէս զբառն տուր-
ցիում:

— Աուրէում մալրում, լատ: տէս Աուրանցիում:

+ Աուրիբիկմէնթում, կամ արսէնիքում սթավրում,
լատ: ռէալկալ Ճիալը, կամ օրբիմէնթօ, իտ: քիլը,
յն: զըռնըգ կամ զիրնիխ, տճ: զըռնըխ, արք: զռնէ,
պր: ըստ մեզ՝ զառիկ: Ի ազգ լինչ մկնդեղի, որպ են
երկու տեսակք, մինն է հանք մածմամբ գոյացեալ՝ ի
պղնձափորանոցս, որ լինի կարծր և խիտ հատու-
ածք, որք խոշորութէ, ձևով և գունով պէսպիսա-
նան՝ ի միմեանց: Ոմանք են գնդլին իբր ոսկեգոյն և
փայլուն, իակ այլք են կանոչահար դեղին, և պապը-
ղուն, բայց ընտիր և պղնիձն լինի ոսկեգոյն, և շող-
շողուն. յորմէ արկեալ՝ ի հուր՝ բուրէ զհոտ ծծմբոյ,
զոր լսեալ՝ ի միոչի՝ ի գործ ածեն՝ ի նկարս՝ իբր դեղ-
նագոյն ներկ. նաև՝ ի թափուածն հերքաց մարմնոյ
հանդերձ բաղադրութէ կրոյ. բնութէ են թունա-
լից՝ միանգամայն և մահաբեր: Իակ միւսն է արուես-
տական, որպ մի սման է ծծումբ, և լինն միկնդեղ,
այլ ըստ բնութէ և ըստ ներգործութէ նման նմա:
Սորա մեծ սման գայ՝ ի ներքին կողմանց եւրոպիոյ,
մանաւանդ՝ ի գերմանիոյ, ուր գտանին առատութեր
բովք պղնձոյ:

+ Աուրիքուլա եուսէ, կամ ձիւնիւղ սամպուքուս,

կամ Փուռնկուս Ամմպրանչէուս, լտ: օրէքքիօ տէ՛ ձիուտա, խտ: միւրվէր ժանթարը, տճ: էֆ սուռնկ ինչ անկանթ և գորչագոյն՝ որ գոյանայ՝ի քուռնս միւրվէր ծառոյ, մեծութէ՛ ՚ի չափ ականջաց մարդոյ, մէջն թաղանթային, և օճառուտ, և բնութեամբ սաստիկ լուծողականև մահաբեր. զոր ՚ի գործ ածեն ՚ի դեղ արտաքին ուռուցից, և բորբոքականութէ՛ որկորոյ:

✦ Ասուրկուլա էջբօրիա, կամ պուբլէուրօն անկուա թիֆօլիուա՝ հէրպարում՝, լտ: օրէքքիօ տի՛ լէբռէ, խտ: Թավշան գուլտղը, տճ: ուլտ իլէռնէպ, արբ: և ըստ մեզ Թարգմանագրի՝ ունին նապաստակի: Է՛ բոյս ինչ երկայն լբը տոնաչափ, նուրբ, բոլորակ, յղկեալ, փայտային, կարմրերանգ, և մէջն դատարկ: Տերևք նորա են ջլային, երկայնաձև, և ծայրաւուր, յորմէ ըստ ասելոյ տմանց՝ ունի զձև ունկան նապաստակի, որոյ վրան և կոշեցաւ յանուն նորա: Ծաղիկն ելանէ ՚ի գագաթէն, և է դեղնագոյն, հովանաձև, և բազմաթերթ, որ բերէ զձև վարդի: սերմունք նորա դարոնագոյնք, երկայնաձևք, և տտպահանջք, և բնութէ՛ քրանաբեր, և ջրացուցիչ: Իսկ արմատն փոքրիկ, գալարեալ, և կանաչագոյն, համ նորա թթու և դոյզն ինչ գառն, որպէս և բոյս նորա: Բուսանի սա յանապատս և յամայի վայրս, լի է խաղով, այլ մինչև աղիս:

✦ Ասուրկուլա ուրսի, լտ: օրէքքիօ տի՛ օրսօ, խտ: այն գուլտղը, տճ: ուլտ իլ ասիպպ, արբ: քատ մեզ աստուգաբանի՝ ունին արջոյ կամ արջունկն: Է՛ խոտ ինչ յատկէ վոլոմոսի, որ սովորաբար բուսանի ՚ի քեաոք երկրի, տրճակելով յարմատոյ զտերևս ջլայ ինս, և ապուռամազուտս՝ քան նմանութէ՛ ունկան արջոյ, յորմէ կալաս և զանունն. և ՚ի միջի տերևոյն ելանէ ցօղուն երկայն լբը ութ կամ ինն տոնաչափ, աեաս, բոլորչի, և հինթալից, որ ՚ի գագաթան բերէ երկնագոյն ծաղիկ միութերթեան և ծայրահերձ. համ նորա քաղցր է միանգամայն և տաքուկ, որպէս և հինթալից տերևք նորա: Պտուղն ունի զձև ձուոյ, այլ ՚ի չափ ատուտրագոյն գարուոյ. ունի և բաժակ երկայնաձև, յորում լի են մանրիկ սերմունք անկիւնաձև: Իսկ արմատն՝ կարմիր շէջ ապտաեալ նուրբ թելովք: Ասէ խոտ յատկեալ ՚ի քարուտս, ՚ի լերինս, և ՚ի խոնաւուտս տեղիս, լի է խաղով, և ա-

զիւ. օգտակար է ընդդէմ հազի, և միզարգելուն՝ լուծանէ նաև զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ:

Աուրիքուլարիա, լտ: տես ֆօրֆիքուլա:

Աուրում, լտ: օրօ, իտ: մալակմա, կմ խրուֆի, և կամ ֆլուրի, յն: օռ. գղղ: կօլտ, անգղ: ալթըն, տճ: տէհապ, կամ զէհէպ կամ ազզէթ, կամ թիպիր, կամ տինար, կամ զէզիր, և կամ ագրաբան, արբ: զէր, կամ բէրբէրէ, կամ բէրիչէ, կմ ռուքնի, կամ զէրսա, կամ զէրթիլի, կամ զէրճաֆէրի, կամ ժավ, կամ ռավէ, և կամ շէշսէրի, պր: և ըստ մեզ՝ ոսկի: Ծանրագոյն, և զտագոյն է սա 'ի մէջ ամենայն հրահալելեաց. առաւել գտանի 'ի սմա մասն ծծմբային՝ քան սնդկային, զօրացուցիչ է ամենայն անդամոց, սրտի և ջղաց. բայց չէ սնուցիչ. Գիտել արժան է, զի զկիրառութիւն սորա 'ի ներքուստ՝ նախ քան զամենայն ծանեան ազդք արաբացւոց:

Աուրում ֆուլմինանս, լտ: Է դեղ ինչ պատրաստեալ յոսկւոյ հալելոյ. զօրութ՝ է լուծիչ ներքին կալուածոց, և օգտաւէտ 'ի դիպուածս ախտի, որ ասի՝ բասսիօնէ իլիաքա. և ևս ապաքինէ զվէրս անբուժելիս:

Աուրում ֆօլիում, կամ ֆօլիաթում, լտ: ֆլօրում ֆիլօ, յն: ալթըն վարաք. տճ: և ըստ մեզ՝ ոսկեթերթ, որ ստէպ 'ի հապս և 'ի մաճունս 'ի գործ արկանի:

Աչէթապուլում, լտ: Է բոյս ջրասէր, որոյ են երկու տեսակք. առաջինն է մեծ, որ բուսանի 'ի վերայ քարանց, և 'ի յատակս ծովու, որ և կոչի՝ աչէթապուլում մարինում բռօչէռիուս, որոյ տերևն է նրբականթ, գորշագոյն, և կծուահամ: Իսկ միւսն կոչի՝ աչէթապուլում մարինում մինուս. սորա ձև է այլատեսակ և փոքր քան զնա, այլ ըստ գունոյ նման նմա: Լինին սոքա յաճախ նաև 'ի վերայ խեցեմորթաց. առատ են աղիւ, և բնութ՝ բացողականք, որով և յորդեն զմէզն, և ապաքինեն զջրգողութին, և զդալուկն:

Աչէթում, լտ: աչէթօ, կմ օսսիաչէթիքօ իմբուռօ, իտ: վինէկռ, գղղ: քսիտի, յն: սիրքէ, տճ: խայլ կամ սիքիյիֆ, արբ: սիրքէա, պարս: և ըստ մեզ՝ քացախ: Է թթուածն գինւոյ, որ 'ի կիր արկանի 'ի կե-

քակուրս և 'ի դեղորայս. զօրութիւն է թուլացուցիչ և զովացուցիչ, և խլրև Ճչգրիտ դեղիւք ընդդէմ ամենայն փտահոտից, ժանտահոտից և թխնոյ ախտից. դիմակալ է ամենակերպ թխնալից օդոց, և հիւթոց: քանզի տեսանեմք, զի խորշակահարեաց զպատմուճան Ճանն թացեալ քացախիւ զգեցուցանեն նոցա, և ապաքինեն: Դարձեալ՝ օգտաւէտագոյն է 'ի դիպուածս ամենայն ջերմահոտից, զի փարատէ զջերմուիթն արեան, հատանէ զծարաւն, շարժէ զքնրան, զտանէ զընկնատակսր հիւթս խառնեալս յարեան, միանդամայն և փարատէ զզրուանս ստամոքսոյ. և և մաքրէ զվէրս լուացմամբ, և ջոյս նոցա նեխել:

Աչէթում անթիբէսթիլէնցկալէ, լտ: տես աչէթօ ում գուաթուօ լատրի:

Աչէթում մուլսում, լտ: օսախմէլէ սէմբլինչէ, և կամ աչէթօ մելաթօ, իտ: օքսիմէլի, յն: սիրքէն ճէպին, տճ: ըաքան չաղին, պր: և ըստ մեզ՝ քացախաթան: Է ըմպելի ինչ բաղպրական յօրինեալ 'ի քացախոյ, և 'ի սպիտակ մեղրէ. բնութիւն է հովացուցիչ, և զովացուցիչ, օգտաւէտ դեղ ընդդէմ ամենակերպ ջերմահոտից, և փտահոտութեանց. զօրացուցանէ զստամոքսն, լուծանէ զկպչուն հիւթս, յորոց պատճառին պէսպէս ախտք. չաղին 'ի մի ուռկւոյ մինչև ցերեք խառնեալ ընդ ջոյ գարւոյ:

Աչէթօզա, կամ օքսալիս կամ ռումէքս աչէթօզա, լտ: օզէյլ օռտինէս, գղղ: օքսիս, յն: գուզու պուլսոլը, տճ: հիւմմէթ, կամ հիւմմայէթ և կամ հայիթ, արբ: Թիւրչէ կամ այզուն, պր: և ըստ մեզ՝ Թրթնջուկ: Է խոտ ինչ բազմատեսակ, յորս երևելի են երեք տեսակք. առաջինն կոչի՝ աչէթօզա բրաթէնսիս, կամ օքսիլաբաթում, որոյ տերևն է երկայնաձիգ 'ի ձև ականջաց ոչխարի, կանաչագոյն, ջողջողուն, հիւթալից, և Թթուահամ. ցօղունն է երկայն երբեմն մի և կէս ոտնաչափ, որ 'ի գագաթան արձակի: վարդրիկ ծաղիկ բազմատէջ. բերէ սերմն կարմրագոյն: Իսկ արմատն երկայն կարմրերանգ, և Թանձրամած: Բուսանի առ 'ի գաշտավայրս, և յանտառս. օգտաւէտ է ընդդէմ տկարութեանց սրտի, հոտման արեան, և Թունից, և ևս արծարծէ զզօրութիւն ստամոքսի. այլև օգտաւէտ է 'ի դիպուածս արտաքուստ, և ներքուստ, զոր և 'ի գործ ածեն 'ի կերակուրս, և յաղցանս. զի է Թուլացուցիչ,

միզեցուցիչ և ղովացուցիչ բնութիւն։ Երկրորդն կոչի՝ Աչէթօզա րօթունտիֆօլիա հօրթէնսիս. ցօղուն սորա է երկայն իբրև երկու ոտնաչափ, տերևն բոլորշի, սայրասուր, կարմրերանգ հարեալ 'ի գոյն դեղին։ Ծաղիկ նորա և սերմն՝ նման են ամենևին վերոյգրեալ աչէթօզային. իսկ արմատն է նուրբ քան զնա, այլ ըստ բնութեան և ըստ ներգործութեան նման նմա։ Իսկ երրորդն կոչի՝ Աչէթօսէլլա, կամ աչէթօզա մինօր, որ փոքր է քան զերկոսին, և կարի թթու, այլ ըստ ձևոյ, ըստ գունոյ և ըստ զօրութեան նման նոցա։

Աչէթօ լիթարճիրիօ, իտ։ տես Աչէթօ սաթուռնօ։

Աչէթօ նիթրօ, իտ։ կիւվէրչիլէ սիրքէսի, տճ։ խայլ մէհլի պարութ, արբ։ ըստ մեզ՝ քացախ շնչբորակի. որ է պարզ և սաստիկ թթու, վասն որոյ յարկանիլն 'ի կիր՝ պարտ է խառնել ջուր և մեղր հաւասարաչափ, և տալ ախտակրին լուանալ զբերանն, որ յոյժ օգտակար է ախտի սքօռպութօի։

Աչէթօ շիլլիթիքօ, կմ սգուիլլիթիքօ, իտ։ ատասօղան սիրքէսի, տճ։ խայլ պասալիլ պահր, արբ։ և ըստ մեզ՝ քացախ ծովային սոխոյ, կամ մկնսոխոյ։ Անօսրէ զկպչուն հիւթս մաղասի, մանաւանդ ծերոց. օգտաւէտ է ջրգողութեան, և շնչարգելութեան, և դիւրապատրաստէ զթքանելն. դիմակալէ փտախտութեան, և ունի մասնաւոր գործունէութիւն 'ի շիջուցանել զծարաւն. չափն 'ի մի գրգալէ մինչև ցերկու։

Աչէթօ սաթուրնօ, կամ աչէթօ լիթարճիրիօ, կամ օսսի աչէթաթօ տի բիօմպօ լիգուիտօ, և կամ աչէթօ տի բիօմպօ, իտ։ միւրտէսէնկ սիրքէսի, կամ գուրշուն սիրքէսի, տճ։ խայլ մէրթէք տէհապ, արբ։ և ըստ մեզ՝ քացախ քարմարցակի, զոր բաղադրեն 'ի մի պօքալ ղտագոյն քացախէ, և 'ի կէռ լիպրա քարմարցակէ, որ լինի դեղ օգտակար ընդդէմ խաղաւարտից, ելնդոց, այտուցաց, և վիրաց քաղցկեզի և դաղղիականի, և ընդհանրապէս ընդդէմ ամենայն խոցից պատճառելոց յապականութեան արեան, եթէ թացեալ կտաւն արկանիցի 'ի վերայ նոցա. այլ և ընդդէմ բորբոքման աչաց, զի է թուլացուցիչ, և սեղմիչ բնութիւն։ Բայց գիտելի է, զի միշտ պարտ է յայդպիսի դիպուածս բարեխառնել զայն օղւով, և դառն ջրով. և յայնժամ առձայնի՝

Աբգուսա վէճէթօ մինէրալէ տի կօուլարա։

Աչէթօտի բիօմպօ, իտ։ տեա Աչէթօ սաթուռնօ։

Աչէթօ տէի գուսաթերօ լատրի տի մարսիլիա, կամ աչէթօ քօնթերա բէսթէ, կամ օսսի աչէթիքօ առօմաթիքօ, իտ։ աչէթում անթիբէսթիլէնցիալէ, լտ։ տէօրթ խուսըզլար սիրքէսի, տճ։ խայլ առպա հառամի, արբ։ ըստ մէզ՝ քացախ ընդդէմ ժանտախտի, զորոյ զբաղմազան օգտաւէտուն և զհանգամանս՝ ի մի բան բովանդակեալ բացայայտ ծանուցից յէտոյդայ պատմութիւն։ Զայս քացախ աներկևան՝ ի գործ արկանէին չորս հռչակաւոր գողք՝ ի ժամանակի ժանտախտի՝ ի քաղաքն մարսիլիա, որով թացեալ զհոտոտելիս և զջլուիչս՝ համարձակ մատչէին՝ ի գողանալ զինչս և զկարասիս մեռելոց՝ ի ժանտախտէ։ Յոյժ օգտաւէտ է յամենայնում առաւօտու ըմպելն՝ ի սմանէ յերկու որամէ մինչև ցվեց. կարևորագոյն և պարտուպատշաճ գաւառ զկերաւուրեանն սորա՝ ի դիպուածս տարափոխիկ ախտից՝ եթէ աբստաքուստ թանալով զզգայարանս, և եթէ՝ ի ներքուստ ըմպելով ըստ վերոյիշեալ պայմանի. սմին իրի մարթին՝ ի կիր արկանել զայս քացախ բժիշկք հոգաբարձուք, և այլք որոց հարկ՝ ի վերայ կայ ծառայել՝ ի վտանգի մահաբեր ախտից, որով և անվրէպ լինին անձնատուհ։

Աչէր, լտ։ աչէռօ, իտ։ է ծառ ինչ մեծ և լայնատարած, որոյ կեղևն է կարմիր, և կարծր, փայտն սպիտակ և դիւրաբեկ՝ առ բազում իրս պիտանի, մանաւանդ՝ ի նուրբ արհեստակերտուածս։ Տերևն ընդարձակ, հերձուտ, անկիւնաւոր, որպէս զորթոյ, բայց առաւել սպրատուր, և առաւել երկայնականն. համ նորա գառն է մինդամայն և տաքուկ։ Ծաղիկն դալարապոյն, թերթաւից՝ ի ձև վարդի, որք փունջս փունջս՝ ի վեր երևին՝ ի ծայրս ճիւղոց։ Պտուղքն երկայնաձև և ծոպաձև. և իւրաքանչիւր հատ սպաղոյ ունի մէն մի կորիզ իբր բոլորչի, կարծր, սպիտակ, և ստուար ըստ նմանութեանն կորիզի նարնջոյ։ Լինի սա յաճախ յանտառս, լի է իւղով, և գոյացական աղիւս։ Տերևք այսր ծառոյ են բնութեամբ սեղմիչ, և չահաւէտ փորհարութեան. զնոյն զօրութիւն ունի նաև սորա պտուղն։

Աչէրպինթաս, լտ։ բառիւս այս խմանի՝ անմարս նիւթ՝ ի ատամ քան։

Աչիտուս, լտ: աչիտօ, իտ: ըստ մեզ՝ թթուուտ, կամ թթուեղէն. ըստ քիմիականաց է աղ ինչ հակառակ ալքալի անուանեալ աղիցն:

Աչիտօ սօլֆօրիքօ, իտ: աչիտում սուլֆուրիքում, լտ: տե՛ս 'ի վայր:

Աչիտօ վիթրիօլիքօ կամ աչիտօ սօլֆօրիքօ, կամ օսսի սօլֆօրիքօ, իտ: աչիտում վիթրիօլիքում, լտ: էքշի զաճ սիրքէսի, տճ: ըստ մեզ՝ արջասպային թթուուտ, զոր կազմեն յարջասպոյ բաղադրելոյ ընդ նիւթ կղկղանաց երկաթոյ, որ է դեղ ազդու 'ի դիպուածս սաստիկ հոսման արեան և մահաբեր ջերմախտից առթելոց յուժգնութենէ. զի է զովացուցիչ և թուլացուցիչ բնութ՟ , ըմպելով՝ խառնեալ փոքր ինչ ջրով քինաքինայի. չափն 'ի 5 չթէ մինչև ց10: Այլև ցրուէ զփուքս ընդերաց, և փարատէ զքաղցկեղային ախտ արգանդի:

Աչչիտեօ, իտ: տե՛ս Քալիպս:

Աչչիբիթէր, լտ: սբառվիէռէ, կամ մօսքառտինօ, և կամ մօսքարտօ, իտ: շային, կամ տօղան, կամ աթմաճա, տճ: պաշիկ, կամ սիւրնիաֆ, կամ անքարա, արբ: պաշէ, կամ վաշէ, կամ բաշա, կամ ֆէռակօ, և կամ ֆըրաղօն, պր: ըստ մեզ՝ բազէ, կամ որի: Է թռչուն ինչ յափշտակօղ, գիշատիչ, որկորաժէտ, մեծութ՟ 'ի չափ հասարակ աքաղաղի, և 'ի տեղիս տեղիս նաև արծուաչափ. գոյն նորա է խայտախարիւ, գլուխն ուղղալից, աչքն փայլուն յոյժ, և դժնէհայեաց, կտուցն կոր, կարծր, և սուր, լեզուն լայն, ոտքն, և եղունգն երկայն և կարծր, թռիչ նորա սրավար, և է բազմորսակ և կարի յանդուգն, որ յարձակի 'ի վերայ թռչնոց մեծամեծաց քան զինքն, և ճիրանօք յափշտակէ և ուտէ: Միս նորա և ճարպ են դեղք օգտաւէտ ընդդէմ ցաւոց աչաց:

Աչչիտէնթէ. տե՛ս Աբօբլէսսիա:

Ապէլիչիա, կամ բսէուտօսանթալում քրէթիքում, լտ: սանտալօ ֆալսօ տի քանտիա, իտ: եալանճը սանտալ, տճ: Է ծառ ինչ մեծ, ուղղորդ, բազմոստեան, և գեղեցկատեսիլ, որոյ փայտն է կարծրապինդ և կարմրերանգ, և հոտ նորա անուշակ է և նման հոտոյ սանտալօ րօսսօ անուանեալ փայտի. վասն այսորիկ այս փայտ կոչեցաւ սուտ սանտալ: Տերև նորա նման է տերևոյ ալաթէռնօի.

բայց առաւել բոլորակ քան զայն, որ և է հերձոտ: Սա բուսանի 'ի կրետէ, և անդ 'ի կատարս լերանց. լի է իւղով և ցնդական աղիւ, և բնութ՟ մաքրիչ և սեղմիչ. բայց յայսոսիկ դարս դրեթէ դլխովին է անգործածելի:

Ապիէս կմ բինուս ապիէս, լտ: սաբէն, գղղ: քըմ մըն սբրիւս կմ Ֆէր, անգղ: ապէթէ, իտ: արին, կամ էլաթի, յն: չամ աղաճը, տճ: ըստ մեզ՝ եղևին: Է ծառ ինչ մեծ ուղղաբերձ, ոստալից, և մշտադալար, որոյ երկու են տեսակք. առաջինն կոչի՝ ապիէս քօրնիս սուրում սբէէթանթի, որոյ փայտն է կարծր, խորտաբորտ, հերձոտ, սպիտակախառն կարմիր, և ռեանալից, յորմէ հոսի հիւթ ինչ կոչեցեալ ռէզինա բինուս, այն է չամ սաքըզը, որ է դեղ օգտակար 'ի բժշկուի վիրաց: Ոստք նորա ստուարք են և խաչաձևք: Տերևքն մշտականաչ, կարծր, խիտ, լայն, երկայն, բոլորակաձև, սրածայր, և փոքր մի խայթիչ, որք երկու երկու ելանեն առ միմեամբք: Ծաղիկք 'իվեր երևին 'ի ծայրս ոստոց, որք են թաղանթային, և խոռոչաւոր, յորում լի են մանրիկ փոշիք: Պտուղն կոնոնաձև, զոր լտ. սթրօպիլէ կոչեն: Իսկ սերմն զոր կոչեն՝ բինօքքիօ տօլչէ՝ քաղցր է և փոքրիկ: Իսկ զերկրորդ տեսակն կոչեն՝ ապիէս թէնուիօրէ Ֆօլիօ, և կմ բիքքա լաթինօրում. սորա կեղևն է առաւել թուխ, և ոստքն իբր յերկիր խոնարհեալք: Իսկ տերևքն առաւել սեաւ, այլ ոչ այնչափ կարծր և խայթիչք: Լինին սոքա 'ի կատարս լերանց, և 'ի քարուտ տեղիս, և յաւէտ 'ի լիբանան, Ճոխագոյն են իւղովք և թռչական աղիւք: Տերևք սոցա և շառաւիղք են դեղ օգտակար ընդդէմ յօդուածացաւութ՟, միզարգելութեան. ցաւոց ատամանց, և հարբխոյ. զի է խթիչ և քրտնեցուցիչ բնութ՟: Չափն երկու ունկի ընդ մի լիտր ջրոյ. սովորաբար 'ի կիր արկանի սոցա արդանակն: Բաց 'ի սոցանէ են և այլ քառեակ տեսակք, զորս տեսցես 'ի բառն Բինուս:

Ապութիլօն, կամ ալթէհա, կամ իպիսքուս թհէօֆրասթի, լտ: Է տունկ ինչ, որ բարձրանայ մինչև ցչորս ոտն, յաճախեալ 'ի պարտէզս և 'ի դաշտավայրս. որոյ ճիւղքն են երկայն և բոլորշի: Տերևքն լայնաբաց, փափուկ, ծայրասուր, սպիտակ, և աղուամազուտ, որք բերեն զնմանութ՟ տերևոց դդմի,

բայց առաւել երկայնակ-անթ են քան զնա : Ծաղիկն գեղնագոյն , ըստ ձևոյն նման ծաղկանց մոլոշի : Պտուղն լժալանթային , և սեաւ . ձև նորա ՚ի վերին կողմն տափարակ , իսկ ՚ի ներքոյ բոլորակ , ունելով ՚ի մէջ սերմունս մանուշա և սեաւս : Իսկ արմատն թեւլալից : Ասյս տունկ բնութեամբ է կակղացուցիչ , և հովացուցիչ , որով կակղացուցեալ հովացուցանէ զբերմուեաս ջիղկալից վիրաց , և միանգամայն կցեալ միաւորէ զայնս , այլև օգտաւէտ է ընդդէմ կիզտղաց կանուխ :

✕ Ապանթիւռ , ըստ : ասպէնցիս , կամ : ասպէնթ քօմէօն , գղղ : բօնտիս կամ բանինդթհօս , կամ ա բանթինա , յն : բէլլին օթու , ամ : գէշիւս բոտմի , կամ խէսիւլ կամ էֆսէնթի , կամ շէյպէ խատրա , և կամ ալուքէքա , արբ : խատրէֆ , կամ մաճիաս , պր : ըստ մեզ՝ օշինդր : Է բոյս մի երկայն երեք տանաչափ , փայտային , ճիւղալից , աստակահոտ , և դառնահամ : Տերևն նման է տերևոյ սան ճիօվանի անուանեալ բուսոյ , բայց մանր և սպիտակ քան զայն : Ծաղիկն խարտեաշ , մանր , բոլորակ , և աստղաձև . բեղկ և սերմունս մանուշա : Իսկ արմատն փայտային , ստուար : Լի է խեղով , և աղիս , յորմէ ստէպ հանեն զաղս և զխեղս , և ՚ի գործ ածեմք ՚ի դեղորայս : Ասյս բոյս սովորաբար բուսանի ՚ի բուրաստանս , և ՚ի դաշտավայրս , օգտակար է ընդդէմ տկարութեան ստամոքսի , ջլային դժուարամարսութեան , տենդից՝ մանաւանդ վիշահատական տենդի , ախոնդանոտութեան , յօդուածացաւութեան , և ջղգողութեան . բանայ և զնրբանցեալ ծակոտկէնս երակաց , և զախորժակս կերակրոյ , և ևս աստակէ զորդուն և զճճիս որովայնի . զի է թուլացուցիչ բնութեամբ : Ջաւին ՚ի կէս տրամէ մինչև ցմի , խառն ընդ երկու ունկի ջրոյ : Է որ տեսակ լինէ կոչեցեալ ՚ի բարբառ տաճկաց՝ ուլահ բէլինի , որ լինի մեծատերև և զօրաւոր քան զառաջինն , յորմէ խառնեն ընդ հասարակ կինուոյ առ ՚ի գառնացուցանել և օգտակար գործել , և այնպէս զպատրաստեալն առաքեն աստ և անդ , մինչև ՚ի մոսկուա :

✕ Ապրօթանում , առթէմիզիա ապռօթանում , ըստ : սի թռօնէլօռօն , գղղ : ապրօթանօ , իտ : վրօսկօ կամ վրօթօն , յն : գաւռաբէլին , կամ գաֆնուր օթու , տճ : պայխումէալիս , արաբ : ըստ մեզ աստուգաբանի՝ օշինդր սեաւ : Է բոյս մի , որոյ են երկու տեսակք . ա

ասլինն կոչի ապրօթանուտմաս. այսինքն արու օշինդր սեաս, որ բարձրանայ յերկրէ երբև ջրս կամ հինգ տանաչափ: Ճիւղք նորա են կարծր, կարմրագոյն, և բեկանուտ: Տերևն խիտ, հերձուտ, սաստկահոտ, և դառնահամ, միանգամայն և տուխպ: Ծաղկին մեծուքէ և ձևով նման նորա. բայց գունով է առաւել դեղին: Իակ արմատն կարծր, և փայտային: Բուսանի սա յամենայն ուրեք. բայց զորագոյնն գտանի 'ի յուլահասատան՝ վասն օդոյն և ջրոյն լաւութէ, որ և լինի առատ խլորվ և ցնդական աղիս, և բնութէ խթիչ, նրբացուցիչ, մաքրիչ, ցրուիչ, և բացողական, որով և անօարէ զհանձրամածուքէն հիւթոց. բանայ զանցս միզն, պրգուէ զախորժակս և զդաչտանս, փարատէ զվէրս և զխմակալէ թունից և ճճեաց: Ձաւին մի ունկի ընդ մի լիտր ջրոյ: Իակ զերկդն կոչեն ապրօթանուտ Ֆէմինա. այսինքն էգ օշինդր սեաս, որ առաջին է քան զայն, արմատ նորա է կարծրապինդ, խիտ, և առուտր, և բարձրանայ ապիտակ ստեղամբ երկու կամ երեք տանաչափ, որք և շրջապատեալ զարդարին բնաչափ տերևովք, որք հարկանեն ըստ երից լինէ 'ի գոյն ապիտակ. իւրաքանչիւր ստեղունք արտադրեն ծաղկիս դեղնագոյն, և խոլվակաձև, որք և ունին հնգեակ առաջս բաժանեալս 'ի գագաթանց: Որոց ներսին ունի զմանաւոր լին գործունէուն առ 'ի բաց վանել զորդուն որովայնի, և 'ի գործածուքեան պարտ է պահել զչափ քանակուքեան, որով առնեմք 'ի գործ արկանել զներսին կոչեցեալ ախմին առնթօ:

——Ապրօթանօ, խտ: տես Ապրօթանուտ:

——Ասարինա, կամ ասքսանթիլիս հէտէռուլա, կամ հէտէռ ասքսանթիլիս մակնօ ֆլօրէ, լտ: ի խոտ քաղվածիլ, և տարածողական յաճախեալ 'ի լերինս, մանաւանդ 'ի տէլֆինա անուանեալ լեառն: Տերևք սորա նման են սերևոց էտէռա Թէռռէսթռէլ: Ծաղկին ծերանագոյն, մեծուքեամբ և ձևով նման նեալ անթէրրինում յորջորջեալ բուսոյ. զկնի ծաղկանց յաջորդէ պտուղս դեղեցկատեսիլս, և Թաղանթաւորս. և իւրաքանչիւր հատ պտղոյ ունի մէն մի սերմն երկայնաձև: Ա՝յս խոտ լի է իւղով և աղիս, և է դեղ սեռական ընդդէմ երիկամնաժեստուքէ, միզարգելուքէ, ընչարգելուքեան, և Թոքաժեստուէ:

Ասարում, լտ: ասարօ, կամ սբիկօ սալվաթիքօ, և կամ օրէքքիօ տի ուօմօ, իտ: սէրօ, յն: քապառէ, գղղ: էզարուն, արբ: Է բոյս փոքրիկ և մշտադալար, յաճախեալ 'ի գաղղիա, և յասիա: Տերևք նորա երկայնականթ, գոգաւոր, և ծայրածալ՝ իբր զականջս մարդոյ: Այս տերև է սեղմիչ և մեղմացուցիչ բնութ̄ն. զոր բժիշկք գաղղիոյ ստէպ 'ի կիր արկանեն 'ի բժշկութ̄ն ցաւոց գլխոյ և ամենայն ախտից պատճառելոց 'ի թթախտութ̄է: Ծաղիկն ելանէ առ կանթիւ տերևոցն, և է վերամբարձ, և կարճականթ, ունելով 'ի միջի առէջս ծիրանագոյնս: Պտուղն երկայնաձև, և 'ի միջի ունի հատս կամ կորիզս մանունս, և թխագոյնս: Իսկ արմատն մանր, ձապտոյտ, կոր, բազմանկիւնի, զազրահոտ, և շրջապատեալ գորշագոյն մանրաթելովք: Սա վասն բուռն զօրութ̄է իւրոյ կծէ զռնգունս, և թորէ զարտօսր աչաց, և տայ հզօրեղապէս փռնգալ. ուստի և մաքրէ զաղտեղութ̄իս տողունից, և բուժէ զհնագոյն ցաւս գլխոյ: Նախնիք 'ի գործ ածէին աստի 'ի պէսպէս դեղորայս, նաև 'ի ժայթքել, և 'ի լուծել տալ զմաղձն: Իսկ այժմ սակաւք 'ի կիր առնուն յեւրոպիա, այլ պայտառք եւրոպիոյ՝ սովաւ սատակեն զորդունս երիվարաց՝ որք գոյանան յաղիս նոցա, զի է գրգռիչ և լուծիչ բնութ̄ն:

Ասարօ, իտ. տե՛ս 'ի վերոյ:

Ասբալաթուս, լտ: Է փայտ իրիք փոքրիկ ծառոյ եղելոյ 'ի կողմանս հնդկաց, որ լինի կարծր, ստուարակեզև, և փշալից, միանգամայն և օգտակար դեղ ընդդէմ վնասաբեր հիւթոց, և ուշաթափելոց: Արդ՝ բաժանի փայտս այս մանաւանդ յերիս տեսակս, որոց մի տեսակն է անուշահոտ, իւղային, և յոյժ նման հալուէի. բայց միայն գունով տարբերի 'ի նմանէ: Երկրորդ տեսակն սևագոյն է և կարի ծանր: Իսկ երրորդ տեսակն դեղնագոյն, և վարդահոտ, զորմէ լիագոյն տեսցես 'ի բառն՝ լիկնում րհօտիում:

Ասբալթօ, իտ. տե՛ս Ասֆալթօ:

Ասբարակուս, լտ: սբարակօ, կմ ասբարակօ, և կմ սբարաճիօ, իտ: կաթօսֆարակօս, յն: դուշդօնմազ, տճ: և ըստ մեզ՝ ծնեբեկ: Է բոյս անտերև, որ սովորաբար 'ի վեր երևի 'ի սկիզբն գարնան. ստուարութիւն նորա է մատնաչափ, և երկայնութ̄ն ոտնաչափ, և 'ի տեղիս տեղիս նաև կանգնաչափ, և

է ուղիղ, բոլորակ, և դիւրածալ. գոյն նորա 'ի սկզբանն է կանաչագոյն, և ապա առ սակաւ սակաւ սպիտականայ, զոր քաղեալ 'ի գործ ածեն 'ի կերակուրս և յաղցանս: Ծաղիկ նորա է յոգնաթիւ, մանր, և թուխ: Պտուղն փափուկ, կարմրերանգ, և ստուար 'ի ձև ոլեռան, և 'ի միջի ունի սերմունս կարծրս, և սեաւս: Իսկ արմատն երկայն, նուրբ, թելաւոր, գլանաձև, մսաւոր, քաղցրահամ, և մածուցիկ. գոյն նորա արտաքուստ գորշ, իսկ 'ի ներքուստ սպիտակ. բուսանի յաճախ 'ի պարտէզս և յագարակս. լի է իւղով, և գոյացական աղիւ: Արմատ այսր բուսոյ լինի դեղ ազդողական 'ի դիպուածս խցանաց միջընդերաց, նուազութեան ամսական պարտուց կանանց, և միզարգելութեան. լուծանէ նաև զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ, յայն սակս կարգի 'ի դասս հինգ բացողական արմատոց. չափն 'ի 6 տրամէ մինչև 98: Ընոյն գործունէութիւն ունի նաև սորա սերմն:

Ասբարակօ. տես ասբարակուս:

Ասբէր, կամ աբրօն, լտ: Է փոքրիկ ձուկն լճային, որոյ գլուխն լայն է և սուր, որկորն միջակ. գոյնն կարմիր: Իսկ միսն պարարտ և համեղ, և է ընտիր կերակուր, և բնութեան բացողական և միզաբեր:

Ասբէրուլա, կամ բուպէօլա մօնթանա օտօրա. կամ հէբաթիքա սթէլլաթա, և կամ ասբէրուլա գուիպուստամ, լտ: մաթրի սալվա, կամ մաթրի սիլվա, իտ: Է տունկ ինչ բազմացօղուն և անուշահոտ, որ բարձրանայ յերկրէ իբր մի ոտնաչափ: Տերևք նորա նման են տերևոց աբարինէի, բայց լայն և թաւամազ քան զայն: Ծաղիկն ելանէ 'ի գագաթան, և է սպիտակ, և սկահաձև. իսկ մինչ թերթքն ծաղկանց 'ի բաց թօթափին, 'ի վեր երևի պտուղն չոր և փոքրիկ, ունելով 'ի միջի երկու սերմունս փոքրիկս, և տափարակաձևս: Ունի արմատ նուրբ և կարճ շրջապատեալ բազում մանրաթելովք: Սովորաբար բուսանի 'ի լերինս, և յանտառս. լի է իւղով և ցնդական աղիւ, միանգամայն և օգտակար դեղ զօրացուցիչ նուաղելոց, և ուշաթափելոց. գրդռէ զմէզն և զդաշտանս կանանց, և արտահանէ զմեռեալ զաւակն 'ի յարգանդէ. սովորաբար 'ի կիր արկանի սորա արգանակն. և ևս մաքրեալ բուժէ զարտաքին վէրս, եթէ եփեալ զայն լուանայցեն ջրովն:

Ասբէրուկօ, կամ պուկլօսում սիլվէսթրէ քաուլի պուս բլօքումպէնթիպուս, կամ էինօկլօսա ֆօրթէ թօքիսարիա և կամ քրուչիալիս գուսատամ, լա: Ի ֆատ ինչ ձիւղալից, բալմանկիւնի, և խորտաբորա, որ քուսանի զերեսօք երկրի շուրջանակի սփռելով ըզձիւլան: Տերևքն են լայն, խորտաբորա, և սուսարյական թ. որով մի կանթ սորա բերէ երրեակ կամ քառեակ տերևա'ի զանազան ձիւղս: Ծաղիկն երկնագոյն հինգթերթեան, և սուպատատաձև, որ քուսանի 'ի վերայ բաժակաձև սիւնակի, իսկ սերմունքն պարփակեալք 'ի բաժակ անդր՝ են երկայն ձևով, սեաւ գունով, և քառեակ թուով: Լինի սա յաձախ 'ի պաշտս, յեզերս ձանապարհաց, սովորաբար ծաղկի յամսեան մայիսի, և յունիսի. լի է խաղով, և գոյացական աղիւ: 'Ի տերևաց և 'ի ծաղկանց սորին կազմեն արգանակ, և սպեղանի 'ի բուժել զվէրս:

Ասբիս, լա: ասբիսօ, իտ: սէրիզօ կամ քուֆէ ֆիսօ, ֆն: սաղը էրլան, տճ: և լատ մեզ՝ սասպիդ: Է օձ ինչ չարաթոյն, ժանտալից, և մահաբեր. երկայնութեն նորա է իբրև չորս կամ հինգ ոտնաչափ, իսկ սուսարութեն բազկաչափ. սովորաբար գտանի 'ի կիպրոս, 'ի վերին մասն եգիպտոսի, և յերկիրն սպանիացւոց. ճոխագոյն է խաղով և ցնդական աղիւ. որոյ միան, լեարդն, և սիրտն ոչ միայն են օգտակարք ընդդէմ թունից, այլ և դեղք սեպհական 'ի դէպ ուսածս թոքաժետութեէ, ընչարդելութեէ, ցաւոց կրծոց և այլոց այսպիսի նուաղեցուցիչ ախտից. չափն 'ի 10 ցորենոյ մինչև 30:

Ասբհօսէլուս, լա: սաֆօսիլլս, կամ սաթաուէձիա, իտ: Է բոյս ինչ, որոյ ցօղունն է երկայն իբր երեք ոտնաչափ, բոլորակաձև, հարթ, և հզօր: Տերևք նորա նման են տերևոց պրասի, բայց երկայն և խիտ քան զնա: Ծաղիկն ելանէ 'ի գագաթան, և է կարմրախառն սպիտակ, և շուշանաձև. զկնի ծաղկանց արտադրէ զպտուղն գնատակաձև մսալիր, և խոռոչաւոր: Իսկ սերմունքն՝ որք գտանին 'ի պտուղս անդ՝ են թաւխ, և եռանկիւնաձև: Ածի արմատ գնատակերպ, փոքր մի գառնահամ, և թափանցիկ. զոր եփեալ ուտեն իբրև զհաց 'ի ժամանակս սովու, և է դեղ օգտակար ընդդէմ թունից, միզարգելութեան, և նուազութեէ ամսականի պարտուց կանանց: Ոմանք և ընդդէմ հնագոյն վիրաց, եթէ եփեալ ջրոյն

լուանայցեն ։ Լինի սա 'ի քարուտս և յառապար տեղիս ։

Ասէլիանօ, կամ լաթթէի, իտ ։ կաթնալից, կամ կանթնարան. են անօթք ինչ մարդոյ, որք կոչին և քիլիֆէրթ ։

Ասթաքուս մառինուս, լտ ։ լօքուսթա, իտ ։ ըստաքօզ, տճ ։ Է ազգ ինչ ծովային խեցգետնոյ. որոյ միս փափուկ է և համեղ, միանգամայն և օգտակար գեղ ընդդէմ թոքաժետութեան, շնչարգելութեան, և ցաւոց կրծոց, և 'ի մասնաւորի՝ վիրաց քաղցկեղի ։ Եւ 'ի գլխոյ նորա երբեմն ելանէ քար փոքրիկ, և կարծր, կոչեցեալ 'ի բարբառ լատինացւոց՝ քէլաքանքրի, որ լինի գեղ ազդողական ընդդէմ փորհարութեան, հոսման արեան, տկարութեան փամփշտոյ, և միզարգելութեան. լուծանէ և զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ. այլև քաղցրացուցանէ զտապութիւն հիւթոց. չափն 'ի 10 ցորենոյ մինչև ց30 ։

Ասթաքուս սթուվիաթիլիս, լտ. տես քամմարուս ։

Ասթէնիա. տես տէբռիմէնթէ ։

Ասթէր, կամ թինթօրիուս ֆլօս բրիմուս, լտ ։ Է խոտ ինչ բազմաստեղնեան, երկայն իբր մի և կէս ոտնաչափ, ուղիղ, նուրբ, բոլորշի, կարծր, կարմիր, և փոքր մի թաւամազ ։ Տերև նորա է երկայնաձև, անհարթ, դոյզն ինչ դառնահամ, միանգամայն համեմային ։ Ծաղիկն մեծ և շքեղ, լինի երանգաւ կապոյտ, ոմանք մանուշակագոյն, և ոմանք սպիտակ. յետ ծաղկանց արտադրէ սերմունս երկայնաձևս և շքեղս ։ Իսկ արմատն նուրբ, թելաւոր, դառնահամ և փոքր մի ջերմահամ ։ Սա լինի յանգործ, և յառապարին տեղիս. առատ է իւղով և աղիւ. օգտաւէտագոյն է ընդդէմ խածուածոց կատաղի շանց և ուլնացաւութեան, եթէ եփեալ ջրոյն ողողեսցի ուլն ։

Ասթէրիա, կամ ասթրօիթէս, և կամ լաբիս սթէլլարիս, կամ օքուլուս քաթի, կամ սօլիս օքուլուս գուիպուստամ, կամ միթրաքս, և կամ բսէուտօբալուս, լտ ։ պէլլօքիօ, կամ օքքիօ տի կաթթօ, իտ ։ այնի հուր, տճ ։ ըստ մեզ՝ աստեղակն ։ Է ակն ինչ սպիտակ կամ մոխրագոյն. որոյ քառեակ տեսակ են. մի տեսակն է աստղաձև, սպիտակ, ծակոտկէն, և քաջ արտասանեալ, զոր ակնագործք 'ի կիր առնուն 'ի զանազան գործս ։ Երկրորդ տեսակն է կարմրա-

գոյն, և այլևայլան ձևով: Երրորդ տեսակն զոր կո-
չեն՝ սանթրօխիթէա ուռնատուլսիօսա, լայն է քան զերը-
կոսին, սպնգային, ծակոտկէն, և սողոսկեալ: Իսկ
չորրորդ տեսակն է հաստարտկ, ուժգ, սասպաձև, կա՛մ
կատուսակնաձև, և բծաւոր: Զորեքին սոքա են դեղք
օգուտակար ընդդէմ ժանտախտից, և հրատապ տենդից.
այլև սաստկեն զձգիս և զորդուն որովայնի, մաք-
քրեն զարիւնն, տարամերժեն զանդամալուծութեին,
ապաքինեն զորովայնահոսութեին, և քաղցրացուցա-
նեն զերեսս հիւանդ մարմնոյ խառնեալս յարեան.
չափն՝ի 4 ցորենոյ մինչև 920: Գտանին յամենայն
ուրեք:

Աամեռակաչուս, լտ: Է խոտ փոչրիկ, որոյ ցօ-
ղունն է լերդ թզաչափ, կարմրագոյն, և մէջն գա-
տարկ: Տերևք նորա են մանր, կարճ, սպրատաւոր,
գառնահամ, և թաւամազ, մանաւանդ՝ի միոյ կող-
մանէ: Ծաղիկն ծիրանագոյն, և՝ի տեղիս տեղիս
նաև սպիտակ, որք՝ի վեր երևին՝ի ծայրս ճիւղից,
զկնի ծաղկանց արտադրէ սերմունս մանուն: Իսկ
արմատն երկայն երբեմն ոտնաչափ, ստուար, կարծր,
և փայտային. ունի կեղև արտաքուստ թուխ, իսկ
՝ի ներքուստ թանձր, և քաղցրահամ: Այս խոտ բու-
սանի յեզերս ձանապարհաց, լի է խլտով, բայց մի-
ջակ աղիւ: Արմատ սորա արգելու զյորդառատ
հոսումն որովայնի, միանգամայն և բանալ զանցս մի-
զի, զոր՝ի դործ արկանեմք անուարլեր՝ եթէ զորգա-
նակն, և եթէ զնաձուն. օգտուսէտ է նաև վիրաց,
եթէ եփեալ ջրոյն լուացեալ, զի է մաքրիչ և ջրա-
ցուցիչ:

Աամեռանթիա, լտ: սամիր, կն: Է խոտ ինչ,
որոյ տերևքն նման են տերևաց ունիքուլա անուանեալ
խոտոյ. բայց փոչր ևի անհարթ է քան զայն, և՝ի
միջոյ տերևացն ելանեն ցօղունք նուրբք, որք՝ի
կատարս արտադրեն սպիտակախառն կարմիր ծաղիկս
հովանաձևս, և հինգթերթեանս: Պտուղն երկայ-
նաձիգ, ներքին գոյացութեն նորա փակեալ յերկուս
խորշս թաղանթայինս, գառնագոյնս, և գանգուրս
լի խոտորնակ սերմամբ: Իսկ արմատն գնատակաձև,
սեաւ, և թելատոտ. լի է խլտով և աղիւ, և բնութեք
սաստիկ լուծողական երբեմն զսեաւ եղբարս:

Աամուա լաբիս, կամ սամբօֆակուս, լտ: սամբս,
կամ ֆակօն, կն: Է քար ինչ սպնգային, թեթև, դի-

բաւեկ, և դեղնագոյն. բնութիւք է թափանցկիկ, և մաքրեալ սեղմէ զվէրս մարմնոյ, եթէ փոշիացուացեալ ցանիցի 'ի վերայ նոցա:

++ Ասա ֆէթիտա, լտ: ասաա ֆէթիտա, կամ ծալ ֆէթիքա, և կամ ծաֆֆէթիքա, լտ: ասաաֆետիտա, յն: հանթիւթ, կամ խըլթիւթ, արբ: ապուքինաիր, հէթան պոքու, տճ: է խէժ լինչ կոյտ, դեղնագոյն, մաքուր, և ջոր, և 'ի միջի ունի ապիտակ կայլակս կամ շիթս բազումս. և հոտ նորա զազիր, և տուր զօրէն խատորոյ. լի է իւղով, և ցնդական աղւս. անօտրէ զթանձրամածուիթն արեան, և դիւրապատրաստ յօրինէ զչրջանս նորին. ցրուէ զքամիս, ապաքինէ զցնցուումն ուղեղոյ, և զնոթոց ցնցականս, և զինչարգելուիթիս. ատամակէ զձգիս որովայնի. և է դեղ սեփական ընդդէմ ամենակերպ ախտից ջղաց, և արգանդի. ըստ ոմանց զթշնամուիթիւն մեծ ընդ չղէ կանանց, զոր յուտէն կամ 'ի հոտոտելն վնասէն: ջամին 'ի 12 ցորեանոյ մինչև 24: Ծառ այսր խիժն փուքը է, ոտտալից, զոր կոչեն՝ ֆէտուլա ասաաֆէթետա, որ սովորաբար բուսանի 'ի հնդիկս, և 'ի պարսս: Արձակէ տերև նման տերևոյ վեղենայի: Յորժամ քանի մի ծառք 'ի ծառոց ասաի գտանին ատ մէջ մեամբք 'ի միում վայրի, բուրեն չուրջանակի հոտ զաղիր, և վատթար, զորոյ հերձեալ զկեղևն արձակէ հեղանիւթ, որ 'ի ցրտանալ իւրում թանձրացեալ պնդանայ, և հոտ նորա ատաւել ատամկանայ, և յայնժամ սիրտպէս կոչի խէժ, որ 'ի լատինացւոց սեռօրէն յորջորջի՝ կումմի ռէզինա ասաաֆէթիտա. և 'ի բարբառ իտալացւոց կոչի և ասֆէտիդուս տխաղի, որ թարգմանի ապաւառ. ատամանայի:

— Ասահնգիս, լտ: տե՛ս Ասպինթիուս:

— Ասատունձիա, լտ: տե՛ս տունձիա:

— Ասատոպինթէ, լտ: էմիձի, տճ: է անուն ընդհանուր, որով նշանակին կլանող դեղորայք որք ունին 'ի բնութեան զմայնաւոր զօրութիւն դիւեցոլական, յինքեանս ձգելով զաւերտիդ խոնաւութիւնս ատամոքսի, և փորոտեաց. որպիսի են քօրալլօ, բէրլէ, օքքի տի քանքրօ, մայկնէզիա ալպա, թէրրա սիճիլլաթա, և այլն:

— Ասթալօնիա, կամ չէբա ասթալօնիքա, լտ: սթալօնէօ, լտ: է կաղամբոյս ինչ սոխաձև. որոյ յօղունն է ատուտը, ատապատոցն, և մէջն դառուրկ: Տերևն

հրկայնաձև, ուղիղ, և իայթէէ: Ծաղիկն վեցթեր-
թեան, և շուշանաձև. պտուղն բոլորշի, յորում լի
են բոլորակ սերմունք. իսկ արմատն բոլորշի, և
սաստկահոտ: Բուսանի յանտառս և՚ի հովանաւոր
տեղիս. լի է իւղով, և գոյացական աղիւ, և բնութէ
բացուլական, և միզաբեր. որով և մաշեալ լուծէ
զքարիկս միզարանի. բանաց և զանցս միզի. և ար-
ծարծէ զզօրութիւնս ստամոքսի. նաև դիմակալէ ընա-
սանիսը օդոց:

— Ասքարիտէս, լտ: ասքարիտէ, իտ: է ճճի լինէ
փոքրիկ, նուրբ, և բոլորշի որ գոյանայ յորովային
կենդանեաց:

— Ասֆալթօ, իտ: տեա ալիճուխն եուստակք:

— Ասվանթուրինէ, լտ: է տեսակ լինչքարի, որ լինի
երանգաւ կարմիր, և կամ դեղին, որոյ են երկու
տեսակք. մինն է քնական՚ի պետս ակնապարծաց,
որ գտանի՚ի գաղղիա, և յանգղիա. իսկ միւսն ար-
հեստական, զոր արհեստաւորք՚ի կիր առնուն՚ի
զանազան գործս:

— Ասվաքքարի, լտ: է փոքրիկ ծառ լինչ հնդկային,
որոյ տերևն, ծաղիկն և պտուղն նման են մրտենւոյ.
բայց բնութէ առաւել սեղմիչ քան զսոյն, զոր՚ի
կիր արկանեն ընդդէմ փորհարուրեան, որ. և յա-
ճախ գտանի՚ի գաղաթունս լերանց եւրոպիոյ:

+ Ավենա սաթիվա, լտ: ովենա, իտ: պռօմօ, ֆն:
իւլաֆ, տճ: և ըստ մեզ՝ վարսակ: է բոյս՝ բու-
սեալ յացգարակս, և՚ի խոնաւուտ տեղիս. որոյ եր-
կու են տեսակք. մինն է սպիտակ որ կոչի՝ ավենա
ալպա, ցօղուն սորա նուրբ է իբրև զցօրեան, և՚ի
նմա ջուրայարեալ երկայնաձև տերևք խիտ ատ խիտ՝
ըստ նմանութեան տերևոց սիզոյ: Ծաղիկն ելանէ
՚ի վերայ հասկի զարդարեալ նուրբ թելովք, և՚ի
մէջ ունի ատէչս բազումս, և թեփալից, և՚ի մէջ
նոցա բաժակ. յորում են սերմն մանր, երկայնաձև,
և սպիտակ. որ և են դեղք ազդուլական ընդդէմ
պէսպէս ջերմնատուչըր ախտից. քանզի չինջուցանէ
զբորբոքուսն, և զծարաւն. սպառէ և զինաասակար
հիւթս խառնեալս յարեան. մեղմէ նաև զցաւս կըր-
ծոց, կշտից, և փորոտեաց. և վարատէ զվէրս որկր-
տոյ, և միանգամայն դիւրաշարժ յօրինէ զարտաշնչու-
թիւն մարմնոյ, և բանաց զանցս միղի՝ զի է անուցիչ
և միզաբեր բնութէ: Ձափն՚ի յերեք ունկեաց միմ

ցչորս, եւիեալ ընդ 16 լիպրայ ջրոյ՝ի գործ արկանէ ըստ օրինակի գարեջրոյ. այլ և լինի՝ի կեր գրաստուց, և՝ի ժամանակս սովու նաև կազմեն գնացք, որ լինի թթուահամ, և դիւրայիջեալ: Իսկ միւս տեսակն է սեաւ, որ կոչի՝ ալէնա նիկրա, ըստ ձևոյն, և ըստ մեծութեան նմանն առաջնոյն, բայց արտաքին գունով այլազան:

Ա վ ի ւ ա, լ ս: է խնձոր ինչ հնդկային՝ի ձև բոլորշի, այլ՝ի չափ նարնջոյ. լինի գունով դեղին, և ոմանք կանաչախառն դեղին. ուն և՝ի մէջի կորիզս ութ կամ տասն թուով, որք են ձուաձև կամ տափարակ, բաշխեալք և պատեալք դեղնագոյն և դառնահամ պատենիւք. որ լինի և դեղ ազդու ընդդէմ թունից, և ընտասբեր հիւթոյ. չափն՝ի 20 ցորենոյ մինչև 40: Տունկ ատրա ուր և բուսանի, պատատի շուրջ զիւրև եղեալսն, որ յաճախ գտանի՝ի կատարս լերանց ամերիկոյ:

Ա վ ո ւ կ ո, իտ: տես ըէճիուս մօրպուս:

Ա վ ո ս է թ ա կամ սբինճակո, լտ: Թռչուն ինչ ջոտաէր, մեծութեն նորա՝ի չափ փոքրիկ աղաւնոյ. գլուխն սեաւ, մարմինն սպիտակ, թաթք ոտից կապոյտ, սրունգն երկայն, միտն փափուկ և համեղ, զոր և ուտեն նաև, և ե դեղ մեղմացուցիչ և կակղացուցիչ:

Ա ո է ն ա ր ի ա. տես ոէբուիմէնթէ:

Ա ո ի ա ն թ ո ւ մ, կամ քաբիլլուս վէնէրիս օֆֆիչէնարում, և կամ առանթում, լտ: քաբիլ վէնէրէ, կամ թռչնոյ մանէս, կամ քաբէլլօ տէլլէ ֆօնթանէ, և կամ քօռնուտո տէլ բօյցօ, իտ: քաբիլլերը, գոլ. և անգլ: հաիօ, յն: պօլտրըլը գարա, կամ գէշպէր, տճ: գուզպարա հէլվէր, կամ գիւզպիւր, կամ ոլորէ շավիւշէն, կամ ձատէթիւլքանա, կամ սպաքուլ էս վիա կամ սպաքուլ վասիֆ, կամ ոէպիւլ էուա, կամ շարիւլ էուա, կամ շարիւլ ձինա, և կամ շարիւլ ա ձիւլ, սրբ: քէրսի եավշան, կամ քէրսի սավուշան, սր: և ըստ մեզ՝ ձարխուտ: Է խոտ բազմանձիւղ, նուրբ, սեաւ և փայլուն, որոյ քարձրութիւնն չէ մինչ սահելն քան զմի կամ զերկու ոտնաչափ: Տերևք նորա մանր են և եռանկիւնի՝ ըստ նմանութեան տերևոց պնձոյ, և են հերձուտք, փափուկք, հոտաւէտք, և ախորժահամք, գոյն նոցա՝ի վերին երեսս կանաչ, խակ՝ի ներքոյ փոքր մի կարմիր, և ել նրբա-

գոյն գծիւք. պտուղ նորա ելանէ 'ի ծայրս կամ 'ի թիկունս տերևոց, և է երկայնաձև և գծալից, այլ գիծքն են այնչափ նրբագոյն, մինչև հազիւ մարթ է նշմարել զայնս խոշորացուցիւ: Բերէ և սերմն երկայնաձև. իսկ արմատն նուրբ, կոյտ, և լի մանրաթելովք. բուսանի 'ի վայրս ստուերամածս, և գիճայինս, և ուրեք ուրեք նաև յաւերակս, 'ի քարուտս, 'ի ծործորս լերանց և 'ի շրջակայս ջրհորոց, և յեզերս գետոց: Այլ յամերիկա լինի ընտիր, և առաւել զօրեղ, զոր կոչեն Ատիանթում Ֆրուէթիքում պրազիլիանում. սորա ցօղուն է նուրբ, կարծր, փայլուն, և մթին: Տերևն գրեթէ ըստ տերևոյ մերումս ձարխոտոյ, բայց երկայն և հոտաւէտ քան զայն: Երկոքին սոքա առատ են իւզովք, այլ միջակ աղիւք. և բնութ՝ թուլացուցանեն զզօրութիս մարմնոյ, քաղցրացուցանեն զարիւն, և զթթու հիւթս մարմնոյ. առատացուցանեն զթուքս և զքիրտն. լուծանեն զդաշտանս կանանց. փարատեն զցաւս յօգուածոց, արգանդի, և որովայնի, ցրուեն զքամիս, և բանան զանցս միզի, միանգամայն և օգտակար են կրծոց:

Ատիանթում աւրէում, կամ բօլէթրիքում աբուլէի աւրէում, և կամ մուսքուս քաբիլլարիս, լտ: Է խոտ բուսեալ յանտառս, 'ի բունս հնագոյն ծառոց, 'ի քարուտս, և յեզերս ջրհորոց, որոյ ցօղունն է երկայն իբր մի ոտնաչափ: Տերևք նորա դեղնագոյն են և նուրբ զօրէն վարսի: Իսկ արմատն մանր է յոյժ, և լի նրբաթելովք: Այս խոտ բնութեամբ է բացողական, և քրտնաբեր, որով և յորդէ զարիւնն տեռատեսական, փարատէ զցաւս կրծոց և կշտից:

Ատրտօմինէ, իտ: տե՛ս վէնթէր:

Ատրականթի, իտ: տե՛ս թրակաքանթում:

Ատրաքնէ, կամ ատրաքնէս, և կամ արպութուս Ֆօլիօ նօն սէրրաթօ, լտ: Է ծառ ինչ 'ի սեռէ մաթուզենւոյ, որ սովորաբար բուսանի 'ի կրետէ. կեղև նորա սպիտակ է և փայլուն. փայտն կարծր յոյժ, առ բազում իրս պիտանի: Ծաղիկն նման է ամենևին մաթուզենւոյ, որպէս և պտուղ նորա. իսկ տերևն է դեղ օգտակար ընդդէմ թունից:

Ատօնիում, լտ: տե՛ս Ֆլօս ատօնիս:

Արանէուս, կամ արանէա, լտ: բակնաթէլօ, իտ:

արտօ կամ արտանիա, յն: հօրեւամ՝ձէկ, կամ մշվանէք, տձ: անկապուտ կամ նաւիչէ, և կամ հուվքիաշէ, արբ: գարնէն, կամ թխւնէն, կամ թաւ, կամ ձեայ, և կամ տխվքայ, պր: և ըստ մեզ՝ սարդ: Է զեռուն ինչ բազմատանի, որոց ոմանք աչեցեալ լինին երբև զփոքրիկ ընկոյզ. իսկ ոմանք երբև զմեծամեծ ձանձս. գոյն ունոց հարկանի՛ի գոյն մուխրոյ, ոմանց՛ի դեղին, ոմանց՛ի կանաչ, ոմանց՛ի սպիտակ, կամ՛ի սեաւ, և ոմանց յայլ և այլ գոյն. ուստի ըստ մեծի մասին զնոսին ընդհանուր ընութեանց է թեւալից, յորմէ հնանալն ուշիմութիւն առնուն տահանեն զնետիլս ներքագոյնս, գործեն զտաւայնս զրոմովք, զառաստաղօք, զպատուհանօք, զծառուվք երբեմն զուռկան առ՛ի որսալ զձանձս, և զայլ ձձիս: Թեւս այս ճոխագոյն է ցնդական աղիւ, և նուազ Ջօրութիւն առա՛ի մանուածոյն է արդելուլ զյորդառատ հոսումն արեան, եթէ արկանիցի՛ի վերայ հատեալ կամ սրով բացեալ վնասց. զի է սեղմիչ և միաւորիչ: Ոմանք գոյն զառողջութիւն՛ի դիպուածս եռօրեայ, քառօրեայ, և միջահատակաց տենդից: կապելով ընդ պարանոցս, կամ ընդ ձեռս:

— Արանչիա. իտ: տես Առրանթիում:

— Արանչիա ուչէ. իտ: տես Առրանթիում:

— Արաքհուս, կամ քրաքքա մինիմա, կամ վիչիա բարվա, և կամ վիչիա մինիմա, և կամ գուարթա, լտ: Է տեսակ ինչ խոտոյ որ արձակէ ցօղունս և ճիւղս մանրիկս, նուրբս, և վոխուս: Տերևք սորա մանր են և խիտ, որք շարին երկու երկու առ միմեանս: Ծաղկինք մանր, և սպիտակ, որք փունջս փունջս ելանեն՛ի ծայրս ճիւղոց. զինի ծաղկանց յաջորդէ կոնոն ինչ թեւաւոր, ունելով՛ի մէջն սերմունս սպիտակս, և բոլորակաձևս. և բնութիւն սեղմիչ, և ցրուիչ, զոր ստէպ՛ի կիր արկանեն՛ի թանձրամթանս: Սոյս բոյս բուսանի յամենայն տեղիս:

— Արաքհուս լաթինօրէն ասէին զնոսին, լտ: տես կալկա նէմօրէնսիս վիրնա:

— Արաքնահատ, լտ: բառիս այս ըստ անդամոցինոց նշանակի սպրդատեսակ. որ է Թաղանթինչ ական ապատեալ զսպակնէղէն հիւթով:

— Արկնիքում, լտ: տես Առաչնիքում:

— Արկքա, կամ Ֆրաւֆէլ, կամ բալմա քուեուա Ֆրուքթուա սեմպլիս Ֆրաւֆէլ, և կամ ավկլանտա

ինակիա, լա: Ի տեսակ մի արմաւենւոյ, որ նուրբ է քան զնա, և առաւել ուղղաբերձ, յաճախեալ ընդ բոլոր հնդկաստան: Ծաղիկք նորա փոքր են և սպի-տակ, և իբր անհոտ. պտուղն ձուաձև, քնքուշ, թաւա-մազ, նրբահեղև մեծուքի ի չափ հասարակ ընկուզոյ. ի-նակ գոյն կեղևոյն ի սկզբան է կանաչագոյն, և ապա առ սակաւ սակաւ փոխի ի գեղին. մէջն է ի չափ կաղնոյ կամ չագանակի, արտաքուստ գարոնագոյն կամ գորշ. ինակ ի ներքուստ խայտաբղէտ ըստ նմանութեան միջոյ հնդկային ընկուզոյ. զայս պտուղ նախնիք կո-չէին քհօսօղ, որ յորժամ թարմ է՝ անհամ է և ընտ-սաբեր, զի ուտօղք թմբըլին, և խելաժեան. այլ իբրև հնանայ՝ առ փոքր մի համեղանայ, և լինի օգ-տակար գեղ ընդդէմ սկարուածք ուղղոյ, և յիշղոլու-թեան, և միանգամայն բուժէ զցաւս բերանոյ, և գրգռէ զթուքս, մանաւանդ յորժամ խառնի ընդ պէթէլ կոչեցեալ տնկոյ, ընդ հաւրուէի, ընդ կնզեալ տատրէի, ընդ քափրոյ, և ընդ դոյզն ինչ ամպարի բա-զադրեալ վարդի ջրով: Բնակիչք տեղւոյն ի կիր արկանեն զայն անխառն ի գեղ բժշկութեան վերոյի-շեալ ախտից. զոր և լցեալ յանօթս տանին ի վա-ճառ ընդ հեռաւոր տեղիս:

— Ա րթանկթա. տե՛ս չնքլամէն:

— Ա րթէմիզիա. իտ: տե՛ս Ա րթիքուլարիս մօրպուս:

+ Ա րթէմիզիա վուլկարիս, լա: էրպա ու սան ձիո-վանն, իտ: միակ օձու, տճ: և ըստ մեզ՝ նգածա-ղիկ: Ի բոյս ինչ, որոյ արմատն է երկայն և տոհմար ըստ համեմատութեանն, շրջապատեալ նուրբ մանրա-թելովք, բարձրանայ կարմրերանգ ցօղուամբ իբր ե-րեք կամ չորս անուշահոտ են և քաղցրահամ՝ նման ըստ իմիք օշինդրի. գոյն նոցա ի վերին երեսս կանաչ, իսկ ի ներքոյ փոքր մի սպի-տակ. իսկ ծաղիկն մանր, մազուտ, և հոտաւէտ, ե-րանգաւ սպիտակ, և ի տեղիս տեղիս նաև կարմիր: Այս բոյս բուսանի ի բուրաստանս և ի պարտէզս տեղիս, լի է խըղով, և գոյացական ալիւ, և բնու-թեամբ թուլացուցանէ զարդանդն, և լուծանէ զնացս դա-տանի կանանց: Սա ունի միւս ևս ներգործութիւն-զի եթէ եփեալ զնա սպիտակ գինեաւ արբուցին ծննդական կնոջ, դիւրաւ վիժէ. օգտէ և միջահա-տական տենդի: Ջափն ի մի տրամէ մինչև ցշ կամ ցյ խառն ընդ վեց ունկի ջրոյ:

Աբեթելիա, իտ: չէրեեան, կամ շահատամարը, տճ? և ըստ մեզ՝ շնչերակ, կամ նեարդ: Մասնաւորապէս այսու անուամբ նշանակի երակն այն, որ սկսեալ՝ի կզակէ ելջանէ ընդ պարանոցն, և՝ի թոքն, յորում լինի յատկապէս տուրևառուութի՛ն ընդդ, քայլ կացեալ՝ի թանձր և՝ի հաստատուն թեւրթից կրկնակաց ներքս խոռոչակ մաշկեղէն երկայնաձիւք, և բոլորչի, որով պայմանաւ պահպանէ զոդելիր արիւնն, և տրամաբաշխէ զայն ընդ մարմինն միջնորդութեամբ մանր երակաց:

Աբեթերիա մակնա, լտ: այսինքն մեծ նեարդ, որ ընթանայ յետակոյս սրտին. զորմէ լեագոյն խօսեացուք՝ի բառն Օս:

Աբեթերիա վէնոսա. տե՛ս վէնոսս:

Աբեթիքա ինթէրքլօրէ լութէրս. տե՛ս կալէօքսիս:

Աբեթիքուլօրում մօրպօ ափֆէքթուս. տե՛ս ըէուլմաթիզմօ:

Աբեթէթիքա. տե՛ս բէրիսթէրօնա:

Աբիթնօիտէօ, իտ: է անուն երից միանց հապագային:

Աբինկա. տե՛ս Հալէչ:

Աբիտարում, լտ: է ազգ ինչ խոտոյ, որ սովրաբար բուսանի՝ի քարուտս, և՝ի ցանկապատ վայրս. տերևք սորա են փափուկ, սպրատաւոր, և տապահամ: Ծաղիկն ելանէ՝ի գագաթն, և է սպիտակ. բերէ և պտուղ կարմրերանգ. իսկ արմատն բոլորչի՝ի ձև ձիթապտղոյ, և՝ի տեղիս տեղիս նաև երկայնաձև, արտաքուստ սեաւ, իսկ՝ի ներքուստ սպիտակ. համ սորա քաղցր է միանգամայն և տոկոզատաւէտ է ընդդէմ ժանտախտի, և հրատապ տենդոց. ջափն՝ի քան ցորեկոյ մինչև ցճՕ: Այս բոյս լի է խլտով, և աղիս. որ և է դեղ ազդու ընդդէմ խղխղայթից աչաց, և հնագոյն վէրաց, եթէ եփեալ ջրոյն լուանայցի:

Աբիսթօլօքիա, լտ: քլիմա, կամ թէրմա, կամ քօլի, և կամ ռէզա, յն: արխաթօլօքիէ, իտ: զկրաքէնա, արբ: և ըստ մեզ՝ սղանգն: Է բոյս ինչ որոյ քառեակ սեռակս թուեն արաբացիք. իսկ եւրոպացիք մինչև ցուեթ տեսակս հաստուցանեն. զորս յայսմ վայրի սկիզբն արտացուք մի առ մի ստորագրել: Առաջին տեսակն կոչի՝ի բարբառ լատինացւոց՝ Աբիսթօլօքիա թէնուսիս բիսթօլօքիա. որ քան զամենեսին

նուրբ է, վտիտ, վասն որոյ և Ճապաղի զերկրաւ։ Տերև նորա նման է տերևոյ բաղեղան. բայց փոքրիկ և նրբականթ քան զնա։ Ծաղիկն մանր է և խողովակաձև. պտուղն փոքրիկ 'ի ձև տանձի. իսկ արմատն փոքրիկ, գնտակաձև, և մթին դեղին, շրջապատեալ երկայնաթելովք, որք ձգին 'ի խորս երկրի իբրև մի և կէս ոտնաչափ. ունի զհոտ ազդու, և զհամ դառն. և է ազդողական ընդդէմ ինասաբեր հիւթոց, խցանաց արգանդի, նուազութ՚ ամսական պարտուց կանանց, և միզարգելութ՚, զի է գրգռիչ և անօսրիչ. չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի։ Նաև տերևք սորա ունին զմասնաւոր գործունէութ՚ 'ի մաքրել և 'ի բուժել զվէրս հնագոյնս։ Երկրորդ տեսակն անուանի՝ Արիսթօլօքիա ալթէրա, կամ բիսթօլօքիա քրէթիքա. որոյ ցօղունն նման է վերնոյն. բայց երկայն, և ստուար քան զնա։ Տերևն բոլորակաձև ը՛ բոլորշի սղանգան։ Պտուղն փոքրիկ, և համեմային։ Իսկ արմատն փոքր է և թելալից իբրև զնախագրեալ սղանգան. որպէս և ներգործութիւնն նման է ներգործութ՚ նորա։ Երրորդ տեսակն յորջորջի՝ Արիսթօլօքիա լօնկա. զոր արաբ. կոչեն զիրավէնտի թավիլ. որ ը՛ մեզ թարգմանագրի՝ սղանգն երկայն. ցօղուն սորա է երկայն իբր մի և կէս ոտնաչափ։ Տերևք սորա չեն բոլորակաձև որպէս երկուց տեսակաց, այլ դոյզն ինչ սրածայր, և փոքր քան զնոցին։ Ծաղիկն ըստ իրաց ինչ նման է բոլորշի սղանգան։ Պտուղն ունի զձև տանձի, այլ կարի փոքր քան զայն. և ունի 'ի միջի կորիզս տափարակս, և ոեաւս։ Իսկ արմատն ստուար է, և երկայն, և իբր ոտնաչափ. այլ ըստ համոյ, և ըստ ներգործութեան նման նոցա։ Երեքին սոքա առատ բուսանին յերկիրս ջերմագինս։ Չորրորդ տեսակն կոչի՝ Արիստօլօքիա լօնկա հիսբանիքա. այսպէս անուանեալ սակս բուսանելոյ սորա 'ի սպանիա։ Ծաղիկ նորա լայնաբաց է, և ծիրանագոյն, և այս մանաւանդ 'ի միջին կողմանէ։ Իսկ արմատն առ սակաւ մի կարճ է քան զերրորդ տեսակն, և գոյն նորա առ փոքր մի առաւել մթագոյն. այլ ըստ զօրութ՚ նման նմա. ունի սա միւս ևս գործունէութ՚ 'ի բուժել զքաղցկեղ, և 'ի մեղմել զչարութ՚ թունից օձից։ Հինգերորդ տեսակն յորջորջի՝ Արիսթօլօքիա րօթունտա, զոր արաբ. անուանեն զիրավէնտի միւտէվէր, ըստ մեզ

ստուգաբանի սղանգն բոլորշի, որ սովորաբար բուսանի 'ի մէջ այգեստանեաց, և ագարակաց իբր մի և կէս ոտնաչափ բարձրութ՟ : Տերևք սորա բոլորակաձև են, և քնքուշ, և դեղնագոյն, և դառնահամ։ Ծաղիկն ելանէ 'ի վերայ ցօղնոյ ընդ տերևովք, և լինի կարմրերանգ, և խողովակաձև ըստ նմանութ՟ ծաղկանց փոքրիկ սղանգան. զկնի ծաղկանց յաջորդէ պտուղն ձուաձև, թաղանթային, և մթին կանաչ, ունելով 'ի միջի սերմունս նուրբս, տափարակաձևս, և սեաւս։ Իսկ արմատն ստուար, բոլորշի, խորտաբորտ, մսալիր, գորշագոյն, և թելալից. այլ ըստ համոյ, և ը՟ զօրութ՟ նոյն է ընդ երկայն սղանգան։ Վեցերորդ տեսակն անուանի՝ Արիստօլօքիա րօթունտա ալթէրա. որոյ ցօղունն, տերևքն, արմատն, և բոլոր որպիսութիւն է նման բոլորշի սղանգան։ Եօթներորդ տեսակն կոչի՝ Արիսթօլօքիա քլէմաթիթիս, կամ Արիսթօլօքիա սառռաչէնիքա. ցօղուն սորա է երկայն իբր երկու ոտնաչափ, ուղիղ, և կարծր։ Տերևն լայն է և երկայն։ Ծաղիկն լայնաբաց և տրժգոյն դեղին։ Պտուղն տանձաձև, և սերմնալից։ Իսկ արմատն օձապտոյտ, գորշագոյն, թելալից, հոտաւէտ, և դառնահամ. միանգամայն և դեղ շահաւէտ 'ի դիպուածս նեխեալ և փտեալ վիրաց, մնասակար հիւթոց և նուազութեան ամսական պարտուց կանանց։ Իսկ ութերորդ տեսակն կոչի՝ Արիսթօլօքիա քլէմաթիթիս սէրբէնս. ցօղուն սորա է երկայն, և իբր չորս ոտնաչափ, նուրբ, օձապտոյտ, և ճիւղալից, որ և պատատի շուրջ զիւրև եղելովքն՝ զօրէն բաղեղան։ Տերևքն երկայն են և որածայր. և գոյն նոցա 'ի վերին երեսն կանաչ, իսկ 'ի ներքոյ կարմրախառն սպիտակ։ Ծաղիկն լայնաբաց և դեղնագոյն, և 'ի տեղիս տեղիս նաև ծիրանագոյն. ունի և 'ի մէջ իւր զդեղեցիկ նիւթ ինչ բրդանման։ Իսկ արմատն երկայն, օձապտոյտ, ճիւղալից, տժգոյն դեղին, և տապահամ. այլ ըստ բնութ՟ մասին գլխովին համաձայնի սղանգան այնմիկ, որ լատիներէն կոչի՝ Արիստօլօքիա քլէմաթիթիս։

Արիսթօլօքիա էմմանակօկա, լտ։ Է անուն ընդհանուր դեղորէից, որք սովորաբար 'ի գործ արկանին առ 'ի շարժել և գրգռել զհոսումն դաշտանի կանանց։

Արճէմօնէ մէքսիքանա, կամ բաբավէր սբինօ-

զում, լտ: արկէմա, յն: Է խոտ ճիւղալից, փշաւոր, դիւրաբեկ, և հիւթալից. որ սովորաբար բուսանի 'ի պարտէզս իբր մի և կէս ոտնաչափ բարձրութ՟ : Տերևք նորա երկայնաձիգ են և քնքուշ. յորոց վերայ սփռեալ կայ բիծ ինչ նմա ալեր. զոր եփեալ 'ի ջուր, և եդեալ 'ի վ՟ ցաւադնեալ և բորբոքեալ աչաց՝ վաղվաղակի մեղմէ զցաւն և զովացուցանէ ըզջերմութ՟ին. քանզի առատ է իւղով և ցնդական աղիւ: Ծաղիկ նորա է հինգթերթեան, և դեղնագոյն, և մօտ առ հոտ ծիծեռնախոտոյ: Պտուղն երկայնաձիգ, և փշալից. և 'ի միջի ունի երկիցս երեք հատս բոլորակս, և սեաւս, որք են դեղ ազդողական ընդդէմ ցաւոց կրծոց, որպէս և ծաղիկն նորա: Իսկ արմատն երկայն է և նուրբ շրջապատեալ նրբաթելովք:

Արճէնթինա. տե՛ս բօթէնթիլլա:

Արճէնթում, լտ: արճէնթօ, իտ: արկիրօս կամ ասիմի, յն: կիւմիւշ, տճ: սաճ, կամ լէճէ, կամ կարապ, կամ մէսիհ, կամ նիւճէն, կամ ֆատտա, և կամ սարիֆ, արբ: սիմ, կամ միւշամէ, պր: Ըստ մեզ՝ արծաթ. որ է պայծառ, և մաքուր հրահալելի քաջածանօթ յամենայն ումէքէ, զոր 'ի կիր արկանեն ոսկերիչք: Վարի և 'ի վիրասպական դեղորայս, յորմէ կազմեն լաբիս ինֆէռնալիս:

Արճէնթում վիվում. տե՛ս մէրքուրիուս:

Արճիլլիա, լտ: արկօս, յն: Է հող ինչ թանձր, խժային, և գորշագոյն՝ յազգէ քրէթա անուանեալ կաւոյ, յորմէ կազմեն զկաւեղէն անօթս. և զօրութ՟ սորա 'ի մասնաւորի է արգելուլ զյորդառատ հոսումն արեան, եթէ փոշիացուցեալ ցանիցի 'ի վերայ հատեալ վիրաց:

Արմատիլլօ, կամ թաթուս, և կամ էքինուս պրազիլիանուս, լտ: Է տեսակ մի չորքոտանի կենդանւոյ 'ի չափ կատուի. տեսիլ դիմացն նման խոզի, ձետն երկայն՝ զօրէն մողեսի, ոտքն փշալից, մորթն կարծր, յորոյ վերայ են նիշք ձևացեալք իբրև զթեփս ձկանց. իսկ միսն համեղ, որ ընտիր կերակուր է բնակչաց երկրին: Լի են յամերիկա, և առաւել 'ի պրասիլիա, ուր 'ի խոռոչս լերանց, 'ի հովիտս, և 'ի ջուրս բնակին: 'Ի մէջ ձետոյ այսր կենդանւոյ է սոկր ինչ փոքրիկ, և կարծր, որ է դեղ օգտակար ընդէմ ցաւոց, և շշնջման ականջաց, եթէ փոշիացուցեալ ցանեսցի

'ի մէջ նոցա • չափն քառորդ մասն միոյ ցորենոյ։
+ Արմենիաքա, կամ մալուս արմենիաքա մսեօր, լա։ պայխախ, տճ։ ըստ մեզ՝ ծնրանի քաղցրակորիզ։
Ե պտուղ ինչ ախորժահամ քաղցրածանօթ յամենայն ումեքէ • որ է բնութեամբ զովացուցիչ, և զուարթացուցիչ։ Մ՚ընչի գոյացութենն կորնղոյ քաղցր է գրեթէ որպէս զնուշ։ Սակայն՝ արմենիաքա, յատկապէս զծառն նշանակէ • իսկ յաչխրդն՝ զպտուղն։
+ Արմենիաքուամ, լա։ մելնաքա, իտ։ զերտասլի, տճ։ մշմշ, կամ միշլուզ, արբ։ աերմէչ, կամ կավալէնք, պր։ Ըստ մեզ՝ ծնրանի դառնակորնզ• պտուղ ինչ՝ որոյ ձև, և գոյն ծանօթ է ամենեցուն, որ է գժուարամարս, և տենդաբեր։ Իսկ կորնզն որ է դառնահամ՝ լինի դեղ ընդդէմ տկարութեան ստամոքսի, և ցաւոց որովայնի։ 'Ի կորնզոյ ասի կտղմեն նաև դեղ ստամակէ որդանց, և ճճեաց որովայնի։
+ Արմենուա լաբնս, կամ լավնս արմենուա, լա։ բիէթրա արմենա, իտ։ որ ըստ մեզ Թարգմանափրն՝ քար հայոց։ Ա յսպէս կոչեցեալ վասն գտանելոյ սորա 'ի հայաստան• քանակութեն նորա փոքր է եբրև զկաղինն• իսկ գոյնն կապուտակ• բայց յոմանս տեղիս լինի և կանաչագոյն, և սպիտակագոյն, որոյ փոշին արկեալ 'ի ջուր, և արբուցեալ՝ դէղ է օգտակար ընդդէմ մելամաղձի, և անդամալուծութե• չափն 'ի 20 ցորենոյ մինչև 80։
— Արմենիաքո• տե՛ս Կումմի արմենիաքում։
— Արնիքա• տե՛ս Հէռնիարիա։
— Արում, լա։ Ճնքերօ, իտ։ շիուօպուօմօ, ֆն։ Եբրայն պուչյալը, տճ։ Ի բոյս ինչ բազմատեսակ• յորս է բնեբլն են երկու տեսակք• առաջինն կոչի՝ Արում այիօսքօռիտես, կամ արօն• որոյ տերևքն երկայն, լայն, եռանկիւնաձև, պայծառ կանաչ, և շոշողուն։ Ծիլ նորա փոքրիկ, ունի 'ի գլուխ նբա ծաղիկ միթերթեան, և ընդունաձև• յետ ծաղկանց արտաքրէ պտուղս բազմերիս, և ոլկուզօրէն, որք լինին երանգս կարմիր, և ոմանք թուխ, և ներքանչիւր հատ պտղոյ ունի մի կամ երկու սերմունս բազմերիս։ Իսկ արմատն է բազմերի մեծութեբ 'ի չափ կաղնոյ, սպիտակ, պաղարտաւոր, թեղաչեց, և ոտպահամ։ Ա յս բոյս լի է խոշոր, և գոյացական ալիս• որոյ արմատս ճոխիացուցեալ և արբուցեալ՝ լինի դեղ օգտակար ընդդէմ ընչարդելութե, Լսպռլութեան, արքիւնի, և

ախտի ախոնդանաց. չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց60 խառն ընդ վեց ունկի շաքարի, միանգամ յաւուրն: Իսկ երկրորդ տեսակն անուանի Արում վէնիս ալ-պիս, կամ արաքունքուլուս մինօր. որոյ ամենայն որ-պիսութիւք են նման առաջնոյն, բայց միայն տերևովք տարբերի 'ի նմանէ:

Արունտօ, լտ: քաննա, իտ: պուս, արբ: գամըշ, տճ: ըստ մեզ՝ եղէգն: Է բոյս ինչ բազմատեսակ, որոյ ցօղունքն, տերևքն, և ծաղիկքն ծանօթք են ա-մենեցուն: Իսկ արմատքն են դեղք ազդու ընդդէմ միզարգելութեան, և նուազութեան ամսական պարտուց կանանց:

Արունտօ սաքքարիֆէռա. տե՛ս Սաքքարում:

Արպութում. տե՛ս 'ի ներքոյ:

Արպութուս, կամ ունէտօ, կամ քօմարուս, լտ: քօրպէցցօլօ, իտ: գիւղականք եւրոպիոյ կոչեն և ալ-պաթռօ: գէճիճ, պր: գաթլապ, արբ: հօճայ եմիշի աղաճը, տճ: և ըստ մեզ՝ մաթուզենի: Է ծառ՝ յա-ճախեալ յանտառս, որոյ տերևքն են լայն, պայծառ կանաչ, և շուրջանակի սղոցաձև ատամնաւորեալք: Ծաղիկքն սպիտակ, և 'ի տեղիս տեղիս նաև ծիրա-նագոյն, որք փունջս փունջս փթթին 'ի ծայրս ոս-տոց, զորս եփեալ 'ի ջուր, և եդեալ 'ի վերայ ու-ռուցից, վաղվաղակի ցրուէ զնս: Զկնի ծաղկանց յաջորդէ պտուղն կարմրերանգ, և մսալիր 'ի ձև ե-լակի. զոր լատինք կոչեն՝ մէմաչիլօն, կամ ունէտօ, և կամ առպութում. և արաբք անուանեն գաթլաբ. կամ տապտա. և պարսք՝ գէճիճ, կամ գիմիշի. իսկ ըստ մեզ՝ մաթուզ. ունի և զկորիզ երկայնաձև: Եւ է սորա տեսակ մի, որ սովորաբար բուսանի 'ի կրե-տէ. պտուղ սորա է բոլորակ. մեծութեամբ 'ի չափ փոքրիկ խնձորոյ, թխագոյն, և փոքր մի կակուղ. և բնութ՛ սեղմիչ, զոր 'ի գործ ածեն 'ի դեղ փորհարու-թեան: Կեղև սորա և տերևք նոյնպէս են սեղմիչք բը-նութ՛, և 'ի մասնաւորի դեղ ախտի ուլան, եթէ եփեալ ջրով ողողեսցի ուլն:

Արպօռ թրիսթիս, լտ: Է ծառ հնդկային՝ մե-ծութ՛, և ձևով գրեթէ ոչինչ ընդհատ 'ի շլորենւոյ մերոյ: Տերև սորա երկայն է և լայն: Ծաղիկն սպի-տակ, և հոտաւէտ իբրև ծաղկան նարնջոյ, որպէս և ներգործութիւն նման է ներգործութ՛ նորա: Բերէ և կարմրագոյն բաժակ 'ի պէտս ներկարարաց, և

նկարչաց : Պատուղն սլուտաձև, և կանաչ : Իսկ կորիզն որ լինի ՚ի պտղի անդ՝ է սպիտակ ՚ի չափ կորիզի եղջեր : Այս ծառ ունի բնութեն նման մանուածոյ, զի ՚ի մուտանել արեգական ծաղկի, և ՚ի ծագել նորա թօթափին :

Արաէնիքուամ, կամ արէնիքուամ, լս : արաէնիքօ, իտ : արին, յն : սըչան օթու, տճ : սիւմիւլ փառ. կամ սիւմիւֆառ, արբ : մէրկիմուշ և կամ շէք, պր : և ըստ մեզ՝ ինդեղ : Ի թուռնաւոր հանք ինչ եռատեսակ. որոյ առաջինն է սպիտակագոյն, զոր լատինք անուանեն արաէնիքուամ ալպում, որ է ծանր և ազդու քան զերկուսին. և բուն գոյացութեն նորա բաղկացեալ ՚ի ծծմբային մասանց, և ՚ի կիզանուտ աղից : Երկրորդն՝ դեղնագոյն, զոր լատինք կոչեն աուրիքիկմէնթուամ, տե՛ս և անդ : Իսկ երրորդն՝ կարմիր, զոր լատինք կոչեն՝ սանտարագա մինէռալէ : Երեքին ազգք են թիւնաւոր, և մահաբեր, զոր եթէ կերակրէ ոք պատահմամբ կամ յանգէտս, վաղվաղակի վերաւորէ չարաչար զստամոքսն, և զիորտսն, որ և բազում անգամ ՚ի միջոց տան վայրկենի պատճառէ զանտուկալի ցաւս, և զտարապայման վնասուն, զցուրտ քերտն, զպտոյտ գլխոյ, զչորութեն լեզուի և երկոցդ, զնուազուն, զբաղխուն սրտի, զթաւիշուն, զուշադնացութեն, զպապակուն, և զհեծկլտանք : Չարկ բազկին հարկանէ յոյժ մանր, և կարծր. առնէ յընդերան և զքաղցկեղ, զդողդոջուն, և զմոլորութեն անդամոց, զխզարգելութեն, և զցնցուն միանոց. ուր և սկսանի եղկելի ախտակիրն մեծաւ տադնապաւ, և անտանելի անձկութեբ, յաճախակի լուծմամբ զբաւիլ ՚ի կենաց : Բայց գիտել արժան է, զի եթէ նոյն հետայն նպաստ մատուսցի ՚ի ձեռն կարեւորագոյն դեղոցդ, որպիսի են փխրուլական դեղոյքն, իւղն ձիթենւոյ, կոգի, կաթն, սալ ալքալի, կամ տէ սօտա, աչէթօ շիլլիթիքօ, կամ օսանմէլէ, աքզուա ալքալիծ՚ալեա, աչիտօ վիթրիօլիքօ, սերմն կատուատի, արմատն ազոյ, ևն, մարթի յուսալ ՚ի փրկութեն :

Արաէնիքուամ սթալուամ, լս : տե՛ս Աուրիքիկմէնթում :

Արտէա, լս : ակիրօնէ, իտ : պալըքչի գուշու, տճ : ըստ մեզ՝ ձիւնկուլ : Ի թուռնն ինչ յաճախեալ ՚ի յեզերս ճահճաց, և լճաց. որոյ մարմինն վտիտ է.

և վտիտ. պարանոցն երկայն՝ որչափ է բոլոր մարմինն. կտուցն կոր և սրածայր. ոտքն երկայն. եղունգն կարծր, և սուր. սովորական որս նորա ձուկն: Լի է իւղով և ցնդական աղիւ. Ճարպ սորա լինի դեղ օգտակար ընդդէմ յօդուածացաւութեան, և այլոց այսպիսի ախտից, օծեալ նովաւ զախտացեալ մասն մարմնոյ, և շփեալ առ հրով. զի Ճարպն այն ընդմտանիցէ 'ի ծակտիս մորթոյ, որով և ապաքինի: Օգտաւէտ է նաև ցաւոց ականջաց, եթէ ջերմացուցեալ գոյզն ինչ արկանիցի 'ի մէջ ցաւագնեալ ականջաց:

Արտօր տի օրինա. տե՛ս սթրանկուռիա:

Արքանում, կամ արքալլիօ քօռալլինում տ' բարաչէլսօ, լտ: Է ծիրանագոյն փոշի ինչ բաղադրական, յօրինեալ 'ի զօրաւոր օղւոյ շնչբորակի, և 'ի սնդկէ. շահաւէտ է 'ի դիպուածս ելեփանդական ախտի, և քաղցկեղի, և ս ուռուցից, և ցաւոց սրտի. այլև գրգռեալ առատացուցանէ զլորձունս, և զտողունս. չափն 'ի մի ցորենոյ մինչև ցՅ:

Արքանում տուպլիքաթում. տե՛ս սալ տի տուօպուս:

Արքանճէլիքա. տե՛ս Անճէլիքա:

Արօմաթիքում, լտ: սբէցիէ արօմաթի տրօկէ, իտ: պահարաթլար, տճ: ըստ մեզ՝ ջերմահամ կամ համեմային դեղորայք: Է հաւաքական անուն ամենայն հոտաւէտ, և ջերմահամ համեմոց. զորօրինակ պղպեղն, մեխակն, կինամոնն, կոճապղպեղն, մանանեխն, և՝ն:

Արօմաթիքօ աքօրօ. տե՛ս քալամուս արօմաթիքուս:

Արօմաթիքօ րօզաթօ, իտ: կիւլ պահար սուֆուֆու, տճ: Է փոշի ինչ բաղադրական, կազմեալ 'ի բազմատեսակ ջերմահամ նիւթոց, որ է բնութ՝ ջերմ, և զօրատու ստամոքսի, և ջղաց. չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի:

Արօնիքա. տե՛ս արնիքա:

Աքաեա, լտ: Է թուփ յաճախեալ 'ի հնդիկս, հիւթալից, դեղնագոյն, անուշահոտ, և քաղցրահամ, միանգամայն և արբեցուցիչ. յորմէ բնակիչք երկրին յօրինեն գինի: Տերև նորա է միջակ ըստ լայնութեան, և ըստ երկայնութեան, զոր եփեալ 'ի ջուր, և եդեալ 'ի վերայ բորբոքեալ որկորոյ, վաղվաղակի հանգու-

ցեալ ապաքինի • նոյնպես է դեղ ազդուլական՝ի դիպուածս փորհարուածէ, և ակարուածէ աուսմոքի: Ջնոյն բնուածէ ունի նաև սորա կեղևն: Ծաղիկ նոյա մանր է և դեղնագոյն: Պտուղն տապահամ, և սեղմիչ բնուածէ• որով դադարեցուցանէ զփսխուսին, և զլուծուսին որովայնի:

— Ա֊քաեօու, կամ աքաեօուս, և կամ քաեօս, լտ: Է պտուղ ինչ ամերիկեան, ըստ ձևոյ նման երիկամանց խոյոյ• իսկ ըստ գունոյ՝ ձիթապտղոյ• ունէ լավ՝ի պատեան փոխանակ մեղեխի՝ գունտ ինչ տանձաձև, երկայն և սուսար, որ բերէ զնմանուածէ փոքրիկ թապէ, և շուրջ զորով պատեալ կան կարմրախառն դեղին թելք նուրբք, և քնքուշք• մէջ նորա թանձր է և թթու, միանգամայն և թմբրեցուցիչ բնուածէ: Կեղևն կարծր, սուսար, սպնդային, և ծակոտկէն, զոր ճմլեալ մզեն անոյն իւղ ինչ սեաւ տապահամ, և կիզանօղ լեզուի: Ծառ սորա աճէ ըստ բարձրուածէ մերուսին չափանակեննոյ• վայրեան կարծրատպինդ, և թեթև, զոր վարեն՝ի պէտս շինուածոց: Պատքն մորչք, դիւրածալք և սպիտակ: Կեղևն գրեթէ ըստ կեղևոյ մերուսին կարմնոյ: Տերևքն հոտաւէտ՝ի ձև ընկուզենոյ: Իսկ ծաղիկն մանր, սպիտակ, և հինգթերթեան:՝ի ծառոյ սատկ ըղնի և խէժ:

— Ա֊քանթուս, կամ մօլլիս վէրձիլի, կամ քարտուսուս աքանթուս, և կամ պրանքա ուրսինա, լտ: պրանքա օրսինա, կամ աքանթօ, իտ: աքանթա, ին: այլ բէնճէսի, ոճ: Է խոտ կամ տունկ ինչ, որոյ ցօղունն ելանէ՝ի չափ երից ոտից, առանց ոստոց ամենևին, արձակելով յարմատոյ զտերևս մեծաձև և թաւամազուսս ըստ գոմենոյ: Ծաղիկն սպիտակ, մինթերթեան, և չղթայաձև, որք շուրջանակի՝ի վեր ելևին՝ի վերայ նորին ցօղնոյ• ունին և առէջս վերամբարձս• յետ ծաղկանց յաջորդեն պտուղքն վայելչապեղ ըստ նմանուածէ կաղնոյ• և ունին՝ի մէջն սերմունս երկայնաձևս: Իսկ արմատն երկայնաձիւղ, լայն• արտաքուստ սեաւ, իսկ՝ի ներքուստ սպիտակ• վն է իւղով, այլ նուազ ազիւ, և բնուածէ կակղացուցիչ, ցրուիչ, և բացողական• որ՝ի գործ արկանի՝ի բալադրուածէ լաւնոսայի: Բուսանի սա՝ի բուրաստանս, և յատակարս վայրս:

— Ա֊քաչիա, կամ աքաչիավէռա մինօսանիլօծիկքա, լտ:

Աքաւեալ ա՛ էժիլբէթ • գՂՂ ։ ա՛քազօ , յն ։ գա՛
բատ , աղբ ։ Է գնոտակաձև հիւթ ինչ կարծր , և ծանր
յոյժ • որոյ մին կշռէ մինչև հինգ ուննկի • գոյն և
կարմիր , այլ միջական ՚ի մէջ կարմրոյ և սպիտակի ։
Սա գոյանայ ՚ի պտղոյ աքակիա սբինօզա սահ-
ցեալ ծառոյ , որ յաճախ բուսանի ՚ի վերին եգիպ-
տոս առնելոս գետով • յատաջագոյն լոյծ է , և ապա
պինդանայ • լի է իւղով և ցնդական աղիւ , և բնու-
թեբ սեղմիչ • որով թանձրացուցանէ զչրային հիւթս ,
այգեբու գյորդառատ հոսումն որովայնի , և աչաց •
զօրացուցանէ զստամոքսն , զվիսրոտիան , և զերսկան ,
և միանգամայն մեղմէ զչարութեի թունից ։ Ծառ ա՛ն
րա լինի երկայնատ , բազմաճիւղ , լայնատարած ,
փշալից , և սպիտակածաղիկ ։ Այլ քան ՚ի սմանէ
է և այլ սեռակ մի աքաչիա կոչեցեալ ծառոյ • որ
ըստ ձևոյ և ըստ մեծութեբ նման է , բայց փոքր մի
ատորին է զօրութեբ քան զառաջինն ։

Աքարնա , կամ աքօռնա , և կամ քարլինա սիլ-
վէսթռիս մինօռ հիսբանիքա , կամ քառտուս քարլի-
նա մինօռ սիլվէսթռիս , և կամ էրինճիում ասքիճէ-
նիս , լտ ։ աքօռնա , յն ։ Է խոտ վտիտ ՚ի սեռէ քառ-
լինա անուանեալ խոտոյ , և բարձրանայ յերկրէ միբ
թազաչափ ։ Տերևք նորա երկայն են և անհարթ , շըր-
ջապատ նոցա փշալից • ՚ի կատարն փոխանակ ծաղ-
կանց ունի երկու գնոտակս փշալից և ճառագայ-
թաձև • և բերէ սերմն նման սերման քարթամօ կո-
չեցեալ խոտոյ ։ Իսկ արմատն նուրբ , կարմրախառն
դեղին , և բնութեբ բացողական և քրտնաբեր ։ Բու-
սանի յամենայն ուրեք , և յաւէտ յերկիրս ջերմագինս ։

Աքարնան , կամ աքարնէ , լտ ։ Է ճուկն ինչ ծո-
վային • ըստ ձևոյ , և ըստ մեծութե նման այնմ ձկան ,
որ տաճկերէն կոչի՝ թէքբիր պալըղը ։ Թեպէտ մորթոյն
արծաթափոյն • պէտին թանձր ՚ի չափ գլխոյ սր-
ծոյ • որկորն փոքրիկ • ատամունքն մանրիկ • աչքն
մեծ • իսկ միտն սպիտակ , հաստեղ , և դիւրամարսելի •
լի է իւղով , և ցնդական աղիւ • և բնութեբ միզաբեր ,
և մաքրիչ արեան ։

Աքիլլէա , կամ քհրիսանթհէմում սլբինում , կամ
աքհէռիանում եաքօպէա ածֆինէ , լտ ։ Է խոտ ինչ
յազգէ յակոբիա կոչեցեալ բուսոյ , որ սովորաբար
բուսանի ՚ի լերինս իբր մի ոտնաչափ բարձրութեբ ։
Տերևք նորա խիտ են և նուրբ , զոր ճմլեալ մատամբք

արձակեն հոտ զսպիր, և տալտկացուցիչ: Ծալիկն գեղնապոյն և ձնձանչատեսակ ըստ նմանութեանն ծալկանց վայրի երկայկ. և ՚ի միջէ ոմանք առէջս խոտովակաձև, յորում է սերմն, կամ պտուղ նորա. որ է երկայնաձև և նուրբ կեղևով: Այս խոտս լի է խոտով, և գոյացական աղիւս. որոյ սերմունքն եփեալ ՚ի ջուր, և արբուցեալ դեղ են ընդդէմ շնչարգելութեանն, թոքաժեռութեանն, և այլոց այսպիսի վտանգաւոր ախտից:

Աքհաթէս, լս: ակռնթա, խս: լէֆկէ, կամ էնուսն, ին: բաքամ թաշը կամ ֆուէնի ռաքամ, տճ: և ըմ մեզ՝ ակատ: Է սեւագոյն մի քարի, որոյ նիշք և երանգք, որք սփռեալ կան ընդ բովանդակ զանգուածն նորա՝ կերպացեալ են ՚ի ձև ծառոց, ծաղկանց, կենդանեաց, և ամպոց, և այլոց նմանութեանց. այլ գոյն նորա այլ և այլ է. այսինքն մսագոյն, ծխագոյն, սպիտակագոյն և թխագոյն: Լինի սա ՚ի գերմանիա, ՚ի պօէմիա, ՚ի չին. այլ հռչակաւորքան զամենեսեան է որ լինի յերկիր մողղոց, զոր արհեստաւորք ՚ի վար արկանեն ՚ի զանազան գործս. որպէս և մեք ՚ի պէտս դեղոյս, որ է դիմակալ թունից, վտրհատուածից, և հոտման արեան:

Աքհանաքա, լս: Է բոյս մինչ հնդկային. որոյ տերևն է մեծ խըրև ՚ի չափ տերևոյ կաղամբոյ, բայց նուրբ քան զայն: Պտուղ նորա է մեծ ՚ի չափ ձուոյ, այլ գոնեայ դեղին, զոր լսանինք ալֆաւուս կամ լեսաքօ կոչեն, որ է դեղ աղգողական ընդդէմ ախտից պաղղնականի, և բորոտութեան. սովորաբար արգանակն տուեալ ՚ի կիր արկանի:

Աքուա արխաթօվէլիս, լս: Է տեսակ մի ձկան զոր խտալացիք ակօ տի արխաթօվէլէ կոչեն, որ թարմանի՝ տեղն արխատուելի, ՚ի ձևոյ մարգինոյն, որ է տաղնաձև՝ տուեալ նմա անուն. գլուխ նորա է փոքրիկ. աչքն լայնաբաց, կտուցն երկայն, և կարծր, նման մեղու ալինդ, և դժուարտանաւարտելի. լի է խաղով և աղիւ, և բնութեամբ բացողական:

Աքրէպինէ. տես ակրիմոնիա:

Աքրօմիօ: Է բառ անդամալուծնաց, և է ծայր ոտ՝ ոտ կամ թիկանց:

Աքօբօն, լս. տես անաձիրխս:

Աքոնիթիա, կամ եաքուտրում, կամ սամիխթարիում, կամ քէնէրախտրում, կամ սէրբէնա վօլսոնա, և կամ

ջէնքրիօ, լտ: եաքուբօ կամ աքօնցիա, իտ: սաի-
ֆա, ֆն: օգ էըլլանը, տճ: ֆեապան ֆըշտպի, արբ: և
ըատ մէզ՝ նէռուձ: Է տեւսակ մի ժանտ օձի, ստուար
պրեֆէ մատնաչափ, և երկայն իբրև երեք կամ չորս
ոանաչափ, ամենայն մարչկ նորա մոխրագոյն, միայն
որովայնն է սպիտակ. գոյանի յաշխարհն հնդկաց, և
քնակի յանտառս. որ ընդ ծառովք, կամ ընդ բուսովք
գարանեալ յանկարծակի նետէ զինքն՝ ի վերայ անցա-
ւորաց, և իբրև զալաք թափանցէ ընդ մարմին նոցա,
որով և կոչեցաւ անուն նորա. բայց բնակիչք երկրին
ունին և զդեղաթափ նորա, զոր եթէ նախ քան զանց
ցանելն քառորդ ժամու դիցեն՝ ի վերայ խայթուա-
ծոց, ապաքինին՝ ի թունից անտի: Ա յս տեւսակ օձի
լի է խաղով և ցնդական ազիւ, և է դեղ ազդու ընդ
դէմ թունից, և ջնասաբեր հիւթոց մարմնոյ, և մահ
գաւնայն բանալ զանցս միզի, զորոյ կազմեն արկա-
նակն ըստ օրինակի իմի:

Ա քօնիթում կամ աքօնիթում նաբէլլուս, լտ:
աքօնիթօ, իտ: աքօնիթ, գղղ: լիքօս կամ քթինօ
ն: խանիգուն նէմր, արբ: ըստ մեզ՝ ակոնիտոն,
կամ ակոնիտոն: Է խոտ թունաւոր երկայն
իբր մի և կէս ոանաչափ, նուրբ, բոլորշի և բազմա-
ճիւղ. յաճախեալ յԵւրոպիա, ի ջրջակայս բուրաս-
տանաց: Տերևք նորա բոլորակաձև են և հերձոտ:
Ծաղիկն գնտագլուխ, վեցթերթեան, և մթին
դեղին, որք ի վեր ելևէն ի ծայրս ճիւղոց. յետ ծաղ-
կանց յաջորդէ պտուղն բոլորշի և բազմակերև. ունի
և կորիզ: Իսկ արմատն սեաւ, և թելալից: Ա յս
խոտ բնութեք է թմբրեցուցիչ, և թուլացուցիչ:
Շահաւէտ է ընդդէմ հնապոյն ախտից, որպիսի են՝
յօդուածացաւութիւնք, ոանտութիւնք, ուռոյցք կար-
ծրապինդք. նոյնպէս օգտաւէտ է ընդդէմ նորոգ
ակաեալ թոքաժեռութեանց: Վկայեն հեղինակքն եւ-
րոպիոյ, թէ բազում անգամ բազմաց՝ ի գործ արկեալ
են զայս, և ականատես լեալ են բազմաց օգտաւե-
ռութեանց: Բայց գիտել արժան է՝ եթէ պարտ է
ակիզբն առնել սակաւաքանակ չափու, զորօրինակ
կէս կամ մի կշիռ ցորեան, և ապա առ սակաւ առ-
կաս աստիճանաւ առաւելուլ զչափն մինչև ցտասն
ցորեան յաւուրն: Նոյնպէս ասէպ՝ ի վար արկանել
արտաքուստ առ՝ ի քուժել զբորոտութիւնս, և զցաւս
ծանրագոյն երակաց, և՝ ի սատակել զորջիլս: Ա յլ

գիտել արժան է, զի՛ ի դիպուածս, յորում դէպ լի՛նի ումեք վրիպակաւ ուսեալ զսա ստաւել քան զպայմանեալ չափն, յայնժամ փոյթ մեծ ունել պարտ է իսկոյն մատուցանել նմա յարդուսին պժայթքեցուցիչ, զքաղցրացուցիչ, և զօրացուցիչ դեղոցայս, որք են գլխովին հակառակ այսր մահաբեր իստոյ: Դարձեալ՝ նախանձ հեղինակք այսու անուամբ յորջորջէին զամենակերպ թունաւոր և մահաբեր թոյս. բայց ատ մեզ՝ անուն այս սեփհական է միայն վերոյիշեալ իստոյն, այն է աքօնիթոսմ:

—— Աքօնիթօ. տես Աքօնիթոսմ:

—— Աքօր, իս: ուռՖիա, տձ: է ազգ ինչ մանրիկ պաղտրոցց՝ ի վեր երևեալ յայտս, և՝ ի գլուխս տլայոց. կոչի և լաթիմէ:

✱ Աքօրուս վէրուս, կամ քալամուս աւօմաթիքուս օՖՖիչինարում, լս: քալամո աւօմաթիքօ, իս: աքօրուս օտօռան, գղղ: աուխիթ հէյն, անգղ: ազատ է կիրի, տձ: ըսէքըլ էքըր, արբ: և ըստ մեզ աուսպաքանի՝ եղեգնահամեմ: է արմատ ինչ երկայն իբր ձեռաչափ, և ստուար մատնաչափ, սպունգային, թեթև, թելայից, և դժուարաբեկ, ոտիտակ, հոտաւէտ, դառնահամ, միանգամայն և համեմային. յորմէ և կալ՛ լաւ զանուն. յաճախեալ՛ ի սկիւթիա, և՛ ի քօլքիա. զոր բնակիչք տեղւոյն յորշեալ ինչ ժամանակի ժողովեալ, և ընդ թել անցուցեալ տանին՛ ի վաճառատատ է իւղով և ցնդական աղիւ. օգտաւէտագոյն է ընդդէմ սկարուսիթէ ատամոլչի, ընդատաբեր հիւթոց, յաւոյ որովայնի, և ընդհանրապէս ընդդէմ ամենայն ախտից պատճառելոց՛ ի վիքոտութէ. զի է խթիչ բնութ: է օտար և այլ տեսակ ինչ կոչեցեալ՛ ի բարբառ լատինացւոց՝ Աքօրուս ատուլթէռինուս, որ ստուգաբանի եղէգնահամ ատտ. յաճախեալ՛ ի ջրարբի տեղիս, կամ՛ ի գնացս ջուրց. ունի ծաղիկ դեղին, զորոյ ատմատն նոյնպէս՛ ի գործ ածեն՛ ի դեղս, որ է վարատիչ վորհարութէ, և հոտման արեան:

—— Աօվարա, լս: է պտուղ բոլորչի մեծութեամբ՛ ի չափ հասարակ ձուոյ, պատեհաւոր, վիշալից, ոսկեգոյն մաշկիւր, և կարծրակուխլ, զոր ճմլեալ մզեն անոյշ իւղ ինչ ապխտակ և թանձր, որ կարի յաճախեալ է առ հնդիկս. զորոյ զինեւրգործութէնն լուսոյն տեսցես՛ ի բառն օլէում բալմա: Ծառ ատոյս լինի մինչ

ըստ մեծութեան, և ստուարութեան: Տերևքն մանր են և ջլային, և հոտաւէտ: Լինի սա և յափրիկէ, և 'ի սինէկալէ:

Աօրթա. այսու անուամբ նշանակի արմ, և ըստ անդամազննաց՝ է մեծագոյն շնչերակն:

Աֆթէ, իտ: գուլա, արբ: Է անուն իրիք փոքրիկ պալարի կամ վիրի, որ 'ի վեր երևի սովորաբար 'ի բերանն, 'ի շրթունս, 'ի լնտերս, 'ի քիմս, և յորկորս, և երբեմն ևս գոյանայ 'ի ներքսակողմն ստամոքսի, և փորոտեաց: Բայց գիտել արժան է, զի 'ի դիպուածս ախտիս համարի երբեմն գուշակ վաաթար, եթէ զոյգ ընդ իւր ունիցի որովայնահոսութիւն կամ փորհարութիւն հանդերձ տապագին տենդիւ: Ենթակայք այսորիկ ախտի հաստրակօրէն են տղայք, և ծերունիք:

Աֆֆէցիօնէ իսթէրիքա, կամ բասսիօնէ իսթէրիքա, իտ: ցաւ կամ ախտ ինչ արգանդի:

Բ

Բաբաիա, կամ արպօր մէլօնիֆէրա, կամ մամէռա լուսիթանօրում, և կամ բինօկուաքու բաբաիա, լտ: Է ծառ ամերիկեան, որոյ երկու տեսակք են, մի տեսակն կոչի բինօկուաքու մաս. բարձրութիւն նորա է առաւել քան 20 ոտնաչափ, իսկ ստուարութիւն բնոյն իբրև զազդր մարդոյ. մէջն դատարկ, և սպնգային: Կեղևն գորշագոյն, և փայլուն: Ոստքն երկայն, և խիտ: Տերևքն լայն, և երկայնականթ՝ որպէս զորթոց. ունելով ծայրս ցաւատեալս և բաժանեալս իբրև զմատունս մարդոյ: Ծաղիկն դեղնագոյն, երկայն, քառեակ թերթեան, աստղաձև, դոյզն ինչ կոր, և անհարթ: Պտուղն երկայնաձև. մէջն 'ի սկզբան անդ է ջրալիր և սպիտակ, և ապա առ սակաւ սակաւ թանձրանայ, և փոխի 'ի գոյն դեղին: Այս ծառ յետ միանդամ պտղաբերելոյն՝ յերկրորդում, և յերրորդում ամի լինի անպտուղ: Իսկ երկրորդ տեսակն կոչի՝ բինօկուաքօ ֆէմինա, որ նման է վերնոյն ըստ ստուարութեան, և ըստ ձևոյն, բայց

բարձր լինի քան զնա ։ Ծաղիկ սորա լինի դեղին, հինգթերթեան, հոտաւէտ, և մեծ ըստ նմանութեան ծաղկանց կիաճճիուլօ անուանեալ անկոյ ։ Իսկ պտուղն ըստ ձևոյ, և ըստ ստուարութեան նման սեխի, նախ քան զհասանիլն 'ի վերայ ծառոյն՝ որ է կանաչագոյն, հատանեն զայն, և արկեալ թողուն 'ի վերայ աւազոյ, որ 'ի տասներորդում աւուր իսկ և իսկ հասունանայ, և գոյն նորա փոխի 'ի դեղին. մէջն այսր պտղոյ երբեմն է դեղին, և երբեմն սպիտակ հարեալ 'ի գոյն կարմիր, զոր և ուտեն իսկ վասն աճեցուցանելոյ զախորժակս կերակրոյ ։ Իսկ սերմունքն պարփակեալք 'ի պտուղ անդր՝ են ստուար 'ի չափ ցորենոյ, սպիտակ, խժային, և կոտեմահամ. որ լինի դեղ ազդու ընդդէմ սքօռպութօ անուանեալ ախտի. բանայ և զանցս միզի, միանգամայն և լուծանէ զդաշտանս կանանց ։ Բուսանի սա անխտիր ընդ. ամենայն տեղիս յաշխարհին ամերիկոյ, մանաւանդ 'ի պարտէզս պրասիլիոյ ։ Պտուղ այսր ծառոյ ունի զնմանութիւն ստեանց կանանց, վասն որոյ և կոչեցաւ մամէռա, որ է բառ լատինական, և ծադի 'ի բառէս մամաօն, որ է ստինք ։

+ Բաբավէր, լտ ։ բաբավէռօ, իտ ։ ռիաս, յն ։ խաշխաշ կամ հաշհաշ, տճ ։ ապունօմ, արբ ։ կէօքնար, պր ։ և ըստ մեզ՝ մագ կամ մեկոն ։ Է հռչակաւոր բոյս յաճախեալ յասիա, նա յաւէտ յեգիպտոս. որոյ երկու տեսակք են, առաջին տեսակն կոչի 'ի բարբառ լատինացւոց՝ բաբավէռ ալպում, կամ իտալերէն՝ բաբավէռօ պիանքօ, իսկ ըստ արաբացւոց՝ ապունօմ ապիաթ ։ Ցօղուն սորա իբրև երեք կամ չորս ոտնաչափ 'ի վեր բարձրանայ, և 'ի տեղիս տեղիս նաև վեց ոտնաչափ, և է ոստալից, յղկեալ, և լի աղուամազիւք ։ Տերև սորա է լայնարձակ ըստ նմանութեան եղերդի, այլ ցաւատեալ, կնճռալից, և կապտախառն սպիտակ ։ Ծաղիկն լայնաբաց, և քառեակ թերթեան ըստ նմանութեան վարդի, և գոյն նորա սպիտակ, կամ ծիրանագոյն, որ 'ի վեր երևի 'ի գագաթան, ունելով 'ի միջի առէջս բազումս. իսկ մինչ զթերթսն ծաղկանց 'ի բաց թօթափեն, երևի 'ի ներքոյ մասին աստղագլուխ սերմնափակ ինչ մեծ և ստուար իբրև ձուաչափ. 'ի սկզբան անդ ցորչափ է մատաղագոյն, երկնագոյն է. բայց ապա 'ի հնանալն և 'ի չորանալն փոխի 'ի բացագոյն դեղին, և 'ի

ժիջև պատրոնակէ զամիտակ , զբնլորչև , և զիւղայինն
սերմունա քաղցրահամն ՚ի խորչս խորչս մաշկատեսակս-
յորոց կազմեն կաթնանման հիւթ ինչ քաղցրահամ ,
որ լինի դեղ քնաբեր , միզաբեր , քաղցրացուցիչ , և
զովացուցիչ , ժանգամոյն և օգտաւէտ ՚ի դիսպուածս
խթից արգանդի և որովայնի , և ցաւոց կրծոց • օգտէ
նաև ընդդէմ սերմնահաթուէ , մանաւանդ յորժամ
խառնի ընդ ջրից բացողական սերմանց՝ բաղադրելոց
հատարակ ջրով : Ջայն սերմնափակ , զոր կոչեն քօթ-
ախ բաբավէրս , ՚ի գործ ածեն ՚ի դեղ կրծոց , և թան-
ջից , զի է կակղացուցիչ , և կազդուրիչ : Խակ երկրորդ
տեսակն կոչի՝ բաբավէրնիկրում , որոյ ծաղիկն կար-
միր է և մեծ քան զվարդ • սերմնափակ սորա չէ
ճուաձև՝ որպէս առաջնոյն , այլ բոլորակ : Խակ տե-
մունքն սեաւ , և կարի խազայինն , տովտրաբար ակա-
նի ծաղկիլ յամսեան մայիսի , և յունիսի : Ջծաղիկ
սոցա ժոլովեալ ջրոցուցանեն ՚ի հովանաւոր տե-
ղիս , որք լինին դեղ օգտակար ընդդէմ հնապոյն հա-
զից , և ախտից կրծոց , հանդերձ բաղադրութեամբ
այլոց դեղորէից : Նոյնպէս զսերմնափակ նորա մինչ-
դեռ է թարմ , եփեալ ՚ի ջուր , կազմեն էսէնտութիւն ,
որ լինի դեղ շահաւէտ ՚ի դիսպուածս ընչաղդեղութեան ,
ցաւոց կրծոց , ախտի ցնցուականի , դժնդակ հազից ,
զայրացեալ թանչից , և դժնդակ հարբուխից • չափն
՚ի 6 յորենոյ մինչև ց30 : ՚Ի տերևոց այնց բուսոց
արտահանեն հիւթ ինչ սեաւ , և թանձրատուած , զոր
կոչեն լաթինք՝ օբիում , որպէս ունիս տեսանել ան-
դանօր : Է սորա և այլ տեսակ ինչ , որ կոչի ՚ի բար-
բառ լաթինացւոց՝ բաբավէր բէհա , որոյ ցօղունն
բարձրանայ յերկրէ երբ մի ոտնաչափ և կէս , բոլո-
րակ , կարծր , անհարթ , և ճիւղաւից : Տերևքն յա-
ւատեալք , թուխք , և թաւիշաւուք : Ծաղիկն գնաս-
կաձև , քաւեակ թերթեան , և կարմրերանգ , որ ելա-
նէ ՚ի ծայրս ցօղնոյն • բերէ և սերմն մանր , և սեաւ
կամ թուխ : Խակ արմատն սպիտակ , երկայն , և հատա
երբեմն մատնաչափ : Բուսանի յատգարակս և ՚ի դաշ-
տավայրս : Ծաղիկ սորա ՚ի գործ ածի ՚ի դեղորայս ,
որ է փարատիչ ուռուցից , հարբխոյ , ընչաղդեղութեան ,
և կշտացաւութեան :

— Բաբավէր սլպտուա • տես բաբավէր :
— Բաբավէր նիկրում • տես բաբավէր :
+ Բաբավէր տատուա , լտ : բաբատօնա , կն : Թուխ-

փանօ, իտ: կէլինճիկ չիչէի, տճ: շէքիր, կամ վէռ-
տի տէֆռա, և կամ շաքայիքլ նիւման, արբ: լա-
լայի տէշտի, պր: և ըստ մեզ՝ կակաչ: Է տունկ ինչ
կաղաբոյս, որոյ ծաղիկն է բազմերանգ, բայց անհոտ.
օգտաւէտ է 'ի դիպուածս թանչից. սովորաբար սորա
դրեխն 'ի վար տրկանի:

Բաբբակալլօ. տե՛ս բսիթթաքուս:

Բաբիրաչէա արպօռ, կամ թալ, լտ: Է տեսակ
ինչ արմաւենւոյ՝ յաճախեալ յամերիկայ, որոյ տե-
րևքն մեծ են 'ի պէտս թղթոց: Պտուղ նորա է ստուար
'ի չափ շողգամի, և քաղցր, որ ընտիր կերակուր է
բնակչաց երկրին: Է սորա և այլ տեսակ ինչ յաճա-
խեալ 'ի նոր սպանիա, որոյ բունն բոլորակ, և կար-
մրագոյն: Տերևքն մեծամեծ, ստուար, բոլորշի, կա-
նաչագոյն, կմ կանաչախառն կարմիր, որով բնակիչք
երկրին գործեն զթուղթս իւրեանց: Իսկ պտուղն
ստուար 'ի չափ նշոյ, այլ գոյնն թթոյ, զորմէ ասեն
լինել ազգ ինչ խաղողոյ, զոր և ուտեն իսկ: Կորիզ
նորա կարծր յոյժ: Այս պտուղք են զովացուցիչք
սրտի, և մաքրողականք արեան:

Բաբիրուս, կամ պիպլուս էճիբթիքա, լտ: բա-
բիրօ, իտ: բիր, յն: տիւրթխար, պր: և ըստ մեզ՝
պապիր: Է տունկ ինչ յաճախեալ առ նեղոսիւ, և
յեզերս լճաց սիկիլիոյ, որ սովորաբար բարձրանայ
իբր ինն ոտնաչափ կամ փոքր ինչ աւելի: Կեղև նորա
թանձր է, և մոխրագոյն, կամ դժգոյն դեղին. յոր-
մէ նախնիք գործէին զթուղթ: Տերևքն երկայն յոյժ
ըստ եղեգան. զոր քաղեալ դնեն 'ի վերայ վիրաց
վասն մաքրելոյ և ապաքինելոյ զնոսա. ծաղիկն բազ-
մառէչք, և խիտ, որք ելանեն 'ի գագաթան և 'ի
ծայրս ճիւղոց: Իսկ արմատն երկայն, ստուար, փայ-
տային, և ոստալից. հոտն՝ ազդու, նման հոտոյ չի-
բէրօ անուանեալ կնիւնոյ:

Բաբիրօ. տե՛ս 'ի վերոյ:

Բաբիօ կամ բավիօ, լտ: Է քառոտանի մեծ, յազ-
գէ կապկի, որ սովորաբար գտանի յեթովպիա:
Գլուխ նորա է գնտակակերպ. տեսիլ դիմացն սոս-
կալի. սրունգն կարճ. ոտքն փոքրիկ, և բերէ զնմա-
նութի՝ մարդկային ձեռաց. ձեան նման աղուխաւ.
բուրդն բծալից: Իսկ կերակուրն պտուղք. սիրէ
յոյժ և զգինի: Ճարպ այսր քառոտանւոյ՝ լինի դեղ
ազդու ընդդէմ յօդուածացաւութե՛, և ցաւոց երա-

կաց, զի է կակղացուցիչ, և մեղմացուցիչ:

— Բաեօմիրիօպա, կամ օրօպուս պրասիլիէնսիս, լտ: Է թուփ կամ փոքրիկ ծառ պրասիլիոյ, որոյ երկու տեսակք են. մի տեսակն է փայտային, և կանաչակեղև. բարձրանայ յերկրէ մինչև ցերեք ոտն, արձակելով 'ի միոյ արմատոյ զբազում ծիղս. իւրաքանչիւր ծիղք ունելով զիւրեանց ճիւղս յոգնաթիւս, որով մի ճիւղ սորա բերէ ութ կամ ինն սաղարթս հանդէպ միմեանց, որք են դեղք բացողական, մաքրիչ, և զովացուցիչ: Ծաղիկք նորա ելանեն 'ի ծայրս ճիւղոց, և են մանր, հինգթերթեան և դեղնագոյն: Արմատն երկայն, հաստ իբրև երկու մատնաչափ, փայտային, ուղիղ, արտաքուստ դեղնագոյն, իսկ 'ի ներքուստ սպիտակ, բայց զուրկ 'ի հոտոյ. յորմէ կազմեն դեղ ազդողական ընդդէմ թունից: Իսկ երկրորդ տեսակն՝ փոքր է քան զնա. տերևքն ձուաձև, և կարի խիտ: Ծաղիկն նման նմա: Իսկ սերմունքն մանր, բոլորշի, և սեաւ, միանգամայն և դեղ ազդու 'ի դիպուածս բորոտութեան, և քոսոտութեան: Նոյնպէս արմատ սորա փոքրիկ քան զնախընթացն. զոր եփեալ 'ի ջուր, և արբուցեալ, լինի դեղ ընդդէմ տենդից, օգտէ նաև ընդդէմ թունից:

— Բաթաթա. տես պաթաթա:

— Բաթէրէչչիօ, կամ բաթէրէչչիօլօ, իտ: տօլամա. կամ գապարճըք, տճ: տախիս, արբ: Է անուն ընդհանուր, որով նշանակի ամենայն խոց, կամ պալար, որ գոյանայ յարմատոյ եղնգաց 'ի ներքին ապականութեան, որ և կոչի բանէրէչչիօ, ուստի և լինի շարաւալից, և մարմաջեցուցիչ: Քանզի լատինք սովորաբար բանէռէչչիօ կոչեն նաև զտանա պուռունն, և զգառագապառճըխն, ըստ այսմ իմա և զայլոց տեսակաց: Գոյն նոցա մինչ տհաս են՝ է կարմրագոյն. իսկ 'ի հասանիլն հարկանին 'ի գոյն ծիրանի, ոմանք և 'ի կապոյտ, և ոմանք յայլևայլ գոյն վատթար, որ և բազում անգամ զայրացեալ փոխարկին 'ի քաղցկեղ դժուարաբուժելի՝ հանդերձ տապագին տենդիւ, և կարկամութեան ջլաց: Եւ որպէս գունովք, նոյնպէս և անուամբք զանազանին 'ի միմեանց:

Բաիքօ: Է խոտ ինչ ամերիգեան. ձևով գրեթէ ոչինչ ընդհատ 'ի ջղախոտից մերոց. համով յոյժ թթու, միանգամայն և տտիպ. զոր եփեալ 'ի ջուր, և արբուցեալ, դեղ է օգտակար ընդդէմ երիկամնա-

ժեռուԹԵ, լուծանէ և զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ:

— Բալնմբեսաս, կամ բնքս սնքքա, լս: Ի տեսակ ինչ սեաս, և Թափանցիկ ձիւԹոյ, որ 'ի Թորնըն մանուկ և պարարտ նրաց՝ նկնեալ հատաքին 'ի յատակս անօԹոցն, զոր ստէպ յօրինեն 'ի մարսելիս, և 'ի բօվէննցա. զոր դեղարարք 'ի վար արկանեն 'ի սպեղանիս մաքրողականս, և հակլացուցիչս, ոչ և այլ արհեստաւորք 'ի զանազան գործս:

— Բալնուրս, կամ րաճնուս, լս: բալնվօ, կամ սբինա տի քրնաԹօ, իտ: Ի փոքրիկ ծառ ինչ. որոյ տատքն երկայն են և փշալից: Տերևքն փոքրիկ, բուրլորչ, և պոյն նոցա մԹին կանաչ 'ի պոյն Թարմ քրքմոյ: Ծաղիկքն փոքրիկ, բոլորակ, հինգԹերԹեան, և գեղնագոյն, որք ելանեն 'ի ծայրս ոստոց. զորմէ ծաղկանց արտադրէ զպտուղն կաղնւոյի մեծուԹիւն, սնեալ 'ի մէջ հատ մի բոլորակաձև, և մածուցիկ 'ի համ կտաւատի, զոր եփեալ 'ի ջուր և արբուցեալ, դեղ է ընդդէմ ցնատաբեր հիւԹոց, և միզարձակ գեղուԹիւն, և միանգամայն գրգռեալ հալէ զքարինս միզասրանի. սովորաբար արգանակն ստոյ 'ի կիր արկանի ըստ օրինակի չայի: Լինի սա յաճախ 'ի գետեզերս, և 'ի լճային տեղիս: Արմատ ստոյ և տերևք են դեղք օգտակար ընդդէմ վնորհարուԹեան, և հոսման արեան, զի են սեղմիչք բնուԹեամբ:

— Բալմա քրնաԹի. տես ըէչինուս:

— Բալմուչէ. տես տաքԹիչէ:

† Բալուսմպուս, կամ բալուսմպէս, լս: բալօսմպօ կամ քօլօսմպէջիօ, իտ: բալէֆհԹհօյլ, յն: Թահտա կիւվէրճինի, կամ եապան կիւվէրճինի, տձ: և ըստ մեզ՝ վնորհ ասլաւնի: Ի Թուրքս ինչ յաճախեալ յանապատս, և 'ի դաշտավայրս, ձևով մորենւոյն և մեծուԹեամբ նմանի և ընձառնի ասլաւնոյ, այլ բնուԹեամբ երկչոտ. մին ստոյ պարարտ է և հաճելի, միանգամայն և դեղ օգտակար ընդդէմ միզարգելուԹեան. լուծանէ և զքար և զաւազ՝ եԹէ պոցի ընդ անցս նորա: Խակ արիւնն է զովացուցիչ բնուԹեամբ, և 'ի գործ ածեն 'ի դեղ բորբոքման աչաց:

— Բալամուսթեխուս. տես սբխուս:

— Բակուրուս, լս: բակուրօ, կամ կրանչիբօրդօ, իտ: բավուրեա, տձ: Ի տուզ ինչ ծովային խեցիգեաոոյ կամ խաչափառի. երկայնուԹեամբ նորա

լբրև առնաչափ, և լայն մի և կէս առնաչափ, և ծանրութենն կշռէ ութ, նաև տան լինելոյ, և երբեմն աւելի ևս. թեփ մորթոյն կարծր, հարթ և կարմրեղանդ. գլխաթևէքն ամրակուռ, երկճղի ըստ նմանութեբ ադցանի. չարժուն դանդալ և յամր. ժան հաճեղ, բայց դժուարամարսելի: Լինի սա խաղով և ցնդացան ալիս, և բնութեբ կակղացուցիչ, միանգամայն և օգտակար կրծոց: Եւ ՚ի գլխոյ սորա ելանէ քար ինչ կարծր, որ լինի դեղ բացողական, և օգտաւէտ ՚ի դիսպուածս փորհարութեբ, հոսման արեան, որկրացաւութեբ, և միզարգելութեբ. չափն ՚ի 10 գրեանոյ մինչև 60: Ջնոյն գործունէութեբ ունին նաև սորա թեփքն և գլխաթևէքն:

— Բան. տե՛ս բանխ:

— Բանաչէա մէդքուրիալէ, իտ: Ե դեղ բաղադրական, օգտաւէտ ՚ի դիսպուածս սիտի գաղղիականէ հնացելոյ, և բորոտութե, և միանգամայն մաքրէ զարիւն, և սրտահանէ զլորձուն ՚ի թերանոյ. չափն ՚ի 4 գրեանոյ մինչև 16:

— Բան բօռչինօ. տե՛ս չինքլամէն:

Բանթէրա լափխա, կամ բանթէրա, լտ: Ե քար ինչ ածնիւ և թանկագին, դունով խայտաբղէտ ըստ յովազի, և բնութեբ սեղմիչ, և զօրացուցիչ. զոր մարթ է ՚ի կիր առնուլ ՚ի դիսպուածս փորհարութեբ, և թոքաժեռութեբ, մանաւանդ յորժամ սիտիականքն արիւնախառն թքանիցէ. չափն ՚ի 20 գրեանոյ մինչև 40:

— Բանթէրա մինօր. տե՛ս ՀԷՆԷԹԱ:

+ Բանխա, լտ: բանէ, իտ: էբաօմի, յն: էքմէք, տճ: էշ կամ խուպուս, և կամ ըղբիֆ, արբ: նան, պր: և ըստ մեզ՝ հաց, կամ նկանակ: Ե զանգուած ինչ ՚ի ջրոյ և յալեւրէ բաղադրեցեալ. բնութե է անուցիչ, և կակղացուցիչ. բայց չէ օրէն ուտել ջերմաջերմ, զի գրգռէ զծարաւ, առեթէ զկայանս մանրագոյն երակաց, և հատարակօրէն ապականէ զէգոյն երեսաց և յառաջացուցանէ զջերմախտս: ՚Ի սմանէ երբեմն խոցք բովեալ կիզեն, և թրմեն ՚ի ջուր, որ լինի դեղ օգտակար ընդդէմ փորհարութեբ, և հոսման արեան:

+ Բանխթուամ, լտ: բանխթօ, իտ: կլիմօս կամ մէլինէ, յն: առնաւուտ ստուերըդ, տճ: և ըստ մեզ՝ ձիսակէրեակ: Բոյս սորա նման է առնևւին բուսոյ կորե-

կի. բայց միայն տարբերի ծաղկամբ, զի սորա ծաղիկն առաւել երկայն է, և հատքն չեն ցրիւ, որպէս նա, այլ ամփոփ. գոյն նորա ուրեք ուրեք լինի սպիտակ, և ուրեք ուրեք դեղին: Զիակորեակս այս առատ է իւղով, այլ սակաւ թռչական աղիւ, և բնութ՟ բացողական, միանգամայն և դեղ օգտակար ընդդէմ թթու հիւթոց. լինի և 'ի կերակուր թռչնոց, և անասնոց, և 'ի ժամանակս սովու նաև մարդկան, բայց անչափապէս ուտելն առթէ զուռոյց որովայնի, քանզի է քամիաւոր:

Բանքրաթիում, լտ: բան կամ քրէաս, յն: Է տեսակ մի ծովային սոխոյ, որոյ տերևն նման է տերևոյ շուշանի, բայց երկայն և ստուար քան զնա: Ծաղիկ նորա ելանէ 'ի գագաթան, և է երկայն սպիտակ, և աստղաձև. զկնի ծաղկանց արտադրէ սերմնափակ գնտակաձև, յորում լի են մանրիկ սերմունք: Այս սոխ գտանի 'ի դետեղերս, և 'ի ծովափնեայս. օգտակար է ընդդէմ ախտից կրծոց, հնագոյն հազից, շնչարգելութեան և կշտացաւութեան, մանաւանդ յորժամ խառնի ընդ սբէրմաչէթօի՝ բաղադրելոյ շիրօբբօ տի սգուիլլաիւ: Սա ըստ ոմանց նոյն է ընդ ծովային սոխոյն, բայց ընդ հակառակն է. քանզի ծովային սոխն է այլազգ եթէ՛ մեծութեամբ, և եթէ ներգործութ՟, զորմէ լիագոյն տեսցես 'ի բառն սգուիլլա:

Բանքրէաս. ըստ մեզ՝ պանկրատ, կամ խախացոց: ըստ անդամազննաց է մասն ինչ զետեղեալ 'ի յետակողմն ստամոքսին. յայսմանէ հեղանի յաղիսն հիւթ ինչ, 'ի ձեռն որոյ բարիոք ևս լուծանի մամացն:

Բասթաթէ ալթէա, իտ: հաթէմ լէօքիւ, տճ: որ է դեղ պատրաստական, աղնիւ և օգտաւէտ հազի. և միանգամայն կակղացուցիչ ուլան:

Բասթա վիշիքանթէ. տե՛ս էմբիաստռօ վէշիքանթէ:

Բասթինաքա. տե՛ս զնշանակութ՟ ստրին ի բառն քարօթթա:

Բասթինաքա մարինա, լտ: թռիկօն, յն: թըռաքօնիա, տճ: և ըստ մեզ՝ տրիգոն. Է ձուկն ինչ ծովային լայն, և հարթ, ծանրութ՟ նորա կշռի մի նաև երկու լիպրայ, և երբեմն աւելի ևս. գլուխն ըստ իրաց ինչ նման է գլխոյ գորտոյ. աչքն մեծ, և երկայնաձև, բերանն փոքրիկ, թիկնամէջն կապտագոյն,

տրտվային սպիտակ, տուան երկայն, վիան համեղ, և ախորժական. իսկ խոյնոյն կարծր, սրածայր, և ժանտ, որով հարկանէ, և լծիւնաւորէ զմերձեցեալսն ինքն. և այն խոյնոյ չահաւէտ է ընդդէմ ցաւոյ աւտանց, եթէ վուշնացուցեալ դնցի 'ի վերայ ցաւագնեալ աւտանն, մանաւանդ յորժամ խաւնի մեղրա մոմով:

—Բանիւքդ բէմեցար, ետու: Ի զանդուած ինչ էր, բազապրեալ 'ի յերկու տրամ ներքէ քաքաւանա արմատոյ լոսելոյ, 'ի մի տրամ ափնդէ, 'ի 64 յորեան՝ ագուամիզ աւի շիլլա սէքքէ լոսելոյ, 'ի 62 յորեան՝ օսխաս տի անեթիմոնիս սոլֆօրա թօ բռաս, 'ի յերեք ունկի՝ սպիտակ չաքարէ, և 'ի բաւականաչափ մուչիլլաճճինէ տի կոմմա տրականեթէ: Կազմեն աւտի 400 հաւս, յերկուս ժամս միանգամ աւնու հիւանդն հաս մի աւ իւրաքանչիւր նուագ: Ջօրաւոր է յոյժ դեղս այս 'ի դիպուածս ցաւոց կրծոց, ընչարգելութե, և թանձրամածուքե աղիացն. զի է մեղմիչ, և կազդուրիչ:

—Բանիւքդ ա' էնուլաքամբանա, ետու: Ի զանգուած ինչ բազապրեալ 'ի կէս ունկի՝ էնուլաքամբանա արմատոյ լոսելոյ, 'ի մի տրամ ճիաճճիօլօ լոսելոյ, 'ի մի և կէս լիտրայ սպիտակ չաքարէ, և 'ի բաւականաչափ մուչիլլաճճինէ անուանեալ խժային հիւթոյ: 'Ի զանգուածոյ աւտի տացի մի և կէս ունկի յաւուրն: Օգտաւէտագոյն է 'ի դիպուածս աքօղութօ անուանեալ ախտի, ջղգողութե, և միզարգելութե:

—Բանիւքդ տէր մօկօլ, ետու: Ի զանգուած կամ հաւտագեալ ինչ՝ որ այսպէս բազադրի: Մի ունկի խէժ արաբիոյ, երեք և կէս ունկի սպիտակ չաքար. երկու և կէս տրամ մեխակ փուչնացուցեալ, նոյնչափ ընկոյզ մշկահոտ լոսեալ. եօթն տրամ զուան սպիտակ ջրացեալոյ, երկու և կէս տրամ՝ մաչկս ծռպկին լուսեալ, հինգ կէս ցորեան մուչկ. ա՛ու և զջուրն վարդի՝ որչափ պէտք են վան շինելոյ զզանգուածս, որք մեն մի կշռիցեն վեց ցորեան, զոր ջրջատատեալ փուչուն կինամոնի, ատցես հիւանդին մի կամ երկու կամ հաս երկնից յաւուրն՝ զինի կերակրոց: Ձդեացի դեղատուքես այս ցքան և ցերեսուն օր, և տեսցի օգտաւէտութե ստրա մեծ 'ի ջրաց ուցանել զթուլութե ստամոքսին, 'ի զարթուցանել զախորժակն,

՝ի կազդուրել զոկարրութիւնն ջլաց, և զգայական երակաց, և ՝ի բարեկարգել զգործողութիւնս զաւակ կարար հիւթոյն։

— Բաանիքքէ սէլ տօթթօր տուալօխա, խտ։ Ի զանգուած ինչ բաղադրեալ ՝ի մի ունկի փոշւոյ սպնգոյ կիզեալ, ՝ի կէս ունկի՝ քարտօնաթօ տի ատտա լտաելոյ, ՝ի չերկու տրամ՝ փոշւոյ կինամոնի, ՝ի քան և երկու տրամ՝ հիւթոյ լիպուխրիցիա արմատոյ. և յաւել այնչափ մուչիլտաճ կինէ տի կօմմա տրականթէ՝ որչափ պէտք եցէն առ կազմելոյ բաս կանոնաց արհեստին զզանգուածս զայս, արարեալ հապ՝ որ կշռի ցօրեան. և այսպիսի զանգուած չորք պատեալ փոշւով մանկէսիայի, տացին մեզ մի հատ ընդ երեկս։ Ընդհատ է յոյժ դեղս ՝ի դիպուածս խցանոց հապտային մանանայ, որ ըստ առաքինական բարբառոյ՝ ուօր անուանի։

— Բաանիքքէ տի բիրէթօ տէլ տօթթօր լաքօմպէ։ Զանգուածս այս օգտաւէտ է ՝ի դիպուածս փոլպացաւութեց, թոքային հարբխոյ, հնագոյն թոքաժեռուԹե, ընչարգելութե, դժնդակ հազից, նուրբ ախտից, և սկսաւութե գործարանաց թոքոց։ Զայս եթէ կամիցես բաղադրել, առ ունկի մի ալբօլիքա տի բիրէթօ, տասն ունկի՝ մաքուր շաքար, և յաւել այնչափ մուչիլտաճ կինէ տի կօմմա տրականթէ, որչափ պէտք են առ կազմելոյ զզանգուածս զայս։ Արարեալ տատ 150 հատիկս, երեք առցին ընդ առաւօտս, երեք նախ քան զճաշն, և այլ երեք ընդ եւեկս։

— Բաանիքքէ տի ճինճաբին, խտ։ Ի զանգուած ինչ՝ բաղադրեալ ՝ի հինգ ունկի՝ ճինճաբին արմատոյ լուսելոյ, ՝ի տասն ունկի՝ վանիլիա պտղոյ լուսելոյ, ՝ի տասն չիթ հասկնցա ո՛ ամպրա, ՝ի հինգ տրամ՝ թինթուրա տի քանթերիտիս. ՝ի 30 չիթ՝ խտոյ կի նամանի, և ՝ի 15 լիտրայ մաքուր շաքարէ. յոր յաւել այնչափ մուչիլտաճ կինէ, որչափ պէտք եցէն առ յօրինելոյ զզանգուածս զայս։ արարեալ հատիկս՝ որ կշռեցէ 24, կամ՝ 30 ցօրեանս, ՝ի զանգուածոյ տատ ՝ի մի կամ չերկուս ժամս միանգամ առնու հիւանդն ջուր կամ հինգ հատ առ լուրթանջիւր նուագ։ Ջօրաւոր է յոյժ դեղս՝ ի դիպուածս տկարութե ջլաց, և առնի անդամոյ, և միանգամայն գրգռէ զաղիս։

— Բաանիքքէ վէռմիֆուգէ, խտ։ Ի զանգուած ինչ

ՃՃՂ հալած, որ այսպէս բաղադրի: Ա՛ւ երկու տրամ մուրհակս առնէ ահ մեղքուրիս, վի և կէս լիպրա շաքար, և յաւել այնչափ մուխլլաճինէ՝ որչափ պէտք են առ կազմելոյ զգանգուածս զայս. արարեալ հատիկս՝ որ կշռիցէ 15 ցորեան, տացի վի կամ երկու հատ, երկու անգամ յաւուրն:

+ Բասակր, լտ: բասակրա, իտ: սգաւթօա, յն: սէրչէ պուշտ, տճ: նէհակարէ, կամ վէսահ, կամ տուխտուլ, և կամ տուխնա, արբ: բասունճիւկ, կամ գէնճիսչկ, և կամ ճուվանիկ, պր: և բատմէզ՝ ճնճղուկ, ծկտ: Է թռչուն ինչ փոքրիկ քաչճանօթ ամենայն ումեք, որ է առատ խաղով և ցնդական աղիս, որոյ ձէթ՝ միան, և ձէթ ուղեղն օգտակար է՝ի դիպուածս անդամալուծութենէ, լուանուտութենէ, և ջղոտութենէ. օգտակար է նաև ընդդէմ թունից, և միզարդելու թեան:

— Բասակր լէվին, կամ սգուամօզուա, լտ: բասակրա, իտ: բիան պալըղը, կամ տիլ պալըղը, տճ: Է ճուկն ինչ ծովային լայն և տափարակ, որոյ են երկու սեռակք: Մի սեռակն է մեծ՝ զոր լատինք կոչեն՝ բլիա: Իակ ղիւան կոչեն կուտուէլէթ. գոյն նոցա խայտաբղէտ, այսինքն կարմիր, և գեղին. իակ միւսքն փափուկ, և դիւրամասուելի, միանդամայն քաղցրացուցիչ, և ցրուիչ: Են նոցա և այլ սեռակք, ըստ ձևոյ, և ըստ գունոյ նմանն միմեանց, և են հասմով քաղցր, և ախորժահան, միանգամայն և դէղք կակղացուցիչք, և քաղցրացուցիչք:

† Բասակր քանարկուա, լտ: քանարինօ, իտ: գանաբիա գուշտ, տճ: ճուվանիկ, պր: և բատմէզ՝ դեղձանիկ: Է փոքրիկ թռչուն ինչ դեղնագոյն՝ի չափ ծտի, փետուրք նորա՝ի թևս, և՝ի ձեռն են կանաչագոյն. կտուցն փոքրիկ. ձայնն սուր, և քաղցրաբարբառ: Սովորական կերակուրն է սերմն դդմոյ, և անակալիտէ անուանեալ տունկն: Սոյ թռչուն գոյանի գրեթէ յամենայն գաւառս աշխարհիդ. այլ առաւել յաճախ՝ի քանարիայ կոչեցեալ կղզին. լի է խաղով և ցնդական աղիս. օգտաւէտ՝ի դիպուածս լուանաժեռտութենէ:

— Բասիծնէ իլիաքա, կամ միզէռէռէ, լտ: իլաօա, կամ ռասպիլ համա, արբ: պաղտաք աէօնմէսի, տճ: Բառիս այսու նշանակի ուրուն, կամ անդրադարձումն ազեաց, կամ փոխառեալ, որք խցեալք,

և արգելեալք ՚ի բուն և ՚ի սովորական ընթացից, սրտաբաս եղուզանեն ՚ի բերանոյ զկարիս որովայնի. զորմէ և ունիս տեսանել հտ. ա. գլ. լէ:

—Բաւանէ, կամ պատօս էռնսիբելաս քուռանս, և կամ վասաւլնէ, լս: Է փոքրիկ ծառ ինչ հնդկայ են, որ ոչ բարձրանայ աւելի քան զուէթ կամ ինն տանաչափս, որոյ տերևն ըստ ձևոյն նմանի է տերևոյ նարնջոյ: Ծաղիկն մանրիկ, սպիտակ, և քառեակ թերթեան՝ ըստ նմանութեանն ծաղկան քաբուխֆօլիս առնուանեալ անկոյ, և ըստ սերմն սուսար, բոլորչի, և մէջն կանաչ: Իսկ արմատն սպիտակ, և փոքր ինչ դառնահամ: Լինի յաճախ՚ի խոնաւուտ վայրս, որոյ եթէ արմատն, և եթէ բուն են դեղք շահաւէտ ընդդէմ ռնսիբօլա անուանեալ հրատապ պալարի, զոր տաճիկք կոչեն՝ երլանճըք, եթէ ջրոցն լուսոյն պալարն այն. օգտակար են նաև ընդդէմ բորբոքման փորոտեաց, և լերդի. չափն ՚ի 4 սրամէ մինչև 96 ընդ մի լիպրա ջրոյ:

—Բալիս. տես բաբիս:

—Բալա. տես ՚ի ներքոյ:

†—Բալո, կամ բալուս, կամ ալիս մէանքա, և կամ ալիս եռնիօնիս, լս: բալօնէ, ետ: տուռուա խէպիւլ հասէն, կամ էպիւլվէչի, արբ: Թավուզ գուշու, տճ: և ըստ մեզ՝ սերամալտ: Է Թուչուն ինչ սքանչելատեսիլ ՚ի չափ հնդկահաւու. որոյ գլուխն փոքրիկ է և երկայնաձև, յորոյ վերայ զեռեզեալ կան Թագաձև կամ կնգլաձև կատարք դեղեցիկ. պարանոց նոյ նորա երկայն է և նուրբ. ձայնն սուր, և նեղ ինչ, փետուրքն երկայն յոյժ, և երկնագոյնք, և ոսկեգոյն ՚ի մէջն գլխոյ, և ներքին կողմն թևոց. մէջն մեծ և ոսկեգոյն գունդիկ ունի, որ ի ծայրս ունի սև գոյն. ոտքն մեծ. դեղեցիկ ձեմք, և ՚ի ձեմելն նազելի տարուբերէ զգլուխն, և զպոչն: Իսկ միսն չոր և կարծր, որոյ եփոցն ՚ի ջուր՝ դեղ է ապգու ընդդէմ կշտացաւութեանն, և միզարգելութեանն, և միանգամայն լուծանէ զբար գոյացեալ յերիկամունս մարդոյ: Ճարպ սորա օգտէ ընդդէմ խթից, օծանելով և եթէ զպինս: Կղկղանք սորա օգտաւէտ է ընդդէմ լուսանաժետութեանն, և անդամալուծութեանն, արբելոյ նաև ըստ պատշաճ դրամոյ և զինգուսին միանոց. չափն ՚ի 20 գրամոյ մինչև 960: Իսկ ձագ նորա ՚ի գարձ ածեն ՚ի

պ.եղ ինչուսածոց, և չհամեմիքա կոչեցեալ ախտի:
— Բաւը բհաչիա, կամ բաւը ասլվնանի, լա: Ի ձուկն
ինչ ծովային լայն, և երկայն ոտնաչափ մի և աւե.
ծանրութեան նորա կշռէ երկու լիպրայ, և երբեմն
աւելի ևս, ունելով՝ ի վերայ նիշս և գիծս բազմե.
րանգս: Գլուխ նորա հսկայ է և կապտախառն կա.
նաչ. ընչացքն երկայն, և սաուար, չղթունքն լայն և
թանձր, աչքն լայնաբաց, և ունքն մեծ: Իսկ միան
ծանր և դժուարամարսելի, որ ոչ է բարի՝ ի կերա.
կուր. զի է լուծինչ բնութեբ:
— Բաւնէլլա. տե՛ս վանէլլուս:
— Բարաւիզիա. տե՛ս բարաւիսիա:
— Բարաւիզիա լօքալէ, իտ: տեղական անդամալու.
ծութի:
— Բարաւիսիա, լտ: բարաւիզիա, իտ: տաւշիա, կամ
գէօթրուամբիւք, տճ: իլհասլաս՝, կամ խաթիլլիա, և
կամ նոգտա, կամ ֆալիճ, արբ: և ըստ մեզ՝ անդա.
մալուծութի, կամ անդամագօսութի, որ է ախտ
ինչ և լուծուն անդամոց. որով ջնջք կամ միանունք
անդամոց քակեալ կամ թուլացեալ լքանին, որով
ոչ կարէ ոք յոտն կալ ըստ կամաց իւրոց, և շարժիլ,
և այլն: տե՛ս հտ. ա. երես 222:
— Բարեխիա պրաւա, կամ պօթուա, լտ: հինատա.
մասը, տճ: էնէպ հինասի, արբ: և ըստ մեզ՝ որթ
հնդկաց: Է սրամտ՝ ի ձև արմատոյ թհխմօլէ ա.
նուանեալ անկոյ, բայց կարծր և սեաւ քան զայն:
Արձակէ բուն երկայնս, և ճիւղս բազումս՝ հան.
պոյն որթոյ: Այս սրամտ յատկախ գտանի՝ ի մէք.
սիքաս. բնութբ է միզաբեր և թուլացուցիչ՝ զոր
ևսաւնեալ՝ ի գինի սպիտակ, և արբուցեալ, լինի
գեղ օգտակար ընդդէմ միզարգելութբ, երիկամնա.
ժեռութբ, ընչարգելութբ, գալիճան: Ազդի՝ ի կէս
տրամ մինչ ցմի և կէս. այլև օգտէ ընդդէմ ցաւոց
յօդուածոց աւթելոց յուժգնութբ:
— Բարթէնիուս նօսիլէ. տե՛ս քհամէմէլուս:
— Բարիէթարիա օֆֆ, կամ հէլբսինէ, կամ վիթրիօ.
լա, կամ բէրտիչիուս, կամ տրէչէօլարիա, և կամ
հէբտա մուրուրիա, լտ: բարիթարիա, կամ բարիէ.
թարիա, և կամ վիթրիուսօլա, իտ: բտուիչիթէտ,
պղղ: հէլբօ, յն: եաուիչիան օթտս, տճ: և ըստ մեզ՝
կատուինչ: Է տրամտոյ իստս ինչ տանուջափ մի և կէս
բարձրութբ, որոյ ցօղունքն կան բազմիլ, կարմրերանգ,

և դիւրաբեկ: Տերևքն են երկայնաձև, անհարթ, թաւիշաւոր, որք կռուին 'ի հանդերձս անցաւորաց: Ծաղիկն մանրիկ, և կանաչախառն դեղին, ունելով 'ի միջի առէջս քառեակ թուով. բերէ և սերմունս երկայնաձևս, և փայլունս: Սա գտանի ամենայն ուրեք. լի է աղիւ և իւղով, և բնութ՟ն յոյժ միզաբեր և թուլացուցիչ: Չափն 'ի 4 տրամէ մինչև 98, եփեալ ընդ մի լիպրա ջրոյ:

— Բարնասսիա, կամ կրամէն բարնասսի, կամ հէբաթիքա ալպա, լտ: Է խոտ ինչ փոքրիկ, որ ունի ղնմանութ՟ի մանուշակի, բայց փոքր քան զայն. բուսանի 'ի մարգագետինս, և 'ի խոնաւուտ տեղիս, արձակելով յարմատոյ զբոլորշի, և զերկայնականթ տերևս, և 'ի միջի տերևոց ելանեն ցօղունք երկայնք, որք 'ի ծայրս բերեն սպիտակագոյն ծաղիկս հինգթերթեանս, և քաղցրահոտս. ունի և պտուղս թաղանթայինս, յորում լի են սերմունք երկայնաձևք: Իսկ արմատն ստուար, սպիտակախառն կարմիր, թելաւոր, և տտպահամ: Այս խոտ լի է իւղով, բայց նուազ աղիւ, և բնութեամբ սեղմիչ, և զովացուցիչ:

— Բարուլուս. տե՛ս 'ի ներքոյ:

+ Բարուս, կամ բարուլուս, կամ բարիքս, և կամ էճիթհալուս, լտ: Է թուչուն ինչ փոքրիկ. որոյ գոյն է կանաչ, լինի ևս դեղնագոյն, սպիտակ, սեաւ, և կապտագոյն. գլուխ նորա է սեաւ, և փայլուն, և 'ի տեղիս տեղիս նաև գորշագոյն: Սորա է տեսակ ինչ կոչեցեալ՝ քարպօնարիուս մինօր, կամ քանինուս, որ փոքր է քան զայն, գլուխ նորա է սեաւ, և սպիտականիշ, ոտքն և փորոտիքն կարմիր: Երկոքին սոքա առատ են իւղով, և թռչական աղիւք, օգտակարք են ընդդէմ անդամալուծութեան, և լուսնաժետութ՟ն, և միանգամայն լուծանեն զքարիկս, և զաւազս միզարանի:

Բարօնիքիա, կամ բօլիծօնում մինուս քանտիքանս, և կամ անթհիլլիս նիվէա, լտ: օնիքս, յն: Է խոտ բուսեալ 'ի լերինս, և 'ի քարուտս իբր մի և կէս ոտնաչափ. Ճիւղք սորա են տարածողական, տերևքն ունին զձև տերևոց քօրրէճիուօլա անուանեալ խոտոյ, այլ սակաւ մի փոքր են քան զայն: Ծաղիկն փոքրիկ, ունելով 'ի միջի առէջս բազումս: Ունի և արմատ երկայն, ստուար յոյժ, փայտային. սպիտակ, և բնու-

թ̃ սեղմիչ։

Բարօսիզմօ, կամ բարօսսիսմօ, կամ աչչէսսօ տի ֆէպպրէ։ Է կանոնաւոր ընթացք կամ դարձ տեն-դի։

— Բաքօչէրօքա։ Է բոյս ինչ պրասիլիոյ. որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ իբր եօթն ոտնաչափ. և է ուղիղ, սպնդային, և կանաչ։ Ծաղիկ նորա է կարմրերանգ՝ ըստ նմանութ̃ ծաղկանց հնդկային եղեգան։ Յետ ծաղկանց արտադրէ զպտուղն շլորաչափ մեծութ̃, զորոյ խորտակեալ զկեղևս՝ ելանեն 'ի միջոյ մանրաթելք՝ զորովք պատեալ կայ մածուցիկ հիւթ գինէհոտ և կարմրախառն դեղին. յորմէ դեղարարք ներկեն զոգիս 'ի գոյն դեղեցիկ կարմիր. և 'ի միջի ունի սերմունս եռանկիւնաձևս, և դեղնագոյնս։ Իսկ արմատն ոստալից, և թելաւոր։

— Բէբէ. տե՛ս բիբէր։

— Բէբէ լունկօ. տե՛ս բիբէր լօնկում։

— Բէբէ նէռօ. տե՛ս մէլանօ բիբէռ։

— Բէբէ պիանքօ. տե՛ս բիբէր ալպում։

— Բէբէ տի էթիօբիա. կամ կրանօ տի ծէլիմ։ Է ազգ ինչ բիբէր լօնկում յորջորջեալ պղպեղի, զորմէ ունիս տեսանել 'ի տեղի իւրում։

— Բէբլօս, կամ թիթհիմալուս աննուուս ֆօլիօ րօթունտիօրէ աքումինաթուս, լտ։ բէբլօ կամ էզուլա րօթօնտա, իտ։ Է բոյս ինչ կաթնաբուղխ, յազգէ սիւթլիւէն անուանեալ տնկոյ, որոյ ցօղունքն են յոգնաթիւ։ Տերևք սորա բոլորշի են և մթին կանաչ։ Ծաղիկն բազմահերձ, պտուղն փայլուն, և անկիւնաւոր, ունելով 'ի միջի սերմունս երկայնաձևս։ Իսկ արմատն մանր և թելաւոր։ Լինի սա յաճախ յագարակս. լի է իւղով, և աղիւ, այլ ըստ բնութ̃ և ըստ ներգործութ̃ նոյն է ընդ թիթհիմալուս անուանեալ տնկոյ։

— Բէբօ, կամ քուքուրպիթա ֆօլիիս ասբէրիս, կամ ծուքհա ֆլօրէ լութէօ, լտ։ ծաթթա, իտ։ Է տունկ յաճախեալ յեգիպտոս, որոյ ցօղունն է ճիւղալից, երկայն, և ստուար իբր մատնաչափ։ Տերևք նորա են մեծ, լայն, հերձոտ ըստ նմանութ̃ տերևոց սեխի կամ թզոյ, որք և են կարծր, անհարթ, մթին կանաչ, փայլուն, դոյզն ինչ փշոտ, երկայնականթ, և եզերք նորա սղոցաձև ատամնաւորեալք։ Ծաղիկն զանգակաձև, հերձոտ, քրքմագոյն, և երակալից, և

այս մանաւանդ՝ի միջին կողմանէ. զկնի ծայրկանց յաջորդէ պատուին սեխաչափ մեծութիւն. ձև նորա այլևայլ է. այսինքն երկայն, բոլորակ, և եռանկիւնի, կեղևն խորտաբորատ, միջի դոյացութիւնն ապտակ, սպունգային, և դոյզն ինչ քաղցրահամ, և բնութեամբ զովացուցիչ, և քաղցրացուցիչ արեան. զայս պատուղ կարծեմ՝ի բարբառ արաբացւոց կոչեն՝ Ալ. ակլլավի: Իսկ սերմունք նորա որք լինին՝ի պտղի անդ՝ են տափարակաձև, լայն, և եռանկիւնի, և բնութիւն բացորոշական, և մկզաբեր:

— Բէդուէցիանօ, կամ էնթէհնա բէգուէցիանա: Է բառ անդամազինուածական, որով նշանակի մասնացայտանն, որ է պարկ ինչ մտշկեղէն, և խորշկէն, ուրուց նօր պարուհնակի մասացն:

ռէսթռիս, լտ: լնքօքսիտիս, կամ մուաքս թէռռէս-
թռէ, իտ: Գուռատ այտլը, ած: և ըմ մէզ թարգ-
մանութիւն՝ ատն գայլոյ: Բոյս յաձախեալ 'ի զվէյիա՝
յանուանս, և 'ի բարձրաբերձ լերինս. որոյ ցօղունն
ձապաղեալ սիրտ զերեսաք երկրի, հանդերձ երկայն
և պարարտ ճիւղովք: Տերևք սորա փոքրիկ են և
անհարթ, որք խիտ առ խիտ բուսանին 'ի վերայ
ճիւղոց: Իսկ արմատն երկայն, միայտային, և թե-
լաձիւ: Այս բոյս լի է խլզով և գոյացական աղիս,
և բնութիւ ձգէչ և սեղմիչ. օգտաւէտ է 'ի դեղատածս
ցաւոց յօդուածոց, և մկզարդելութիւն, եթէ ջրով

եւաց ուցեալ արբցի : Իսկ եթէ տեսրևն փոշևաց ուցեալ արբցի իսաւն ընդ ջուր՝ լինի դեպ ընդդէմ փորհարուածէ, թանչևց և պջռապուածօվ : Ձափն 'ի կէս տրամէ մինչև ցմի :

Լուբինուս ալպուս, լտ : լուբինո, իտ : ամբը բակլա, ամ : Թերմիզ, արբ : և ըստ մեզ՝ բակլայ դառն : բոյս՝ յաճախեալ յեգիպտոս, երկայն իբր երկուատ նաչափ, ճիւղալևց, բազմատերև, ուղիղ, վարսաւոր, և ուղղաբեր : Տերև նորա է խիտ, երկայն, և հեղձոտ, 'ի վերուստ ծուխագոյն, իսկ 'ի ներքոյ սպիտակ, և թաւիշաւոր. հասմով ըստ մասին դառն, և քաշտ մասին ատիպ : Ծաղկին սպիտակ, հասկաձև, և կարճատևանէ, որ ելանէ 'ի գագաթան, և 'ի ծայրս ճիւղոց հանդերձ բաժանաձև առէջնէք. յետ ծաղկանց յաջորդէ պատեանն երկայն, պարարաձև, և վարսաւոր, մէջն չերտաւոր, յորում բազկանան հատք սպիտակ, բոլորշի, բացագոյն գեղին, և յոյժ գառնահամ. յորոց կազմեն գեղ վասն ձձեաց, որքիւնոյ, և բորոտութեան, չաւին ունկի մի ընդ երկու լիտր ջրոյ : Իսկ արմատն կարծր, և սպիտակ :

Լուբուս, լտ : Ընդբօ, իտ : լինքօա, յն : գուռտ, տճ : գաչխիպ, կամ գըլլուպ, կամ զինջ, կամ հէղձամ, կամ սէրհան, և կամ ախպ, արբ : և ըստ մեզ գայլ : Ի տեսակ մի գազանի 'ի չափ շան. որոյ գլուխն է քառանկիւնաձև, աչք փայլակնացայտ, մանուկ 'ի մէծան. ցուռկն երկայնաձև, բերանն մեծ. ատամունքն կարծրակուռ, և սրածայր. ականջք կարճ. պարանոցն այնքան կարճ է, մինչև չկարէ շարժել զայն, յոր սակս ստիպի դառնալ ետևր մասնիսն առ 'ի հայել յետս. մորթն թաւամազ, և դեղնախառն սպիտակ. տուտն ստուար, և երկայնահեր : Բնութիւն գիշնեայ, և պատառօղ, և անյագ մսակեր քան զամենայն գազանս : Սա 'ի ձմեռան առաւել զայրագին է քան յամառան, միշտ յաճի շուրջ զգիւղօրէից ըմբռնել ընտանի անասունս. և այնչափ յանդուգն է, զի բազում անգամ գիշերայն մտանէ 'ի գիւղս, և յափշտակէ ոչխարս 'ի վարսախէ իւրեանց, երբեմն և զմարդ : Սիրտ սորա օգտակար է լուանոտութեան, և վերնոտութեան, չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց30 : Լեարդն ունի զգօրծոց նէութիւն 'ի փարատել զՂրգողութեն, և զթոքաժեստուն, չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց60 : Ճարպն օգ-

տակար է ջլաց օծելով: Իսկ ոսկերքն փոշիացուցեալ, լինին դեղ շահաւէտ 'ի դիպուածս կշտացաւութեան, և շիաթիքա անուանեալ յօդուածացաւութեան: Մազք մորթոյ գայլոց 'ի ծերանալն սպիտականան. բայց 'ի կարի ցուրտ գաւառս գտանի և 'ի բնէ սպիտակ. երկնչի և փախչի 'ի հրոյ, և 'ի սաստկահնչիւն ձայնից:

Լուբուս մարինուս, լտ: լուբօ մարինօ, իտ: գուռտ պալըղը, կամ տէնիզ գուռտու, տճ: տիպ սէմէք, արբ: և ԹՄ մեզ՝ գայլ ծովային: Է ձուկն ինչ շատակեր 'ի ձև սալամօն ձկան, այլ մեծ, և ստուար քան զայն, գրեթէ կշռէ 20 լիտր. գլուխն երկայնաձև և թանձր, աչքն մեծ, ընչացքն երկայն և լայնաբաց, ատամուսքն նուրբ, և սրածայր, թեփ մորթոյն կարծր և արծաթագոյն: Իսկ միսն որ է առատ ցնդական աղիւ՝ 'ի գործ ածի և 'ի դեղ ցուրտ այտուցից, և խուլից: 'Ի գլխոյ նորա երբեմն ելանէ քար ինչ փոքրիկ, զոր ստէպ 'ի վար արկանեն ընդդէմ գլխացաւութեան, կապելով ևեթ զայն 'ի վերայ վշտագնեալ մասին գլխոյ:

Լուբօ. տես լուբուս: Դարձեալ՝ այսու անուամբ նշանակի՝ խոց կամ ախտ ինչ, որ 'ի վեր երևի 'ի քունջս երանաց, և 'ի սրունս:

Լուբօ մարինօ. տես լուբուս մարինուս:

Լումպրիքուս թէռռէսթրիս, լտ: վէռմի տի թէռռա, կամ լօմպռիքօ, իտ: էլմինս, յն: սօղլուճան, կամ եէր գուռտու, տճ: տէսուզ, կամ սաֆար, կամ խառաթի, կամ շահմէթիւառթ, կամ էմայուլէաթ, արբ: կիրիմ սիւռի, կամ կիրիմ տիրազ, և կամ խօյնա, պր: Է անուն ընդհանուր նշանակիչ ամենայն տեսակ ցամաքային որդանց, որք զուրկ են յոսկերաց և յարենէ, բազումք ևս զուրկ յոտից. իսկ այլք բազմոտանի քան զայլ միջատս: Անհամար է այսոցիկ որդանց բազմութիւն, որք գտանին 'ի ծոց հողոյ, 'ի վերայ երեսաց հողոյ, և աւազոյ, այլև 'ի վերայ ամենատեսակ ծառոց և բուսոց: Տեսակ ինչ նոցա կեայ 'ի մէջ փորոտեաց կենդանեաց, և տղմոյ, որ է երկայն իբր թզաչափ, նուրբ, բոլորակ, տափարակաձև, և կարմրերանգ, զոր թուրքք սօղլուճան կոչեն. յորմէ ելուզանեն զիւղ և զոգի, և 'ի գործ ածեն 'ի դեղ ցաւոց ոսկերաց, յօդուածոց, ջղաց, և այտուցից, և լուծման՝ նաև կարկամութեան

ջլաց. 'ի տեղիս տեղիս 'ի կիր առնուն նաև 'ի բժըշ-
կութիւն երիկամնաժետութեան, և միզարգելութեան:
Գիտել արժան է, եթէ յամենայն ցամաքային ճճեաց
կամ որդանց ելուզանել մարթ է զոդիաւոր հեղա-
նիւթս, որովհետև առատ են ցնդական աղիւք, և
իւղովք. բայց ջրայինք զուրկ են յայնպիսի ներգոր-
ծութեաց և օգտաւէտութեաց:

Լուշինիա, կամ բհիլօմէլա, լտ: ուզինկնուօլօ,
կամ ռուսիկնուօլօ, և կամ ռօսիկնօլօ, իտ: այէթօն,
յն: պիւլպիւլ, տճ: անտէլիպ, կամ գիւայթ, և
կամ ճիւմէիլ, արբ: պիւպիւրտէկ, կամ զէնտխաա,
պր: ըստ մեզ՝ սոխակ. Թռչուն ինչ փոքրիկ 'ի չափ
արտուտի, որ 'ի գլուխ իւր ունի Թադաձև կատարս.
փետուրք նորա 'ի Թիկունս են Թուխ, իսկ յորո-
վայնն գորշագոյն. սրունքն կարմրերանգ, որպէս և
կտուց նորա, տուտն կարճ. իսկ ձայնն սքանչելի և
զմայլեցուցիչ. սովորաբար բնակի յանտառս, և 'ի
բուրաստանս. որոյ միս 'ի գործ արկանի իբր դեղ
լուսնոտութեան, և անդամագօսութեան. իսկ լեզին ու-
նի զմասնաւոր գործունէութիւն 'ի փարատել զմառա-
խուղս աչաց:

Լուչիուս, լտ: լուչչիօ, իտ: Թուռնա պալըղը,
տճ: սէմէք հաննու, արբ: և ըստ մեզ՝ կռնկաձուկն:
Տեսակ ինձ ձկան՝ որ ունի զգլուխ մեծ առ համե-
մատութեամբ մարմնոյ. աչքն ոսկեգոյն և փայլուն.
ծնօտն դրդալաձև, ատամունք սայրասուր, Թեփք
մորթոյն լայն, սպիտակ և խոտորնակ. տուտն
կարճ. իսկ միսն սպիտակ, և համեղ, միանգամայն
և դիւրամարս. որոյ սիրտն և լեարդն լինի դեղ օգ-
տաւէտ անընդհատ տենդից. չափն 'ի 4 ցորենոյ
մինչև ց6. Ճարպ սորա նոյնպէս օգտաւէտ է ընդ-
դէմ հարբխոյ: Իսկ ձուն կամ ձուղքն ունի մասնա-
ւոր զօրութիւն բառնալոյ զզզուանս ստամոքսի: 'Ի
գլխոյ սորա երբեմն ելանէ քար ինչ փոքրիկ, կարծ-
րակուռ, և սպիտակ, զոր իբր դեղ 'ի կիր առնուն
ընդդէմ լուսնոտութեան, երիկամնաժետութեան, և մի-
զարգելութեան. լուծանէ և զքար, եթէ գտցի ընդ
անցս նորա: Չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց60:

Լօլիկօ կամ սէփիա, լտ: լօլլիճինէ, կամ սէփ-
փիա, կամ քալամաեօ, իտ: տէւթիս, յն: միւրէքէպ
պալըղը, կամ սիբիա, տճ: և ըստ մեզ՝ կաղամար
ձուկն, կամ մելանաձուկն: Է տեսակ մի քսակաձև

ձկան, որ կրէ ՚ի ծոց իւր զսեաւ հիւթ ինչ իբրև զմեղան, յորմէ կալաւ և զանուանն. ունի և զբազում ձանկս մեղէնս, երկայնս, և փոփուկս. որոյ մին օգտաւէտ է ակարութեանէ ստամոքսի: Իսկ զոսկրն զոր լսանինք կոչեն՝ օսատ ակ ակիլա, լոսեն ՚ի փոշի մանրատել, և ՚ի գործ արկանեն երբեմն ՚ի գեղ միզարգելութեանէ, և սերմնակաթութեանէ:

Լօլիսամ, լս: լօկլիօ, կամ ծիծանիա, իտ: տէլէձէ, տձ: գաստէլ, կամ զլվան, և կամ տէնիքա, սրբ: զլվէմ, սր: և ըստ մեզ՝ որոյն: Ի ունդ կարմրերանգ, գնտակաձև, ախորժահամ, այլ ընտաբեր. քանզի բազում անգամ պատճառէ զթմրութեն, զոր ասյտ զլնոյ, և երբեմն ևս զինջուածս, և զդեղնութեն երեսաց. բայց եռացուցեալ կորսուանէ զայդպիսի ակ ընտակար որակութենս. և ՚ի ժամանակս սովու ժարթէ և զայն փոխանակ հացի ՚ի կիր առնուլ: ՚Ի տեղիս տեղիս ՚ի կիր առնուն նաև ՚ի բժշկութենէն ասյտուցից, խթից, և երիկամնաժետութենէ՝ ջերմաց ցուցեալ արկանելով ՚ի վերայ ցաւագնեալ մասին մարմնոյ:

Լօկլիօ. տես լօլիսամ:

Լօմպարդ: այսու անուամբ ըստ անդամոցն նշանակի՝ ինչ երկայն և տուարտ զետեղեալ ընդ ողնայարն, և ընդ յետակողմն ամենայն կողից, ձա պատեալ ընդ յետակողմն միջաց մինչև ցոսկր սրբանին:

Լօմպոնբօնատ: Ի տեսակ մի ձձուոյ՝ որ առվուրաբար գոյանայ ՚ի վուր կենդանւոյ. որոյ էութենէն ի իբր վեց, եօթն կամ ութ մասունս ածուփ. և երբեմն ա ձեցեալ լինի իբր երեսուն ատնաչափ. իսկ լայնու թին գրչաչափ:

Լօպօ. այսու անուամբ ըստ անդամոցն նմանի՝ բլթակ լերդի կամ թոքոց:

Լօցիօ. տես ուրինա:

Լօքմ. այս բառ կոչեցեալ յարաբացւոց, ի անուն ընդհանուր նշանակիչ ամենայն թանձրամած դեղոց՝ որք ըստ մեծի մասին օգտակարք են կրծոց և թոքոց. զորս յօրինեն բաղադրութենէ ՚ի բազմատեսակ սերմանց, ծաղկանց, արմատոց, և խժոց: Ասդ՝ զսա ՚ի լատին բարբառ կոչեն՝ էլենկթուս, զոր յոյնք անուանեն էքլիմա, կամ էքլէկմա, իսկ թուրքք՝ լէօք:

Լօքմ բէհլէվօնէ, իտ: ի մակադրամամած հիւթ

լինչ բալասդրական, կազմեալ՝ ի տասն ցորեան՝ հօմիքա տրաքանեթէ, ՝ի մի ուննկի՝ աքցուա ոի պօղրանաէ, ՝ի նոյնչափ՝ աքցուա ոի ֆինր ա՝ արանչիօէ. ՝ի մի և կէա ուննկի՝ ալրօքքօ ոի վինօչէ, և ՝ի նոյնքան՝ ալրօքքօ ոի քաբէչ վէննէրէէ. որ լինի դեղ օգտակար կրծից, և արոի. զոր պարտ է առնուլ տասն կամ ճրկոտասան անգամ յաւուրն, ըստ չափու միոյ դրքմայ սեղանոյ:

Ծ

Ծէնծէրօ. տե՛ս ծինձիպէր:

Ծէտօարիա, լտ: զուրտնպաթ, կամ զուրտնպա, կամ զուրնիտուն, կամ սաթվա, արբ: զուլտամպա, տձ: պէժուր, կամ պէձուր, և կամ բէրվէին, պր: Ի արմատ հնդկային՝ երկայն, կարծր, ատուար՝ ի չափ ձկոյթ մատին մարդոյ, գորշագոյն, և հաստատուր. որ ատէպ՝ ի կէր արկանի ըստ օրինակի կոճապղպեղի, որպէս և բնութեին նման է բնութեամբ նորա. և՝ ի մանաւանդ օգտակար է ջլային դժուարամարսութեան և միջահատուկան տենդի: Բոյս ատրա միջակ է ըստ ատուարութեամբ և ըստ երկայնութեամբ. տերևն երկայն, և սրածայր ըստ նմանութեամբ տերևոց կոճապղպեղի: Ձափ արմատոյն՝ ի 16 ցորենոյ մինչև 320 հատ կամ ըստ անգամ յաւուրն:

Ծիկօմաթէքօ. այսու անուամբ ըստ անդամազննաց իմանի՝ ոսկր վերին ծնօտին, որ միացեալ է ընդ ակառատակի գլխոյն,

Ծիմատ. տե՛ս աէրուկօ:

Ծինծիպէր. տե՛ս ծինձիպէր:

Ծինկօ. տե՛ս ծինքրամ:

Ծինձի, կամ անիզուամ լինախքուամ, լտ: Ի տեսակ մի ատտլաձև պտղոյ՝ որոյ կեղևն կարծր է և անհարթ. և սեաւ, և ունի կորիզս երկայնա, եռանկիւնաձևս, և խոռոչաւորս, յորս են գոյացութենք կարմրերանգ, և փայլուն, և ախորժահամ. յորմէ կազմեն դեղ ազդու ընդդէմ ախտի փքոյ, խթէց, և ցաւոց որովայնի:

Ծինձիպէր կամ ամօմում՝ ծինձիպէռ, լա՝ ծէնը ծէրօ, իա՝ ղէնձէֆիլ, տճ՝ ղէնձէպիլ, կամ ղէնղէպիլ, արբ՝ չէնկէվիր, պր՝ և լաս մեղ՝ կոճապըղպեղ՝ Ա՛րմատ երկայն, ստուար իբր մատնաչափ, տափարակաձև, կիսաթոլորչի, ծնրաւոր, դորշագոյն, հոտաւէտ, և տարապայման կծու, որ և զնեզրս ծապք քողաց կծէ. ընուելը է խթիչ կամ գրգռիչ, որով գրգռէ զմանրաթելս ստամոքսի և ընդերաց. կաղդուրէ զթուլութիւն ջլաց. զարթուցանէ զախորժակ, և դիւրաւ տայ մարսել կերակուրն. այլև վատարէ զփուքս, և փարատէ զստամոքսային հազս և զնեխես որովայնի՝ Ձափն՝ ի գործ արկանելոյ՝ եթէ իբրև փոշի, պարտի լինել՝ ի վեց ցորենոյ մինչև 24՝ Իսկ եթէ իբրև խաշու, ՝ի կէս տրամէ մինչև ցմի. զոր օրէն է եռացուցանել ընդ վեց ունկի ջրոյ, յաւելով՝ ի նոյն երկու տրամ շաքար. և առեալ լինի ըմպելիս այս՝ ի միջոցի 12 ժամուց՝ Այլև գրգռէ զնըբաջինդս լեզուի, և զարթուցանէ զթմբրեալ մասունս քոյց և բերանոյ՝ ծաւքելով եթէ զայն՝ Ա՛րդ՝ արմատս այս ունի զերկուս տեսակս, այսինքն սպիտակ, և թուխ. սպիտակն որ առատ գտանի՝ ի յաղբևելեան նահանգս հնդկաստանի, առաւել ազնիւ է սակս առաւելութեանն իւղոյն՝ որ՝ ի նմա. ուրանօր՝ ՝ի թարմ ժամանակի շաքարաւ քաղցրաւենի յօրինեալ, ՝ի գործ արկանեն՝ ի բանալ զախորժակս կերակրոց, ՝ի փարատել զփքախտութիւն, և ՝ի նորոգել զյիշն ակարացեալ յերկար խօթութէ՝ Բոյս տորա զոր լաւինք կոչեն՝ արուեստս հնդիկս ջլավաթա, նման է ըստ իրաց ինչ եղեգան. տերևն լայն, երկայն, և կարմրախառն կանաչ. և ՝ի միջոյ տերևաց ելանեն ծաղկիկք ինչ լախտաձև՝

Ծինքուամ, կամ ծինք, լա՝ ծինքօ, իա՝ ռուհլ թուխիա, կամ թուխիա մատէնի, տճ՝ Է կիսամեծաղ ինչ յաճախեալ ՝ի գերմանիա, ՝ի պօէմիա, յանգղիա, ՝ի սաքսօնիա, և՝ի գաղղիա, ծանր յոյժ, և ամրակուռ՝ Երբեմն է տորա տեսակ, առաջինն կոչի յիտալացւոց՝ ծինքօ օսախտաձօ, կամ ըստ ռամկաց՝ քալամինա, կամ բիէթրա քալամինարէ, որ է դեղնախառն սպիտակ, և բծաւոր՝ Երկրորդն կոչի՝ ծինքօ սօլֆօրաձօ, որ է ոսկեգոյն, բայց գտանի և մոխրագոյն՝ Իսկ երրորդն սպիտակ է, և դիւրաւ եեկանելի՝ Երեքին տոքա կիզեալ ՝ի հուր փոխարէ

կին 'ի գոյն սպիտակ իբրև զկիր, և յայնժամ առ-
ձայնի՝ Ֆիօր տի ծինքօ, ըստ նորոց՝ իբէռթէռմօս-
սիտօ տի ծինքօ, որ լինի դեղ ազդողական 'ի դի-
պուածս լուսնոտութեան, անդամալուծութեան, վաթ-
տարագոյն հազից, ախտի ջղաց՝ և ցնցականի 'ի վե-
րայ եկելոց մանկանց. զի է խթիչ բնութեան: Չափն
'ի կէս կշիռ ցորենոյ մինչև ց20, զոր պարտ է բաղա-
դրել ընդ այլ յարմարագոյն դեղորէից և կազմել
հատագեղս, և առեալ լինի չափս այս 'ի միջոցի 24
ժամուց. առաւել քան զայս չափն՝ պատճառէ ըզ-
ժայթքումն, և զլուծումն որովայնի: Դարձեալ,
օգտաւէտ է 'ի դիպուածս տկարութեան, և ցաւոց
աչաց. նաև բուժէ զարտասուաբեր ախտն աչաց, և
արգելու զուռոյցն նոցա, եթէ բաղադրիցի ընդ լիտր
մի վարդի ջրոյ, և յաճախակի թացեալ զկտաւն տր-
կանիցի 'ի վերայ:

Ծիպէթհում, կամ վիվէռռա ցիպէթհա, կամ ծի-
պէթհա, և կմ չիվէթհա ծիբէթիում, լտ: ծիպէթ-
թօ, իտ: միսկ գէտիսի, տճ: Է գազան ինչ կատուա-
նման, որոյ գլուխն է վարսաւոր, և դորշագոյն,
ականջք նորա սեաւ, և երկայնաձև ըստ կատուի.
ատամունքն կարծր, և սուր, հերքն 'ի պարանոցն, 'ի
փորն և 'ի ձետն են երկայն, սեաւ, և բծալից. իսկ
մնացեալ մասն մարմնոյ բոլորովին խայտաբղէտ, այ-
սինքն սպիտակ, կարմիր, և սեաւ, թաթուլքն կարճ,
և մանրամազ, և իւրաքանչիւր թաթլոյ ունելով
զիւրեանց հնգեակ մատունս մագլաւորս, սեաւս,
և սայրասուրս: Սա գտանի սովորաբար 'ի հնդիկս,
'ի չին, և յեթովպիա. մերթ ընդ մերթ բուրէ հոտ
անոյշ, և պատմեն թէ միանգամ յեօթնեկի մեղմով
քերեն 'ի մարմնոյ նորա զթանձրամած հիւթ ինչ իւ-
ղային՝ կոչեցեալ 'ի տաճկաց՝ գալէմ միսկ եաղը,
որ հանգոյն քրտանց ելանէ ընդ մորթն, զոր ժողո-
վեն յեղջիւր եզին՝ ամրապինդ խցել զբերանն եղջեր,
զի մի ցնդեսցի հոտն. և է բնութեան խթիչ, որով
մեղմէ զցաւս արդանդի, և որովայնի: Չափն 'ի կէս
ցորենոյ մինչև ցմի կմ ցերկու: Այլև օգտէ ցաւոց
ականջաց, և յիշողութեան:

Ծուքքա. տես քուքուրպիթա:

Ծուքքառօ, կամ ծուքքէռօ. տես սաքքհարում:

Ծօլֆօ. տես սուլֆուր:

կ

Կաթթաւռիա. տե՛ս վալէռիանա:

Կալանկա, կամ մարանթկա կալանկա, լտ: հասիլիճան, տճ: խուրմճան, արբ: ալգան, պր: Ի սա մատ հնդկային՝ կալմիր, թուխ, ստուար մատանա- չափ, թեւլաչից, ծանր, և տապահամ. միանգամայն և դեղ ազդու ընդդէմ փքախտուածքի: Դանակը՛ի կիր արկանէին ասան՛ի դնապուածս անդամալուծու- թե՛ լեզուի, փորհարուածքե՛, և վախման. իսկ այժմ յոյժ սակաւ՛ի գործ արկանի յարևմուտս:

Կալլա օրինէնթալիս, կամ գուէդքուս չէռուիս, կամ քօչչի օրինէնթալէս, կամ քօքքուրէ, լտ: կալլա տի լեվանթէ, կամ նօչէ տի կալլա, կամ կալլօցցա, ետ: քինքիա, չն: մազը, տճ: ափա, արբ: սեվկիւհլ, պր: և ըստ մեզ՝ դևատոր: Ի պտղաձև ձու ինչ որդան, որ սովորաբար՛ի վեր երևի՛ի վերայ սերևոց սար- կանոյ, կամ կանոյ, որոց ոմանք են գնատակաձև՛ի չափ կանոյ. այլք են ձուաձև՛ի չափ ընկուզոյ. ոմանք են կակղամորմին, այլք կարծրատոյն, և ոմանք խատափինդ երբև զփոյտ, ոմանք են լերկա- մաշկ, այլք վշաքից, և ոմանք ունին աղուամազս: Ընդ՝ պտուղքս այսոքիկ սովորաբար՛ի գործ արկա- նին՛ի սեաս ներկս, և՛ի նիւթ մելանի, նաև՛ի դե- ղոյն. զի են սեղմիչ, և խատղիչ բնութեբ, որով արդելուն զհոտուածն արեան, և որովայնի, և սերմնա- կաթուբե, և փարատեն զնէթս, և զտենդս: Չափն՛ի 20 ցորենոյ մինչև ց30. այլև ցրուեն զայսուցա ցուրտս:

Կալլինա, լտ: ալէքտօրիս կամ օրնիթա, չն: թա- վուք, տճ: ֆարխ, արբ: մուռուրլ, պր: և ըստ մեզ՝ հաւ: Ի թռչնոյն ընտանի ծանօթ ամենեցուն, որոյ միս համեղ է և առողջարար: Ճարպ նր է ուտելի յորչափ թարմ է, և՛ի հնանալն՝ լինի ազդու ընդդէմ ամենայն ուռուցից պատճառելոց՛ի թթախտուէ: Ջնեղքին կողմն ստամոքսի այսր թռչնոյ՝ ընդապա- տեալ է թաղանթ ինչ նուրբ, և դոյզն ինչ կարծր, որ անջատեալ ջրացուցանեն՝ և՛ի կիր արկանեն

'ի գեղ միզարգելութեանէ, գալիան, հոսման արեան, և ակարութեանէ ստամոքսի: Ձաւին 'ի 30 ցորենոյ մինչև ցճօ: Արուն այծի հաւու, զոր լատինք՝ կալլուս անուանեն, և յոյնք՝ արէքտօր կամ քէթինօ, և արաբք՝ տիկ, և Թուրքք՝ խօուզ, եփ ըմպէ՝ աքաղաղ, առաւել անուանէ լիգի նորայ ձևով, և գեղով քան զարուեան այլ Թռչնոց, որոյ ոչ միայն ջքնապղէ գոյն, և կամարաձև ձեռ, այլև կատարքն կարմիր և Թագաձև, և ձայնն բարձր և աղդու, որով երգէ յորոշեալ պահս ինչ աւուրն և գիշերի, ազդ առնելով մարդկան զժամանակս: Սա ունի ճարպ իբրև գհաւ, յորմէ կազմեն գեղ ընդդէմ ուռուցից, կարծրութեանէ ջլոց և ցաւոց ականերաց՝ օծելով: Բայց միսն ոչ հաճանէ 'ի ջամ ախտուռեանէ մոյ հաւու: Սերական անգամ նորա ջրացուցեալ և վոշխացուցեալ, 'ի վար արկանեն իբր գեղ նուազութեանէ ատղի. ջաւին 'ի 40 ցորենոյ մինչև ցճօ: 'Ի լեղւոյ նորա նոյնպէս յօրինեն գեղ ազդու 'ի դիպուածս ցաւոց աչաց, և բծից երեսաց: Իսկ յոտից նորա՝ որպէս և հաւու, զոր ծեմբ գեղ շահաւէտ ընդդէմ Թուլութեանէ ստամոքսի, և վարհարութեանէ:

Կալլուս. տե՛ս կալլինա:

Կալպանում, կամ պուպօն կալպանում, լտ: կալպանօ, իտ: գաանը, տճ: կանավաշակ, կամ խիլ, կամ հլնի, և կամ հաւգէտ, արբ: բաւմաատ, կամ էնկիւժէթ, պր: և ըստ մեզ՝ քաղքան, կամ գալքան նոա: Է խէժ Թանձր, գիւրամած, մածուցիկ, սպիտակ, այլ 'ի հնանալն փոխի 'ի կարմրախառն գեղին, սաստկահոտ, ջերմահամ, միանգամայն և գառն և սեղմիչ բնութեամբ. օգտաւէտ է ընդդէմ փքոց այլ գանգի, և յորդ հոսման ամենայն պարտուց կանանց և սերմնականեաց: Ձաւին 'ի յերեք ցորենոյ մինչև ցճ, խառն ընդ այլ յարմարապոյն դեղոցդէց: Այս խէժ հոսի 'ի ընոյ կամ յոտից ուղղակի և մեծ Թերթ անկոյն կոչեցեալ լատինական քարբաուով՝ Ֆէուլա կալպանինֆէուա, որ սովորաբար բուսանի յափրիկէ, և 'ի կողմանս աւորւոց, և ըստ ոմանց է տզգ ինչ նարդոսի:

Կամպէրօ. տե՛ս կրանքիօ:

Կանկրէնա, լտ: քանքռէնա կամ քանքէռօ, իտ: քաղքինօ, յն: եէրեարա, կամ եէնմէձէ, տճ: ապիլէ, կամ աւրա, և կամ կէմալ Ֆաուխ, արբ: և

ըստ մեզ՝ կերլցաւ, կամ քաղցկեղ. տե՛ս զայս ՚ի հտ. ա. երես 352:

Կաամերիմեխաէ, լտ: ինֆիսամմացիօնէ տէլլը ոսթմաքօ, իտ: միւհրիւքան իլ միտէհ, արբ: միտէ թուլթուլմասը, տձ: ըստ մեզ՝ բորբոքումն ստամոքսի. զորմէ լինաց ոյն ստացի հտ. ա. երես 96:

Կարօֆանօ. տե՛ս քարիօքհիլլուս:

Կարկարինգմօ. տե՛ս մուրմուր:

Կլանտուլէ, իտ: պէզիթէլէրի, կամ կէլինճիկ էթլէրի, տձ: կուտուէ, արբ: ըստ մեզ՝ մսան: Ե՛ս ասիպային և թանձր մսան ինչ մարմնոյ կէնդանեաց, կարգեալ ՚ի ծծել զաւելորդ փուռչ, ՚ի զատանել կամ՚ի մղել զհնեւթս ինչ ՚ի զանգուածոյ արեան, և յուռուդել զմսատուն ինչ. ամին նրի ստէորաբար յորջորջին այսու անուամբ այն ամենայն, որք զատանեն յարեանէ զհնեւթս ինչ յատկուածս, որպիսի է երիկամունքն, որոյ ոչնչացումն եղիկամն է զատանել զմէզն յարենէ: Եւ այսու անուամբ նշանակին որք միանգամ կարգեալ են ՚ի կատարելագործել զաւիշն, և զհատուցն, այդպիսի են միզարանակն, ասիպային մսատունքն:

Կլանտուլէ ամիկտալարի, իտ: Այսու անուամբ ցուցանին նշաձև մսանք, կամ ասիպային մսատունք, որք են երկու կարմրերանգ մարմինք կօղմնագիծ ձգեալք ՚ի քմոց, և զետեղեալք յաջ և յահեակ առարատովք լեզուի, որք միանգամայն առձայնին կաւվինէ:

Կլանտուլէ բարօթիսի, իտ: պուլաք պէզէթլէրի, տձ: այդպիսի ասիպային մսանք կան զետեղեալք ՚ի մէջ արտաքին ականջաց, ընդ առօրոտով բազկի, և առաջնեալ միոյն ճիւղից ցնեւլքին մսատուն ծառելեաց:

Կլանտուլէ բուօնթուաթէ, լտ. տե՛ս վէշնիքուլատէ պէմինալէս:

Կլանտուլէ թիրօիտէ. անուամբ ցուցանի վահանաձև մսանք:

Կլանտուլէ լինֆաթիչէ, իտ: նէմթէն տամարլարն պէզէթլէրի, տձ: այսու անուամբ իմանին ասիպային մսատունք ինչ աւիշկեան անօթոց:

Կլանտուլէ մաթուխէ. տե՛ս ուէթէռուս:

Կլանտուլէ մաչէլլարի, իտ: չէյնէ պէզէթլէրի. տձ: անուամբս այս նշանակի մսանք կամ ասիպային մսատունք ինչ ծնօտից:

Կլանատուկ սալնվատուկ, իտ: սալեա ագըտածը պէղ-
ֆնըլէրի, աճ: որով նշանակի լորձունահոս մասնք,
կամ սպնգային մասունք:

Կլանատուկ տէլլէ ֆատուկ. տե՛ս Թօնախլլէ:

Կլանատուկ քօնկլօմէռատ: Ն գնատակաձև մասնք,
կամ սպնգային մասունք, կոչի և կլանատուկ քօն-
կլօպատէ, այսինքն կուտակեալ 'ի բազմաց, կամ
գնատակաձև հատաքեալ:

Կլավքօմա. անուանիքս այս խմանի՝ ախտ ինչ աչաց
պոյացեալ 'ի ԹանձրամածուԹէ խտղղեալ Թաղան-
Թոյն:

Կլեյերմինա, կամ տուչէս բատնքս, և կամ լե-
պուրինէա, լտ: լեպուէրինա, կամ լևկօրնիցնա, կի-
բէկօլնիցնա, իտ: լեպօրնիցնա, յն: միանքէօքնս, կամ
պիանքէօքնս, տճ: շիրին պնեան, կամ սիբլեան, պր:
և ըստ մէջ՝ մատխտակ, կամ մատուտակ, և կամ մա-
բուխ: Ն բոյս բազմացօղուն, երկայն իբր երեք կի-
ջոս ոտնաչափ՝ յատկեալ 'ի ստանիա, 'ի բոլոր
իտալիա, 'ի գաղղիա, 'ի գերմանիա, և 'ի յանտպատա
ամէրիկանու յարևելեան կողմն էԹիլ գետոյն:
Տերևք նորա են երկայն, մածուցիկ, պայծատ կանաչ,
փայլուն, և տոպահամ: Ծաղիկն ծիրանապոյն, և
ընդայն. և վոխանակ պտղոյ արտադրէ պատեան
ինչ կարճ, տափարակ, պալարակից, և կարմրախատն
գեղեն, ուղեղով 'ի միջի սերմունս երկայնաձև: Իսկ
արմատն երկայն, ստուար իբր մատնաչափ, կնճռա-
լից, բազմաճիւղ, գորշապոյն, մածուցիկ, քաղցրա-
համ, միանգամայն և գեղ ալղողական 'ի դիպուածս
ջղագողուԹե, բորոտուԹե, սերմնականուԹե, ախտի
պաղղիականի, և ցաւոց յօդուածոց. որ 'ի գործ ար-
կանի սովորաբար 'ի մի լիտր ջրոյն երկու տրամ:
Յարմատոյ ասաի գեղապործք եւրոպիոյ յօրինեն
նիւԹ ինչ սեաւ, Թանձրամած, փայլուն, և քաղցրա-
համ, միանգամայն և գեղ ընդդէմ ցաւոց կրծոց,
հազից, և ԹանձրամածուԹեան տոլունից. ջափն 'ի
կէս տրամ մինչև ցերկու և կէս յաւուրն՝ խառն ընդ
այլ յարմարապոյն գեղոցդէից:

Կլօսախիթիսէ, լտ: տիլ ԹուԹուչմասը, տճ: և ըս-
մէջ՝ բորբոքուն լեզուի. տե՛ս հտ. ա. երես 67:

Կոտեաքում, կամ լինում սանԹում, և կամ լի-
նում, բէյտամպէր տալածը, տճ: եաշատիլ էմմէկա,

արբ: և ըստ մեզ Թարգմանագրի՝ Սբ փայտ: Ի ծառ մեծ 'ի չափ մերոումն ընկուզենւոյ, յաճախեալ յաւերկիա, և 'ի հնդկիա, որոյ կեղևն սուսար է, և խժային. փայտն կարծրատինդ, խայտաճամուկ, մթին գեղին, տապահամ, և խոշտին, միանգամայն քրանաքեր և խթիչ բնութեբ, և մաքրիչ արեան. զոր եփեալ 'ի ջուր, և արբուցեալ, դեղ է ախտից մոր Թոց, պալպնականի, էլեփանդականի, ցաւոց յօդուածոց, և ոսնատուութեբ, և ձեռնատուութեբ, և է անբն դունակ ցեցոյ. յորմէ և սովոր են յաւերկիա, յանդղիա, և 'ի սպանիա կազմել ճախարակս, և զայլ գործիս այսպիսիս: Տերև նորա երկայն է և բոլորակաձև: Ծաղկին փնջաւոր, և հովանաձև, ժժգոյն դեղին և կանաչականեբ: Ինակ պտուղն գորշագոյն, բոլորակ և սուսար 'ի չափ շապանակի: 'Ի ծառոյ սասի արտաքանեն խէժ ինչ մթին կարմիր, փայլուն, բեկանուտ, հոտաւէտ, և տապահամ, զոր լսանինք՝ կոչեն կումմի կամ ռէզինա կուաեաքում. յորմէ յօրինեն դեղ ազգոլական ընդդէմ չիանթիքա անուանեալ յօդուածոցեբ, և ընդդէմ վերոյիշեալ ախտից: Զափն 'ի կէս սրամէ մինչև ցմի և կէս յաւուրն՝ խառն ընդ մի/ լիտր սիկռօ սի լաթինէ: Ինակ չափ փայտին պարան լինել երկու բուռնիլի, յերկու լիտր և 'ի տան ունկի ջրոյ, զոր օրէն է եփել եւացմամբ երբ քառորդ մի ժամու, յետ զառելոյ պարսա է առնուլ ըստ չափու երից ունկւոց երկոցա կամ չորից անգամ յաւուրն: Ջնոյն ներգործուեբ ունի և տորա ոչխեց կոչեցեալ 'ի նոցանէ՝ ԹինԹուռա վօլաԹիլէ սի կամ մա կուաեաքօ. զոր պարսա է առնուլ 2. 3 անգամ յաւուրն, ըստ չափու միոյ փոքրիկ դրդալի:

ԿուԹԹա, լս: կօչչիա, իտ: տաՃլա, տճ: պաԹրա, կամ չէլչէ, արբ: հինթէպէկ, կամ չէկիրէ, և կամ սիրիչկ, պր: և ըստ մեզ՝ կաԹիլ կամ չիԹ, որով լմանամբ զկաԹուածդ մի դուչնամանեայ ի և էյէ հեղանեւեթոց. յորոյ վաԹսուն կաԹուածոց կշռի ըստ բժշկաց մի ամբողջ պրամ, ուսոն մի չիԹ կամ կաԹիլ է զուգակշիռ միոյ ցորենոյ:

ԿուԹԹա կամպա. աեա կումմի կուԹԹա:

Կումմի, լս: կօմմիա, իտ: զոմմք, տճ: սաղկ, արբ: զինձէբուս, կամ զիւնջ, կամ սնգալինէ, կիմ չիլիմ, և կամ գիւնճկոսէ, պր: և ըստ մեզ՝ խէժ, կիմ խէժ, կամ հոյժ, կամ կուէժ, կամ ռէսին, կամ

հոյզ, և կամ հոյծ: Ի անուն ընդհանուր նշանակիչ առնային թանձրամած, պարարտ և կպչուն հիւթոց եղուզելոց ՚ի ծառոց, ՚ի անկոց, ևն. որոց են բազում տեսակք. բայց մեք առաւել զընտրագոյնս և զօգտաւէտագոյնս պատշաճ համարեցաք կարգել ՚ի տառիս:

+ Կումմի ամմոնիաքում, կամ համմոնիաքում, լտ: կօմմա ամմոնիաքա, իտ: ամէթա, կամ էբէ, յն: չաար ուշտը, տճ: դէլէխ, արբ: օշտվիշա, պր: և ըստ մեզ՝ աշտակ, կամ օշակ: Ի խէժ թանձրամած, դեղնախառն ապխտակ, բեկանուտ, թափանցիկ, դիւրալուծ, և դիւրայրոյծ, որ տրկեալ ՚ի քացախ կիր՚ի չուր չկրէ վայվաղակի լուծանի: Սա թէպէտ էն այնքան չկրէ և սաստկահոտ՝ որպէս գալբանոս, սակայն ըստ մասին օգտաւէտութեանն ազնուագոյն է քան զայն, մանաւանդ որոց են վնճակեալ մալասային բնութիւնք. ունի և սա մանաւանդ գործունէութիւնն ՚ի բանալ վնցանս լերդի, փայծելան, և մկընդերաց, որք սովոր են պակալ զկնի տենդից, և այլոց ամին նման առոյրիչ ախտից. այլ և գրգռէ զդաչտանս, և մեղմէ պհապս, և զցաւս կրծոց: Գտանի և այլ տեսակ օշակի, որ է ժժգոյն կարմիր, շէլջակոյտ և աւազուտ, որ առորին է յոյժ քան զայն: Սակայ գիտել արժան է, զի նախաւանդեալ օշակն սովորաբար գտանի յափրնկէ, և ՚ի կողմանս լեռնոյ. և է բնութիւք փոքր ինչ խթիչ. չափն ՚ի 12 ցորենոյ մինչև 36 ՚ի տրամ ամբողջ:

Կումմի անիմէ. աւա անիմ:

Կումմի արաբիքում կամ կումմի սէնէկալ, լտ: կօմմա արաբիքա, իտ: զամք առապի, տճ: ըստ մեզ՝ խէժ արաբոյ: Ի սպիտակ, փայլուն և մածուցիկ խէժ ինչ. որ ՚ի տուզ ժամանակի ծառոյէն յեռ- ղուկա և յատկա, յորմէ գործեմք դեղ ազգոլսկան ՚ի դեպուածս փորհարուէ, հարբզնոյ, ևչուածոց, հոսման արեան, զայրացեալ թանչից, միզարգելուէ, և ախտից կրծոց. զի է թուլացուցիչ, և միզաբեր բնութ: Չափն ՚ի 12 ցորենոյ մինչև 36, խառն ընդ այլ յարմարագոյն դեղորէից. տունկ նորա ջուր լա- ւունք՝ աքտչնա էձիբեթիաքա կամ միմօսաս նիլօթիքա կոչեն, է մշտադալար և փշալից: Տերևն երկայն, նեղ, և խորտաբորտ: Ծաղիկն սպիտակ, փոքրիկ, և խոռոչաւոր, ունելով ՚ի միջի սիեռնակ փոքրիկ ջղա-

*պատեալ սպիտակ մանրաթելովք, որ՝ ի սկզբան անդ-
կանաչ է, այլ՝ ի հասանիլն ժոխի՝ ի դոյն թաւա-
մեալ սերևոյ: Խակ պտուղն դառնահամ, և երկայն
քան նմանութեամբ լոբենիսի, ունի և սերմն սպիտակ և
կարծր:*

Կումմի կապտանում. տե՛ս կապտանում:

*Կումմի կռեթեա, կամ կռեթեա կտանպա, կամ
կռեթեա քանաօճկիա, կամ կռեթեա կտանտրա, և
կամ կումմի բէրուվկիանում, ըս: կօմմա կռեթեա,
իտ: կօմ կիւեթ, գղզ: գամմեթրան, պր: կռեթա
կամպա, տճ: և ըստ մեզ՝ դեղին խէժ անուանեալ, հատատուն, կոր, կարմրախատուն դե-
ղին, դիւրավառ, և դիւրալոյծ, վիանգամայն և
դեղ ջրդողութեամբ, և այնքանով որովայնի, որ և լու-
ծէ հզօրեղապէս քերելով, և՛ի գուրս վանելով զաղ-
տեղութիւնս, զջուրս, և զճճիս որովայնի: Ձաքն՝ ի
յուժ ցաւոց մինչև ցատան: Ա՛ւ բժիշկս արա-
բիոյ, և պարսից յաճախ՝ ի վար արկանն՝ ի լուծո-
ղականս և՝ ի ջրատն դեղորայս, բայց յերբոպացւոց
գուն ուրեք: Ծառ ստոյգ զոր լաւինք կոչեն՝ լաթհն
ախս, և ըստ նմանց քառքաբուլն աքօսթաէ՝ է երկայ-
նագոյն, աւուրս եբր բազկաչափ, փշալից, և
բազմատերեան, որ պատատեալով եւանէ զծառով և
և զիւեղակաւ իբրև զբազեղն: Տերևն նման է տերևոց
ասմբուէ վիճակի: Ա՛յս ծառ յաճախ բուսանի յա-
մերիկա և՛ի մալապար. նայաւէտ՝ի քամղօճկիա. որոյ
խէժ վարդ և՛ի դեղին ներկս:*

Կումմի կուտահքում. տե՛ս կուտահքում:

Կումմի սակաբէնում. տե՛ս սակաբէնում:

Կումմի սէնեկալ. տե՛ս կումմի արաբիքում:

Կումմի տառականթէ. տե՛ս թրակականթհում.

Կումմի քինօ. տե՛ս կօմմա քինօ:

*Կրամէն, ըս: կրամինա, իտ: այրըք, տճ: ինձիլ,
կամ խախիլ, արբ: կէօրկիա, պր: և ըստ մեզ՝ սէղ:
Է խոտ երկայն, նրբատերև, բուրտակահատակ և
տարածական, յաճախեալ յամենայն ուրեք՝ի մարգս,
և՛ի պուշտավայրս, որոյ արմատն կոչի՝ի բարբառ
արաբացւոց՝ ըտքլ ինձիլ, կաճ շուշ ինձիլ. խակ ըստ
Թուրքաց՝ այրըք քէօքիւ, որ է երկայնաձիւք, սպի-
տակ՝ հարեալ՝ի գոյն դեղին, և ծնրտաւոր. միանգա-
մայն և դեղ ազգաւ ընդդէմ ամենայն ջերմնատա-
ջող ախտից, և խցանաց լերդի. զի է պղպեղային,*

բացողական, և մեզաբեր: Սովորաբար խաշուն առած ՝ի կիր արկանի. զաւին ՝ի ջուրս արուամբ մինչև 360 խառն ընդ երկու լիտր ջրոյ:

Կրանաթա. տե՛ս բուռնկքա:

Կրանալ, լս: ատապատա, արբ: Բոյս մշտապալար, մեծատերև, հիւթալից, պառնապին, և թռուն. ուր, որ ստվորաբար բուսանի յամերնիկս, և յափրիկէ, զոր ատեպ կախեն առ պարտիզօք և որմովք տանց իւրեանց. և ի դեղ ազդուլական ընդդէմ ցաւոց գլխոյ, և ուռուցից՝ կապելով ՝ի վերայ վշտապնեալ մասին մարմնոյ:

Կրանում, լս: կրանօ, իտ: տե՛ս Թրխթիքում: Դարձեալ՝ այսու անուամբ, ըստ դեղաբժախից ցուցանի քանակուԹի ծանրուԹե մոյ հատի միջակ ցորենոյ, ուստի ՝ի մի արուին պարունակի 60 ցորեան: Այլ գիտել արժան է, եԹէ ստվորաբար եղեալ ջայս նշան (gr), իմանամք զչափ մոյ ցորենոյ:

Կրանում ԹիննԹօրում. տե՛ս քէրմէզ:

Կրանքիօ. տե՛ս քանչէր: Դարձեալ՝ իմանի բառիւս դեղուն կամ ևծկուն մկանաց:

Կրասսում կամ կրասս, և կամ սէլօ, իտ: սեվում, լս: էչ եաղը, տճ: չահմ, արբ: բնկնիլ սենչ, ար: և ըստ մեզ՝ ձայլ, որով իմանի՝ նեղքին պատրատպին, և իւղայից մասն արեան ՛ւ և նոցէ կեն. դանեաց, Թարեալ յերակաց ատկս վտանգական հնձոյ զԹեզրԹս երակաց, որք և յետ ամենայնի ՝ի վերոյ եկեալ մաշիօքն Թանձրացեալ խառանան: Արդ՝ ձայլս այս ունի զմանաւոր ներգործուԹիս, որով ՝ի դիպուածս սովու անդրէն յետս ձգեալ անուցանէ զմսատունս ատծելով զջերմուԹին ընական. ամին երկ հատարկ գոլ մԹերք ինչ յատեղուածոց կերակրեղինաց պահեալ վասն հարկաւոր ժամանակի:

Կրացիս տէի. տե՛ս ՛ի նեղքոյ:

Կրացիօլա, կամ կռանԹիօլա, կամ կրացիս տէի, կամ ընձնէսուում, և կամ չէնԹաուրօխտս, լս: խնձ. տավէրոն օձու, կամ Թէչէքիւր օձու, տճ: և ըստ մեզ Թարդմանադրի՝ խոտ ընորհոց, որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ երկ մի և կէս տունաչափ: Տերևք երկայն, և եզերահերձ, նման ըստ իմիք տերևոց զրպայի: Ծաղիկն ելանէ առ կանԹիւ տերևոց, և ի ծերանոցին, բայց յոմանս տեղիս լինի նաև ամիստակոցին, և գեղնագոյն: Պտուղն բոլորակ կամ

ձուաձև, և խոռոչաւոր, յորում են սերմունք նուրբք· իակ սրտանման ստուար՝ ի ջուխ գրչի, ծնրաւոր, թե՛ քաղից, սպիտակ, և գառնագին: Ա՛յս խոտ յաճախ ջուսանի յիգալիս, ՚ի գաղղիա, ՚ի մարգագետինս, և յայլ տեղիս խոնաւուտս· ունի սա զուժգին լուծո՛ղական և թուլացուցիչ զօրութիս եթէ ՚ի վերուստ, և եթէ ՚ի ստորուստ, որով առյաքինէ զբօրտուռիս, զորքիսնա, և զայլ հնատոյն ախտս մարթոց· օգտա՛ւէտ է և ՚ի դիպուածս մոլեգնութե՛ան, յօդուածո՛ց ցաւուցե՛, ջրգողուց՛, և անկարդ տենդից: Զափն ՚ի 24 կշիռ ցորենոյ մինչև ց30· յաւուրն ՚ի պահ ա՛ռաւօտու: ՚ի խոտոյ սատի արուսհանեն նաև զգոյացո՛ւն, զոր խառլատնիք կոչեն՝ էանթրաթթիս ան կրա՛ցիօլա, յորմէ գործեն գեղ ազգուրական ընդդէմ վէ՛րոյ ընչեաց ախտից, և հնատոյն վէրաց: Զափն ՚ի կէս ո՛րամէ մինչև ցմի՝ խառն ընդ հասարակ գաղջ ջրոյ:

Կարկառա, լտ: կռիլլօ, իտ: կըռթլաք, կամ չիրլաք, ուճ: և ըստ մեզ՝ ծղրիդ: Ն կենդանի փոքրիկ և ճռռացօղ, որոյ գլուխն է բոլորշի, աչքն սեաւ, որպէս և մարմին նորա, որովայնն երկայն, իակ տուան կարճ, զոր փոշիացուցեալ ՚ի սանդ, և արբուցեալ, լուծանէ զառողունս կրծոց· քանզի առատ է խղով, և աղիս: Զափն ՚ի 10 ցորենոյ մինչև ց20, ունի և զմանաւոր գործունէութի՛ն ՚ի զօրացուցանել զառաւելութի՛ն, եթէ ձմեռալ դիցի ՚ի վերայ աչաց: Նոյնպէս և օգտաւէտ է ընդդէմ ուռուցից, և ցաւոց ականջաց: Ա՛յս կենդանի առէպ բնակի ՚ի ծակտիս տրմոց, և վառարանաց, և ՚ի գիշերի զմեծ ձայնս արձակէ:

Կրուա, լտ: կրու, կամ կռուա, և կամ կռուէ, իտ: գիարկի, կամ ըկհեվ, կամ խապէրճէլ, կամ էպուխբեան, և կամ էպուայրաս, արբ: ֆէռէխ, կամ գիւրխանկ, կամ ֆիխան, և կամ գիւրլաչէնկ, պրս: ֆռուռնա, ուճ: և ըստ մեզ՝ կռուռնկն: Ն թռչնոյն երամակին ընթացօղ քաջածանօթ ամենեցուն· որոյ միս օգտակար է ընդդէմ խթանաց որովայնի, միանդամայն և զօրացուցանէ զկնդա, և առաւտացուցանէ զաղիս, և բանայ զձայնս մարդոյ: Ջգլուխ նորա ըմբռնացուցեալ, կամ կիզեալ ՚ի հուր, և փոշիացուցեալ և արբուցեալ, դեղ է ընդդէմ քաղցկեղի, խղճայնի, և այլոց այսպիսի դժնեայ վիրաց: Եղև ատրա շա-

հաւէտ է ընդդէմ ախտից աչաց, եթէ թացեալ կտաւով արկցի 'ի վերայ: Իսկ Ճարպն'ի կիր արկանի 'ի դեղ կարծրապինդ այտուցից, և խցանաց ականջաց:

Կօթթա. տե՛ս 'ի հտ. ա՛. երես 285:

Կօթթա ռիսալիթա. տե՛ս հտ. ա՛. երես 285:

Կօթթա. տե՛ս բօտակրա:

Կօմմա. տե՛ս կումմի: Դարձեալ՝ նշանակի ազդ ինչ գաղղիական ախտի:

Կօմմա ամմօնիաքա. տե՛ս կումմի ամմօնիաքում:

Կօմմա արապիքա. տե՛ս կումմի արապիքում:

Կօմմա կալպանօ. տե՛ս կալպանում:

Կօմմա կուաեաքօ. տե՛ս կուաեաքում:

Կօմմա կօթթա. տե՛ս կումմի կութթա:

Կօմմա սակաբէնօ. տե՛ս կումմի սակաբէնում:

Կօմմա քինօ կամ կօմմէ տի քինօ, իտ: կումմի քինօ, կամ կումմի ռուպռում ասթրինճէնս, լտ: Է խէժ ինչ կարծր, մթին կարմիր, փայլուն, դիւրափխրելի, և դիւրալոյծ, զոր արկեալ յոգի գինւոյ՝ փութով լուծանի. համ նորա չէ ինչ տարբեր 'ի համոյ սալտի քինայի. զօրութի՛ նորա է ձգող և սեղմիչ, որով արգելու զհոսումն արեան, զփորհարութի՛, զլուծումն որովայնի, այլ և խափանէ զյորդառատ հոսումն միզի, քրտանց, թանչից, և ֆիօր պիանքօ անուանեալ ախտի, մանաւանդ յորժմ խառնի ընդ դոյզն ինչ ափիոնի, կամ գխտորի: Նոյնպէս օգտաւէտ է 'ի դիպուածս միջահատական տենդի: Չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց30: Իսկ եթէ փոշիացուցեալ ցանիցի 'ի վերայ նեխեալ վիրաց, մաքրեալ ցամաքեցուցանէ զչարաւալից հիւթս: Ծառ սորա՝ զոր լատինք կոչեն էուքալիբթուս րէզինի ֆէռի, ոստալից է, և բազմաճիւղ: Սովորաբար գտանի յափրիկէ, 'ի սէնէկալ, յեզերս գետոց:

Կօնօրէա, իտ: թօհում աքմասը, տճ: գուրհաթիլ մէնի, արբ: և ըստ մեզ՝ սերմնակաթութի՛: Զորմէ լիովին յիշատակեցաք, հտ. ա՛. երես 393:

Կօչչիա. տե՛ս կութթա:

Կօչչիա տ' էլլէր, կամ լիգուօրէ անթիառթռիթիքօ, իտ: Է ոգիաւոր հեղանիւթ ինչ, կազմեալ յերկու տրամ՝ լիգուօր անօտինօէ տ' հօֆֆմանն, և 'ի նոյնչափ՝ սբիրիթօ տի քօռնօ տի չէռվօ սուչչինաթօ է: Զօրաւոր է յոյժ դեղս 'ի դիպուածս բորբոքել

և հնապղն յօդուածացաւուԹենց, և ախտից ջլաց. այլ և օգտէ ոսնաւուԹենէ, և դողդոջման ձեռաց, և ոտից՝ ասԹեղայ ՚ի ԹուլուԹենէ ջլաց: Ձաւին ՚ի 20 ցօրենոյ մինչև 340 յաւուրն, միայն ԹԷ յարատևել արժան է յայդ դոնէ մինչև ՚ի քառասուն օր:

Կոչեն ըհալն ա՛ ինկիլԹէռա, Իտ: Էլեսիր աբօ-բէլԹինքաս, կա՛ կուԹԹա անկլնքա ըհճիա, Լա: Ի ոգիաւոր հեղանիւԹ ինչ բալադրական, յօրինեալ ՚ի կէս լիտր ուժգին ոգւոյ գինւոյ, և ՚ի մի և կէս տրամ՝ իւղոյ կինամոնի, կա՛ մեխակի, զոր մարԹ է ՚ի կէր արկանել ՚ի դեպուածս կԹուածոց, անդամալուծուԹենէ, լուանոտուենէ, տաժանաւոր աւնդից, և Թալկացման սրտից, և կամ տարտախնիկ ջերմահարից, և այլ ամենայն ախտից պատճառելոյ ՚ի ակառուԹենէ. զի է խիԹիչ բնուԹենէ: Ձաւին ՚ի չորս ցորենոյ մինչև 320 խառն ընդ ջրոյ մեղեսէի, կամ ծաղկի նարնջոյ:

Հաէմոռեթէմէխա. տե՛ս վօմիԹօ ա՛ի ատնկուէ:

ՀաէմօբԹիսխա. տե՛ս սբուԹօ ա՛ի ատնկուէ:

Հալէբ, կամ հալէքուս, և կամ հատէնկուս, քա՛ղաքս ասիոյ, Իտ: ունիակա պալըղը, տճ: և ըստ մեզ՝ աւնիկ: Ի ձուկն ինչ եւրոպիոյ, կամ գանեաց. որոյ Թեւին կարծր է և կապտագոյն. մին նորա փափուկ է և համեղ. յորմէ չորացուցեալ ՚ի ծխալից տեղիս, և եդեալ յանօԹս առաքեն ատ և անդ: Սա ունի զմանաւոր գործունէուԹիւն աւ ՚ի բառնալ զզգուանս ատամոքի, և ՚ի բուժել զհիզարդելուԹիւն: Ջատ մինչդեռ է Թարմ, ՚ի կէր առնուն անդէն ՚ի դեղ եւօրեայ, և քառօրեայ աւնդից. զի հատանեն զայն ընդ մէջ, և կապեն ՚ի վերայ զարկի բազկի ախտացելոյն, որով և բժշկի:

ՀէբաԹիս. տե՛ս հէբար:

ՀէբաԹիքա, կամ լիքէն, կամ մալըքանԹիս բօլի. մօռբհա, Լա: էբաԹիքա, Իտ: Ճիեէր օմռա, տճ: և ըստ մեզ Թարդիմանադրին՝ լերդախտա. տե՛ս ատրճ ատրա

են ստուար, հերձոտ, և հիւթալից, դոյնն 'ի վերին երեսս մթին կարմիր, որպէս և ցօղուն նորա. իսկ 'ի ներքոյ խուն ինչ սպիտակ: Ծաղիկն աստղաձև և դալարագոյն: Սա յաճախ գտանի 'ի խոնաւուտս 'ի քարուտս, և 'ի հովանաւոր տեղիս. օգտաւէտ է ընդդէմ խցանաց փայծեղան և լերդի:

Հէբար, կմ եէքուր, լտ: Ֆէկաթօ, կմ էբաթէ, իտ: իբառ, յն: քառա ճիէր, տճ: գիպթ, արբ: քէպիթ, պր: և ըս մեզ՝ լեարդ: Է սա մի 'ի գլխաւոր և 'ի նախապատիւ անդամոց, բաղկացեալ յընդերուտ մսոյ զօրէն արեան մածելոյ, զորով պատեալ կայ մաշկ նրբագոյն, և փարեալ է զխախացոցաւ, և ստէպ հաղորդէ նմա զջերմութիւն առ մարսումն կերակրոց, և սակս սոյն պատճառի է միանգամայն սատար և նպաստամատոյց առ կազմութիւն արեան: Քանզի լուծանէ զկերակուրս 'ի մամաց, և անտի յառաջին սկզբնաւորութիւն արեան, կմ 'ի զանդուած իմն տրամադրեալ 'ի փոխարկումն յարիւն: Այլ պատշաճագոյն համարիմ աստէն 'ի ծանուցանել՝ զի 'ի սոյն զանդուածոյ որ է նիւթ չորից խառնուածոց՝ ջերմագին և տամկագոյն մասունքն փոխարկին 'ի նիւթ արեան. որ տեսակաւորեալ 'ի սրտի՝ տրամաբաշխի յերակունս. բայց որ ցուրտ և չորագոյն են, անդրափոխին 'ի նիւթ սեաւ մաղձի. որոյ օթևանն սեփական՝ է պարկն փայծեղան: Այլ նիւթք ջերմ և չոր փոխարկին 'ի դեղին մաղձ, որոյ բնակարանն իսկական՝ է պարկն լեղւոյ. հուսկ յետոյ ցրտագոյն և գիճային մասունքն փոխարկին 'ի դոյացութիւն մաղասի. որոյ բազմարանն յատկական՝ է թոքն:

Հէլէնիում, կամ էնուլա հէլէնիում, կամ էլէնիօն, կամ էնուլա քամբանա, լտ: էնուլա, կամ էլէնիօ, և կամ էնուլա քամբանա, իտ: ինտուզ օթու, կամ ռասէն, և կամ անտզ, տճ: ռասէն, պր: ըռքլ ճէնէահ, կմ ըռքլ ռասան, կմ գայմուխ, և կամ նանէս, արբ: Է բոյս յազդէ ասթէր անուանեալ բուսոյ, որ արձակէ յարմատոյ զբազում տերևս քնքուշս, որոց ձևք նման են ըստ իմիք տերևոց սպիտակ փղոմասի, բայց լայն են և երկայն քան զնա. գոյն նոցա 'ի վերին երեսս ծիգոյն կանաչ, իսկ 'ի ներքոյ փոքր մի սպիտակ: Ցօղուն նորա թաւամազ, երկայն իբր չորս կամ հինգ ոտնաչափ, ուղիղ, կարմրերանգ, մէջն դատարկ, և ճիւղալից: Ծաղիկն

լայնաբաց, ճառադայթաձև, դեղնագոյն, և սակաւահոտ: Յեռ ծալկանց արտադրէ սերմունս երկայնաձև, սպիտակս, հիւթալիս, և բամբակալից: Իսկ արմատն երկայն, ստուար, և սաստիկ հոտաւէտ, 'ի ներքուստ սպիտակ, իսկ արտաքուստ մ'թին դեղին. համ նորա դառն և տաքութեան, պեղ ախտից ընդդէմ ջղային դժուարամարսութեան, աքօռպուԹօի, ջրգողուԹե, ախտից կանանց, խոնաւընչարգելուԹե, և խածուածոց կատաղի շանց. զի է խթիչ բնուԹե: Ձաւին 'ի կէս տրամէ մինչև ցմի' կիճ ցերկու յաւուրն: 'Ի բուսոյ ասեն արտահանեն և զդայացուԹենն, զոր խաչք էանթրաթԹօաի էնուա քամբանա կոչեն, որ լինի դեղ ազդու ընդդէմ վէրոյնչեալ ախտից: Նոյնպէս կազմեն 'ի ամանէ նաև զչարսպին, և զքաղցրաւենին, որ են դեղ յոյժ օգտաւէտ 'ի դխպուածս ախտից կրծոց: Յաճախ բուսանի յիդալիա, 'ի գերմանիա, 'ի խոնաւուտս և 'ի հովանաւոր տեղիս:

Հելէպօուս, լտ: Հլէպօուս, իտ: էօբլէմճիկ, կամ գառաձա օԹճուկ, ած: և ըստ մեզ՝ եղբոտիկ, կամ կոճ վրացի: Ի բոյս ինչ բազմատեսակ, որոյ երևելին և գործունեայն 'ի լատինացւոց կոչի՝ հելէպօուս նիգէռ., 'ի Թուրքաց գառա էօբլէմճիկ, յարտաքացւոց՝ խարխապ. իսկ ըստ մեզ՝ սեաւ եղբոտիկ. ցօղուն ստոյգ է երկայն, հիւթալից, և ծիրանագոյն՝ նման ըստ իմի՛ք բանաւնքուլաչէի: Տերևքն ստուարք, կարծր, յղկեալք, հերձուտք, և բացեալք ըստ նմանուԹեան մարդկային ձեռաց, որք լինն լինն բուսանին 'ի վերայ միոյ խայտաբղէծ և հիւթալից կանԹի: Ծաղիկն ելանէ առ կանԹիւ տերևոյն և 'ի ծայրս ցօղնոյ հանդերձ դեղնագոյն տէգիւք, և է լայնաբաց, հինդԹերԹեան, Թագաձև, և սպիտակ հարեալ 'ի գոյն կարմիր: Ջկնի ծաղկանց յաջորդէ պտուղն գնատակաձև, և ԹաղանԹապատ, և 'ի միջի պարունակէ զնուրբ, զբոլորշի և զսեաւ սերմունս բազմաԹեալս իբրև զաւխս: Իսկ արմատն խորտաբորտ, ոտաձև, ծնրաւոր, Թեքալից, և տժգոյն դեղին, այլ 'ի հնանալն և 'ի չորանալն փոխի 'ի մ'Թին դեղին. համ նորա դառն է միանգամայն և տաքուԹեան բնուԹ Թուլացուցիչ. յորմէ կազմի էանթրաԹԹօաի էլէպօուսնէռօս անուանեալ գոյացուԹիւն. զոր գոցեն 'ի տառն՝ է. 'ի կարդի երրորդ: Այս տեսակ եղբո-

ըոսի յոլովապոյնս պատանի՝ ի յոսնատատան, նա յա-
ւէտ՝ ի լեառն լիբանան:

Հէմաթիթէս, կամ լսիկս ատնկուենէոս, լս: ամաթիթա, կամ էմաթիթա, և կամ մաթիթա, իս: գան լծաչը, տճ: ատնոտալ հատիս, արբ: և ըստ մեզ՝ մատիան, կամ արիւնաքամ, որ է կանուչ հարեալ՝ ի գոյն կարմիր, և բծալից: Սա եւանէ՝ ի հանքից եր-
կաթոյ, զոր ակնապօրծք՝ ի կիր առնուն՝ ի քար մա-
ռանուոյ; և յայլ պէտս, որպէս և վերահատք՝ ի յար-
պերուր զյօրդառատ հոտուն արեան, կամ թանչից.
ոյն է սեղմիչ, և ձգօղ բնութեբ:

Հէմիջռանիս, լս: էմիջռանիս, իս: եարըմ պաշ-
ուրըսը, տճ: չաճխա, արբ: և ըստ մեզ՝ անգար.
է ցաւ կիսոյ գլխոյն. տես զայսմանէ հտ. ա. երես
249: Փոխանակ ասդարի՝ այլ օրինակ գրէ անգար:

Հէմօռռոիսէս, լս: էմօռռոիտէ, կամ մօռիչէ, և
կամ մօռիչն, իս: մաեասրլ, տճ: պէվասիր, կամ
պասուր, արբ: և ըստ մեզ՝ թթախտուրթի, կամ
թանչք. զորմէ տես՝ ի հտ. ա. երես 314:

Հէմօռռհօուս, լս: Ի տեսակ ինչ օձի հնդկայնոյ.
որոյ մորթն է խայտաճամուկ, սպիտակ, սեաւ, և
շողշողուն. գլուխն ամիսպիեալ. ունի՝ ի ձակատ իւր
երկու եղջիւրս մանուկս, աչքն ձատագոյնթամէ, և
փայլակնացայտ՝ զօրէն հրոյ. ատամունքն մեծ, և
սրածայր, խակ տուան նուրբ: Սովորաբար բնակի
սա՝ ի խոռոչս, և յատապարին տեղիս: Հարուած
սորա ոչ է մահաբեր, և է դեղ քրանաբեր, և մաքրու-
ղական արեան. զոր ըմպիլք հնդկաց իւր դեղօթամ
՝ի կիր սրկանեն ընդդէմ թունից:

Հէտէռա հէլնքս, լս: էլլէռա, կամ էտէռա, իս:
ատրմաչըք, տճ: ատլպ, կամ լաբլաբ, կամ էպլակ,
կամ ձիլխալտպ, կամ չէձրէխպարիտէ, կի ուսուպ,
և կամ ֆուշակ, արբ: բէզէհ, կի թուվլիչ, կամ
միվլիժէհ, կի նիւիժ, կի պէրչէն, կամ պուկանթ,
կամ սիեան, կամ սին, կամ ֆէշկանթ, և կամ
ֆէրկանչ, սր: և ըստ մեզ՝ բաղեղն, կամ պատու-
ակ: Է տուն, կի լաւ ևս ծառ ինչ մշտականաչ.
որոյ բունն է կարծր, սպիտակ, երկայնաձիւդ, և
ճիւղալից, բուսեալ յամենայն ուրեք զծառովք,
զորմովք, և զանկովք պատատի զնոքօք: Տերևք նո-
ցա են մեծ, լայն, ատուար, կարծր, անկիւնաւոր,
փայլուն, տոպրահամ, ժիանգամոյն և դեղ ազգօս

ընդդէմ անտածուե՛, ցաւոց ատամանց, և ականջաց. զի է թուլացուցիչ բնուբ՛: Այլև սևացուցանէզ հերս գլխոյ. սատակէ զլուս և զանիծս, և գրգռէ զշարաւս վիրաց. զոր յաճախ 'ի կիր արկանեն 'ի դիպուածս խարանի, և այլոց այսպիսի վիրաց, որովհետև առանց իրիք զայրացուցման դիւրապատրաստէ և գրգռէ զշարաւս և զապականեալ հիւթս, և միանգամայն բացեալ պահէ զվէրս առթեալ 'ի խարանէ: Ծաղիկն ելանէ 'ի գագաթան և 'ի ծայրս ճիւղոց, և է դարոնագոյն, ճառագայթաձև, և վեցթերթեան. ապա արտադրէ զպտուղն ողկուզօրէն, սեաւ, թաւամազուտ, բոլորշի, և ստուար ըստ գիհւոյ: Բերէ և սերմն բոլորշի, և տափարակաձև:

Հէտէռռա թէռռէսթռիս, կմ կլէքօմա հէտէռաչէա, կամ քհամէքլէմա, կամ մէլաքօչիսսօ, լտ: էտէռա կամ էլլէռա թէռռէսթռէ, իտ: եէր սարմաշըղը, տճ: լաբլաբիլ առտ, արբ: և ըստ մեզ՝ բաղեզն երկրային: Բոյս, որոյ ցօղունն իբր կէս ոտնաչափ բարձրացեալ յերկրէ սփռի զերեսօք նորա, յորմէ կալաւ և զանունն, և է կարմրերանգ, պարարտ, և ծնրաւոր: Տերևք նորա են բոլորակ, անհարթ, մազուտ, երկայնականթ, և շուրջանակի սղոցաձև ատամնաւորեալք: Ծաղիկքն որկորաձև, և երկնագոյն, որք փունջս փունջս արտադրին առ կանթիւք տերևոցն՝ հանդերձ առէջիւք: Յետ ծաղկանց արտադրէ արկղաձև սերմնարանս, յորում են սերմունք երկայնաձևք: Իսկ արմատն մանր և սպիտակ: Այս բուսանի 'ի ստուերամած, և 'ի ցանկապատ տեղիսլի է իւղով և աղիւ, որոյ տերևն եփեալ, կամ թրջեալ 'ի ջուր և արբուցեալ, դեղ է ազդու ընդդէմ թոքացաւութե՛, հնագոյն հարբխոյ, շնչարդելութե՛, թքման արեան, որ սովոր է գալ զկնի կշտացաւութե՛, և վիրաւորելոյ թոքոց: Չափն մի տրամ խառն ընդ ութ ունկի ջրոյ: Երբեմն 'ի կիր արկանի նաև ընդ սիէրօ տի լաթթէի:

Հերմօտաքթիլուս, լտ: էրմօտաթթիլօ, իտ: սիւրէնճան, տճ: խամիրէ, արբ: Է տեսակ մի այտուցաձև արմատոյ 'ի չափ շագանակի, դիւրաբեկ, թեթև, խժային, անհամ, 'ի ներքուստ սպիտակ, ալիւրալիր, և սնկալից, իսկ արտաքուստ կարմիր, և անթել. և է դեղ օգտաւէտ 'ի դիպուածս ախտի

գաղղիական՝ ոտնատուն է, յօդուածացաւութեան՝ ցի՛ և քրանաբեր, և մեղմասէս լուծիչ, այլև քաղցրացուցանէ զաորղունս՝ ի խժային ազի հիւթոց, և՝ ի մանաւանդ ցաւոց գլխոյ՝ առթելոյ՝ ի մաղասէ։ Սա կոչի և քօլքիքում։

Հէրնիա, լտ։ էրնիա, կամ ալլէնթաթութիւն, իտ։ առէպէլիք, տճ։ և ըստ մեզ՝ փոշտանկութիւն, կամ ալլէնթութիւն։ Է սեռական անուն՝ ընդ որով փայլին զանազան ուռոյցք հարտին, և՝ ի բազում տեսակս բաժանի։

Հէրնիարիա կամ առնիքա մոնթանա, կամ մէլիկռանա մաեօռ, կի՛ առնիքա, կի՛ քօլիկօնում մինուս, և կամ հէռւպա թուռքա, լտ։ էռնիատիս, իտ։ գառլիք օթու, տճ։ Է առնկ ինչ, որոյ ցօղունն է փոքրիկ յոյժ, գիւրաթեկ, կանաչախատն գեղին, և առատհամ։ Ծաղկին ելանէ առ կանթիւ տերևոյն հանդերձ գեղնագոյն առէջիւք, և է փոքրիկ, միանգամայն և գեղ փորհարուճ, անգամալուծութեան, և թևֆօի։ Ջկնի ծաղկանց արտադրէ արկղաձև պատեան ինչ գարնագոյն, ունելով ՝ի մէջն սերմունս բազումս, իսկ արմատն մանր։ Սոյս առնկ բուսանի ՝ի ջուր և ՝ի քարուտ տեղիս. լի է խոտով, և ալիս, և է գեղ ազգս ընդդէմ փոշտանկութեանէ կամ ազեցութեանէ, յորմէ կալաս և զանուն։ Սոյնպէս օգտէ միջահատակաց և քաւօրեայ տենդի, խցանաց լերդի փայծելան, ցաւոց յօդուածոց, և ընդերաց, և փորհարուճութեան։ Զի է խթիչ, և միզացուցիչ բնութիւն։ Ջաման 40 ցորեան ընդ կէս լիտր ջրոյ։

Հէրպա, կամ վէճէթապլէս, լտ։ էրպա, իտ։ օթլուք, տճ։ հաշիշ, արբ։ նէպաուսէթ, պր։ և ըստ մեզ՝ դալար, կամ խոտ, կամ բոյս, կամ առնկ և կամ բանջար։

Հիպերօրօթամուս, լտ։ քավալլօ մաուինօ, իտ։ տէնէ այկրուբ, տճ։ և ըստ մեզ՝ ծովաձկ։ Է կենդանի՝ երկակենցաղ քաւսուսանի, յաճախեալ ՝ի նեղտս, և յայլ դեռս ջերմ գաւառաց, ոչ լողի, այլ գնայ ՝ի մէջ ջրոյն և ընդ յատակաւ նորա՝ իբրև զայլ չորքոտանի կենդանիս. քանզի ոտք նորա են կճղակաւոր քաւսաբաշխս անյարմար ՝ի լողիլ։ Գլուխ նորա մեծ է և ակնախտիկ՝ նման ըստ ինքն գլխոյ արթուս. ատամունքն երկայն են իրր մի և կէս ոտնաչափ, և անհնարին կարծր, որք պեղչին հնուքն ժամանակի իբր

գինեակը. յորոց կասկեն պէսպէս փոքր արուեստ կերտուածս: Երկայնութեն նորա չորս տասնչափ. իսկ սուսարութեն աւելի քան զհինգ տասնչափ. աչքն փոքրիկ և փայլուն. ականջքն կարճ, պարանոցն թանձր և պարարտ, սրունքն ստուար, և բոլորտակ, մորթն թուխ, լերկ, թանձր յոյժ, և անթափանցելի 'ի գինուց: Իսկ ձայնն նման է խխունջնաց ձկոյ, յորմէ և կոչեցաւ ձկաբեան: Մխա այսք կենդանւոյ պարարտ է և քնքուշ. զոր եթովպացիք ուտեն ախորժանօք: Յատամանց նորա գործեն և դեղ ընդդէմ թանչից, և թունդութե ընդերաց: Ամորձիքն նոյնպէս է դեղ հարուածոց օձից. օպտաէտ է և ձարպ նորա. զորոյ միան անջատեալ 'ի գործածեն 'ի դեղ ցաւոց ականջաց, երակաց, և ջլաց: Իսկ գլուխն 'ի վար արկանեն նկարիչք հնդկաց 'ի ներկս:

Հիւօքամաթանուս, կամ քամաթանէս եղունն, լս: քամատանեօ տ' ինախս, ետ: աթքէատանէան, կիմհինատանէան, տՀ: և ըստ մեղ թարգմանութերն՝ շատ նակ հնդկային. պատուղ կարծրակերզև, և փշալից զօրէն շագանակի, յորմէ կալաս և զանուն. մէջն մսալիր, և կաթնալից, այլ տաղտկահամ, որ ոչ է բարի 'ի կերակուր. բայց դեղ է ապտու ընդդէմ ցաւոց գլխոյ՝ եթէ փոքր ինչ փոշեացուցեալ քարշեցի՛ ընդունիս ըստ օրինակի պնչատեղոյ, որ փռնգացուցանէ, և երբեմն դադարեցուցանէ զգլուխն գլխոյ: Ծառ սորա է միջակ ըստ երկայնութեան, և ըստ ստուարութե: Ոստքն լայնածաւալ, և շքեղատեսիլ, զոր սակս առնուն 'ի զարդ բուրաստանաց եւրոպիոյ: Փայտն կարծր, այլ դիւրաբեկ: Կեղևն սպիտակ, թանձր, և տարածեալ ընդ բնոյն, և է դեղ ապտոլական ընդդէմ եւօրեայ, և քառօրեայ տենդից: Ձաւին 'ի մի ունկւոյ մինչև ցերկու ունկի և երկու տրամ, զոր պարտ է եռացուցանել ընդ մի բինթա ջրոյ, և առեալ լինի այս 'ի մէջոցն 24 ժամուց: Տերևքն երկայն, ձուաձև, սրածայր, և շուրջանակի սղոցաձև տատնաւորեալք: Ծաղկին կարմրատեսն սպիտակ, ողկուզօրէն, և գառնահամ, որք 'ի վեր երևին 'ի վերայ ճիւղոց՝ հանդերձ բաժակաձև և հերձոտ առէջիւք:

Հիբէրնիքոս, կամ հերպս բէռֆօռաձէա, կամ ան-
արօսէմոս մինուս, և կամ աշիրօն, լս: իբէռնիքօ,

հա : ատրը քանթարիօն , տմ : Ի բոյս ինչ ծակոտակէն, որով ցօղումն բարձրանայ յերկրէ նբր մի և կէս ոտ նաչափ, կարծր , փայտային , գլանաձև , կարմրերանգ և ճիւղալից : Տերևք նորա երկայնաձև են և ջղալից՝ նման ըստ նմին եռից տերևոց չէնթաուրէան , ոլ երկու երկու բուսանին 'ի վերոյ ճիւղոց : Ծաղիկն դեղնագոյն , և հինգթերթեան 'ի ձև վարդի , ունելով 'ի միջի առէջս յոգնաթիւս . զոր ջրացուցեալ 'ի հովանաւոր տեղիս , 'ի գործ արկանեն ընդ այլ յարմար բաւոր խառեղէնս 'ի դիպուածս ախտից կծոց . զնոյն գործուննէուն ունինն նաև տրա տերևքն : Յետ ծաղկանց յաջորդէ գնատկաձև պատեան ինչ ոտուար, յորում լի են մանրիկ սերմունք թխագոյնք , լուսաճաճանչք , խժային , և գառնահամք : Իսկ արմատն փայտային , խիտ , և թելալից : Այս բոյս բուսանի ամենայն ուրեք՝ յանտառս , և յամայի տեղիս : Ծաղիկ տրա ունի և զգօրութիւնս բացողական , որով բանայ և զանցս տեռատեսական արեան և մզի : Ջաին յերկու տրամէ մինչև 3դ . խառն ընդ ուրի տունկի ջրոյ : Այլև տատակէ զօրդուննս որովայնի :

Հիւօջիաթիս , լտ : իւօջիանթիտէ , իտ : Թէքէ տապալը , տմ : լըյէեթիւլ Թէյլ կամ էսբիւլէնճ , և կիճ ուչպիւլ , արբ : Ի բոյս հինթալից , յատկէ օրօսանքէ անուանեալ խոտոյ , բուսանի առ արմատով հինտ Թուս տնկոյն 'ի սկիզբն գարնան իբր մի ոտնաչափ բարձրութեբ : Տերև տրա է բոլորչի , Թաւամազ , անհարթ , և տպետակ , իսկ ծաղկին ծիրանագոյն : Ջոյս տովտրաբար քաղեն յաւարտ մայիսի , և չորացուցեալ 'ի հովանաւոր տեղիս , 'ի կիր արկանեն 'ի դէղ Թանչից , և հոտման արեան , այլև արգելու զխախուտն , և զլուծուն որովայնի :

Հնբօչխաթիս , լտ : իբօչխանթիտէ , իտ : Թէքէ տապալը , տմ : լըյէեթիւլ Թէյլ կամ էսբիւլէնճ , և կիճ ուչպիւլ , արբ : Ի բոյս հինթալից , յատկէ օրօսանքէ անուանեալ խոտոյ , բուսանի առ արմատով հինտ Թուս տնկոյն 'ի սկիզբն գարնան իբր մի ոտնաչափ բարձրութեբ : Տերև տրա է բոլորչի , Թաւամազ , անհարթ , և տպետակ , իսկ ծաղկին ծիրանագոյն : Ջոյս տովտրաբար քաղեն յաւարտ մայիսի , և չորացուցեալ 'ի հովանաւոր տեղիս , 'ի կիր արկանեն 'ի դէղ Թանչից , և հոտման արեան , այլև արգելու զխախուտն , և զլուծուն որովայնի :

Հնդիւայ , կամ բօռքուս սբինաԹուս , լտ : բօռքօ սբինօ , իտ : պրանձօքհիրօս , ֆր : պիբրի , տմ : զօնֆէլ , կիճ չէվհէբ , կամ էմիլհէննէ , արբ : Թէհան , կամ խառբիւշ , պր : և բոտ մէզ՝ ոզնի , կամ կոզնիս : Ի կենդանի փոքրիկ , և կարճատն , որոյ գլուխն նման է խոզի , պարանոցն նապաստակի , ատամունքն կղբուս , ականջքն մարդոյ , իսկ Թաթքն արջոյ . աչքն փոքր է և բոլորչի , ընչացքն երկայն իբր վեց բմԹաչափ . մորճն խիտ և փշալից նմանեալ կեղևոյ շապանակի , որ է յատուկ պահպան և զէն նորա : Ի նա այր կենդանւոյ լինի գեղ ըդեմ Թանչից , և մզարկելուէ , վարատէ

և զայտուցս երասանկի: Ջճարպ առաս 'ի գործ ածեն լեր պեղ փոշանկուԹե և ԹուլուԹե ջլաց: Փուչք առաս և ոտք ակնեւացուցեալ և արբուցեալ խառն ընդ ջրոյ, լինին պեղ չահաւէտ 'ի դեղատածս գալկան, և ջրգոլուԹե, զի են ժիզաբեր բնուԹեբ: 'Ի լեղս կամ 'ի փամփուշտս ոմանց ոզնեաց գոյանայ քար փուքրիկ, դեբաբեկ, և գառնահամ, որ լեր դեղԹափ 'ի վար արկանի ընդդեմ Թունից, ընդ սակաւ հիւԹոց ստամոքսի, ակարուԹե արտ, մանր հաբեր առնդից, և ժանտախտի. զի եգեալ ջուր հատարակ առ քանի մի վայրկեանս, գառնացուցանէ ջուր փոքր ինչ. որ և ըմպեալ, առԹէ զքնրան. որ է դլխաւոր պեղ այսպիսի ծանր և ջերմնատոչոր ախտից: Ասյս դեղԹափ ազնիւ համարի, եԹէ նցէ ԹեԹև, և յոյժ գառնահամ, զոր լատինք կոչեն՝ լաբնս մալաքանուս, կամ՝ բուն բառիւ՝ ոչնծօար հիւ լԹուխս, և Թուղք՝ գիբրի բանզէհիրի:

Հխաօբուս, լտ: խաօբօ կամ խզօբօ, խտ: զրուֆա, տճ: և ըստ մեզ՝ զոպայ. խոտ, որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ լբր մի և կէս կամ երկու բԹաչափ, ծնրաւոր, կարծր, և ճիւղալից, տերևքն խիտք, և գառնահամ, մանդամանցն և համեմայնն, որք երկու երկու բուսանին 'ի վերայ միոյ կանԹի: Ծաղիկն կապտագոյն, հասկաձև, և լայնաբաց. բերէ արկղաձև պատեան, յորում են սերմունք երկայնաձևք, մանր, մԹոպոյնք, և մչկահոտք: Խակ արմատն ստպահամ, կարծր, փայտային, բազմաԹել, և ստուար լբրև գնատն մարդոյ: Սա ստէպ բուսանի 'ի բուբաստանս, և 'ի պարտէզս, լի է խուղով և ցնդական աղւս, և բնուԹբ բացուլական, զօրացուցիչ, և խԹիչ, որով անօսրէ զլԹանձրամածուԹն ստղունից, կազդուրէ զցաւս կրծոց, մեղմէ զհազս, մաքրէ զարիւն, զօ բացուցանէ զստամոքսն, ԹեԹևացուցանէ զաստկուԹն շնչարգելուԹբ, և ապալինէ զախտս Թոքոց առԹեալս 'ի Թուղուէ: Ջաչն 'ի մի ատամէ մինչև ցմի և կէս խառն ընդ ուԹ ունկն ջրոյ: Սյլ և ատամէ զորդուն որովայնի:

Հխտաձիուս. ասս մէրքուռիուս:

Հխրուռնաօ, կամ բարվա հխռուռնաօ, լտ: ռօնտինէ, իտ: խէչիաօն, յն: գռլանկրճ, տճ: ատպատիլ, արբ: կլխվաճ, պրս: և ըստ մեզ՝ ծիծառն: Ի սպանելոյ Թռչնոյն փոքրիկ, և բազմաձիչ. ծանօԹ ամենեցուն, որ ատ

վրաբար գայ առ մեզ ՚ի ժամանակս պարտման, և դնէ զբոյն իւր յատաստանս տանց. որոյ վիս օգուտ եէտ է ՚ի դիպուածս վերնատուրեն, և փոխացուցանել: ՚Ի սուամբս ոմանց ծնծուանց գոյանի քար ինչ իբր ասպնաչափ սուսարուրեք, զոր շաւինք կոչեն՝ լափիս քէլիսօնուս, քէլէտօնիա. և խաշլք՝ բնէ թռատ ըօնտինէ, և՚ի գարձ ածեն ՚ի դեղ ցաւոց կամ ախտից աչաց, որով և սրբեալ փարատէ զսպեռելնս և զայտուցս աչաց կապելով ՚ի վերայ նոցա: Նոյնպէս և օգտէ լուանալոյ եթէ ՚ի վերայ եկեղ ոյ մանկանց՝ կախելով և եթ զոյն ՚ի պարանոցէ:

Հիրուս, լս: աղնիւախուսկա կամ մինկաթեթա, ետ: ատէլլա, յն: սիւլիւկ, տճ: հայաքա, կի ալաքահ, արբ: զէնուր, կամ զիւլէկ, կամ զէլուկ, կամ զէլու, կամ զիւլէհ, կամ շէքիա, կամ շէլքու, կամ շէլք, և կամ մալիա, այր: և ըստ մեզ՝ տզրուկ: Ե միջատ ինչ խայտաճամուկ յատկէ որպանց, և է վտիտուկ, առուտր ՚ի չափ ճկոյթ մատին մարդոյ. ունի ՚ի քեւրանն երեք աստամունս նրբատոչիս, սայրատարս, և ատղոլականս, որովք կառուի ՚ի մարմինս ոչուով չափ. և ծծէ զարիւն կենդանւոյ այնչափ անյագ՝ մինչև այտուս իբրև զխիկ. յայն առակս ստէպ ՚ի կէր արկանելմք ՚ի բժշկուրեն ցաւոց աչաց, ականջաց, աստմանց, և դլխոյ. նոյնպէս օգտաւէտ է ՚ի դիպուածս ախտնդանոտուրեան, նուազուրեք ամսականաց պարտուց կանանց, ցաւոց արգանդի, ախտից ցնցականն ՚ի վերայ եկելոց մանկանց, յօդուածոց ցաւուրեք, ոտնատուրեք, ուռուցից երատատանի՝ պատճառելոց ՚ի թթախատուրեէ, և այլոց այսպիսի ախտից, զոր պարտ է մերձեցուցանել, կամ դնել ՚ի պատշաճաւոր և ՚ի մերձակայ մատունս վշտապնեալ անդամոց, առ ՚ի յինքն ձգել ծծելով զվնասակար և զախտարծարծ արիւնն, որով ապաքինի: Գիտել արժան է, զի եթէ ոք ՚ի ամանէ կլանիցէ ըզ պատահման կամ յանգետս վիսպակաս, էակ և էակ կուուի ՚ի ներքատակոլին ստամոքսն, որ և բազում անգամ պատճառէ զկրծուման ստամոքսն, վնէթ դժնդակ, վնոլկանս յարտաս, զկրճատուման աստամանց, վցնորուման, զկատարուման, զհեծկլտանք, զժայթքուման, զցնցուման մկանանց, և վերջապէս զմահ: Բայց գիտել արժան է, զի մարթ է փուրթով նպատաստամատոյց լինիլ ՚ի ձեռն կարևորագոյն դեղոցն, որպիսի են

աղն, եւ ն, մոխրաջուրն, ակաղնիքօնն, մանաւանդ ասինու կարմիր գինին, որ է գլխովին հակառակն այսր տզրկի. բայց առցի մի աւելի քան զքառորդ կամ զկէս բաժակ առ ի նուազ, և առցի քառորդ ժամ միջոց ժամանակի ընդ ի և ընդ միւս արբուճն այսր չափոյ: Ա յս միջատ կամ տզրուկ սովորաբար գտանի 'ի լինճս, յաղտաղտուկս և 'ի գետս, նաև 'ի ծովս: Ասինու համարի, եթէ ևս փոքր ի նուրբ, մանաւանդ եթէ գոյացեալ ևս 'ի լճի:

Մօթաչիլլա, կամ քաուտաթռէմօլա գուիպուստամ, լտ: քուրէթթօլա, կամ քութռէթթա, կամ քօտաթռէմօլա, և կամ սգուամասքօտա, իտ: գույրուկ սալլաեան, տճ: Է թռչուն փոքրիկ, որ 'ի դադարիլն 'ի գետնի շարժէ հանապազ զձետն և զյետոյսն. գտանի յեզերս գետոց, և ճահճաց. որոյ միսն է բնութ՝ բացողական, որով գրգռէ զմէզն, և լուծանէ զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ:

Մօնօչէրօս, կամ ունիքօռնիս, լտ: լիօքօռնօ, կամ ունիքօռնօ, իտ: կէրկէրտան, տճ: օռնու վախտ, արբ: և ըստ մեզ՝ միեղջերու, կամ ռնգեղջիւր: Է քառոտանի մեծ 'ի չափ ձիոյ, որ ունի եղջիւր մի կանգնեցեալ 'ի վերայ ճակատու իւրոյ, որ է կարծր, գալարեալ, պարուրաձև, երկայն իբր երկու կամ երեք ոտնաչափ, և ծայրաւոր, որ պաշտպանէ նոցա: Ապրի սա ընդ երկար, և ծնանի սակաւս, աւելի քան զամ մի կրելով զծնունդս յորովայնի ըստ փղաց, և սիրէ լողիլ 'ի ջուրս. արագընթաց քան զյոլով սրընթաց կենդանիս, և դիւրընտել. բայց չունելով ոչ զճարպկութ՝ կամ զպարարտութ՝ փղի, և ոչ քաջայարմար անդամս, ոչ կարէ այնչափ ծառայել մարդկան, որչափ փիղն. յայնսակս և մարդիկ չունին փոյթ որսալ զնա կենդանի, այլ միայն զմորթ նորա, և զեղջիւր, որ իբր դեղթափ համա-

ցեալ է ընդդէմ ազգի ազգի չերմնաւորչաց ախտից։ Է սորա և այլ տեսակ մի՝ որ ունի եղջիւր ՚ի ձև փղոսկրեայ ծանր, կարծր, և երկայն իբր երկու կամ երեք կանդուն, գալարուն, և մէջն դատարկ, որ կոչի ՚ի լատինացւոց՝ ունիքօռնու, զոր ՚ի վար արկանեն ՚ի դեղորայս. բայց զայս եղջիւր ունի և տեսակ մեծ ձկան կոչեցեալ խալանտացւոց բօրբաւոմ՝ նաւվալ։

Մօռայօ վէնէռէօ. տես մալ վէնէռէօ։

Մօռայօ քօլէռա, իտ։ զաֆռաքը կամ էօրքէլն և կամ տաւռինըքը իլլեթի, տճ։ և ըմ մեզ՝ ախտ մալձային, կամ զայրագին. տես զայտանիչ հտ. ա. երես 234։

Մօսքուս, կամ մօսքհուս, լտ։ մօսքիօ, իտ։ միակ, արբ, և տճ։ էհատ, կամ չէզուվ, և կամ գէավէ, պր։ և ըստ մեզ՝ մուշկ։ Է մակարդեալ թեթև և աղնուագին նիւթ ինչ, գոյացեալ ՚ի պալարի զպորտաձն կենդանւոյն անուանելոյ՝ քէվրօթին, կամ մօսքիֆէրուս. որ է տեսակ մի վայրի էրէոյ, ձևով մարձնոյն և մեծութեամբ նման է փոքրիկ այծու., ունելով սուս երկայնա՝ պտրուբաձև, և դիւրաբեկ։ Այս կենդանի լինի ՚ի Թիպէթ, ՚ի սկիւթիայ, ՚ի սարմատիա, ՚ի չին, ՚ի հնդկաստան, և ՚ի սիպէրիա. զոր բազում անգամ որսան քնակիչք տեղեացն, և զպալարն հանդերձ պորտովքն հատեալ չորացուցանեն, և լինի նիւթ ինչ սաստիկ, աղտու, անուշահոտ, որ ՚ի սկզբան է արիւներանգ, և ապա առ սակաւ սակաւ փոխարկի ՚ի գոյն չագանակի. համ նորա դառն է ժիանպամայն և տաքիպ. ունի զաւտաւգոյն իւղս, և աղս ցնդականս, և է դեղ գերագոյն ընդդէմ խածուածոց կատաղի շանց և կենդանեաց, մանաւանդ յորժամ խառնի ընդ չինապտօի բալշադրելոյ քօնսէռվա տի ռամէռինօի։ Նոյնպէս օգտաւէտ է ՚ի դիպուածս լուանտուրեաց, անդամալուծութեան, ախտից ջղաց, և արգանդի, ցաւոց գըլխոյ, մակրովային և սուսմղքսի, ախտից ցնցականաց, խլութեան, և ցաւոց ականջաց, և ՚ի մանաւանդ ամենակերպ ախտից աւթելոց ՚ի թուլութեան ջղաց. զի է զօրացուցիչ և գրգռիչ բնութեան. բայց կանանց ոչ է յարմար մանաւանդ յղեաց։ Ձայն ՚ի յերկու կշիռ ցրենոյ մինչև ցչ յաւուրն։ Այլև օգտէ այտուցի ՚ի վեր եկեալ ՚ի մակրովային։ Գաւանի և խաբէականն

արուեստիւ յօրինեալ, որ չէ՛ կարի պիտանացու։

Մօռուս, լտ։ մօռա, իտ։ թութ աղաճը, տճ։ և ըստ մեզ՝ թթենի։ Է ծառ ընտանի, ստուարաբուն, թանձրակեղև, անհարթ, և ոստալից, որոյ կրկին է տեսակ. զմի տեսակն կոչեն՝ մօրուս նիկրա, այսինքն սեաւ թթենի, որոյ փայտն կարծր է, հզօր, և դեղին։ Տերևք նորա երկայն, բոլորակաձև, կարծր, քաղցրահամ, և շուրջանակի ողոցաձև ատամնաւորեալք։ Պտուղն նախ քան զհասանիլն է կանաչ, ապա կարմիր, և տապահամ, յորմէ կազմեն օշարակ անուանեալ 'ի թուրքաց՝ թութ շառապը. և 'ի գործ ածեն 'ի դեղ ցաւոց և վիրաց բերանոյ, և լուծման որովայնի։ Իսկ յետ հասունանալոյ փոխի 'ի գոյն սեաւ, և քաղցրանայ, և լինի դեղ իմն ընտիր ը̄դէմ չորուե̄ և տապութե̄ կրծոց. զի է խոնաւացուցիչ, և քաղցրացուցիչ։ Իսկ երկրորդ տեսակն է թթենի սպիտակ, զոր լատինք կոչեն՝ մօրուս ալպա, որոյ փայտն է դեղնախառն սպիտակ։ Տերևն չէ՛ ինչ տարբեր 'ի տերևոյ առաջնոյն։ Պտուղն սպիտակ, փափուկ, քաղցրահամ, միանգամայն և զովացուցիչ բնութ̄ ։ Իսկ արմատն երկայն է և ստուար. որոյ կեղևն փոշիացուցեալ և արբուցեալ, դեղ է կալուածոց դաշտանի կանանց։ Չափն 'ի 30 ցորենոյ մինչև ց60։ Սատակէ և զորդունս և զճճիս որովայնի։

Մօռպուս, մօռպօզուս, լտ։ մօռպօ, մալաթօ, իտ։ հաստա, մառազլը, տճ։ ալիլ, կամ էզիլ, կամ մէռիտ, կամ վէզիժ, կամ տաիֆ, կամ տէնէֆ, կամ մշաուշ, կամ այեան, և կամ սախպ ֆէռշ, արբ։ պիմառ, կամ սայռու, և կամ նաչաղ, պր։ և ըստ մեզ՝ հիւանդութի̄, հիւանդ, կամ ախտ, ախտաժէտ։ Է անուն նշանակիչ ո՛ և իցէ ախտից, և ախտացելոյ։

Մօռպուս ռէբէնթինուս. տե՛ս աբօբլէսսիա։
Մօռպուս ռէճիուս. տե՛ս իթթէրիցիա։
Մօռպօ վէնէռէօ. տե՛ս մալ վէնէռէօ։
Մօռպօ քօլլէռա. տե՛ս քօլլէռա մօռպուս։

Ն

Նաբհթա, կամ բհատասբալթուա նաթուրալիս, կամ ամալթհա, լտ: նաֆթա, իտ: նէֆթէ եաղը, տճ: և ըսա մեզ՝ նաւթ: Ն տեսակ մի կալրոյ, պարսպտ, ծծմբային, և հոտանուտ իբրև զձէթ, որ՝ի հուր մերձեցուցեալ ուժգին բորբոքի. գոյն նորա սովորաբար է սեաւ. բայց գոտանի և ապխտակ, որ լաւագոյն համարեալ է և ծառաւել գործունեայ. զի առնօսրէ զթանձրամածուխեան տողունից, և առատակէ զորդուն որուլային: Զայն՝ի 2 շրէ մինչև 30. նաև օգտէ ընդդէմ թուլութե և ցաւոց անդամոց և ջլաց, և՝ի մանաւորի ոտնաուութե, զի է խթիչ ջերմ և թափանցիկ բնուութե: Ա յոյքիկ նաւթքս գտանին՝ի զանազան տեղիս, որպս՝ի պարսկաստան, ՝ի գաղղիա, ՝ի վրաստան, յեզերս կարմիր ծովու, և ՝ի կողմանս բաբելացւոյ՝ բղխեալ յականէ, և ՝ի Ջրհորոյ:

Ն աբուա, կամ քուհիա, լտ: նաւկոնէ, իտ: շալկամ, տճ: սէլճէմ կամ լիֆտ, արբ: շէմշեխս, պր: և ըսա ֆմեզ՝ շողգամ: Ն կարմրախառն ապխտակ արմատ ինչ թամբալից և ախորժահամ, զոր բազում օրինակաւ հանդերձեալ ուտեն: Ն ախնիք զսերմն այսր արմատոյ իբր գեղ՝ի վար արկանէին ընդդէմ ըսանոտուութեան, այլ այժմ մնայն՝ի կիր արկանեն յարևելս:

Ն աթրնքս, կամ հնաուս, լտ: Ն տեսակ մի ջրային օձի՝ յաճախեալ յեւրոպիա, զոր նաթալէ՝ նաթռիչէ կոչեն, որ է ատուար՝ի ջուի հասարակ օձի. գլուխ նորա լայն է և ապխարակ, պոյնն դորշ, ունելով՝ի վերոյ արատս բազումս. Թոյն նորա ազդու է և ջար, որ՝ի խայթել իւրում անվրէպ պանանէ զմարդ, եթէ ոչ փութով նպաստամատոյց լինի՝ի ձեռն կարևորագոյն դեղոցն, որպիսի են Թիւրաքէան, և այն նմի, ևն: Կերակուր սորա է Ձուկն, մուկն, և գորտ. որոյ միս գեղ է ազդողական ընդդէմ ապականուութե արեան, և ախտից կըր-

ծոց, միանգամայն օգտաւէտ է 'ի դիպուածս ախտից արգանդի առթելոց 'ի գոլորշեաց:

Նասթուրցիում, լտ: նասթուրցիօ, իտ: քարտամօն, յն: ճարճիր, կմ չէպիւզ, կմ սէպէթ, արբ: թէռէ թիղէկ, կամ թէշխիշիւք կամ շիպիշտ, և կմ շիվիշթ, պր: թէռէ, տճ: և ըստ մեզ՝ կոտեմ, կամ կոտիմ: Է բոյս յաճախեալ 'ի բուրաստանս, և 'ի պարտէզս, որոյ ցօղունն է երկայն իբր երկու ոտնաչափ, բոլորակաձև և ճիւղալից: Տերև սորա է երկայն, հերձոտ, և կծուահամ, զոր աղցան կազմելուտեն, և է դեղ ազդու ընդդէմ սքօռպութօի, և շնչարգելութեան: Ծաղիկ սորա է քառեակթերթեան և սպիտակ հարեալ 'ի գոյն ծիրանի: Պտուղն փոքրիկ, բոլորշի, և տափարակաձև, ունելով 'ի միջի սերմունս կարմրերանգս, բոլորակաձևս, և տտպահամս: Իսկ արմատն է փայտային, սպիտակ, և թելալից:

Նասթուրցիում ագուտթիքում, լտ: նասթուրցիօ աքգուտթիքօ, կամ քռէշիօ, իտ: սութէռէսի, տճ: շիվիշթ ապի, պր: և ըստ մեզ՝ կոտեմ ջրային: Է բոյս մշտադալար, բուսեալ 'ի գէճ և 'ի ջրարբի տեղիս. որոյ ցօղունն է երկայն իբր մի ոտնաչափ, ստուար, կոր, ճիւղալից, կարմրախառն կանաչ, և մէջն դատարկ: Տերևք սորա են բոլորշի, հոտաւէտ, հիւթալից, և կծանօղ լեզուի: Ծաղիկն փոքրիկ, սպիտակ, քառեակթերթեան: Իսկ սերմն բոլորակաձև, կարմրերանգ, և տտպահամ. որ արտադրի 'ի մէջ մաշկատեսակ պատենի: Այս բոյս լի է իւղով, և գոյացական աղիւ, և է դեղ ազդու ընդդէմ խցանաց փայծեղան, միզենդրականի, և արգանդի. զի է բացողական, և նրբացուցիչ բնութ՚ա. օգտէ և ընդդէմ սքօռպութօի:

Նարտուս հինտիքա, կամ սբիքա նարտի, և կամ սբիքա ինտիքա, լտ: նառտօ ինտիքօ, կամ սբիկօ նառտօ, իտ: զիւմպիւլի խիթայի, կամ զիւմպիւլի հինտի, տճ: և ըստ մեզ՝ անդեղեկ: Է տեսակ մի նրբացօղուն, թեթև, թեփալից, փշալիր, և երփներանգ բուսոյ, հոտաւէտ, և դառնահամ, միանգամայն և տտիպ, որոյ արմատն նման է եղեգան, և թելալից: Բուսանի 'ի բազում տեղիս արևելեան հնդկաստանի, լի է իւղով և ցնդական աղիւ. օգտաւէտ ընդդէմ տկարութ՚ ուղղոյ, ջղաց, և ստամոքսի,

վիանդամայն և երգուէ զնէն, և զդաշտանս կանանց, դիւրաշարժ յօրինէ զառուրևստուրնս ընդդ, և նրբացուցանէ զթանձրամածուրթիս հիւթոց: Վարի և 'ի բալատրուրթէ թիւրակէսի: Կոչի և 'ի լատինացւոց՝ անտուօքսինս նատատուս:

Նաֆթա. աւ. նաբհթա:

Նէնուբհար. աւ. նիմբհէա:

Նէաբօլա. տե. մէսբիլլում:

Նէրիում կամ ռօսս տէնտուում, լտ: նէռիս, կմ օլէանուս, իտ: զբլբմ ազնձը, տճ: Ի տունկ ինչ չքեղատեսիլ՝ յատճախել 'ի բուրաստանս, և 'ի գետափնեայս. որոյ տերևն է ընդհակառ և մահաբեր ընտանի չորքոտանեաց, մանաւանդ կովուց, և էշոց, որք 'ի յուտելն սատակին անվրէպ: Այս տերև որ է մեծ, լայն, սուրբ, և կարծր, լինի գեղ ազդու ընդդէմ բորոտութիւն, քոսոտութիւն, և այլոց այսպիսի ախտից մորթոյ, եթէ սպեղանի կազմեալ օծցին նովաւ վհատացեալ մասունք մորթոյ: Ջնոյն գործուածնէուրթիւնն ունի նաև սորա բունն: Ճաղիկ սորա է գեղեցիկ, մեծ 'ի ձև վարդի, և կարմրերանգ: Յեռա ճաղկանց արտադրէ պատեան ինչ գլանաձև, ունելով 'ի մէջ սերմանս բազմակալերս: Խակ արմատն է երկայն, փայտային և մաքուր:

Նէրվուս, լտ: նէրվո, իտ: ֆլէվա, յն: սինիր, տճ: սասոպ, սրբ: բէյ, պր: և ըստ մեկ՝ ջնջ, կամ ջնջ. որ է մասն ինչ փափուկ և ուղղալից 'ի նեղքառատ, բայց կարծր և մաշկեղէն արտաքուստ. որով բաշխին կենդանական ոգիք յուղղոյ գլխոյն, և յուղղոյ միջնոցին ընդ ամենայն մարմինն բաժանեալ 'ի բազմամանեայ մասունս. քանզի որք ծագին յուղղոյ գլխոյն, բաժանին յերօթն զոյգս: Առաջինն կոչի՝ սեանոզական, որովհետև ճապաղի յաչս 'ի պէտս տեսութիւն: Երկրորդն՝ ձգի ընդ միանուն աչացս բազմամանուած ուղեչիք. որով և կատարի շարժուն տեսութիւն: Երրորդն՝ արձակէ տեղուն 'ի միանուն դիմաց, աչաց, և ճակատու, և յարմատ ատ ատամանց ձգեալ առնու զվախճան 'ի լեզու, որով և կատարի գործողութիւն ճաշակողական: Չորրորդն՝ ձգի ըստ կէսոյն 'ի քիմս, և ըստ կէսոյն 'ի տարին մաշկն լեզուի 'ի կատարուն ճաշակողական զօրութիւն: Հինգերորդն ձգեալ 'ի թմբուկն ականջաց տարածեալ ճապաղի դէպ 'ի միանդ հատագի, որով

ֆատարի չարժուման լեզուի, և յօդուածուելի ձայնի: Վեցերորդն յորկորդի Թախտաւ, որովհետև անուարբեր Ճապաղէ զշաւխլու իւր, որք 'ի միանուն հատաքի, նոյնպէս և յայլ մասունս, որպէս 'ի կոլա, 'ի սիրան, 'ի սամոքսան, 'ի մեսենտր, և յայլ սորին մասունս սորին որովայնի: Իսկ եօթներորդն զոյգ հաւասարաչափ ծառայէ չարժման հպատպի, և լեզուի, որովհետև բաշխի 'ի միանուն նոցին: Ալոդ Թիւք ջաց շառաւխլելոց յուղոյ, և 'ի միջնոցէն ամֆոխոյին 'ի զոյգս երեսուն. որք և ունին սահեղուն բազմամանեայս. յորոց եօթն ձգին յաղխից պարտնոցն, երկոտասանքն յաղխից լանջաց, և հինգ յաղխից միջնոցին: Իսկ մնացեալ Թիւն վեցեակ արձակին յոսկերէ սրբանին, զորոց զտարածուածն շառաւիղացն ընդ մարմնին բովանդակ աւելորդ իմն է մանր տաքնին զննուԹիւն կարգել սասէն:

Նէրվս. տե՛ս նէրվուս:

Նէրվս լինգուխոս. որով անուամբ ցուցանին ոչնք ԹեԹևապոյնք, որք գոտանին 'ի մէջ խողովականման ջրից, որք և կոչին ոչնք ջրայինք:

ՆէՖրիԹիտէ, նտ: պէօպրէք միհրիւքանը, կամ նէֆինէԹի, տճ: կուռսէի կէրմ, պր: միհրիւքտանի քիւլահ, կամ միհրիդե քիլվէ, պրբ: և ըստ մեզ՝ բորբոքուածն երիկամանց. զորմէ լինագոյն ունիս տեսանել հա. ա. երես 113:

ՆիԹրում, կամ սալնիԹրում, և կամ օսախէբԹօնաս բօԹասակ բուռնֆիքաԹում, լտ: նիԹրօ, կամ սալնիԹրօ, և կամ օսախ սէբԹօնաԹօ սի բօԹասակ տէբուրաԹօ, իտ: նիԹռաԹ սը բօԹաս բիւռնֆիֆ, պղ: մէլխի պարուԹ, կամ պարուԹ սալխաԹ, պրբ: կիւվէրջիլէ, կամ կիւրվէրջիլէ Թուզը, տճ: և ըստ մեզ՝ ընդդէմ: Ի սոլ ինչ սալխատակ, բիւրեզատեսակ, Թափանցիկ, ցնդական, դիւրահալ, և դոյլն ինչ դառնահամ, գոյացեալ 'ի հիւԹոց կենդանեաց. որ յաճախ 'ի վար արկանի 'ի դեղուածս ամենակերպ սուր և դժնեայ ջերմախոյց սաԹելոց յուժգնուԹէ բնուԹէ. նոյնպէս օգտաւէտ և կարի գործունեայ ընդդէմ բորբոքման արեան, փոլացուածուԹէ, միզարգելուԹէ, սերմնականաԹուԹէ, Թաժնից, փքախտուԹէ, երիկամնաժեռուԹէ, և յօդուածացաւուԹէ: Ձաին 'ի 10 ցորեանոյ մինչև ց20 խառն ընդ սուրճ կամ ջաց յաւուրն: Բայց անշախտապէս 'ի կիր տալ

կանեն Թուրացուցանէ զատամոքսն, և նուազէ ըմպրատելական զօրութիւնն. զի է Թուրացուցիչ, պովացուցիչ, և միզաբեր բնութ: Սա ստէպ պտանի յեղրոտելս, և յասկս, նա յաւէտ 'ի կողմանս եգիպտոսի. ունի և զայրուղական զօրութիւն, յորմէ և կազմեն զվառօդ:

'Նիթրօ. տե՛ս նիթրում:

'Նիթրօ սթիսլիաթօ, լտ: տէմիր ոզոյանըը կիւվէրջիլէ, տհ: է ալ ինչ բաղատրական, կազմեալ 'ի ընչբորակէ, և 'ի յունաքարէ. որ է դեղ օգտաւէտ 'ի դիպուածս լացանաց լերդի և փամփշտոյ, և կըշտացուցանէ ախորժութիւնե, չերմանախտից, և այլոց այսպիսի չերմաճնատուղը ախտից. զի է Թուրացուցիչ, միզաբեր, և քրտնաբեր զօրութիւնք: Ձափն 'ի կէս տրամէ մինչև ցերկուս:

'Նիմֆէլա, կամ մէլանթիում, և կամ քուամինում 'նիկրում ձէրմանիքում, լտ: նիմֆէլա, մէլանթիօ, ձինթիֆլօռօնէ, լտ: մառօքոյք, յն: չէօրէկ օթու, տհ: հապպլ պէրէքէ, կամ չէվանիզ, կամ հապպլ տուտէ, կամ խահա, կամ չէյնէ, և կամ չէհնիա, արբ: պուկունջ, կամ սխտարուն, պր: և ըստ մեզ՝ արջնդեղ, կամ ան և տոնիճ, և կամ ան գնտիկ: Է բոյս յաճախ. ինեալ Եւրոպիա, մանաւանդ 'ի կողմանս բարիզու, որոյ ցօղունն է երկայն իբր մի տունաչափ, պարարտ, և գարնագոյն: Տերևք նորա կանաչ են և հերձուտ: Ծաղկին մեծ, ապխտակ, և հինգթերթեան. վինէ ծաղկանց արտադրէ պատեան ինչ տուրար, թաղանթային, և ելջերաւոր. յորում լի են ունդք սերուք եւանկիւնաձևք, քաղցրահոտք, և կծուահամք. յոց կազմեն դեղ ազգու ընդդէմ նուազութե ամսականաց պարտուց կանանց, քարօրեայ տենդից, փքախտութե, և տկարութե ստամոքսի. այլև տուայտուցանէ զկաթն կանանց, և աստակէ զորդուն և զձմիա որովայնի: Ձափն 'ի 10 յորենոյ մինչև 30:

'Նիմֆէա, լտ: նէնուֆար, կամ նինֆէա, հտ: նուլուֆկր չինէէ, կամ կէօլսիւզէնի, և կամ նինիլֆէր, տհ, և արաբ: և ըստ մեզ՝ կոկոտ, կամ հարանէմատան, և կամ նուռնուֆար: Է բոյս՝ քուսեալ յեզերս գետոց, և լճաց, մանաւանդ յաղտաղտուկս. տերև սորա է մեծ, լայն, բոլորչի, ատուաղ, թամբալից, և երկայնականթ: Ծաղիկն մեծ, գնաձղուխ, և ապխտակ, որ 'ի վեր երևի 'ի գագաթան

հանդերձ սպիտակ, և հինգթերթեան առէջիւք։ Պտուղն բոլորշի, և երկայնաձև, և՝ ի միջի ունի սերմունս երկայնաձևս, և սեաւս։ Իակ արմատն տօ- վորաբար է ստուար իբրև գբազուկ մարդկան, երկայն, ծնրաւոր, թամբալից, խժայլին, անպաչից, արտաքոյ թուխ, իակ՝ ի ներքուստ սպիտակ։ Սա լի է իւղով, այլ նուազ ազիւ. զորոյ եհուզեալ գՅուրն, լինի դեղ օգտաւէտ՝ ի դիպուածս ախտանշոտու- թեանց, և ամաւղձի. զի է զովացուցիչ, և հովացու- ցիչ բնութեամբ, և՝ ի մանաւանդ ընդդէմ ախտի թան- չից, բոլբոջոլականութեանց արեան, և ջերմախտից։ Բայց առ արդիւքս ոչ համարի այնքան՝ ի չարգի։

Ընինֆօմանիա։ Է անուն իրիք կանացի ախտից՝ առթեալց՝ ի սաստիկ տաքանաց ամուսնութեանց. կոչի և ֆուռօռ ութէրինօ՝ այսինքն կատաղութեան ար- գանդի։

Նիսի, կամ Ջինկ, կամ Նիմճինկ, և կիմ Ջիմֆին։ Է բոյս ինչ՝ որ առվորաբար՝ ի վեր երևի՝ ի չինաստան իբր ոռնաչափ մի բարձրութեամբ, ցօղուն նորա նուրբ է որպէս զցօրեննոյ։ Ծաղիկն կարմիր, և վեցթեր- թեան։ Իակ արմատն ունի զձև արմատոյ մանրատե- րի, այլ սակաւ մի փոքր է քան զայն. համով է քաղցր, ունելով ընդ քաղցրութեանն և փոքր մի դառ- նութիւն, զոր բնակիչք երկրին ջրատպութեամբ՝ ի վար ար- կանեն ընդդէմ ապականութեանց արեան, ընչարգելու- թեանց, և թունից, և յոտի օդոյ։ Ազին՝ ի 20 ցորե- նոյ մինչև 40։

Նիքօցիա կամ Նիքօթիանա, լտ։ Թաւպաքքօ, իտ. Թաւպա, գղղ. քաբօնէ, յն։ Թիւթիւն, տճ։ տու- խան, կամ Թըպղ, արբ։ տիւտ, կամ Թէմպաքիւ, պր։ և ըստ մեզ՝ ծխախոտ։ Է բոյս ինչ հոչակաւոր, որոյ ցօղունն է երկայն իբր ջղրա կամ հինգ տանե- ջափ, Թանձր, բոլորշի, Թաւամազ, և սպիտակա- Թամբ։ Տերև սորա լայն է, ստուար, Թաւամազ, ժիգոյն կանաչ, ջլալից, և մածուցիկ. համ նորա է տաքուկ, միանգամայն և տազտկացուցուցիչ։ Ծաղիկն ծիրանագոյն, վանդակաձև, և հեռաձոտ։ Պտուղն երկայնաձև, և Թաղանթաւոր, մէջն չերտաւոր, յո- րում բազկանան սերմունք փոքրիկ, և կարմրերանգ։ Իակ արմատն սպիտակ և Թեքալից։ Բուսանի՝ ի պարտէզս, և՝ ի պարարտ տեղիս։ Լի է իւղով և ցըն- դական ազիւ, և ընութեամբ գրգռիչ և սաստիկ լուծիչ

եթէ՛ ի վերուստ և եթէ ի ներքուստ. որ ասէպ ի
կիր արկանի ի գրեխա ի դնպուածս անդուէ որո-
վայնի, փոշտանկուեթէ և փքախտուեթէ. օգտաւէտ
է ընդդէմ ախտնդանոտուեթէ, հնապոյն հարբղևոյ և
ջերմ ի կուրծս, շնչարդելուեթէ, քնապիուեթէ, ընդ-
հատ աեննդից, աքօտպուեթօի, բորոտուէ, և անդա-
մալուծուեթէ, աուեթելոց յուժելուեթենէ, այլև աա-
տակէ զորդուանս և զճճիս որովայնի: Հիւեթ սորա
դեղ է պահպանիչ աոտմանց և ընտերաց ի փտուէ.
յայն աակս ասէպ ծապքեն եբրայեցիք՝ մանաւանդ
անդրնացիք ի տերևոյ անտի: Ալ որպէս հիւեթն՝
նոյնպէս և ծուխ սորին աերևոյ է դեղ օգտակար
ընդդէմ նեխուեթեան ընտերաց. բայց աու հատարակ
աևացուցանէ զատամունս: Ի տերևոյ անտի լոսեալ
ի փուխ մանրատալ՝ քարշեն ընդ ռնդուխս աու ի
վռնչացուցանել, և ի գրգռել զհիւեթս ուղղոյ, և
միանգամայն արծարծել զզօրուեթիս յիշողուեթէ, և
փարատել զծանրուեթիս և զցաւս գլխոյ: Ալև եր-
բեմն ապաքինէ զցաւս աչաց, և ականջաց:

Ունեւիմենթօ. տե՛ս աշխմենթում:

Նուքս. տե՛ս ի ներքոյ:

Նուքս եունկլանս, կամ ըէձիա վուլկարիս, լատ:
նօչէ, իտ: ճէվիզ աղաձը, տճ: սակարտաի իլ ճէօվս,
կամ կօզ, արբ: և բատ մեղ ընկուզենի: Ի ծառ մեծ,
ստաւլից, և տարածուղական. որոյ փայտն է կարծր,
հզօր, տևական, գորշագոյն, և անընդունակ ցեցոյ,
յորմէ կապմեն պէտպէս ձեռակերտս: Տերևք սորա
լայն են և ջլալից, և հոտաւէտ, և բնուեթբ սեղմիչ
և քրտնաբեր: Ծաղիկն դեղին, բազմաթերթ, և
թեփալից: Պտուղն ձուաձև պատեալ երկեակ պատե-
նիւք, կամ կեղևօվք՝ զոր լատինք՝ նուքս կամ նուքս
անուանեն, և իտալք՝ նօչէ, և թուրքք՝ ճէվիզ. և
արաբք՝ կօզ, կամ ճէվիզէ, կամ լէօքս, կամ գէսիֆ,
և կամ ճէօվզ. և պարսք՝ էրսա, կամ թախքէլնւն,
կամ չարբէհլնւ, կամ չորմաղլ, կամ սնքէվան, և կի
կէրտնւքեան. իսկ հայք՝ ընկոյզ: Ադրջին կեղևն
այսր պտղոյ՝ է կանաչ և թամբալից, յորմէ կապմեն
գգոյացուեն, զոր իտալք՝ էսթրաթթօ սի պքօտյա
սինօչէ կոչեն. ի կիր արկանի ի դեղ ընդդէմ երկա-
րատև վորհարուեէ, և լուծման որովայնի, և տկա-
րուեթէ ջլոց, զի է սեղմիչ և խթիչ: Ջատին ի հինգ
կշռոյ ցորենոյ մինչև ցւօ յաւուրն՝ իսաուն ընդ այլ

յարմարագոյն դեղորէից։ Զայս կեղև վարեն 'ի պէտս և ներկարարք։ Իսկ երկրորդ կեղևն կարծր է և գորշագոյն, զոր կուշիօ տի նօչէ անուանեն. ներքին կողմն այսր կեղևոյ է գոյացութիւն ինչ սպիտակ, կաթնահամ, և մաշկապատ, զոր և ուտեն իսկ. յօրինեն նաև զքաղցրաւենի ինչ պատուական. զոր 'ի վար արկանեն ընդդէմ ցաւոց և վիրաց բերանոյ. ունի և սա ըստ ոմանց զմասնաւոր գործունէութիւն 'ի սպառել զապականեալ հիւթս մարմնոյ, և 'ի գըրդռել զսաղմն։ 'Ի պտղոյ աստի ելուզանեն զիւղ ինչ. զոր վարեն իբր դեղ ընդդէմ խթից արդանդի, և որովայնի, այլև օգնէ ծնանօղ կնոջ։ Այս ծառ բուսանի յանտառս, 'ի բուրաստանս, և յայլ պարարտ տեղիս, որոյ կեղև բնոյն փոշիացուցեալ և արբուցեալ, դեղ է տկարութեան ստամոքսի և փսխման։ Չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց60, և զարմատ սորա նոյնպէս 'ի գործ ածեն 'ի դեղ ցաւոց յօդուածոց։

Նուքս վօմիքա, լտ։ Նօչէ վօմիքա, իտ։ գառկա պիւքէն, տճ։ գիշլէ, կամ իքսառիւլ մէլիք, կամ գիւշլէ, կամ խուպուպիլ ղուռապ, և կամ ճէվիզէ իլ գայ, արբ։ Ֆաթ, կամ գիւսիլա, պր։ և ըստ մեզ ստուգաբանի՝ ընկոյզ ործացուցիչ։ Է պտուղ ինչ տափարակ, բոլորշի, լայն, կարծր, թաւամազ, արտաքուստ մկնագոյն կամ մթին դեղին, իսկ 'ի ներքուստ թուխ, կամ գորշագոյն, ունի և կորիզ։ Սա է յատուկ թոյն վասն շանց, կատուոց, աղուիսուց, և այլոց քառոտանեաց, և ոմանց թռչնոց. որք յուտելն մեռանին չարաչար։ Բազում բժիշկք եւրոպիոյ, մանաւանդ պռուննէռ՝ հաստատեն, թէ օգտաւէտ է սա 'ի դիպուածս միջահատական տենդի, անդամալուծութեան, մոլեգնութեան, ախոնդանոտութեան, ախտից արդանդի, միզահոսութեան, և թուլութեան միջաց, և այլոց անդամոց. բայց առցի մի՛ աւելի քան զչորս ցորեան առ մի նուագ. և տացի երկու կամ երեք ժամ միջոց ժամանակի ընդ մի և ընդ միւս ըմպումն այսր չափոյ, միայն թէ կրկնելի է այդ գոնէ մինչև 'ի չորս օր։ Այլ եթէ ոք ուտիցէ զսա արտաքոյ քան զչափն պայմանեալ, բազում անգամ պատճառէ զործումն, և զլուծումն որովայնի, և երբեմն և ս զմահ։ Այս պտուղ լինի 'ի բազում տեղիս արևելեան հնդկաստանի, և ասեն, թէ արտադրի 'ի յոստս տնկոյ միոյ կոչեցելոյ 'ի բարբառ եւրոպացւոց՝ Ֆլօ-

ռէ տի մալաբար, որ յաճախեալ է 'ի կողմանս յայնոսիկ, զոր քաջ ճանաչեն բնակիչք տեղեացն:

Նօլի մէ թանճէրէ, լտ: ինճիթմէ պէնի, տճ: և ըստ մեզ ստուգաբանի՝ յիս մի՛ հպիր, որով նշանակի ախտ կամ խոց ինչ դժնեայ, որ արտադրի յանդամս մարդոյ 'ի յոռի հիւթոց: Դարձեալ, այսու անուամբ իմանի և՝ ազգ ինչ բուսոյ, որ է օդտակար վիրաց և խոցից:

Նօչէ. տե՛ս նուքս:

Նօչէ մօսքաթա. տե՛ս միրիսթիքա մօսքաթա:

Նօչէ վօմիքա. տե՛ս նուքս վօմիքա:

Նօչէ տի չիբրէսսօ. տե՛ս քուբռէսուս:

Նօսթալճիա. տե՛ս ֆօլլիա:

Շ

Շէլէրօ. տե՛ս աբիում:

Շէքաքհուլ, կամ սիսարում, լտ: Է բոյս վայրի, զոր արաբացիք լօքաքիում, կամ լիքիմում, և կամ ալիթհիմում անուանեն, որոյ ցօղունն է ծնրաւոր: Տերև սորա նման է տերևոյ բևեկնոյ: Ծաղիկն՝ մանուշակի. իսկ հատն՝ ոլեռան: Բուսանի 'ի մարդագետինս, և 'ի հովանաւոր տեղիս, որոյ հատքն եփեալ 'ի ջուր և արբուցեալ, դեղ է ապականութե՛ և նուազութե՛ սաղմի. այլ և ցրուէ զգոլորշիս արգանդի, և գրգռէ զդաշտանս կանանց, որով և պատրաստէ 'ի յղութի՛: Զնոյն գործունէութի՛ ունի նաև արմատն:

Շիաթիքա. տե՛ս իսքիաս: Դարձեալ, է անուն երկու երակաց կրնկան ոտին:

Շիալիվա. տե՛ս սալիվա:

Շիարաբբա. տե՛ս եալաբա:

Շիէնա, կամ ումպրա, և կմ ումպրինա, լտ: Է ձուկն ինչ ծովային, սկսեալ 'ի 5 լտերէ՝ գտանի մինչև տասն օխայ մեծութբ. գլուխ նորա մեծ է և թանձր, ատամունքն երկայն, նուրբ, և սայրասուր, թեփ մորթոյն խեղաթիւր, կարմիր, կամ ոսկեգոյն. 'ի թիկունս ունի երկու փուշս կարծր, և սրածայր,

զօրէն վշտաց քօսաչինաւս յորջորջեալ ձկան. եւ ոմանք հաւեղ և գիւրամարսելի: Ի գլխոյ նորա եւանէ քար ինչ սուսար, և կարծր, զոր երբ դեղ ի վար արկանեն ընդդէմ միզարգելութե, և լուծանէ զքար, եթէ գոյն ընդ անցս նորա: Ձափն ի 20 ցորեանոյ մինչև 40 չաւուրն:

Շիլինկուանօզ. այսու անուամբ ցուցանի՝ մաշկային կապ ինչ լեզուին, որ զետեղեալ կայ ի ներքոյ նորա, զոր հատանեն առ ի բանալ զարդելս լեզուի, ամին երի կոչի և լեզուակապ:

Շիլա, կամ շիլա մատիթիա, և կամ ռատիքա շիլա, լս: շիբօլա ան շիլա, կամ սգուլլա, կամ օձնիթօ կալա ան մատէ, իս: առա ատզանը, տճ: անատւլ, կամ պատալ իլ պահր, և կամ պատալ իլ ձէպէլ, արբ: բէհեամուշ, պր: և լատ մէզ՝ մինատիս, կամ ատիս ծովային: Ե արմատ հռչակաւոր՝ նման ընդ ատանի ատիոյ՝ ըստ ձևոյն և ըստ գունոյն, որոյ վանն և կոչեցաւ յանուն նորա, այլ մեծութեամբ ի չափ գլխոյ մանկան. իսկ համով գառն, միանգամայն և կծիզ, կիս փաղաղիչ, բայց ունի զմանաւորն գործոյ նէութե ի փարատել զչորգողութիս կրծոց, զնոցանս աւիշիւեան մանանց, զհազս թոքային, զթոքաժէտութիւն, զննջարգելութիս, և զայլ ախտս կրծոց. զի է անօսրիչ, մեղմիչ, և բացողական բնութե, որով և բանոյ զդաշտանս կանանց, և զանցս միզի: Ի սմա նէ կազմեն զքացախասթան, զոր իտալք կոչեն՝ օսմէլե շիլիթիքօ, զոր օրէն է ի կիր առնուլ ըստ չափոյ դրգալի աեղանոյ ի պահ առաւօտուն, միայն եթէ կրկնելն է այդ մինչև ի քան օր. երբեմն և սա կազմեմք հապա ի վերոգրեալ արմատոյ, զորոյ ընդ չինելոյ կերսն մարթիս սեասանել հա. ա. երես 158: Իսկ եթէ ոք կերիցէ յարմատոյ սատի առաւել քան զափն պատմանեալ, յայնժամ վազվազակի առնէ զանատոկալն խէթս ստամոքսի և որովայնի, զուժգին ցնցուն ջղաց և միանանց, զբորբոքումն ստամոքսի, և երբեմն և զմահ, զի է թիւնաւոր, և փաղաղիչ բնութե: Տերևք այսր արմատոյ են երկայն նման ընդ ատանի, և չոր ևս մանուչափ, պարարտ խժայ են, և գառնահամ, և ի միջի տերևոց ելանէ ցօղուն մի և կէս ատանուչափ բարձրութե, որ ի գագաթան բերէ գնատակաձև, և սպիտակ ծաղիկ ինչ վեցթերթեան, բերէ և զսերմունս մանուկս և սեաս: Բուս

ատնի յեզերս միջերկրական ծովու :

Ընկոյս կամ շնամիօնէ . աւս սիմիա :

Ընկուս , կմ շնկուս մարինուս , լտ : շինքօ , իտ : ատնկատգուր , ոմ : Ի սեսակ մի մոլէսի , յատճախել առ նեղոսիս , երկայն իբր ձեռաչափ , և ստուար բնաչափ . գլուխն նորա մեծ է առ համեմատուելոյ մարմնոյն , աչքն փոքրիկ , և թափանցիկ . ընչացքն սրաձայր , թեփ մորթոյն արծաթապոյն , որովայնն լայն , սրունքն կարճ իբր բնաչափ . իսկ տուան կարճ և բոլորակ : Գտանի նաև յարաբիա . լի է խաղով և ցնդական աղիւ . որ է դեղ ընդդէմ թունաւորեան ջրոց , և թունից . զի է քրանաբեր և սալմնաձգոյիչ բնուեան : Ձափն ՚ի 20 ցորեանոյ մինչև 40 , կամ 60 :

Ընկօ . աւս չինքուս :

Ընրուս , լտ : չիուռօ , իտ : չիշ , կամ խամուռ , ոմ : աքիուօս , ին : և ըստ մեզ՝ խոյլ . որով նշանակի ուռոյց ինչ կարծրապինդ՝ բայց անցաւ , ՚ի վեր երևեալ ՚ի խցմանէ և ՚ի վատթար հիւթոց :

Ընրօքսօ . աւս սիրուք :

Ընօ . այսու անուամբ ըստ անդամազննաց խմանի ոսկր ինչ զեսեղեալ կից յատկս միջնոցին ՚ի մէջ երկուց անանուն ոսկերաց : Կոչի և սքիօ :

Ո

Ոլբուրա , լտ : պուպիօլա , իտ : էրօքա , ին : հիւատհիւա , կամ չավուշ գուշու , ոմ : բուպէշ , պր : և ըստ մեզ՝ յոպոպ : Ի թռչուն ինչ մեծ քան զծիտ , և փոքր քան զտատրակ , թևք նորա և ոտք են խայտաբղէտք . իսկ մնացեալ մասն մարմնոյ բոլորովին մուխրագոյն , կատուցն երկայն , սրունքն կարճ . իսկ ՚ի գլուխն ունի կատար ինչ խայտ , և թափաձև , զոր անջատել պահեն ՚ի գլուխ՝ առ ՚ի բուժել զանգալ , որ է ցաւ կխոց գլխոյն : Իսկ մին սորա լինի դեղ խցանաց , և ցաւոց որովայնի :

Ոլթէրուս , լտ : ուլթէրօ , իտ : չօճուկ եաթաղը հիւատհիւա , կամ չավուշ գուշու , ոմ : ուժմօռ վէլէա , պր : և ըստ մեզ՝ յոպոպ : Ի թռչուն ինչ մեծ քան զծիտ , և փոքր քան զտատրակ , թևք նորա և ոտք են խայտաբղէտք . իսկ մնացեալ մասն մարմնոյ բոլորովին մուխրագոյն , կատուցն երկայն , սրունքն կարճ . իսկ ՚ի գլուխն ունի կատար ինչ խայտ , և թափաձև , զոր անջատել պահեն ՚ի գլուխ՝ առ ՚ի բուժել զանգալ , որ է ցաւ կխոց գլխոյն : Իսկ մին սորա լինի դեղ խցանաց , և ցաւոց որովայնի :

Ոլթէրուս , լտ : ուլթէրօ , իտ : չօճուկ եաթաղը հիւատհիւա , կամ չավուշ գուշու , ոմ : ուժմօռ վէլէա , պր :

և ըստ մեզ՝ արգանդ. որ է անուն նշանակիչ յատ-
կապէս զաւակատանն իգաց:

ՈւԹէրօ. տե՛ս ուԹէրուս:

Ուլիվա. տե՛ս օլիվա:

Ուլմուս, լտ: օլմօ, իտ: փԹիլէա, յն: դառա
աղաճ, տճ: տիւրտառ, կամ շէճառաԹիլ պէհուտ,
կամ շէճառաԹիլ պաղք, արբ: Թաղկ, կամ Թակս-
տան, և կամ նաղ, պր: և ըստ մեզ՝ կնձնի: Է ծառ
մեծ, կարծրաբուն, խստակեղև, հիւԹալից: և խժա-
բեր, բուսեալ 'ի լերինս և 'ի դաշտավայրս. որոյ
տերևն է լայն, սրածայր, ջլալից, և շուրջանակի
սղոցաձև ատամնաւորեալ. զոր եփեալ 'ի ջուր և
եդեալ 'ի վերայ վիրաց, քարշէ զշարաւն, և մեղմէ
զցաւն: Զնոյն դործունէուԹի ունի նաև կեղևն:

Ուլնա, լտ: պռաչչիօ, իտ: բազը, կամ գօլ քէ-
միկի, տճ: և ըստ մեզ՝ բազկոսկր: ըստ անդամազննաց
է մեծագոյն ստեղն, կամ ոսկրն բազկին:

Ուլնուս, կամ ուղիղ ևս՝ վուլնուս, լտ: բլակա,
կամ բիակա, կամ ուլչէրօ, իտ: սբիրիա, յն: եարա,
տճ: ճէռհ, արբ: զախմ, կամ րիշ, պր: և ըստ մեզ՝
վէրք, կամ խոց, և կամ խոցուած. տե՛ս զայս հտ.
ա. երես 398:

Ուլչէրօ. տե՛ս ուլնուս:

Ուլչէրէ վէնէռէէ. տե՛ս հտ. ա. երես 363:

Ուկօլա, իտ: ուվա, լտ: տիլճիկ, տճ: և ըստ
մեզ՝ լեզուակ, կամ մակալեզու, և կամ կողկո-
ղիԹ:

ՈւմիտիԹա. ԹացուԹի կամ խոնաւուի մարմնոյ.
տե՛ս և հումօռէս:

Ումպիլիքուս վէնէռիս, լտ: օմպէլիքօ տի վէնէ-
ռէ: Խոտ ինչ է բուսեալ 'ի վերայ տանեաց և որ-
մոց:

Ումօռէ. տե՛ս հումօր:

Ումօռէ նաԹուրալէ. նոյն է ընդ վերնոյն:

Ումօռի ռէքռէմէնԹիցի: Այսու անուամբ նշա-
նակին զտական հիւԹք մարմնոյ, որք յետ զատանե-
լոյ իւրեանց յարենէ՝ միւսանդամ դարձեալ խառնին
ընդ այնմ, կամ մնան 'ի մասունս ինչ առ զանազան
պէտս:

Ումօռ սալսօ: Աղի հիւԹք մարմնոյ:

Ունիքօռնիս. տե՛ս մօնօչէռօս:

Ունիօնէս. տե՛ս մարկէռիԹա:

Ունկիա. աւե՛ս ունկուա՛ս:

Ունկիա տ' ալէ. աւե՛ս ալէ՛ս:

Ունկիէլա. այսու անուամբ նշանակի՝ ընդալմա՛ցուն, կամ կարկամիլն մատանց հանդերձ անհնա՛րին ցաւովք՝ առնել 'ի սատակ ցրտոյ:

Ունկուա՛ս, լս: ունկիա, կամ ունկնա, իտ: Թըռ՛նատ, տճ: տօֆը, արբ: օնկա՛ս, կամ նիօ, չն: նա՛խուն, պր: և ըստ մեզ՝ եղունգն:

Ունկուա՛ս ալէ՛ս. աւե՛ս ալէ՛ս:

Ունկվէնթուա՛մ, կամ ունկուէնթուա՛մ, լս: ունկուէնթօ, իտ: մէհլէմ, արբ, և տճ: և ըստ մեզ՝ ապեղանի: Ի անուն սովորաբար նշանակիչ ամենա՛կերպ վիրապական օծանելեաց, որք լինին մեղմա՛պէս կակղապոյն, ո՛չ յոյժ հեղուկ, և ո՛չ կարի թան՛ձրամած. որոց իւրաքանչիւրքն որոշին 'ի միմեանց յատկացուցիչ անուամբ, և զօրութի՛ք: Եւ են բազ՛մատեսակք, բայց մեք սատանօր դէցուք զատաւել գործուներայս, և օգտաւէտագոյնս, զորս գնեն 'ի վերայ խոցից կամ վիրաց սա 'ի մաքրել և յինքն ձգել ջրարաս, և 'ի բուժել զնոսա:

Ունկվէնթուա՛մ աբօսթօլօուա՛մ, լս: ունկուէնթօ սէլի աբօսթօլի, իտ: հավարիօն մէհլէմի, տճ: և ըստ մեզ սատագաբանի՝ սպեղանի առաքելոց: Յոյժ մեծ՛նաւոր է սորա գործուներէն՝ 'ի մաքրել, և 'ի սպա՛ռել զմսամոլեալ մատունս վիրաց, և միանգամայն բուժել զնոսա: Ջոր զայս օրինակ կազմեն: Ա՛ռ՛ջոր ունկի՝ դնեն մեղրամոմ, և ջրեքտասան տրամ՝ թրէմէնթինա, և նոյնչափ՝ կումմի ամմոնիակ՛ի. ա՛ռ և կէս ունկի՝ խունկ փոշիացուցեալ, և նոյնքան՝ պտէլլի. և մի և կէս ունկի՝ կալպանօ, և նոյնչափ միւռռէ. ջրեքտասան տրամ՝ ըէզինա վինուա, և երկու լիտր՝ ձէթ ձիթենեաց, այլև 9 տրամ՝ լինդարձիրի սուռի, երկու տրամ օթօթանա՛կիս, նոյնչափ վէռռէ ռամէ, և վեց տրամ՝ արևա՛թօլքիա ռօթունուա փոշիացուցեալք: Ջամենեքեան զատա օրէն է լուել յանկանի, նաև ղեւղն, և զհնէժ՛ան դնցես պուտամբ առընթեր հրոյ, և յորժամ սկսանի եռալ, ա՛րկ 'ի նա հետ ղհնէժ զպատրաստեալ նիւթան, քաց 'ի ընդարձիրի սուռի՛ն անուն, և 'ի ձիթոյ, զոր պարտ է եռացուցանել ընդ մի լաւ ջրոյ, և դնել յետ ամենեցուն. այլ խառնել է անընդհատ ծայրիւ փոքրիկ ինչ ցպոյ՝ մինչև 'ի կա-

առբիլ զանգուածոյ բալատրուԹեան , և կատմել զապեղանի ըստ կանոնաց արհեստին : Յետ այնուհետ դիր զապեղանիս զայս յանօԹ ապակի քաղ խցեալ ապակի խփով :

ՈւնկվէնԹում ալԹհէա , լտ : ունկուէնԹօ՝ ալԹհէա , լտ : հաԹէմ մհղէմի , կամ եաղը , տճ : աւհնի խաԹմիա , արբ : և ըստ մեղ՝ ապեղանի տղայ . որ՝ է վար արկանի մանաւորապէս առ՝ի կակղել զուռայդ, և վկարծրացեալ մասունս մարմնոյ , այլև՝ի մեղմել զցաւս կշտաց , որ այս կերպ յօրինի : Ա՛ռ երկու լեալ՝ արմատն տղայ , մի լեալ՝ սերմն կտաւատի , և նոյնքան՝ սէմի տի ֆէնի կրէքօ , և եփեա զայս քան և մի լեալ հաւարակ ջրով . մինչև՝ի պակասիլ երրորդ մասին՝ի ջրից մասանց անտի . ապա Թող առ՝ի հանդչիլ , և քամեա զխժային հիւԹն զգուշութիւ . յետոյ դիր մեսանդամ՝ի նոյն հիւԹ ջրալեալ ձէԹն ձիԹենեաց , և եռացո զայն՝ի հուր՝ մինչ չէ՝ի սպառիլ խոնաւուԹիւն . յետոյ յաւէլ՝ի նա մի լեալ՝ մեղրամոմ դեղին և մաքուր , և վեց ունկի՝ բաճիա տի բինօ , և երկու ունկի՝ ԹէրէմէնԹինա : Եւ զկնի եփելոյ զայն փոքր ինչ , զի ինքնին Թանձրացի , օրէն է հեղուլ յանօԹ ապակի՝ի պահեստ :

ՈւնկվէնԹում բօբուլէում, լտ : ունկուէնԹօ բօբուլէօ , իտ : Է սպիտ ինչ ապեղանւոյ , որ զայս օրինակ կազմի : Ա՛ռ երկու լեալ՝ ձարտ խազն , և մի լեալ՝ ձէմմէ տի բիօբօ , (այսինքն Թարմ ընձուղն կաղամախւոյ .) և մանր ջարդեալով զայն՝ի մէջ անոնց՝ զանգեա ընդ վերոյհիշեալ ձարտոյ , և դիր՝ի յարևու զաւուրս քառասուն . ապա յաւէլ՝ի նա զեղևն լաՀուէքքաի , զեղևն ճիուպուամի , զեղևն մանտրակօրաի , զեղևն բաբավէրօ էաւԹէքօի և բաբավէռօ հէռԹէնաէի , զեղևն սէմբուէվիվօ մինօռի , և մաճատի , զեղևն վիօլէի , և օմպէլիքօ տի վէնէռէի , և չիմէ տի ռօլօ , և զարմատն պալանաի , յիւրաքանչիւրոցն երեք ունկի : Զայս ամենայն ջարդեալ և խառնեալ ընդ վերոյասացեալսն նիւԹոյ , դիցես մեսանդամ յարևու երբ աւուրս քան : Եւ յետ այնր յաւէլ՝ի նոյն երկու լեալ՝ պէնի սպիտակ . յետ որոյ պարտ է եփել և եռացուցանել զայն՝ի հուր ԹեԹև՝ մինչև՝ի պակասիլ խառնուԹէ . և ընդ առնուլ՝ի քաց՝ի հրոյն՝ այրկ յանօԹ

ասպակին ՚ի սահեատ, և լինի դեզ ՚ի դիպուածս բոլ-
քոցման աւենդից, օծանելով այսու զքուն[ի]քս, այսինքն
զմեան դիմաց ընդ ակն և ընդ ունկն, յորմէ պատճա-
ռի անվնաս քուն ինչ շահաբեր. և ՚ի մանաւորի
օգտէ խթից արբանին, և կոյր թանչից, օծանելով
և եթ զայնս. զի ե մեղմիչ, կազդուրիչ, և խաղաղիչ
բնութ[ե]ան:

Ունկվէնթում էճիբցիաքում, լտ: ունկուէնթո էճիցիանո, իտ: Սպեզիանիս այս գերահաչակ է ՚ի մա-
սին ներգործութեան, զի մաքրէ զինեխեալ վէրս, և
կցեալ միաւորէ զնոսա. զովացուցանէ և զդմնեայ
բոլքոքմունս խոցից, և կազդուրէ զցաւս կոյրթան-
չից, որ այսպէս բուժեցին: Առ 14 ունկի՝ մեղր
ապնիւ, եօթն ունկի՝ քարկ ջացախ, լից ՚ի պոյան,
և դիր զայնս ՚ի վերայ թեթև հրոյ, մինչև եռասցին:
ապա արկ ՚ի նա հինգ տրամ փոշիացուցեալ վէռոե
ռամէ, և միանգամայն մեղմ և անզգայ խառնեա
զայն ծայրիւ ցպոյ՝ մինչև փոշիք վէրսե ռամէի բա-
րիոք զանգեացին ընդ բուժեցեալ զանգուածն.
և յետ այնր օրէն է հեղուլ յանօթ ապակեայ ՚ի
պահեատ. որ լինի և դեղ խղնայթի, և վերաց որկո-
րոյ, օծանելով և եթ զայն:

Ունկվէնթում էնուլաթում, լտ: ունկուէնթո ո՛ էնուլա քամբանա, իտ: անոզ մէհլէմի, տճ: է ապեղանի ինչ բուժեցեալ ՚ի մի և կէս լիտր՝ էնուլա քամբանա արմատոյ լսեցելոյ, յերեք ունկի՝ անդկէ, ՚ի նոյնչափ՝ թէրէպէնթինաէ, յերկու լիտր՝ ասուն կա ասուլլաէ, և ՚ի յերեք ունկի՝ խաղող օշինդրի: Զանգինն արկ ՚ի քարեայ անկանէ, արկանելով ՚ի նա զթէրէպէնթինան, և տրտրեալ հարեա ընդ հինգ կամ ընդ վեց ժամս անդադար, մինչև անհետ լի-
նել գլխովին գնատակաց անդկէն: Ապա յաւել զինա-
յել նիւթան հեռզհեռէ՝ խառնելով զայն անընդհատ
անդխտուռամբ, և ապա արկ զայն յանօթ ապակեայ.
և լինի դեղ բորոտութե, կամ քոսութեան, ախտ
ելեփանդականէ, և պէտ վերաց կամ ախտից մորթոյ,
օծանելով և եթ զայնս երկու անգամ յաւուրն:

Ունկվէնթում մէրքուրիալէ, լտ: ունկուէնթո մէռքուրիալէ, կամ ունցիոնէ մէռքուրիալէ, իտ: ժիվա մէհլէմի, տճ: ռուսասանի ախյմապ, ապր: և յա
մէջ անգկաւ պատրաստեալ օծանելն, բուլպատրեալ
յերկու ունկի անգկէ, զոր խառնացեալ՝ մէռքուրիո

անուանեն, 'ի մի լինալ՝ ձարպոյ խոզին, և 'ի կէս ունկի ծծմբոյ լուսելոյ: Աւրէ՝ զայն անդրիկ պարտ է զանգել և տրտրել անդադար 'ի մէջ քարեայ սանդի ընդ վերոգրեալ ձարպոյ և ծծմբոյ, մինչև աներևոյթ լինին գնդակքն անդրկի: 'Ի կատարել այսր առնելոյն՝ օրէն է ընուլ յատակեղէն անօթ և պահել, և ըստ պիտելոյն 'ի վար արկանել: Սա վասն քուռն և Թաւխանցիկ զօրութեանէ իւրոյ մտանէ ընդ առնելոյ մանր ծակոխ մորթոյ և երակաց, և դիւրաշարժ յօրինէ զչըլլան արեան, որով և ցրուէ զսխտարծարծ հիւթս խառնեալս յարեան. քաղցրացուցանէ զարիւն 'ի վավաշոտ տախտ հիւթոյ, և առնէ զլորձուն. այլև բուժէ զվէրս և զայտուցս ելեփհանդականս, որք 'ի վեր երևին 'ի բերանս, 'ի յորկորն, յերեսս, յառնէ անդամս, և յայլ մասունս մարմնոյ: Մեծապէս օգտաւէտութիւն այսր ապեղանւոյ զվորձ առեալ եմ բազում անգամ, որպէս և կարծեմ, և միանդամայն հաստատեմ եթէ 'ի ներկայ դարուս չէք բնաւ զօրէն սմին այլ օծանելի շահաւէտագոյն ընդդէմ վերոյիշեալ ախտից, զորոյ զգործածութիւնն, կամ զկիր բառութիւնն մարթիս տեսանել հա. ա. 'ի առաջագրութիւնէ ախտի գաղղիականին, և 'ի մասնաւորի միզագելութեանէ և ախտի լերդի՝ առնելոց յուժգնութիւնէ բնութեանէ, զի է Թուլացուցիչ բնութեամբ:

Ունկվէնթում մէդքուրիալէ ռօթառում, լատ: ունկուէնթօ մէդքուրիալէ տէլ ռօթարիօ, իտ: այլ լին կերպ անդիաւ պատրաստեալ ապեղանւոյ, որ առաւել ազդու և զօրաւոր է քան զնախընթացն. զոր մարթ է կազմել յեռատգոյ եղանակաւ: Առ եղ կոճ ունկի՝ Թարմ Ճարպոյ խոզի, որ չնցէ խառնեալ ընդ աղի. և եդեալ զայն յատկիկած պղոյն, մերձեցո 'ի հուր. յեռ եփելոյ ըստ բաւականին, քամեա զայն կտաւով 'ի քարեայ անկանի, յաւելուլ 'ի նոյն մի ունկի անդիկ մաքուր, և անընդհատ սրսրել խառնեա զայն ընդ երկար սանդիատամբ, մինչև գնդակքն անդիկն բարւոք զանգեացին ընդ Ճարպոյն, և առ այլ կանօթ ապակեայ 'ի պահեստ: Այլ գործածութեանն սորա չէ ինչ տարբեր 'ի գործածութենէ վերոգրեալ անդիաւ պատրաստեալ ապեղանւոյ, որպէս և նեղգործութեանն նման է նեղգործութիւնն նորա, բայց միայն կարի զբաղագոյ է քան զնա առաւելութիւնն անդիկին որ 'ի նմա:

ՀՀ ԳՐՔԱՏՈՒՆ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ՄԵՐՁԱՒԱՆ ԻՆՁՒՎԵՄԱՆ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՎԻՒ

✝ Ոևնկվէնթուամ նէռվինուամ, լո՝ սպեղանիս այս անհրաժեշտ է թուլութենէ ջղաց, անդամալուծութենէ, և անբնական, կամ բռնի շարժման ջղաց կամ մկանց մարմնոյ, օծանելով զայն յողնայարս, ՚ի թէ կոնա, յօսա, և յայլ վշտապնեէ մասունս մարմնոյ: Եղանակ հազմելոյ զսպեղանիս սորա. առ մի և կէս ունկի՝ դեղին մեղրամոմ, և մանր հատանելով զայն՝ լիցս ՚ի պղոյն. մերձեցո ՚ի հուր, յոր յաւէլ հալեալ ձարպն բադու, և ալուեստու, և սապի, և ջան, և կատուի, յիւրաքանչիւրոցն մէն մի ունկի. այլ և յաւէլ ՚ի նա երեք ունկի՝ ունկուէնթօ ոի ալեհէտ. մի ունկի՝ իւղն երիցկի, և նոյնչափ՝ դաբնուոյ. մի և կէս ուրամ՝ իւղն քարի, զոր կոտորէք օլիս ոի բիւզնթրա անուանեն, և նոյնքան՝ օլիս ոի սբիկս. ապա և մի և կէս ուրամ՝ օլիս ոի էուֆոռպիս, և նոյնչափ՝ թրէմէնթինա, և նոյնքան՝ իւղն ձէթւոյ: Բայց պարտ է եփել զայս ամենայն ՚ի հուր ածխոյ, և ոչ հատարակ վտակ: Զկնի եփելոյ քամ բուսականին՝ քամեա զայն ցանցատ կտաւով յանօթ ինչ ապիկած, կամ լաւ և յատակեալ անօթ ՚ի պահեստ:

Ոևնկվէնթուամ պալսէմիքուամ, կամ ունկուէնթուամ սուբբուրաթիուամ, լո՝ ունկուէնթօ ոի պալսէմիքօ, ևս՝ պատասպ մէհլէմի, տճ: Սպեղանիս այս սովորաբար ՚ի կիր արկանի ՚ի վիրաբուժից ՚ի պնդացուածս ամենակերպ վիրաց և ուռուցից, յորոց յինքն ձգէ զթարախեալ հիւթս մարմնոյ, և առաջացուցանէ ջերմուկս, և միանգամայն հատուցանէ զպալարս: Ար այսպէս բաղադրի: Առ երկու և կէս լիտր ձէթն ձիթենեաց, և լիցս զայն ՚ի պղոյն, արկանելով ՚ի նա և զդեղին մեղրամոմ, և զձրագուս, և զկապրաձիւթ հանքային, և զուէզվինա, որ է խէժ սոճւոյ, յիւրաքանչիւրոցն կէս լիտր: Ապա մերձեցո ՚ի հուր թեթև աւս ՚ի եփել. և յորժամ հալի այն, լիցս ՚ի նա կէս լիտր՝ թրէմէնթինա, և միանգամայն մեղմ և հանդարտ խառնեա զզանգուածն ծայրիս ցպոյ՝ մինչև ՚ի զանգիլ բարիոք ընդ միմեանս: ՚Ի լրանալ այսր ամենայնի՝ պիտի դնել յանօթ ապիկած՝ և պահել, և ի պիտելոյն ՚ի գործ արկանել:

Ոևնկվէնթուամ ոիճէոլէթիվուամ մագնեզիաէրիալէ, լո՝ ունկուէնթօ ոիճէոլէթիվօ մագնեզիաէրիալէ, ևս՝ Սպեղանիս այս մաքրէ զինեխեալ վէրս, գիւրացատրաստ ած զբուրուաց, և միանգամայն ամլացուցեալ բուժէ

ինոսա: Կերան՝ ի կազմել զայս սպեղանի. ար մի լիտր՝ օլիս ուօզաթի, և լից զայն ի պղտան. ապա մերձեցո ի հուր՝ բայց արկ ի նա կէս լիտր՝ զսպէտակ և զանխառն մեղրամոմ ջարդեալ ի մանուշնա մանուշնա. և յորժամ հալի այն՝ լից ի նա մի լիտր թրէմէնթինա. յետ պղպջելոյ ար ի բայց ի հրոյն, և թող այնպէս ելը ժամս երկուս՝ մինչև ինքնին սառեսցի: Յետ այնորիկ պարտ է լուանալ զայն ջրախոտի ջրով. զոր նախ՝ պքպուսատի բնանթաճճինէ անուանեն, զի կարի օգտաւէտ լինիցի սպեղանին, և ապա արկ յանօթ ապակեայ ի պահեստ:

Ընկվէնթում ուի չէրուսաէ կամ ալպուսմ, լո: ունկուէնթօ ուի չէրուզա, նա: նուսխուէնթ մհնվէմի, ած: Սպեղանիս այս հովացուցանէ զդժնեայ բորբոքմունս վիրաց. ջրացուցեալ ապաքինէ զբերթեալ մորթս մարմնոյ, վերստաէ զբորոտութեն, և զմալը մանջուճն մորթոյ, և միանգամայն օգտէ լեթև վիրաց, և էխզոդանութենեց հրոյ, որ այսպէս բռնադրի: Ա՛ռ երկու լիտր՝ ձէթն ձիթենւոյ, որ բաղադրեալ եցէ վարդիս, և եդեալ զայն յապակեայ պոյան, մերձեցո ի հուր թեթև, և յորժամ սկսցէն առնէ եփիլ, արկ ի նա կէս լիտր՝ սպիտակ մեղրամոմ, և ութ ունկի՝ չէրուզա վէնէթա՝ լուեալ ի վոշխ մանրամաղ, այլ խառնելն է անընդհատ ծայրիւ վոքրիկ ինչ ցպոյ՝ մինչև ի զանգիլ բարիոք ընդ միմեանս: Ապա յառնուլն ի վեր զպոյան ի հրոյն՝ արկ ի նա ունկի մի՝ քափուր, (զոր պարտ է քեզ կանխաւ հալեալ կամ լուծանել վոքր ինչ կրկնահան ցքեաւ). և յետոյ լից զսպեղանիս զայս յանօթ ապակի քաջ պնդեալ խփով:

Ընկվէնթում ռացիօնալ, լո: ունկուէնթօ ռացիօնալէ, նա: սուրուր մհնվէմի, ած: Ն սպեղանի ինչ բաղադրեալ ի վեց ունկի՝ ունկուէնթօ րօզաթօ ուի մէզուէ անուանեալ սպեղանւոյ, ի նոյնաքանակ՝ ունկուէնթօ ած սուքիէ, ի մի լիտր՝ խզոյ քաղցր նշոյ, ի վեց ունկի՝ դեղին մեղրամոմէ, և ի յերկու ունկի՝ մէդքուանւօ բուէնբենթաթօ րօսաօէ: Ջմեղրամոմն, և ղնւոյն նշոյ գին՝ ի միասին ի մի պոյան, և հալեա առ թեթև հրով. և յորժամ սկսցէն առնել պղպջել, բաւական համարի եփն, յոր յառեալ սպեղանին (այսինքն ունկուէնթօ րօզաթօ, և ունկուէնթօ ած սուքին): Եւ յետ եփելոյ զայն վոքր ինչ

և ա, 'ի վէր առ զպղոյն 'ի հրոյն՝ և ցանեսջիր 'ի վէրայ զմանրատամնոզ լսեալ մէգքուրիս բուէջիթիաձօռասօն, և խառնեա այնչափ, մինչև 'ի զանգիլ բարուղ ընդ միմեանս: Յետ այնորիկ պարտ է վերատին եփել և եռացուցանել զայն վոդքր ինչ, զի բարուղ զանգեացի կարմրացուցեալ անդիկն, և ապա լիցս յաղնօթ ապակեայ 'ի պահեստ. և լինի դեղ օգտաւէտ ամենայն տեսակ ախտից մորթոյ, զորօրինակ դժնեայ բորոտութիւնէ, քոստոտութիւնէ, ոլքինոյ, կարծրութիւնէ մորթոյ, և ա կարմրութեանց. այլև ապատեալ ծախէ զսեւերտդ մատունս մատամոլեալ վիրաց օծելով և եթ զայն երկու անգամ յաւուրն: Նոյնպէս և ապառեալ փարատէ զայտուցս, որք ապականեալ խանդարեն զմորթս: Ընդ այսոսիկ գիտել պարտ է, զի ջանին կարմրացուցեալ անդկի, որ մանէ յայս բաղդրութիւնէ, կարէ այլայլել ըստ տեղւոյն, և ըստ ախորժանաց զօրութիւնն, և ներգործութեանն՝ զոր ինդրէ ոք, որում լինի կարի կամ նուազ զօրեղ. նէր զի 'ի կամիլն գործել զսպեղանիս բուսն և ազդու, պէտ կարմրացուցեալ անդկին պարտ է առաւելուլ: Կամ 'ի ինդրել անդ՝ զի լիցի մեղմ և թեթև, պիտի նուազել զչափ նոյն նիւթոյն:

Ընկվէնթում ոզաթում, լա: ունկուէնթօ ոզաթօ, խո: կիւլ մհղէմի, տձ: և ըստ մեզ ատուգանի՝ սպեղանի վարդի. որ է յայժ օգտաւէտ 'ի դիպուածս ախտագանոտուէ, բորբոքման տենդից, և լերդի, և ցաւոց ձգանաց, որ այսպէս յօրինի: Առ բաւականաչափ՝ սպիտակ վարդ, որ լիցի թարմ, և դիր զայն յանօթ ապակեայ, արկանելով 'ի նա և զնոյնաքանակ ձաղպս խոզի, և վակեա զբերան անօթին անդկի խչիով. և դիր յարեւու զաւուրս քսան: Յետ այնորիկ մերձեցո 'ի հուր թեթև և մեղմ առ 'ի հալել, և յետ այնր քամեա զհիւթն. և ահա այն է սպեղանի վարդին զոր ինդրես:

Ընկվէնթում սուքխա, լա: ունկուէնթօ տէ' սուքխ, խո: Սպեղանիս այս օգտաւէտ է ցաւոց վիրաց, փտազաղիջ խոցից, և էրբէնթէ անուանեալ ախտից. որ այսպէս կազմի: Առ մի լիտր՝ իւղ ձիթենւոյ, որ բաղադրեալ նցէ վարդիւ, և վեց ունկի՝ իւղ տհաս ձիթապտղոց, ա և հիւթն ջղախտոի, լաբաթիւ, և չէնթաուրի մինօռ, յիւրաքանչիւրոցն երկու ունկի: Զայս ամենայն դիր յեփ՝ մինչև ցաւարիլ

հիւթոցն, յոր յաւել ջուրս ունկի սպիտակ մեղրամամ: Եւ ապա թոյլ զայն առ հրով, մինչև՝ ի պատրաստել քո զհեաւեաղ նիւթքն՝ առ՝ ի նոքօք բաղադրել և թանձրացուցանել զայն: Ընդ մին երի առ ցե՛ս երեք ունկի՝ զլնթարճիւթս, այսինքն քարմատ ցանկ, վեց տրամ՝ զայրած կապտոր, կէս ունկի՝ զԹուցիա բրէբարատա, լուսացե՛ս զաւենայն՝ ի միասին՝ ի փոշի մանրատրած. յետոյ պատրաստ է խառնել՝ ի միասին ընդ նախասահմանեալ հիւթոցն, և անձանձրոյթ խառնեացես զայն ընդ երկար, զի փոշիք նիւթոցն բարիոք զանգեացին ընդ բաղադրեալ հիւթոցն կամ զանգուածոյն: Յետ այնորիկ արկ՝ ի նա տրամ մի՝ զքարխուր փոշիացուցեալ, կամ լուծեալ գոյն ինչ կրկնահան ցքուռ, և խառնեա զայն վերատուն, որով և կատարի սպեղանին:

Ընկվէնեթուամ առ աքատիէմ, կամ ունկուէնեթուամ անեթիբաօրիուամ, լո: ունկուէնեթօ անեթիբաօրինքօ, կամ ունկուէնեթօ քօնեթրա լա բօկինայ, իա: ուչուզ մէհլէմի, ոՀ: Սպեղանիս այս սեփհականէ է բուրաւութե, և քաւաւութե. բայց գիտել արժան է, զի՝ ի գիպուածս մանկանց և փափկակեաց անձանց ախտակցելոց յայսմ ախտէ՝ պատրաստ է զգուշանալ, զի մի՝ ընաս ինչ գործեցէ: Իսկ՝ ի կամիլգ առնուլ՝ ի կիր՝ սակս մանկանց և փափկակեաց անձանց՝ զանգեա զայն կոգեաս, որով մեղմանայ զօրութիւնն, և թեթեւանայ ընաւսկար որակութեն: Օրինակ կազմէ ըզ սպեղանիս զայս: Ա՛ռ երկու և կէս լիտր՝ իւղն ձիթապտղոց, և ջուրս ունկի՝ սպիտակ մեղրամամ, և եօթն ունկի՝ թրէմէնթինա, և լից զայս ամենայն յապխակաճ պոյան, մերձեցո՝ ի հուր. և յորժամ սկիզբն առնէ հալիլ, արկ՝ ի նա եօթն և կէս ունկի՝ փոշիացուցեալ սպիտականերկ, այսինքն իւսատիւ պէճ, և նոյնչափ՝ փոշիացուցեալ պաղեղ. յետոյ առցե՛ս՝ ի բաց՝ ի հրոյն, և թո՛ղցես զայն զանգուածս՝ ի պաղիլ, և ապա հեղցես յայն երեք ունկի՝ մեղրոյ բիս առաւելութեաօ քօռւօզիւլօ, և պարտ է անընդհատ խառնել՝ ի միասին՝ մինչև՝ ի զանգիլ բարիոք ընդ միմեանս, և լինել մի բաղադրութեն:

Ի՝ և այլ սպեղանի մեղմ, և թեթև, որ առանց ջուրոյ ապաքինէ զբորոտութեն, և զքաւաւութիւնն, որ այսպէս բաղադրի: Ա՛ռ ունկի մի՝ անդիւկ, կամ ջարծաղի, և արմրեալ հարեա զայն բաւականաչափ

ջրուէն լեռնէն ՚ի մէջ քարեայ անկանի. յետ զանգե-
լոյ բարւոք ընդ միմեանս, զոր և հնար է ճանաչել
յաներեւոյթ լինելոյ գնատակաց անդէն, յաւել ՚ի նա
և զայլ հինգ տրամաչափ ջուր լեռնէն, և մի և կէս
ունկի՝ սէթօտաչէ լիդուխտօ, զոր տճկ. գառապէնն
լուք եալը անուանեն, և սկահակ մի լուռն ձիթապա-
ղոյ: Ջայս ամենայն դիր կամ ընդ ՚ի մի պոյտ ապէ-
կաճ և նոր, և եփեա զայն բաղադրութեն այնչափ,
մինչև ՚ի սպառիլ կիսոյ մասին նորա. և ընդ առնուլ
՚ի բաց ՚ի հրոյն՝ քաշեա զայն կտաւով յամուն ինչ,
և օծ զբոլոտեալ մասունս մարմնոյ, և ջփեա առ
հրով, զի բաղադրութենն այն ընդմասանիցէ ՚ի ծակ-
ախս մարմնոյ, արագ և բժշկէ:

Ա՛յլ սպեղանի առնոյն բորտուէ, զոր իսալք՝
բամպաթա քօնթռա լա ռօկնա անուանեն, կամ լատ-
ինացւոց՝ ունկուէնթում անթիբատում: Ա՛ռ
ունկի մի՝ փոշիացուցեալ ծծումբ, որ չինչ լուա-
ցեալ, և երկու տրամ՝ մուրիաթօ ուի ամմօնիաքա,
և երկու ունկի՝ հալեալ Հարպան խոզի: Ջայս ամե-
նայն պարտ է ձմլել ՚ի միասին՝ մինչև ՚ի զանգիլ
բարւոք ընդ միմեանս՝ և լինել մի բաղադրութիւն.
զոր ապա օրէն է ՚ի կիր առնուլ ըստ նախասանդեալ
կանոնի:

Ունկվէնթում քօռռօսիվում, լտ: ունկուէնթօ քօռ-
ռոսիվօ ուի բինէթռօ կալլս, իտ: սուրբուր մէհլէմի
կալլս ձէռաէն թէրբինտի, տճ: Սպեղանիս այս համ
բաւեալ է գերքան զամենայն փսխալիչ սպեղանիս.
ապատեալ ծախէ զաւելորդ մեասունս մսամոլեալ վի-
բաց, և խոյից, ՚ի վեր երևեալս յոր և իցէ մասին
մարմնոյ, նա յաւէտ ՚ի վեր երևեալս ՚ի ֆալլոփիեան
անցս արգանդին, և ՚ի միզանց խողովակս: Նոյնպէ
ծխուրեալ ծխախ զևղևայթս գոյացեալս ՚ի նոյն ան-
դամ: Օրինակ ՚ի կազմել զևարմրերանգ սպեղանիս
զայս: Ա՛ռ երկու տրամ՝ ունկուէնթօ ուի չէրուպա
քանֆօրաթօ, և նոյնաքանակ՝ ունկուէնթօ թուցիա
ուի ձևօ: Ջայս երկու տեսակ սպեղանիս լից ՚ի վիա-
սին ՚ի քարեայ անկանի, և յաւէլ այնչափ մէռքու-
րիօ բուէչիբինթաթօ ոսոսօ՝ որչափ պէտք եցէն ասէ ՚ի
տալոյ նմ զչոյն կարմիր, այլ խառնելի և անընդհատ
ծայրիս սանդխատուին՝ մինչև ստանալ նմա զգոյն
կարմիր, և ՚ի զանգիլ բարւոք ընդ միմեանս:

Ունկվէնթում օքռնթհալմիքռում, լտ: ունկուէնթօ

Ձամ լինելմէնեօ տա օքքի, իտ: Սալեղանիս այս ունի մասնաւոր օգտաւէտուե՛ի դիպուածս բորբոքման, այտուցման, և այլ ախտից աչաց, գուզնաքեայ մման ինչ արկանելով՛ի վերայ նեղքին մասին աչաց, յաւուրն երկուց անգամ. եւ զանէ և անսի զգծինեայ և զինաւաբեր հնութա հանգոյն արտասուաց, արգելու զմարմնակիսնն, զարիւնն, և զնաղտաբարս նոցա. նաև քուժէ զգլխացաւն, և զարտասուաբեր ախտն աչաց. և միանգամայն սրէ զտեսութիւնն: Յոյժ դրուատեն աչքաբոյժք զայս սալեղանիս և հաստատեն, եթէ է գեր քան զամենայն օգտաւէտ՛ի դիպուածս ս և լոկ ախտից աչաց: Ջայս եթէ կամիս կազմել, առ երկու ունկի՝ թուքիա բրէբարաթա. (զորոյ զկերպն պատրաստելոյ մարթիս տեսանել՛ի քառն Թուղթիա քօմբօսիթա) քառասուն դրկիս ցորեան՝ բիէթրա հէմաթիթէ. 12 ցորեան՝ ալօէ սոքօթրինա. չորս ցորեան՝ բէրլէ օչչիսէնեթալի: Ջամենեսեան զսուտս պիտոյ է լուսել՛ի քարեայ անկանի, և անցուցանել ընդ նրբատոյն մաղ, յաւելլով՛ի նոյն զհալեալ ճարպն խիժի այնչափ, որչափ պէտք եցեն առ կազմելոյ ըստ կանոնաց արհեստին զսալեղանիս զայս:

Ձենկօլա, կամ ունկուլա, իտ: զար, տճ: և ըստ մեզ՝ վատ, կի եղունգն աչաց: ըստ անդամոցինոց՝ ախտ խառարեցուցիչ, կամ եղինգանման մսուկ ինչ աչաց:

Ձենչիա, լտ: ծնչիա, իտ: և ըստ մեզ՝ ունկի. է հչիս գեղարդից, որ առնէ ուղ տրամ, կամ երկոտասանեքորդ մեան լտեր և չորս տրամ: Գխտել և սպրտ է, եթէ տակաւին եդեալ ըստ բժշկաց (Ձի) զայս նշանագիր խմանամբ զչափ մոյ ունկէ, ուստի կիսան ունկիքն առնուն 400 տրամ ամբողջ:

Ձուվա, լտ, և իտ: խազիւմ, տճ: էնէպ, կամ իմպա, արբ: էնկիւր, պր: սատֆիլիա, յն: և ըստ մեզ՝ խաղող. ծանօթ ամենեցուն, զորոյ զօրութիւնն մարթիս տեսանել՛ի քառն Վինոում:

Ձուվա աչէրպա. տես ակուէսթա:

Ձուվա ուռսի, լտ: ուվա օռսինա, իտ: էնէպ իլ տիպ, արբ: այն խազիւմիւ, տճ: և ըստ մեզ աստուգքան՝ խաղող արջայնի: Ի տունկ փոքրիկ, բուսեալ՛ի լերինս Եւրոպիոյ, և յերկիրս ցածագոյնս, նայաւէտ յերկիրս՝ որք ծածկեալ կան ձեամբք:

Տերևք նորա են փոքրիկ, ատուար, երկայնաձև, և հինգ չերտեան, որք բերեն զնմանութիւն տերևոց սոսի: Ծաղիկն ոլկուզաձև, և կարմրերանգ: Պտուղն գնտակաձև, քնքուշ, և կարմիր, նման ընդ նմին կեռասի. ուստի և կորնգ տափարտակաձև, բոլոր չի, և կարծրապինդ: Սոյա տունկ լինի համով ըստ մասին գառն, և ըստ մասին տուխտ, որոյ տերևն եփեալ՝ի ջուր, կամ փոշիացուցեալ, և արբուցեալ, դեղ է փորհարութիւն, արիւնախտաւն ոտվայնալուծ ծութիւն, յորդառատ հոսման դաշտանի կանանց, և հոսման սպիտակ հիւթոց, (որ ծորի փոխանակ սաստկան պարտուց կանանց) . զի է խթիչ և սեղմիչ բնութիւ. նաև դեղ է վնասց երիկամանց, և փամփըշտոյ: Ձափն՝ի 20 ցորենոյ մինչև ցմի արուամ, երեք կամ չորս անգամ յաւուրն:

Ուվա ուրսի վօլբէ. տե՛ս սօլանում:

Ուվէյա. այսու անուամբ ըստ անգլիացւոցն նշանակի մինն՝ի թաղանթից աչաց:

Ուրէթէռէա, լտ: ուռէթէռէ, իտ: պնուսամբս այս ըստ անգլիացւոցն իմանին երկու երկայն խողովակք, ընդ որս անցանէ մէզն յերիկամանց՝ի փամփուշտն:

Ուրթիքա տիօյքա, լտ: օռթիքա, իտ: կռանտօռթի, գղլ: քըմմըն նէթթըլ, անգլ: չիքնիտա, յն: բարդանոմօ, աճ: ֆիսէք լաթ, կամ էնճիւրէ, արբ: գէնտանէ, կամ՝ գիւզէնէ, տր: և ըստ մեզ՝ էնինճ. բոյս, որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ երեք ոտնաչափ, քառանկիւնաձև, մէջն դատարկ և ճիւղալից. տերևքն լայն են և երկայն, և շուրջանակի տղոցաձև ատամնաւորեալք ըստ պատրինջի, և՝ի վերայ ունին փուշ մանուն, որով խայթեալք ևիսկեն ցձեռս շօշափողաց. ծաղիկքն չորս չորս եղյալ են՝ի գագաթան, և՝ի վերայ ճիւղոց հանդերձ բազմաթերթի առէջիւքն, որք բերեն զձև խաչի, և բերէ սերմունս ձուաձև: Բուսանի յաւազուտ և՝ի ցանկապատ տեղիս, և՝ի չոլջակայս որմոց, և աւերակաց. լի է խուղով և ապիս, և բնութիւ դրդուիչ, և սեղմիչ. որոյ տերևն եփեալ՝ի ջուր, և եդեալ՝ի վերայ կարկամեալ անդամոյն՝ լինի դեղ անդամագծութիւն, յօդուածացաւութիւն և կաթուածոց. որով ոլթափէ զչիղս, և զերակս թմբրեալս, և միանգամայն յեղաշրջէ զարիւնն: Նոյնպէս է դեղ մէզարգե-

լութիւնէ, և փախման արեան, և չնչարգելութենէ, եթէ տրամաչափ խարշեալ ՚ի ջուր, արբցի՝ յաւուրն երեք անգամ:

Ուրինա, կամ լօթխուա, լա: օռինա, կամ լօցիօ, կամ բիշիօ, և կամ բիշիա, իտ: քաթռուբիամա, կն: պարուրէ, կամ պէվէ, կամ պօվէ, կամ շօխաիս, և կամ պէօվէ, արք: բուխա, կամ գիուժիւա, կամ չէմին, պլ: սիտիկ, կամ խարար, ոճ: և ըստ մեզ՝ մէզ: որ է յաւելուած գիճուածոց ըմպելեացն, յորմէ մարթ է ճանաչել զիօթռուքիա, կամ զհիւանդուսիս, և միանգամայն գուշակել զնչանս եթէ մահադրաէրա, և եթէ կենսատուս: Արդ՝ եթէ մէզն էցէ առատ, տհաս, ջրային, և անգոյն, նշանակէ թէ ախտն ՚ի վեր երևեալ է ՚ի ստկարութէնէ և յանղօրութէնէ ջղաց, և մանրամթերլից ատամնաբոյ. քանզի քաջայայտ է՝ եթէ յայնժամ ոչ անուցանէ, և ոչ զօրացուցանէ զմարմինն: Իսկ եթէ էցէ նուազ՝ կարի խիճթանձրամթութէ, և ներկեալ, և կծնաև վաղընդ փոյթ ալեորեալ, և մրրալից, գուշակէ՝ թէ ախտն գոյացեալ է ՚ի նոյն ստկարութէնէ ջղաց, և ՚ի դանդաղմանէ առնելոյն ատամնոցն, և ընդերաց: Բայց եթէ գոյնն մէզն լիցի նմանագոյն ելեկտրոնի, կամ ևս մթագոյն, ցուցանէ զևսառնուսին մոլձի ընդ արեան: ԵՒս եթէ փրփուր ինչ գեղնագոյն ՚ի վեր երևի յեբեսս նորա, յայնժամ գուշակէ զդաալուսին: Դարձեալ՝ եթէ ընդ մէզն արտաքս ելանիցեն հատորիկ մանուկք մաելինաց, գուշակէ զծնեալսն, և զապառնի մէզն լերդի, կամ այլ ընդերաց: Եթէ ՚ի վնճակէ ատամագոյն ջերմութէ՝ մէզն ախտակրէն յոյժ կարմրագոյն և սևագոյն լինիցի, ցուցակ է տոչորման, և բորբոքման արեան, և կամ նեղսքին մեռանց մարմնոյ, և է նշան յոյժ վատթարագոյն: Իսկ եթէ էցէ մրրալից գեղնագոյն, և կամ ՚ի գոյն նարնջոյ, և կարի սաէպ, և առատ, և զազրահոտ, ցուցակ է արմատալ ելելոյ խօթութէնն. որովհետև յայնժամ սկսանի նուազել ջերմութէնն օր քան զօր, զուարթանալ ոգի նորա, և գառնալ յառաջին առողջութէն իւր. և նշանս այս առ լաւինա ձայնի՝ գրեսի, զոր մարթիս որանել ՚ի տառն Գ. ՚ի կարդի իւրում:

Ո-բառս, լա: օռսօ, իտ: այը, ոճ: սիուպ, կամ թէլեաէր, արք: խարար, կամ քէհնի, պլ: և ըստ մեզ՝ մէզ: Ի գազան յատկութեանէ, և մեծ ՚ի շուն

իշոյ՝ ծանօթ ամենեցուն. որոյ ճարպն ունի մասնաւոր գործունէութիւն 'ի մեղմել, և 'ի փարատել զցաւս ոսկերաց, և զփոշտանկութիւն: Իսկ զսորա լեղին 'ի վար արկանեն իբր դեղ ընդդէմ լուսնոտութեան, և շնչարգելութեան:

Զ

Զէբա, կամ չէբէ, լտ: չիբօլլա, իտ: մօղան, տճ: քրօմիտիա, յն: պասալ, արբ: բիաս, պր: և ըստ մեզ՝ սոխ: Է արմատ գնտակակերպ, սաստկահոտ, կծուահամ, և թափանցիկ. զոր ստէպ 'ի գործ արկանեմք 'ի կերակուրս, նաև 'ի դեղորայս. որ է շահաւէտ ընդդէմ սքօռպութօի, ջրգողութեան, միզարգելութեան և թանչից. զի է գրգռիչ բնութեան, և սատակիչ ճճեաց: Այլև հասուցանէ զպալարս, և դիւրապատրաստէ զշարաւս, եթէ եփեալ այլ յարմարաւոր դեղորէիւք արկցի 'ի վերայ նոցա:

Զէլիաքօ. անուամբս այս իմանի մինն 'ի տեսակաց շնչերակի:

Զէլիտօնիա. տես քէլիտօնիում:

Զէնթուռիում մինուս, լտ: չէնթաուռէա մինուռէ, իտ: գըռմըզը քանթառիօն, տճ: քէնթառիօն, յն: և ըստ մեզ՝ տերուկ: Է բոյս՝ որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ իբր կէս ոտնաչափ, կամ փոքր մի աւելի: Տերև նորա է երկայն 'ի ձև իբէրիքօնի, բայց առաւել մեծ քան զայն: Ծաղիկն ձագառաձև, հերձոտ, և կարմրերանգ: Պտուղն ձուաձև, և ստուար, մէջն շերտաւոր՝ յորում բաղկանան սերմունք նուրբք: Իսկ արմատն փոքր է, և փայտային: Բուսանի 'ի խոնաւուտ, և յաւազուտ տեղիս. որոյ համն, բնութիւն և ներգործութիւն նոյն է ընդ ճէնցիանաի:

Զէնթռօվալէ. անուամբս այս ըստ անդամաղննաց նշանակի կեդրոն ձուաձև. որ է սպնգային գոյացութիւն ուղղոյն՝ ընդունարան կենդանական ոդեաց:

Զէնքռիս, կմ միլիառիս, լտ: Է տեսակ մի սաստկաթիւն օձի 'ի չափ իժի. գոյն նորա է կանաչ՝ հա-

լեալ ՚ի գոյն գեղին, և ՚ի վերայ ոտն իւիծա մա-
նուկն. որոյ միան գեղ է ազգս ընդդէմ թուոյն, և
խածուածոց թխենաւոր սոլնոց. քանզի է առաւ
ցնդական աղիս, և խաղով: Գոյանի ՚ի կղզին կոչե-
ցեալ՝ Լէմնոս:

Զէռա, լս: աեօքիրի, յն: պալմօմու, տճ: շամա
սասլ, կամ ճէսէր, արբ: և ըստ մեզ՝ մեղրամոմ:
Է թանձրամած խաղալիր, և լուցանելի նիւթն, զոր
յօրինեն մեղուք ՚ի վեճակի ՚ի նիւթոյ պէսպէս
ծաղկանց. որոյ կրկին է տեսակ. սպիտակ և դեղին.
սպիտակն լաւագոյն համարեալ է՝ սակս մաքրուե.
որք և երկոքին են բնութեք կակղացուցիչք,
ցուցիչք, և թափանցիկք. վասն որոյ և երբեմն ՚ի
վար արկանին մանաւանդ սպիտակն ՚ի դեղօւածս
ցաւալիս վտրհարուածէ, և թանչից առնելոյ յուժ-
գնութէ բնութեն: Վարին և ՚ի սպեղանիս կակղա-
ցուցիչս: ՚Ի սոցանէ արտահանեն նաև զխուղ կոչ
թափանցիկ և ծանրահոտ, և ՚ի կիր արկանեն ՚ի
դեղօւածս ճեղքուածոց չրթանց, և առանց կա-
նանց. մեղմ նաև զցաւս ոտնաուրութեան, և ձեռնա-
ուրութէ առնելս ՚ի ցրտոյ, օծանելով և եթ զայն
երկու կամ երեք անգամ յաւուրն: Ալև արգելու
զհազս, և զցաւս կրծոց: Զափն ՚ի 20 չրէ մինչև
360 երեք անգամ յաւուրն: Գոյանի ՚ի չին և ազգ մի
նորատեսակ մեղրամոմոյ սպիտակ երբեմն զձիւն, որ
ոչ է գործ մեղուաց, այլ փոքրիկ հին կենդանւոյ՝ որ
չէ մեծ քան զլու:

Զէռազում, լս: չիռիչճիէ, իտ: գիրազ, տճ:
գառաւիեահ, արբ: ալռապալու, կամ կիւլնար,
պր: գիրաթիա, յն: և ըստ մեզ՝ կեռաս: Է միրգ
երկայնականթ, բոլորչի, կարմրախառն սպիտակ,
թամբալից, համեղահամ, և ախորժական ճաշակե-
լեաց, միանգամայն և դեղ զովացուցիչ, և զուար-
թացուցիչ: Կորիզ նորա որ է գառն համով՝ լինի
դեղ տենդից եռօրեկից, և ցաւոց գլխոյ: Իսկ կանթն
նոյնպէս է դեղ ազգս ընդդէմ հնոտոյն հազից՝
պատճառելոց ՚ի ցրտոյ, և ՚ի հարբեղնոյ:

Զէռաւզում. տես չիռիչճիէ:

Զէրասթէս, լս: չէռասթա, իտ: պուչնուզլու
երլան, տճ: սերասաէս, յն: և ըստ մեզ՝ երկնուրիկ
օձ: Է սեռակ մի չարաթոյն օձի, յատկեալ կե-
դիպատս, և ընդ բոլոր ամրիկէ. որոյ երկայնութիւնն

'ի գլխոյ մինչև ցծայր ատան է իբրև երեք ոտնաչափ, կամ փոքր ինչ աւելի: Գլուխ նորա լայն է իբր երկու մատնաչափ, գոյնն բոլորովին գորշ, բայց 'ի թիկնամէջն ունի բիծս կարմրագոյնս. պարանոցն նուրբ, ատամունքն նման ատամանց իժի, որ 'ի խայթել իւրում թէ ոչ առժամայն, սակայն փութով և անվրէպ սպանանէ: Իսկ 'ի գլուխն ունի երկու եղջերս մանունս՝ զօրէն գարւոյ, որոյ միսն եփեալ 'ի ջուր ԸՍ օրինի իժի, և արբուցեալ, դեղ է ապականութեան արեան, բորոտութեան, պիսակաց, խածուածոց օձից, և կատաղի շանց:

Չէրէպռում հումանում, լտ: չէռվէլլօ ումանօ, իտ: ինուն պէյնի, տճ: մուխ, կամ զուզ իլ ատէմ, արբ: և ըստ մեզ՝ ուղեղն մարդկային. որ է գոյացութիւն շաղական, խժային, քնքուշ, խոնաւ, և ոգելից, և ըստ վկայելոյ խոհական և նրբազննին բժշկաց և անդամազննաց՝ է սկիզբն զգայուեց, պահարան կենդանական ոգւոց, և իշխան անդամոց մարմնոյ համայն: Եթէ ախորժես զայսմանէ ճոխագոյնս տեղեկանալ, տես 'ի փիլիսոփ. կովդնոյ. 'ի հտ. ԿԳ. մասն ԿԳ. խնդ. ԸԲ:

Չէրէվիզիա, կամ պէռա, կամ վինում հօռտէաչէում, կամ ծիթհում, լտ: պիռռա: իտ: առբա սուիւ, տճ: և ըստ մեզ՝ գարօղի, կամ գարէջուր, և կամ գինի գարւոյ: Է հեղանիւթ ինչ ականակիտ, դառնահամ, ծաղկահոտ, զուարթացուցիչ, զովացուցիչ, միզաբեր, և կարի առողջարար, զոր բնակիչք եւրոպիոյ ստէպ 'ի կիր արկանեն ըստ օրինակի գինւոյ. զազնուագոյնն կազմեն յերկիրն անգղիացւոց, զորոյ նմանն չիք ուրեք գտանել: Օրինակ 'ի կազմել զայս հեղանիւթ: Նախ լի՛ց զմեղրաջուրն 'ի մեծամեծ տակառս, և ա՛րկ 'ի նմա բուբբօլօ անուանեալ խոտն, և թո՛ղ աւուրս ինչ՝ մինչև ինքնին սկսանի եռալ զօրէն գինւոյ. յետորոյ լի՛ց 'ի կաթսայ, և եփեա՛. ապա իբրև ցրտանայ, զայն լի՛ց 'ի տակառս, և անդ զկնի ամսօրեայ մի ժամանակի փոխի 'ի գինի, զոր խնդրես:

Չէրէֆօլիում, կամ սքանտիքս չէռէֆօլիում, լտ: չէռփօլիօ, իտ: Է խոտ փոքրիկ, և քաղցրահոտ. որ արձակէ յարմատոյ բազում ցօղունս նուրբս, բոլորշիս, յղկեալս, և հիւթաւորս: Տերև նորա նման է տերևոց քարսոնի, բայց փոքր ինչ փափուկ քան

զայն. ունի զհերս մանունս, և զկողմունս հերձոտս. ծաղիկն փոքրիկ, սպիտակ, և հինգթերթեան 'ի ձև վարդի. պտուղն փոքրիկ է, և երկայնաձև, ունելով 'ի միջի սերմանս նուրբս, սայրասուրս, և գորշագոյնս: Իսկ արմատն տարածողական, ուղիղ, ստուար, և քաղցրահամ: Այս խոտ բուսանի 'ի բուրաստանս, լի է ուղով, և գոյացական աղիւ. և բնութ՟ գռգռիչ, և բացողական, որով բանայ զմէզն և զխցանս ընդերաց, և միանգամայն փարատէ զախոնդանոտութ՟, և զերիկամնաժետութ՟: Չափն մի ունկի՝ ընդ մի լիտր եռացուցեալ ջրոյ:

Չէրուսսա, լտ: չէռուզա կմ պիանքա, իտ: իւստիւպէճ, կամ ուստուպաճ, տճ: սպիտաճ, կամ կումնէ, արբ: սէպտագ, կամ սէփիթագ, կամ սէփիթէ, և կամ իսպիթ, պր: և ըստ մեզ՝ սպիտականերկ, կամ ճերմակ դեղ: Է նիւթ յոյժ սպիտակ, դիւրաբեկ, և ծանր, կազմեալ յարճճոյ կիզելոյ, և գոլորշեօք քացախի: Յօրինեն զայս 'ի բազում տեղիս, բայց ընտիր և ազնիւ, և կարի մաքուր և սպիտակ համարի յօրինեալն 'ի վէնէտիկ, յորմէ 'ի կիր առնուն 'ի ներկս սպիտակս, և 'ի սպեղանիս զովացուցիչս, և չորացուցիչս:

Չէրվուս, լտ: չէրվօ, իտ: լաֆօ, յն: կէյիք, տճ: զապի կամ պուվպուվ, կամ արիան, արբ: և ըստ մեզ՝ եղջերու: Է արու երէ մեծ 'ի չափ փոքր ձիոյ. բայց ասի թէ 'ի բարեխառն գաւառս մեծագոյն են. մարմին նորա թեթև է, և սրընթաց յոյժ. ընթանայ շրջապտոյտ, և բազմախոտոր շաւղօք առ 'ի զերծանիլ յորսողէն. ձևն վայելուչ, և կերպարանքն զուարթատեսիլ. աչքն և լսելիքն, և առաւել ևս հոտոտելիքն կարի սուր են. պարանոցն երկայն, ստևն խարտեաշ, կամ կարմրագոյն, ձետն կարճ, ոտքն կճղակաբաշխ. եղջիւրքն կակուղ են 'ի սկըզբանն. և առ սակաւ սակաւ մինչև ցաշունն կարծրանան, յամենայն ամի առաւել բազմանան ոստք եղջերաց նորա, մինչև ոմանց ունել 22 ոստս բուսեալս 'ի վերայ իրերաց, յորոց յօրինեմք դեղ բորբոքման, և հոսման արեան, և փորհարութ՟, զի են զովացուցիչ, և սեղմիչ բնութ՟: Յեղջերաց անտի ելուզանեն ոգի ինչ ազդու և ցնդական՝ կոչեցեալ յիտալացւոց՝ սբիրիթօ տի քօռնօ տի չէռվօ, զոր յաճախ 'ի կիր արկանեմք 'ի դեղ թունից, տկարութեան

ջլաց, անդամադօսութեան, քնափուեան, և լուսնոտութեան: Այս կենդանի ապրի զամս քսան և հինգ, կամ երեսուն. որոյ միսն համեղ է և կարի առողջարար: Արիւն սորա փոշիացուցեալ և արբուցեալ, դեղ է կշտացաւութեան, և յօդուածացաւութեան. զի է քրտնաբեր և կազդուրիչ բնութեան: Չափն 'ի 10 ցորենոյ մինչև ց60: 'Ի սիրտս ոմանց եղջերուաց գոյանայ ոսկր ինչ իբր մատնաչափ, և փոքր մի տափարակաձև կոչեցեալ 'ի լատինացւոց՝ օս քօռտիս չէռվի. որ իբր դեղթափ 'ի վար արկանի ընդդէմ թունից, փորհարութեան, և խոցուածոց լերդի:

Չէրվօ. տես չէրվուս:

Չէրօթում, լտ: չէռօթթօ, իտ: այսու անուամբ նշանակի ևս այլ ազդ թանձրամած սպեղանի, որ ամենայն որպիսութեան է նման էմբիասթրօի. բայց մին կարծրագոյն լինի քան զնա:

Չէրօթում տիապօթանում քօն մէռքուրիալէս: Է սպեղանի ինչ թանձրամած, և կապարագոյն, բաղադրեալ 'ի բազմազան նիւթոց, մանաւանդ 'ի սնդկէ. ունի զարմանաքանչ օգտաւէտութիւն յատկապէս ընդդէմ ուռուցից որկորոյ՝ գոյացելոյ 'ի թանձրամած հիւթոց առթելոց 'ի գաղղիական ախտէ, և է դեղ յոյժ ազդու, և կարի պատշաճողական՝ երբ հարկ 'ի վերայ լինի լուծանել, և ցրուել զդժնեայ և զկարծրապինդ այտուցս մարմնոյ, և ոսկերաց:

Չէքուս, լտ: չիէքօ, իտ: անուամբս այս իմանի՝ մասն ինչ ճարպային փորոտեաց, որ ունի զմի և եթ բերան, որով պահպանի յելս, և 'ի մուտս. այս տեսակ փորոտեաց է յոյժ կարճագոյն 'ի մէջ այլոց փորոտեաց, և առկցեալ է ընդ ոսկեր փաթութին, որ ասի իլէօ:

Չէֆալալճիա, կամ տօլօռի տի քաբօ, իտ: դէֆալիմս բունիօ, յն: սիւտաա, կամ սուտա, և կամ վէճաիլռաս, արբ: տէրտիսէր, պր: պաշ ազրըսը, տճ: և ըստ մեզ՝ գլխացաւութիւն, կամ ցաւ գլխոյ. զորմէ լիագոյն խօսեցաք հտ. ա. երես 248:

Չէֆալիքէ, լտ: ինֆիամմացիօնէ տէլ չէռվէլլօ, իտ: պէյին թութուշմասը, կամ իւֆիւնէթի, տճ: միւհրիւքան իլ մուխ, արբ: մաղզի կէրմ, պր: և ըստ մեզ՝ բորբոքումն ուղղոյ. զորմէ տես հտ. ա. երես 56:

Չէֆալիքօ, լտ. այսու անուամբ ԹԵ անդամազննաց նշանակի երակ ինչ բազկի ծագեալ 'ի գլխոյ. յորմէ 'ի դիպուածս ցաւոց գլխոյ սովոր են արտահանել զարիւն 'ի մերժումն այսր ցաւոյ, զոր տաճիկք՝ գըֆալ անուանեն: Դարձեալ, բառիւս այս իմանին հասարակօրէն ամենայն դեղորայք 'ի վար արկանելիք 'ի պէտս ցաւոց գլխոյ:

Չիբէռուս լունկուս, լտ: չիբէռօ լօնկօ, իտ: թօբալաք ուզուն, տճ: սիւիւթ իլ թավիլ, արբ: միւշքի զէմէն, պր: Է բոյս՝ յաճախեալ 'ի գերմանիա, 'ի վերին եգիպտոս, և յարևելեան հնդիկս՝ ուր բուսանի 'ի խոնաւուտ, և 'ի հովանաւոր տեղիս. ցօղուն նորա է ծնրաւոր, եռանկիւնաձև, և ուղղալից: Տերևք յոգնաթիւ՝ ըստ նմանութ՝ տերևոց եղեգան: Ծաղիկն կարմրերանգ, և փնջաւոր, բերէ և սերմն կարծր, և սեաւ: Իսկ արմատն երկայն, ծնրաւոր, խորտաբորտ, դժուարաբեկ, թելաւոր, անուշահոտ, և թխագոյն, և փոքր մի դառնահամ. յորմէ կազմեն դեղ ախոնդանոտութ՝, փքախտութ՝, և նուազութ՝ ամսական պարտուց կանանց, զի է մեղմօրէն խթիչ բնութ՝: Չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց60՝ երեք անգամ յաւուրն: Է նորա և այլ տեսակ, զոր լատինք՝ չիբէռուս ռօթունտուս անուանեն, և տաճիկք՝ թօբալաք միւտէվէր. յորմէ նախնիք 'ի գործ ածէին 'ի պէտս ախտից կանանց. բայց այժմ անպիտեան համարի:

Չիբռինուս, լտ: քառբիօնէ, կամ ռէինա, իտ: սազան պալըղը, տճ: աճիւզ, արբ: Է ձուկն ինչ դետային. որոյ ոսկրն մածուցիկ է և կակուղ՝ հանգոյն աճառի. թեփք մորթոյն լայն յոյժ, 'ի ծնօանունի վեց ատամունս սայրասուրս: Իսկ միսն համեղ է և դիւրամարս: 'Ի գլխոյ նորա ելանէ ոսկր ինչ լայն իբր եռանկիւնաձև, և սպիտակ, զոր լատինք հիօիտէ անուանեն, յորմէ փոշիացուցեալ յօրինեն դեղ մեզարգելութ՝, և հոսման արեան. չափն 'ի 10 ցորենոյ մինչև ց30:

Չիթռէում մալում կամ մալուս մէտիքա, լտ: չէտռօ, իտ: քիթրու, յն: աղաճ գավունու, տճ: թուռունճ, արբ: և ըստ մեզ՝ կիտրոն. պտուղ սեխաչափ մեծութ՝, գունով և ձևով նմանեալ լեմոնի, կեղևն խորտաբորտ, ստուար, մսալիր, հոտաւէտ, ջերմահամ, և կանաչագոյն. այլ 'ի հասանելն

վոխն ՝ի դեղին: Մէջ նորա կմ թամբ՝ է սպիտակ, ցամաքային, մածուցիկ, և տապահամ, ունելով ընդ տապուԹե, և փոքր մի քաղցրուԹե, որով զո՞ վացուցանէ զտապ սրտի, հնձուցանէ զբորբոքուն սրեան, և մաղձի, և դիմակալէ Թունից: ՝Ի կե՞ զևոյ այսր պտղոյ եհրուզանեն ջուր ըմպելի, որ է դեղ ապդու ընդդէմ տկարուԹե սրտի, ջլաց և ուղղոյ, զի է դրդուիչ բնուԹե: Ձափն ՝ի մի տրամ մինչև ց չորս յաւուրն: Ջնոյն ունի չործունէուԹի ՝ի ցքա՞ հանէ եհրուզեալ ոդին: Ձափն ՝ի ւօ չԹէ մինչև ց՝ օ՝ խառն ընդ այլ յարմարապոյն դեղորէից: Կորիզ այսր պտղոյ, զոր խաւիք կոչեն՝ աՀմ տէլ չէտուօ, նման է աւեԱնևին կորիզոյ լեմոնի. յորմէ ՝ի կիր առ՞ կանեն քսու օրինակի ջայի, ուր հարկ ՝ի վերայ կայ ջարժել զչափաւոր քիրան: Ձափն ՝ի կէս տրամէ մինչև ցմի: Ծառ նորա բուսանի յեւրոպա, ՝ի կոլմանս եգիպատոսի, մանաւանդ ՝ի կղզիս միջերկրա՞ կան ծովու, որոյ տերևն է երկայն, լայն, ծայրա՞ ւոր, պարուրտ, պայծառ կանաչ, և փայլուն, ունի զՀոտ ախորժական, և զկողմունս ողցաձևս, և է դեղ զօրացուցիչ ջլաց, և նուաղելոց: Ծաղիկն սպի՞ տակ Հարեալ ՝ի գոյն կարմիր, գոլորակաձև, և հինգԹերԹեան. որ ԹէպԹէ չէ այնքան առատ աղիս և խլով՝ որպէս տերևն, սակայն լաւ մասին օգտա՞ ակտուԹեան ազնուագոյն է քան զայն, մանաւանդ որոց են վիճակեալ ախտալղձային բնուԹիւնք:

ՁիԹռուկ, կամ անկուռիա, կամ քուքուվիս չիԹռուկ, լտ: քօքօմէրօ, կամ մէլօնէ, կամ անկուռիա, իտ: գառպուզ, ամ: դիմօնիքօ, յն: պաՀԹիխ, կամ ձիչպիզ, կամ հապհապ, կամ ձաստուս, արբ: հինտաւէ, կամ պատրէնք, պր: և ըստ մեզ՝ ձմերուկ կամ մելրատոպ: Պտուղ գնատակաձև ծա՞ նօթ ամենեցուն, որոյ մէջն Թամբուլից է, հիւԹեղ, և քաղցր իբրև զմեղր. միանգամայն և զովացուցանէ զտապ սրտի, և փամփշտոյ: Իսկ ունի տորա՝ որ է կարծրատկեղև տափարակ, և երկայնաձև՝ կարգի ՝ի ԹիւռԹ չորից զովացուցիչ, և միզաբեր ընդոծ:

Ձիլիտուէ. անուամբ այսու ըստ անդամոցն նշանակին՝ ԹարԹափեան միանունք:

Ձիկնուռա, լտ: չիկնօ, իտ: ԹօյիւԹ օգլու գու՞ շու, ամ: և ըստ մեզ՝ կարտոպ, կամ պոր: Ի պզտ՞ ինչ չրատեր Թուչնոյ ՝ի չափ ընտանի սագի, որում

նմանի և ձևով մարմնոյն, բայց բոլորովին սպիտակ, և քաղցրաձայն: Պարանոց նորա է յոյժ երկայն, բաղկացեալ՝ի քան և ութ ողանց: Կաուցն փոքրիկ, սուր, և փոքր ի թեքեալ. որոյ ծայրն է դեղին հարեալ՝ի գոյն կարմիր: Ոտքն կարծրամաշկ, և խայտաբղէտ. թաթք ոտից ճերմանաւուր. մին ջոր, և ջերմ բնութեբ, որ ոչ է բարի՝ի կերակուր: Իսկ մորթն ունի զգործունէութեի՝ի կազդուրել և՝ի ցօրացուցանել զՁնգս, և զերակս, արկանելով՝ի վէրս պայ վշտացնեալ մասին մարմնոյ:

Ձինանքէ, լտ: սդուննանցկա, կամ սբուխմանցկա, կամ սքինէնանցկա, կամ սքէուանցկա, կամ սքինանցկա, կամ անձինա, և կամ տօլօուն կամ մալ տի կօլա, խտ: հնեանագ, կամ սօղազ աղբյար և կամ սօղազ սրգլմաար, տճ: խավանիհ, կամ թէշվիշ իլ զօու, արբ: աէրտի կուլրուլ, պր: և ըստ մեզ՝ փողացաւ կամ որկորացաւուբեի. և ախտ կոկորդի. զորմէ տե՛ս հտ. ա. երես 70:

Ձինանքէ թօնախլատուկա. տե՛ս չինանքէ:

Ձինանքէ մալինաա. տե՛ս հտ. ա. երես 76:

Ձինապտօ. տե՛ս չիննապտկա:

Ձինպուէֆօլիօ. տե՛ս բէնթհաբհիլլօկաէա:

Ձինա ռատիքս. տե՛ս քինաէռատիքս:

Ձիննամօմում, կամ լաուռուս չիննամօմում, լտ: քաննէլլա, կամ չիննամօմօ, խտ: թաուչին, կամ տարչին, տճ: կռֆիլ, արբ: և ըստ մեզ՝ կինամոմոն, կամ կինամոն, կամ գարսեննի, և կամ գարսին: Է հռչակաւոր կեղև ինչ նուրբ, երկայն, անուշահոտ, հատ, քաղցրահամ, համեմային, միանգամայն կծանող լեզուի, որ արտադրի՝ի բուսոյ, կամ յոտոց ծառոյն կոչեցեալոյ յիտալացւոց՝ քաննէլլիէռօ. որ մեծութբ գրեթէ ոչինչ ընդհատ է յուռենեաց մերոց: Փայտ այսր ծառոյ կարծր է և սպիտակ. բայց զուրկ՝ի հոտոյ: Տերևն նման է տերևոյն այնմիկ՝ զոր լաւրներէն կոչեն՝ մալաբաթհռում. այլ հատ նորա և հոտ՝ նըմն զկինամոն: Ծաղիկքն՝ի վերս երևին՝ի ծայրս ոտոց, և են փոքրիկ, սպիտակ, և վինջաձոր: Բերէ պտուղ երկնցա՝ի տարուոջ, որ նման է փոքրիկ կաղնւոյ, գոյն նորա՝ի սկզբանն է կանաչ ջաղոյն, իսկ՝ի հասանիլն սեաւ, մէջն հնութալից, և տապահամ, և իւղային, և անուշահոտ: Իսկ կեղև ծառոյն է նոյն իսկ կինամոնն, որ՝ի սկզբան անդ-

է կակուղ, և կանաչադոյն, և ապա առ ասկաւ սա կաւ կարծրացեալ փոխի ՚ի գոյն ջնկականմիր, կամ մթին կարմիր: Ընդնիւ և ընտիր համարի երկրորդ կեղևն, զոր սկսանին հաւաքել յաւարտէ մարտի մինչև ցյունիս, և չորացուցեալ յարևակէզ տեղիս առաքեն ՚ի վաճառ, որ է առատ իւղով և ցնդական աղիս, և բնութեբ դրդռիչ և խթիչ. միանգամայն և դեղ ազդուական ընդդէմ սկարրութեբ ջրոց, ախոնդանոտութեբ, իջուածոց լեղուի, փորհարութեբ, և ախտի փքոտութեբ: Ձափն ՚ի 10 ցորենոյ մինչև ց30 ՚ի. կեղևոյ սատի եղուզանեն զիւղ ինչ տակեգոյն, ազդու, և կիզողական, զոր լուծանեն կրկնահան ցքուով, և խառնեն ընդ չուր ՚ի ցքահանէ եղուզել, որով և լինի չուր ինչ ապխտակ, և ոգիաւոր, լաւինական անուամբ՝ ապուա չինուամօմուամ անուանել. տաճկերէն՝ թառչին սուլյու. որ վարի ՚ի զօրատուն դեղոցայս: Ձափն ՚ի 2 տրամ մինչև ց4. խառն ընդ այլ յարմարաւոր դեղոցէից: Ծառ այսր կեղևոյ բուսանի ՚ի հլզին աչլեանայ, և յայլ տեղիս արևելեան հնդկաց, բայց տորայս՝ ազնուագոյն է, և պտուղն՝ որ արտադրի ՚ի ծառոյ սատի լինի առաւել իւղային, և առաւել հոտաւէտ. զոր լուսել արիւնեն ՚ի չուր չերմ, և ելանէ յերեսս չորոյն իւղ. որ ՚ի ցրտանալ իւրում պնդանայ իբրև զճարպ. յորմէ յօրինեն ճրագ մինչ ՚ի պէտս արքային աչլեանայ. որ ՚ի վառիլն ընդ լուսոյն բուրէ և հոտ անոյշ:

Ձիննապտուխս, կամ սուլբհուռէթաւմ հիտուաղ ձիւռ ռուսպուսմ, լտ: չինապուս, իտ: զինձիֆր, տճ: կինաբարխս, յն: Ընձիւթ լինչ ամբոխչ, կարծր, ծանր, հրատիպ, և շոշափուն. որոյ կրկին տեսակ է. բնական, և արուեստական: Բնականն է հանքային զոր Իտալացիք կոչեն՝ չինապուս մինէրալէ, որ սովրաբար գտանի ՚ի ոպանիս, ՚ի գերմանիս, և ՚ի գաղղիս, պոյացեալ ՚ի ծծմբային սատրերկրեայ հոսանուտ հիւթոց խառնեցելոց ընդ անդկէ: Իսկ արուեստականն կոչի յիտալացւոց՝ չինապուս ատթի ֆիցիալէ. զոր կազմեն ՚ի սան և ուժ սրամ՝ անդկէ, և ՚ի վեց սրամ՝ ծծմբոյ: Ընդնիւ հանապն, ւժգէ եցէ ծանր, կարծր, շոշափուն, գոնեղ, մաքուր, և թխատեսակ հրապոյն. որ յաշխս ՚ի վարս արկանի ՚ի նիւթ կարմիր մեղրամոմի, նա և ՚ի դեղ սատի գաղղիականն, եղեփանդականն, բորոտութեբ,

և ոչխարնոյ. զի է թուլացուցիչ բնութեան: Ձայն՝ի
2 ցորենոյ մինչև ց10: Նոյնպէս է գեղ լուանոտուբե
և չարաչարութեանէ: Վարի և՝ի պէտս կերակրի ներկի:
Ձինօկլօտուամ, լտ: չինօկլօտա, կամ լինկուա տի
քանէ, իտ: գէօբէք տիլլի, տճ: լնտանիլգէլը, արբ:
և ըստ մեզ ստուգաբանի՝ չանալեզու: Է իստ ինչ
վայրի, որոյ ցօղունն է երկայն իբր երկու տանաչափ,
ճիւղալից, և թաւամազուտ: Տերևն փսխուկ, հո-
տաւէտ,՝ի ձև լեզուի շան, յորմէ կաշաւ և զանուն:
Ծաղկին կարմրերանգ, և փոքրիկ՝ նման ըստ իմիք
ծաղկանց եղնալեզուի, և ունի՝ի մէջ իւր զփոքրիկ
և զսպիտակագոյն առէջս ինչ հերձուտ սրատուքս ելեալ:
Ջկնի ծաղկանց սրատարբ պտուղս բոլորակաձևս,
ունելով՝ի վերայ թաւամազս խայթիչս, որք կուտեն
՝ի հանդերձս անցաւորաց: Իսկ արմատն երկայն,
ատուար, ուղիղ, սաստկահոտ, տաղտկահամ, ար-
տաքուստ թուխ, իսկ՝ի ներքուստ սպիտակ: Բո-
նէն յամային վայրս, և՝ի գերեզմանատունս: Բնու-
է սեղմիչ և թմբրեցուցիչ, որով և խափանէ զհոտումն
որովայնի, և մեղմէ զխռպս:

Ձինօմօռիամ քօչչինէուամ. տե՛ս Ֆուռնիօ տի մալ-
թա:

Ձինչհոնէ, իտ: սինչհնկիկ, տճ: պէսէր կիմ ասլաք,
արբ: էչէրուզ, պր: և ըստ մեզ՝ խաղաւարտ:

Ձինթէբաթիքօ. է անուն փամփշտեան խաղալա-
կայ:

Ձինթիթիսէ, լտ: ինֆիսամնացիօնէ տէլլա վէշի-
քա, իտ: քալափուշտա թուխուշտասը, կամ ինֆիս-
նէթի, տճ: և ըստ մեզ՝ բորբոքումն փամփշտոյ. տե՛ս
հա. ա. երես 118:

Ձինթիքօ. անուամբ այս լմանին խաղալակք
լեղաբերք,՝ի ձեռն որոց ածի մալճն՝ի լերդէ՝ի
պարկ լեղւոյն:

Ձինթինֆէլիա. անուամբ լմանի պարկ լեղւոյ
որ և եցէ կենդանեաց:

Ձիտօնիա, կիմ մալուա չիտօնիա, և կիմ քօթօնէուա;
լտ: բէրա չիտօնիա, կամ մէլաքօթօնիա, իտ: քիտօ-
նիա, յն: այվա, տճ: սէֆէրկիլ, արբ: սալ, կամ
պէյ, և կամ կամրաթ, պր: և ըստ մեզ՝ սերկևիլ:
Պտուղ գնատակերպ, դեղնափոյն, անուշահոտ,
մէջն թամբալիր, սպիտակ, և տև փոքր մի սակս,
այլ ախորժահամ, միանգամայն և դեղ զօրաւոր ըստ

տի, և ստամոքսի. զի է սեղմիչ, և փոքր մի գրգռիչ բնութ՟ն. ուստի և պատշաճողական կերակուր է լոյծ բնութ՟ն վիճակելոց, եփեալ 'ի մէջ մոխրոյ, կամ այլ եղանակաւ: Կորիզք նորա որք լինին 'ի պտղի անդ՝ են երկայնաձև, մթին կարմիր, խժային, և մածուցիկ. միանգամայն և դեղ հազից, թոքոց, արիւն թքանողաց, թանչից, և փորհարութ՟ն. զի է քաղցրացուցիչ, և թեթև սեղմիչ բնութ՟ն: Չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի. զոր պարտ է եռացուցանել ընդ չորս ունկի ջրոյ: Այլ և օգտէ այտուցաց և ցաւոց աչաց, շրթանց, լեզուի և բերանոյ, եթէ դիցի 'ի թրմոց 'ի ջուր ջերմ ժամս երիս, և արկցի 'ի վերայ այտուցեալ և ցաւագնել՟ մասին մարմնոյ:

Չիրսօչէլէ. այսու անուամբ իմանի պալարն այն որ գոյանայ 'ի սերմնական անօթս:

Չիրքօնճիռաթօռէ. շրջապտոյտ մկանունք. կոչին և օթթուռաթօռիօ:

Չիքլամէն, կամ չիքլամինուս, և կամ արթանիթա, լտ: բանէ բօռչինօ, կամ չիքլամինօ, կամ բան թէռռէնօ, իտ: եէր սօմունու, տճ: և ը՟ մեղ ստուգաբանի՝ հաց խոզի, կամ հաց գետնոյ. խոտ երկայնացօղուն, յորոյ վերայ դասեալ կան ծաղիկք փոքրիկ և ծիրանագոյն. բերէ տերևս լայն և բոլորշի. գոյն նոցա 'ի վերին երեսս սպիտակախառն կանաչ, իսկ 'ի ներքոյ փոքր մի ծիրանագոյն. զոր ծեծեալ և եդեալ 'ի վերայ այտուցաց՝ վաղվաղակի ցրուէ կամ հասուցանէ: Արտադրէ պտուղ ինչ թաղանթային, ունելով 'ի միջի սերմունս անկիւնաւորս: Ունի արմատ լայն, ստուար, բոլորակաձև, և սևաթել, սպիտակ 'ի ներքուստ, իսկ թուխ արտաքուստ: Բուսանի 'ի հովանաւոր, և 'ի ցամաքային տեղիս. որոյ արմատ լոսեալ 'ի փոշի մանրամաղ, և արբուցեալ, դեղ է վատառողջ անձանց. զի սթափէ զթըմբրեալ մարմինս, մաքրէ զաղտեղութ՟ն արգանդի, լուծանէ զխցանս, և զդաշտանս կանանց: Չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի ամբողջ: Յօրինեն 'ի սմանէ նաև ազգ մի սպեղանւոյ կոչեցեալ յիտալացւոց՝ առթանիթա. որ 'ի վար արկանի 'ի դեղ խլութ՟ն:

Չիքհօրիում, կմ չիքօրիում ինթիպուս, լտ: չիքօռիա սալվաթիքա, իտ: սիքօռէ, գղ: ուվայլտ սըքքըրի, անգղ: եապան հինտիպասը, տճ: գէասնի, կմ հինպիթ, պր: և ըստ մեղ՝ եղերդ, կամ եղերդնակ

վայրկ: Բոյս յաճախեալ յերատիս, նա յաւէտ ՚ի
ջրյակայս վարիպս. որոյ տերևն է երկայն, եղերա-
հերձ, թաւամազուտ, կաթնալից, և յոյժ դառնա-
համ: Ճաղիկ նորա է վտքրիկ, վինջաւոր, և կապ-
ատպոյն: Ածատրէկ տերմնափակ լինչ երկայնաձև,
յորում բազկանան տերմունք սպիտակք, և եռան-
կնճռաձևք: Իակ արմատն սպիտակ, երկայն, ատուար
՚ի չափ ճկոյթ մատին մարդոյ: Ածոյս բոյս ունէ ըղ-
գոյացական ընչբորակս, և խոզ. որոյ տերևն լինի
դեղ ապտս ընդդէմ խցանաց ատրին որովայնի և
ընդերաց. այլև մաքրէ զարիւն, զի է մեղմօրէն գըր-
գռիչ, և լուծիչ: Ձափն ՚ի վեց սրամէ մինչև ցուէթ.
զոր պարտ է եռացուցանել ընդ մի լետր ջրոյ, և ա-
ռեալ լինի ըմպելիս այս ՚ի միջոցի 24 ժամուց. Ջնորդ
գործունէութեան ունի ՚ի ցքահանել եղուզեալ ջուրն:

Ձևքուեթա, լտ, և խա. կամ քօնխուա մաքուլա-
թուա: սիկիս, գղղ: հէմլօք, անդղ: պալտրան, տճ:
թահմահ, կամ շուքէրան, և կամ շէֆքէրամ, արբ:
խուրմ, կամ շիւք, պր: և ըստ մեզ՝ մոլախինդ, կամ
կոնիոն: Ի բոյս զազրահոտ, և թունաւոր. որոյ են
երեք տեսակք. առաջին տեսակն կոչի ՚ի լատինաց
ուոյ՝ չևքուեթա ապուաթիկա, կամ հէռատա չևքուեթա
ապուաթիկա. այսինքն մոլախինդ չորային. որոյ ցո-
ղունն է ատուար, երկայն իբր հինգ տանաջափ, ծըն-
րատար, մէջն դատարկ, յոկեալ, և բծաւլից: Տերև
նորա ունի զձև տերևոյ չէռվիօլիոն կամ քարտանի:
Ճաղիկն սպիտակ, հինգթերթեան ՚ի ձև շուշանի:
Բերէ և ատուար բազորչիս, յորս են սերմունք վո-
քրիկք, և դարձեալ պոյնք: Իակ արմատն սպիտակ,
անկաւէց, երկայն իբր տանաջափ, և ատուար մատ-
նաչափ, տոպատիամ, միանգամայն և անախորժելի:
Բուսանի յերատիս ՚ի բուրաստանս, և ՚ի ցանկա-
պատ տեղիս, նաև ՚ի ատորոտս լերանց, և ՚ի հովա-
նատար տեղիս: Ածոյս՝ բնութիւն է թմրեցուցիչ,
թուլացուցիչ, և թիւնաւոր. զի եթէ ոք կերիցէ
զատ վրիպակաւ կամ յանդիպատրաքոյ քան զչափն
սահմանեալ՝ պատճառէ զգրգռումն միանգամ ատ-
մոքի, զսաստիկ ժայթքումն, զպտոյտ գլխոյ, զնէթ
ատամոքի, և փորոտեաց, զցնցումն միանգամ, զհո-
գոյն տեղեան յակամայից, զհեծկլտանք, զայտու-
ցումն ատրին որովայնի, և այլոց անդամոց. և եր-
բեմն ևս զբորբոքումն բռնադատ մարմնոյ, ուր և

ականի Թշուառական Թիւնաւէրն անբերելի անձ-
կութե՛ի ցուրտ քերան հարեալ զրկիլ ՚ի կենաց։
Ա՛յլ դարման սորա չէ՛ ինչ տարբեր ՚ի դարմանոց
այլոց Թմրեցուցիչ և մահահրաւէր բուսոց, կամ
խոտոց։ Բայց մեք ատէպ ՚ի կիր արկանեմք զսա ՚ի
դեղորայս դուզնամանեայ քանակաւ, այսինքն զկի-
ոյ մանն միոյ ցորենոյ մինչև ցերկու կամ ցերեք ցո-
րեան չաւուրն, և յետոյ առ սակաւ սակաւ աշխ-
ճանաւ առաւելուլ զքանակն մինչև ցմի տրամ ամ-
բողջ։ զի լուծանէ զնացանս աւիշեան անօթոց, և
զամենամանր ծակուխս երակաց, որով և ցրուէ կամ
փարատէ զայտուցս խուլականս ՚ի վեր երևեալս ՚ի
պարանոցս և յամորձիս։ և բուժէ զնըդեննիս, և
զվէրս ճարակեալս ՚ի քաղցկեղոյ։ Նոյնպէս յաճախ
կազմեն ՚ի սմանէ սպեղանիս առ ՚ի փարատել զը-
կարծրատնդուքն փայծէղան, լերդի, և միջընդե-
րոց, այլև ՚ի ցրուել զնոյսս որկորոյ՝ արկանելով ՚ի
վերայ վշտացնեալ մասին մարմնոյ։ ՚Ի սմանէ յօրի-
նեն և զդոյացուքն ինչ անուշոյն, զոր խաւլք՝ էս-
թրաթեօ ոի էնքուեթա անուանեն, զորմէ լինովին խո-
սեցաք ՚ի տառն՝ Ե։ ՚ի կարգի իւրում։ Երկրորդ
տեսակն կոչի ՚ի լատինացւոց՝ էնքուեթա կամ հէրպա
քանինում մոքուլաթում։ նակ երրորդ տեսակն ան-
ուանի ՚ի նոցանէ՝ էնքուեթարիա կիմ հէռպա սէթհու-
սէ էինաբլի։ որք և երկոքին սոքա են բնուեթ և
ներգործուեթ նման սուաչնոյն, բայց ոչ են այնքան
յարմար ՚ի դեղորայս՝ որպէս զսոյն։

Ձնքօնիա, և կամ նախս, լս։ էնքօնեա, իտ։ գու-
գու, կամ լաքլաք, և կամ չէգուլթաեուր, արբ։
լեաքլեաք, պր։ և ըստ մեզ՝ արագիլ։ Ի Թուրքն
ջրասէր, որոյ կտուցն է երկայնաձիգ, որպէս և պա-
րանոց նորա։ Փետուրք նորա խայտաբղէտ, այսինքն
սպիտակ, և սեաւ։ սրունքն կարմիր, և երկայն։
այլ մեծուեթ և ձևով մարմնոյն՝ նման է կռնկան։
նակ ձայնն՝ փայտահարի։ գնէ զբոյն նը ՚ի վերայ
տանց, զոր ՚ի յոլով տեղիս բնակիչքն հոգունակուբ
պաշտպանեն, զի զգաստ գոլով բնուեթբ, ՚ի գալ գո-
ղոյ՝ իւրով գանգատական ձայնիւ յարուցանէ ՚ի քնոյ
զտանուտէրն։ Սովորական սրա նորա՝ օձ, ձուկն,
ձնձղուկ, և այլ զեռունք։ Մխա սորա՝ լինի դեղ
թունից, և տկարուեթ ջրոց։ Ճարպն նոյնպէս լինի
դեղ ցաւոց յօդուածոց, օծանելով ևեթ զսոյն ՚ի վերայ

ցաւագնեալ անդամոյն. իսկ լեղին սրէ զոհասութիւնն աչօց:

Պ.

Պազիլիքոս. տե՛ս Օձիմուս:

Պաթիթէռլոքասատ ատուն. այսու անուամբ ըստ անգամոցն նշանակի՝ խինձ ականջաց. որ է խոռոչեալ թմբկի ականջաց:

Պալաէննա, կամ չէթէ, և կամ չէթուս, լս: պալլէնա, իտ: առա պալըղը, կամ ֆալեանօս, ամ: և ըստ մեզ՝ պալէննա, կամ բալենայ: Ի կէտ վիթխարի՝ յաճախեալ ՚ի խորս հիւսիսային ովկիանոս, և ասի լինչ ամն մինչև ցվախճան կենաց իւրոց, ուստի և գոյանին ՚ի նոսա երբեմն մեծամեծք չոյժ. որք ըստ էրկայնութեանն հասանեն ՚ի 42 ոտնաչափ, և առաւել. պլուխն նորա է ատուար չոյժ և բոլորշի. ատամունքն մեծ՝ մինչ մի և կէս լիտր. այլ ՚ի մէջն ունի պլիսոյ կիտին՝ է հինգ լինչ իւղային, և հոտաւէտ, զոր ի տալ կոչեն՝ օլիս տի պալէննայ, յորմէ գործեն կակղացուցիչ և մեղմացուցիչ դեղորայս:

Պալատուսթիւտ. տե՛ս բօմեում կրանաթուս.

Պալատիթա, կամ թանուչէթուս պալատիթա, լս: քօսթօ, իտ: էռպ ուիս քօփ, գղղ: քօսթ մէրի, անգղ: Ի բոյս լինչ որոյ ցօղունն բարձրանայ չերկրէ իբր մի և կէս ոտնաչափ, և է ատուար, ուղիղ, կարմրերանգ, և հիւթալից: Տերև նորա է երկայնաձև, եզերահերձ, դառնահամ, միանպամայն և համեմային. ծաղիկն ելանէ առ կանթիւ տերևոյն, և է չիւխտ կարմիր, որպէս և կանթ նորա: Պտուղն տանձաձև, դեղին, անհարթ, և թաւամազուտ, յորում է և կուրիզ ոսպնաձև: Իսկ արմատն սպիտակ, և թելալից. բուսանի ՚ի բուրաստանս. զոր ժողովեալ ՚ի կէտ տրամէ մինչև ցմի՝ դնեն ՚ի թրմոց ՚ի ութ ունկի ջուր չերմագին ժամս վեց. յետ քամելոյ ոսն ըմպել վասն աճեցուցանելոյ զախորժակս կերակրոյ, և զօրացուցանելոյ զստամոքսն. զի է գրգռիչ, և քրտնաբեր բնութեամբ:

Պալատուրում, լս: պալատուրօ, իտ: պօ, գղղ: պօլըմ, անգղ: բէլլիպինկ, ամ: պիէլասաո, արք: յ.

ըստ մեզ՝ բալասան: Կրկնատեսակ է, այսինքն բնական, և արուեստական: Բնականն է հեղանիւթ թանձրամած, որք՝ի զանաղան տեսակ ծառոց, և տընկոց հեղանի, և հոսէ: Իսկ արուեստականն՝ է հեղանիւթ լոյծ, զոր ելուզանեն յո՛ և ի՛ցէ նիւթոց խառնմամբ ցքւոյ, կամ գինւոյ, յորոց զկարևորսն մի առ մի ստորագրեսցուք յառաջիկայդ:

Պալսամում աբօբլէթիքում, լտ: պալսամօ աբօբլէթիքօ, իտ: տամլաեա քարշը բէլէսէնկ, տճ: Է բալասան արուեստական հռչակաւոր՝ի դիպուածս իջուածոց, անդամալուծութե՛, և՝ի մասնաւորի ամենակերպ տկարութե՛ց ջլաց, և մկանանց մարմնոյ օծմամբ այնու զվշտացեալ մասունս: Այլ և դիմակալէ յոռի օդոց, և թուլութե՛ ուղղոյ և ջղաց, եթէ հոտոտեսցէ ոք՝ի սմանէ յաճախակի: Զայս եթէ կամիս կազմել, ա՛ռ կէս ունկի՝ օլիօ տի նօչէ մօսքաթա. երկու տրամ ստորաչէ քալամիթա. ութսուն շիթ՝ պալսամօ տէլ բէրու. և եդեալ զայս ամենայն յապիկած պոյտն, մերձեցո՛ ՝ի հուր թեթև. և յորժամ սկիզբն առնէ եփիլ, ա՛րկ՝ի նա կէս ունկի՝ էսթրաթթօ տի մէնթա, օլիօ տի քաննէլլա, օլիօ տի սուչ չինօ, օլիօ տի րութա, օլիօ տի լավանտա, օլիօ տի բուլէճիօ, յիւրաքանչիւրոցն քառորդ տրամ. և մի ունկի՝ սբիրիթօ տի սալ ամմօնիաքօ. զոր պարտ է դնել յետ տմենեցուն, այլ խառնելի է անընդհատ ծայրիւ փոքրիկ ինչ ցպոյ՝ մինչև՝ի զանգիլ բարւոք ընդ միմեանս, և լինել մի բաղադրութիւն, և յետ պաղելոյ դի՛ր յանօթ ապակեայ՝ի պահեստ:

Պալսամում անօտինում, լտ: պալսամօ քօնթռա բօթակռա, իտ: նիքրիզլէրէ քարշը բէլէսէնկ, տճ: և ըստ մեզ՝ բալասան ընդդէմ ոտնառութե՛. որ այսպէս բաղադրի: Ա՛ռ մի ունկի՝ օբբիօ. և հինգ ունկի՝ օճառ սպիտակ. և մանր հատանելով զայս դի՛ր՝ի թրմոց յերկու լիտր՝ կրկնահան օղի զաւուրս երիս. և ապա զօղին ուժգին քամեսցես կտաւով, յոր յաւե՛լ երեք տրամ՝ քանֆօռա. և կէս ունկի՝ օլիօ էսսէնցիալէ տի րամէռինօ, և միանգամայն անդադար խառնեա՛ զայս ծայրիւ մաքուր ինչ ցպոյ՝ մինչև զանգեսցին բարիոք ընդ միմեանս. և լինի դեղ ոտնառութե՛, յօդուածացաւութե՛, և ձեռնառութե՛, որով կազդուրէ զցաւս նոցին, եթէ օծանիցի յամենայնում 4 ժամու միանգամ՝ի ցաւագնեալ մասունս

անգամոց: Եւ երբեմն ի ներքուստ ևս ի վար սլ-
կանի ի 30 չթէ մինչև ց50, նաւն ընդ հատարակ
օդոյ վան ջրային խթից. բայց զգուշութիւ պէտք
են, զի բազում անգամ լինի ընդհատակար յղեաց պատ-
ճառաւ քարերոյ, որ գտանի ի բազպրութիւ այսր
բանասանի:

Պաղատամուտ աչէթիքուտ քանֆօռաթուտ, լս: պալ-
ատամ աչէթիքօ քանֆօռաթօ տէլ տօթիօռ բէլլէ-
թիէռ, լտ: Ի բալատան ինչ արուեստական. որ
պատպէս կազմի: Ա՛ռ մի տրամ սաբօնէ անիմալէ. և
նոյնչափ՝ քանֆօռա. ատան չիթ էսաէնցա սի թիմօ.
և մի ունկի՝ էլիէռէ աչէթիքօ: Զայս ամենայն հե՛ղ
ի ջիշ. և գի՛ր ի վերայ ջերմացուցեալ ուազոյ առ՛ի
հալել. և զկնի հալելոյ քաուռա՛ ըստ կուսւ, լի՛ց յանօթ
ապակի քաջ խցեալ ապակի խփով: Ջօրաւոր է բա-
լասանս այս ի դիպուածս յօդացաւուէ, նա յատկա
չիսաթիքա անուանեալ յօդուածոցաւութեան, եթէ
օծանիցի յամենայնում երեք կամ չորս ժամու միան-
դամ ի վշտացնեալ մասունս անդամոյ, միայն թէ
կրկնելն է գոնէ մինչև ի տասն օր:

Պաղատամուտ արչէի, լս: պալատամօ տ՛ արչէօ սի
մուխ, լտ: Բալատանս այս յոյժ գերազանց է, և
պատշաճաղական ի դիպուածս ամենաստեակ վէրաց
նորոգ ընկալելոց, զի սպիացուցեալ բուժէ առանց
երկար պիտոյից այլոց սպեղանեաց, և միանգամայն
տարամերժէ զտոչորումն, կամ զբորբոքումն նոցին:
Ջայս եթէ կամիս յօրինել, Ա՛ռ երկու ունկի թուէ-
մենթինա. և նոյնքան՝ կօմմո էլէմի, և նոյնչափ՝ ա-
լո սի բէքօռա. ա՛ռ և մի և կէս ունկի՝ օլիւօ տ՛ երէ-
ռէքօ. երկու տրամ՝ էչուա, և նոյնքան՝ տանտալի
ռօսսօ փոշիացուցեալ: Ջայս ամենայն դի՛ր ի պղյան
տապիկած, և մերձեցո՛ ի հուր թեթև, և յորժամ
սկիզբն առնէ եփիլ, ի քաց առ՛ ի հրոյն զպղյան,
և յետ քառորդ մի ժամու արկ յաման ինչ տապիկած:

Պաղատամուտ ալուսթիքուտ, լս: պալատամօ ալուս-
թիքօ, լտ: Բալատանս այս օգտաւէտ է՛ի դիպուածս
պատահական խլուրթե, և ցաւոց ականջաց. որ այս-
պէս կազմի: Ա՛ռ տրամ մի խուղ քաղցր նշոյ. երկու
տրամ՝ պիլէ պօվինա, և կէս տրամ՝ պալատամօ տէլ
Ֆիօռավանթի: Ջայս ամենայն խառնեա քարինք,
մինչև ի զանգիլ ընդ միմեանս. յետ որոյ առ փոքր
ինչ թեել կամ պատրույկ վշոյ, և զանգեա զայն նո-

աչ վաս, մայծ ընդ ծակտես յահանջս խլաց՝ առ ի վա-
րատել զխլուխն, և ի մեղմել զցաւս: Զայս բալա-
ան սովորութեն է տաճկաց մեկնաբանել՝ սաղտըզլը
քարըզ բէլէսէնկ ասելով:

Պալասմուտ բարակնիթիքուտ, լս: պալասմօ անթ-
նիբարակնիթիքօ տէլ քէնձլի, խս: գէօնիլիմլիուղէ
քարըզ բէլէսէնկ, տճ: և բալասան ինչ արուեստա-
կան, կազմեալ ի բազմատեսակ նիւթոց, զորոյ ըզ-
վաստակս բաղադրութենէ թողեալ ի ձարտարութիւն
դեղակազմացն, յայտ առնեմք զօգտաւէտսն նորա:
Յոյժ օգտակար և կարի պատշաճական է ի դէ-
ւուածս անդամալուծութենէ, տկարութենէ ջղաց, և
յաւոց յօդուածոց, օծելով այնու զվշտացեալ մա-
սունս անդամոց:

Պալասմուտ բէդուվխանուտ, լս: սուխթ, կամ
մէլլինկ պօլսում թուի, անգղ: պալասմօ ատ բէդու,
խս: պամ ատ բէդու, գաղ: եէնի տիւնեա բէլէսէն-
կի, տճ: և ըստ մեզ ստուգաբանի՝ բալասան բէդուայ,
որ է բնական, մթին կարմիր, թանձր իբրև զմեղր,
ախորժահոտ, ջերմահամ մխանգամայն և կծու, զոր
արտադրեն ի բունոյ, յատաց, և ի տերևոց ծառոյ
երիք ամերիկայ: Ընտիրն այսր բալասանի գոյանի ի
բերու, յայն սակս յանուն նորա սովորութեն եղև լա-
տինացւոց կոչել՝ բալասամուտ բերուվխանուտ: Ուր է
բնութեբ խթիչ և դրդուիչ. յորմէ կազմի դեղ ազդու
ընդդէմ խոնաւ ընչարդելութեբ, ապականութեան
թոքոց, թանչախատն վտրհարութեբ, մղձաւային, և
ջրային ախտից, ճնշման սմատական պարտուց կանանց,
և հոսման վավաշոտական հիւթոց ի տղմանց խողո-
վակէ: Զամն ի 6 յօրենոյ մինչև ց30՝ խառն ընդ
այլ յարմարագոյն դեղոցէից. զոր պարտ է առնուլ
սոյնչափ երեք կամ չորս անգամ յաւուրն: Գոյանի
և զմեռաւ կազմեալն. որ ի նոյն պէտս վարի, այլ
չէ յարգի և չահաւէտագոյն իբրև զբնականն: Ա-
յլ քաց ի տցանէ՝ են և այլ երկու տեսակք բալասա-
նի սեփհական գաւառին բերուայ, զոր քալ Ճանա-
չեն բնակիչք տեղեացն. առաջինն կոչի յիտալացւոց՝
պալասմօ սէքքօ, որ կարծր է իբրև զկէժ, կարմիր
բանգ, և հոտաւէտ, որ ինքնին բղխէ ի բունոյ վոք-
րիկ և պտղաբեր ծառոյ երիք բերուայ: Իսկ երկ-
րորդն զոր կոչեն՝ պալասմօ պիանքօ, սպիտակ է, հո-
տաւէտ, և հեղանուտ իբրև զկէժ բևեկնոյ, ծորել

'ի հաստաբուն ծառոյ յաւուրս ջերմութեան ամառան։ Երկոքին սոքա վարին 'ի զօրացուցիչ սպեղանիս, և 'ի հատադեղս։

Պալսամում եուտաիքում, կամ օբօպալսամում, կամ պալսամում տէ մէքա, և կամ ամիռիս օբօ-պալսամում, լտ։ պալսամօ տէլլա մէքքա, կամ պալսամօ պիանքօ, կամ պալսամօ տէ' ճիւտէի, կամ պալսամօ տ' էճիթթօ, կամ պալսամօ օռիէն-թալէ, իտ։ մէքքէ բէլէսէնկի, կամ եահուտի բէլէսէնկի, տճ։ Է բալասան ինչ բնական, հեղա-նուտ՝ թափանցիկ՝ ռետնալից, սաստկահոտ, դառ-նահամ. գոյն նորա 'ի սկզբան է սպիտակագոյն, ապա կանաչագոյն, հուսկ յետոյ 'ի գոյն դեղին փո-խի, և փոքր ինչ թանձրանայ. զոր լցեալ յանօթս տանին 'ի վաճառ ընդ հեռաւոր տեղիս։ Ազնիւ և օգտաւէտագոյն համարին ծորեալքն 'ի բունոյ և յոստոց ծառոյն յաւուրս տօթոյ ամառան՝ սպիտա-կագոյն, թափանցիկ, դառնահամ, և կիտրոնահոտ, որք և սակաւ ուրեք երևին յայսոսիկ կողմանս։ Նմին իրի հարկ է 'ի վար արկանել զծորեալսն, կամ զբըղ-խեալսն. որք լինին դեղ ազդու ընդդէմ թուլութեան ջղաց, խոնաւ շնչարգելութեան, և հոսման վավաշոտա-կան հիւթոց 'ի սաղմանց ճանապարհէ. նոյնպէս օգ-տաւէտ է ժանտախտից, և հարուածոց թունաւոր զեռնոց. զի է դրդռիչ բնութեան։ Չափն 'ի 10 շթէ մինչև ց40։ Այլև օգտակար է վիրաց, և ցաւոց և տկարութեան ջլաց՝ օծելով այնու զվշտացեալ մասունս մարմնոյ։ Ծառ այսր բալասանի բուսանի 'ի հրէաս-տան 18 ժամաւ հեռի 'ի մէտինէէն, և 11 աւուրբք 'ի մէքքէէ. յայն սակս լատինացիք կոչեն զայս բա-լասան մէքքէի. բուն նորա է փոքրիկ և բազմոս-տեան. որոյ ոստք են ուղիղ, թեթև, և ծնրաւոր. կեղևն կանաչ է 'ի ներքուստ, իսկ արտաքուստ կարմրագոյն. փայտն սպիտակ, ուղղալից, և անու-շահոտ. յորմէ կազմեն դեղ ազդու ընդդէմ ցաւոց գլխոյ, և ոտամոքսի, և 'ի մասնաւորի՝ խածուածոց կատաղի շանց, և տարափոխիկ ախտից. տերևն նման է տերևոյ փեգենայի։ Ծաղիկն սպիտակ, և աստ-ղաձև. պտուղն փոքրիկ, սրածայր, և կանաչ, այլ 'ի հասանիլն փոխի 'ի թուխ. համ նորա նման է այ-լոց համեմաց՝ զոր բնակիչք երկրին չորացուցեալ և լոսեալ 'ի սանդ՝ գործեն անտի դեղ պահպանիչ ա-

ռալլուԹԷ, խայԹուածոց օձից, և նուազուԹԷ ատղ-
ին. զի ե խԹիչ բնուԹԷ: Ա՛յս պտուղ ոչ ապակա-
նի արագ, այլ սևէ. զոր լսաինք կոչեն քառբօտալսա-
մուտ. ունի և կորիզս դեղինս, հիւԹաւորս, հոտա-
ւէտս, և դառնահամս: Ա՛յս ծառ գտանի և յերջա-
նկին արտաքսայ, 'ի վերին եգիպտոս, և յայլ տեղիս
ամերիկոյ. բայց տորայս ազնուագոյն ե:

Պալատամուտ Թօլուէֆէռա, լտ: պօմ տիս Թօլիս,
գղ: պալըմ օվ Թօլիս, անգղ: պալատամօ ԹօլուԹանօ,
իտ: Ե բալասան ինչ բնական դեղին՝ հարեալ 'ի
գոյն կարմիր, հեղանուտ, խժային, մածուցիկ, կի-
տրոնահոտ, ջերմահամ, միանգամայն և կծանօղ լեզ-
ուի. յորմէ կազմեն դեղ ազդու 'ի դիսպուածս մի-
զարգելուԹԵ, ընչարգելուԹԵ, հարբխոյ ինքելոյ 'ի
կուրծս, և ԹուլուԹԵ ջլոց. զի ե դրդռիչ, և միզա-
բեր բնուԹԵ: Ազին 'ի 10 շԹէ մինչև ց20: Ծառ
տոքա բուսանի յամերիկայ. լինի 'ի ջոր և յանբեր
տեղիս. ածի չափաւոր 'ի Թանձրուն և 'ի բարձրու-
Թիւն. տերևն մշատպալար ե, նաև պտուղն վոքրիկ և
դառնահամ. յորմէ յօրինեն դեղ ազդու ընդդէմ
հարուածոց օձից:

Պալատամուտ ատւըֆհուրիս ԹէռէպէնԹհինաԹուտ,
լտ: պալատամօ տի ծօլֆօ ԹռէպէնԹինաԹօ, իտ: գիւ-
քիւրԹ բէլէպէնկի ԹրէմԷնԹինէ, ատ: Ե բալասան
ինչ արուեստական բաղադրեալ 'ի մանր ծծմբոյ,
և 'ի ցքւոյ խժի բևեկնոյ. հոչակաւոր ե սա 'ի մա-
ան օգտաւէտուԹԵ 'ի դիսպուածս վիրաց Թոքոց, ե-
րիկամանց, և այլոց ընդերաց. որով մաքրեալ վի-
րատ ջնոտա. և միանգամայն ջորացուցեալ ապակի-
նէ զհիւԹս վավաշոտականս՝ որ հոսի 'ի ատղմանց
Ճանապարհէ, և այլ որոդայԹաւոր ախտս, յորս
ապահովապէս 'ի կիր արկանի 'ի նեղքուատ: Ազին
'ի վեց շԹէ մինչև ց20 յաւուրն:

Պալատամուտ քօբահիվա, կի պալատամուտ քօբատու, և
կի պալատամուտ քօբահպա, լտ: պօլըմ օվ քօբէյսիէ,
անգղ: պալատամօ տէլ քօբատվա, կամ պալատամօ տէլ
քօբքատհպա, իտ: պօմ տը քօբահիւ, գաղղ: Ե բալ-
ատն ինչ բնական՝ բղխեալ 'ի բնոյ ատտալից ծառոյ
երկիր արևելեան հնդկայնոյ յաւուրս ջերմուԹԵ ամա-
ռան, ապխտակ հարեալ 'ի գոյն դեղին՝ մաքուր, հե-
ղանուտ երբեմն գմեղս, Թախանձիկ, հոտաւէտ, դառ-
նահամ, միանգամայն և կծանօղ լեզուի: Ընտիրն

այսր բալասանի գետանի յամերիկայ, որ բնութեամբ
լինի գրգռիչ, և միզաբեր. զոր սակս՝ ի կիր արկա-
նեմք՝ ի դեղատածս միզարդելութեանէ, հոսման գալ-
ղևական հիւթոց՝ ի սակմանց խողովակէ, և լուծ-
ման արգանդի կանանց, յորում դեղատածի վտհա-
նակ տեառաեսական արեան հոսի հիւթ սպիտակ շա-
բաւանման: Ջոպին՝ ի տան շրթէ մինչև 320. զոր
պարտ է խառնել ընդ մի ձուոյ դեղնուց, ընդ մի տրամ
խեժի արաբիոյ. ընդ մի տրամ քաղցր նշոյ. յաւելլով
՝ի նոյն փոքր ինչ շաքար, և բաւականաչափ գալղ
ջուր. և առեալ լինի ըմպելիս այս՝ ի միջոց 12 ժա-
մուց:

Պանանէա, կամ մուզա բարատիզիաքա, կամ մուզա
քլինֆֆօուԹիանա, լտ: պանանիէ, գղղ: բէնինԹին
Թուի, անգղ: ֆինքօ տ՝ ատամօ, իտ: Մուզատ անուն,
որպէս Թուի առեալ՝ ի յարաբական բառէն՝ մուզ,
յորմէ և առ հայս՝ ադամաԹուզ, ի պատուղ ինչ նման
բատ իմիք Թարմ բակլայի, ողկուզօրէն կախեալ ընդ
տագաներն բնոյն. 40. 50 պտուղք՝ ի մի ողկոյզ. գոյն
նոցա՝ ի սկզբանն է կանաչագոյն, և ապա առ ապ-
հաս սակաս վտհին՝ ի դեղին. ՄԷջ նոցա սպիտակ,
վտափուկ, քաղցր, ախորժելի, միանգամայն և զովա-
ցուցիչ, այլ ցամաք. ունի և սերմունս մանուսն՝ ի
պտղոց սահի կազմեն չամչարակ, որ այնինքն է խո-
հաՓ: Բոյս նորա կամ բուն՝ փուռզ է և սպնգային,
որ բարձրանայ 310, այլև 314 ոտնաչափ առանց ո-
տոց ամենևին. ԵրկայնուԹեն տերևոյ նորա սովորա-
բար լինի վեց ոտնաչափ, իսկ լայնուԹեն մի և կէս.
զոր ալքատք տեղւոյն՝ ի գործ ածեն վտհանակ
սփաեղ: Ընդ բոյս հասարակօրէն բուսանի՝ ի կող-
մանս հնդկաց, ամերիկոյ, և եգիպտոսի, ՝ի հովանա-
ւոր տեղիս. յորժամ պտուղքն հասանին, ընդ նմին
և բոյսն չորանայ. բայց նախ քան զանկանիլ կեր-
ևիլ՝ այլ շառաւիղք ելանեն յարմատոյ նորա, որ կեր
միոյ ամի արտադրեն պտուղ. ապա և նոքին գօսա-
նան, և այլք զկնի բուսանին:

Պասս վէնԹռէ. այսու անուամբ կոչին՝ առոյգն
որովայնն, կամ ներքին փորն:

Պատասանա, կամ առքիթուր լոբբա, կամ լոբբա
մաեօս, լտ: լաբբօրնի, կամ քաբբէլլաշէյա, կամ
բէտասոնաԹա մաճճիօրէ, իտ: պատասան, գղղ: պըր-
տոք, անգղ: տուր ավտաթ օԹու, տճ: Ի հռչակա-

ւոր բոյս ինչ՝ բուսեալ 'ի խոնաւուտ, և 'ի պարարտ տեղիս. որոյ ցօղունն է երկայն իբր երեք կամ չորս ոտնաչափ, եռանկիւնաձև, կարմիր, և թաւամազուտ: Տերևն մեծ, լայնաբաց, 'ի վերուստ մթին կանաչ, իսկ 'ի ներքոյ սպիտակ, և աղուամազուտ: Ծաղիկն ծիրանագոյն, փնջաւոր, և հերձոտ, յորոյ վերայ զետեղեալ կայ նիւթ ինչ նուրբ՝ նման փոքրիկ ճանկոյ, որով և կռուի 'ի հանդերձս անցաւորաց: Բերէ և սերմունս մանունս, հոտաւէտս, և փետրաւորս: Իսկ արմատն ստուար, երկայն, սպիտակ 'ի ներքուստ, իսկ արտաքուստ կարմիր, պարարտ, քաղցրահամ, և հոտաւէտ, միանգամայն և դեղ ազդու ընդդէմ յօդուածացաւութեան, ոտնանառութեան, ձեռնառութեան. ունի զմասնաւոր գործունէութիւն 'ի մաքրել զարիւն 'ի խժային աղի հիւթոց, 'ի բուժել զխոյլս պարանոցի, և զվէրս գաղղիականս. զի է թուլացուցիչ և քրտնաբեր բնութ՟ : Չափն յութ տրամէ մինչև ց16. զոր օրէն է եռացուցանել ը՟ մի և կէս լիտր ջրոյ:

Պասսիլիքօ. տե՛ս օչիմում:

Պաքքաէ եունիբէռ. տե՛ս եունիբէրուս:

Պաքքէ լաուրի, լտ: տէֆնէ թօհումու, տճ: և ըստ մեզ՝ պտուղն դաբնւոյ. զներգործութիւն սորա մարթիս տեսանել 'ի բառն Լաուրուս:

Պէթա, լտ: պիէթօլտ, կամ պիէթա, իտ: պէթ ռավ, գաղղ: ռէտ պիթ, անգղ: բազի, կամ բանճար, և կմ չիւքիւնտիւր, տճ: սէլք, արբ: բազու, պր: և ըստ մեզ՝ բազուկ խոտն, կամ բանջար: Է բոյս յազգէ խաւարտից, ծանօթ ամենեցուն. որոյ տերևն 'ի կիր արկանի 'ի կերակուրս և 'ի դեղորայս, որ է օգտակար կրծոց, հնագոյն հազից, ախտից թոքոց, միզման արեան. զի է թուլացուցիչ, և կակղացուցիչ բնութ՟ :

Պէթօնիքա կամ վէթթօնիքա, լտ: պէթուան, գղղ: վուտ պէթօնի, անգղ: գէսթէռէ, տճ: և ը՟ մեզ բետոնիկ, կամ կէստրոն: Է բոյս հոտաւէտ բուսեալ 'ի խրամս, 'ի խոնաւուտս, և 'ի հովանաւոր տեղիս իբր մի և կէս ոտնաչափ բարձրութ՟. արձակէ յտրմատոյ զտերևս երկայնս, լայնս, երկայնականթս և շուրջանակի սղոցաձևս, և դառնահամս: Բանայ ծաղիկս խողովակաձևս, և ծիրանագոյնս. բերէ և սերմունս ոլոռնաձևս: Ունի արմատ բոլոր-

շի, ատուար իբր բթաչափ, և թեւլայից: Նախնիք ՚ի վար արկանէին ասսի ՚ի դիպուածս յօդուածացա- ւորեցին, և այլ պէսպէս ախտից. նաև մեք այժմ մի- այն ՚ի գործ արկանեմք ՚ի քարշել ընդ ունգունս ըստ օրինակի պնչատեղոյ՝ ատ՚ի գրգռել զվատթար հիւթս ուղղոյ, և ՚ի փարատել զցաւս գլխոյ:

Պէլա տօննա, կամ ամառվըլլիա պէլա տօննա, կամ պէլա տօննա, կամ աղձաօքա պէլա տօննա, կամ ամառվըլլիա պէլ տամ, գղլ: Ի բոյս ինչ բազմա- ցօղուն բուսեալ յԵւրոպիա ՚ի գաշտավայրս, յան- տառս, և ՚ի բուրաստանս իբր կանգնաչափ բարձ- րութեամբ. որոյ տերևն նման է տերևոյ ազնտում անուանեալ բուսոյ. բայց քնքուշ, մեծ, և անախորժ հոտով քան զայն. ծաղիկն ելանէ առ կանթիւ տե- րևոյն՝ և է զանգակաձև, հերձոտ, և սպիտակ. ՚ի տեղիս տեղիս նաև ծիրանագոյն: Պտուղն գնատակա- ձև, ատուար ՚ի չափ հատից խաղողոյ, կանաչ, այլ ՚ի հասանելն փոխի ՚ի գոյն սեաւ. փայլուն, և հիւ- թալից, համնորա տախտ է և փոքր մի սեղմիչ, միան- գամայն և տաղտկացուցիչ, իսկ արմատն երկայն, ատուար, սպիտակ, և ոտալից: Այս բոյս սովորա- բար սկսանի ծաղկիլ յամսեան սեպտեմբերի, և եր- բեմն և ա ՚ի ձմերնային եղանակի, և ՚ի սկիզբն գար- նան. որոյ եթէ տերևքն, եթէ ծաղիկքն, և եթէ պտուղքն կարգին ՚ի դառն թխնաւուր և մահահրա- ւէր բուսոց, զի են ուժգին թուլացուցիչ և քնա- բեր բնութեաբ, զորոյ զփորձն առին նախ տղայքն եւրոպիոյ. զի անփորձ գոլով այնմ, կերին անտի ա- ռաւել քան զչափն պայմանեալ, և պատճառեաց ՚ի նոսա զչորութիւն բերանոյ, զդողդոջուն լեզուի, զաստիճ ծարաւ, զդժուարութիւն ՚ի կլանել, և ՚ի ժայթքել, զանհնարին թուլութիւն ջլաց և բովանդակ մարմնոյ, զկրճուն ատամանց, զցնորուն, զցնցուն ջլաց և մկանանց, զմթագնութիւն աչաց, զայտու- ցուն, և զկարմրութիւն դիմաց, զուժգին սեղմուն ընտերաց, զբորբոքուն որկորոյ, ստամոքսի, և որո- վայնի. և երբեմն ևս զբորբոքուն միջընդերաց, թո- ղոց, և լերդի. զաստիճ խէթ որովայնի, զպատյա- դևոյ, զդողդոջուն անդամոց, զլուծուն ջլաց, զանդամալսութիւն, զնուաղուն սրտի, զքաղցիւել անդադրմանելի, և վերջապէս զմահ: Այլ դարման առաւ՝ են ործացուցիչ դեղորայքն, զոր օրէն և վար-

ընդ փոյթ մատուցանել. նոյնպէս պրեհն, զոր պարտ
է պատրաստել քացախով, և մեղրիւ, կամ կանթամբ,
և կամ և նոցէ խլուով: Բայց մեք ստէպ ի կիր ար-
կանեմք զսա ի դեղոյս դուշնամանեայ ջափով.
այսինքն զմի կշիռ ցորենոյ մինչև ցչորս: Իսկ եղա-
նակն զոր պահեմ ի տալն զԹրմոցն, է այս: Առ
քան կշիռ ցորեան՝ ի աւերևոյ սասի՝ որ նոցէ չորա-
ցուցեալ և նուրբ, լսեալով զայն ի մէջ անկանի
լից յանօթ ապակեայ և դիր Թրմոց ի տան ուն-
կի ջուր եռացուցեալ ջոմս չորս կամ վեց. յետ
զետեղոյ զայն պարտ է առնուլ ախտակրին երեք կամ
չորս անգամ յաւուրն, ըստ չափու կիսոյ ունկւոյ:
Եւ ապա առ սակաւ սակաւ աստիճանաւ օրէն է
առաւելուլ զքանակն մինչև ցմէ ցորեան: Զայս չափ
տալք վասն չափահաս արանց և կանանց. իսկ մա-
տաղ մանկանց մինչև ցմի ցորեան յաւուրն՝ խառն
չաքարաւ, և գալղ ջրով: Ըստ որում է դեղս այս ի
գիպուածս բորբոքման որկորոյ, անդ.ամալուծութե,
լուանոտութե, ախոնդանոտութե, ջրավախութե,
հարկն ցնցականի, ջրգողութե, գալկան, և այլ ամե-
նայն ախտից պատճառելոց յուժգնութէ բնութեն,
նա յաւէտ սուր և ուժգին տենդից: Ջնոյն գործու-
նէութե ունի սորա գոյացութեն, զոր խաալք՝ էս
թուաթթօ ու պէլլա ոսննա անուանեն: ի աւերևոյ
սասի երբեմն կանայք ևս կալմեն ազգ ինչ սպեղան-
ոյ, որով օծանեն զբովանդակ մարմինս ևրեանց,
ուր և աւանդեն և պնդեն՝ եթէ է յոյժ պնդացու-
ցիչ, և չքեղացուցիչ մորթոյ, ի դէպ եկեալ անուան
պէլլա ոսննա, որ յիտալացւոց լեզու նշանակէ՝ կին
գեղեցիկ:

Պէլլիս, կամ պէլլիս մինոր, լա: պէլլիտէ մինո-
րէ, իտ: բագըռէթ, գալղ: տէիզի, անգղ: արջն,
արբ: հէյֆարիքօն, ար: Է բոյս ցածուն, և մածու-
ցիկ. որոյ տերևքն են փոքրիկ, ատուար, երկայնա-
ձև, և յղկեալ. և ի միջոյ տերևոց ելանեն նուրբ ցո-
ղունք, որք ի ծայրս փթթեն գեղեցկատեսիլ ծաղկիս
Ճառապայթաձև, և սպիտակ, բայց յոմանս տեղիս
լինի և ծիրանագոյն սպիտակախառն, և չնկապոյն.
ուն և սերմունս մանուս: Իսկ արմատն երկայն և
թելային: Ածի բոյս հատարակօրէն բուսանի ի խո-
նաւուտ տեղիս. որոյ տերևն ունի զմնանաւար և զան-
վնաս գործունէութե ի սպնացուցանել և ի բու-

ժել զնորոգ ընկալեալ վէրս, և 'ի մասնաւորի ընդ-
դէմ թանչից, հոսման արեան, և բորբոքման աչաց:
Պէլծուինօ. տես պէնծօինում:
Պէծօար, կամ պէլծուար, և կամ անթիտօթում,
լտ: պէլծուառռօ փիէթրա տի ֆիէլէ, իտ: պաղէ-
հիր, կամ բատզէհր, արբ: շիֆատառու, կամ ճան-
տառու, պր: պանզէհիր, կամ փանզէհիր, տճ: և
ըստ մեզ՝ դեղթափ, կամ անդեղայ, և կամ մաղձա-
քար: Է նիւթ պնդացեալ 'ի մաղձն կենդանեաց, և
է բազմատեսակ, յորս առաւել երևելի են քառեակ
տեսակք. առաջին տեսակն կոչի յիտալացւոց՝ փիէ-
թռա օռիէնթալէ. որ գոյանայ 'ի պարկ լեղւոյ ո-
մանց թեթևաշարժ քառոտանեաց կոչեցելոց լատի-
նական բարբառով՝ քափռի չէռվա, զորմէ ասեն լի-
նել ազգ ինչ վայրենի այծեղջեր, որ ստէպ գտանի
'ի լերինս հնդկաց, և ամերիկոյ: Այս դեղթափ 'ի
սկզբանն է գորշ ներքուստ և արտաքուստ, և ապա
առ սակաւ սակաւ փոխի 'ի գոյն դեղին, յորմէ գոր-
ծեն դեղ ազդողական 'ի դիպուածս նուաղման և
դողդոջման սրտի, և ըմբռնելոց 'ի մահաբեր տեն-
դէ, 'ի ժանտախտէ, և 'ի պիսակէ, ուր հարկ 'ի վե-
րայ լինի շարժել զչափաւոր քիրտն: Չափն 'ի 4 ցո-
րենոյ մինչև ց6: Երկրորդ տեսակն կոչի 'ի նոցանէ
պէծօառ օքչիտէնթալիս, որ թէպէտ մեծ է քան
զնախընթացն, այլ ոչ այնչափ ազդու իբրև զնա.
չափն 'ի 6 ցորենոյ մինչև ց30: Երրորդ տեսակն կո-
չի՝ պէծօառ տի բօռչի, որ մեծ է քան զկաղին, և
փոքր քան զընկոյզ. որ արտադրի 'ի լեղիս ոմանց
վարազուց, որք յաճախեալք են ոչ միայն 'ի մալա-
քա, այլ ընդ բովանդակ արևելեան կողմանս հնդ-
կաց, զոր հնդկացիք 'ի բարբառ իւրեանց՝ մաստիքա
տէ սօհ անուանեն. այնչափ 'ի յարգի է առ հնդիկս,
մինչև մի կշիռն վաճառի չորից կշռոց ոսկւոյ ուր և
աւանդեն, եթէ օգտաւէտագոյն է ընդդէմ թունից,
ժանտախտից, մահաբեր տենդից, պիսակաց, ցաւոց
տրգանդի, նուազուեն ամսական պարտուց կանանց,
և ընդդէմ ամենայն ախտից պատճառելոց 'ի ցրտու-
թէ: Իսկ զչորրորդն կոչեն՝ պէծօառ տի շիմիա, որ
թարգմանի՝ դեղթափ կապկի: Վարի սա ևս 'ի բժշ-
կական դեղորայս: Չորեքին սոքա են պէսպէս, զի
ոմանք աճեցեալ լինին 'ի չափ հասարակ ընկուզոյ.
ոմանք 'ի չափ հնդկային մշկահոտ ընկուզոյ. և ս-

մանք 'ի չափ կաղնոյ: Ոմանք բոլորշի, ոմանք տափարակաձև, ոմանք սապատողնաձև, և ոմանք երկայնաձև: Եւ որպէս քանակութ՞ի և ձևովք, նոյնպէս և գունովք գլխովին զանազանին, բերելով ըզգոյն ձիթապտղոյ, մոխրոյ, ծիրանւոյ, կինամոնի, բանջարոյ, և՝ն:

Պէհէն ալպում, կամ քուքուպալուս, լտ: պէէն պիանքօ, իտ: պէհէն պլան, գղղ: ուվայդ պէն, կամ սփէթլին բօբբի, անգղ: Է բոյս, որոյ ցօղունն է երկայն իբր երկու ոտնաչափ, նուրբ, բոլորակաձև, ծնրաւոր, և փոքր մի տտպահամ: Տերևք նորա նման են տերևոց լեմոնի: Ծաղիկքն գեղեցկատեսիլ, հինգթերթեան, նմա ըստ իմիք ծաղկանց շահոքրամի. ունի 'ի մէջ իւր զփոքրիկ փունջ ինչ թագաձև. այլ գոյնն ծաղկանց սովորաբար սպիտակ է, բայց յոմանս տեղիս լինի և կարմիր, դեղին, և բացագոյն կարմիր. բերէ և սերմն՝ նման սերման լիքհինիսի: Իսկ արմատն երկայն, ստուար իբր մատնաչափ, դժուարաբեկ, արտաքուստ մոխրագոյն, իսկ 'ի ներքուստ սպիտակ, և փոքր մի դառնահամ միանգամայն և համեմային. ունի իւղս և աղս գոյացականս, և է դեղ տկարութ՞ի ջղաց, և ռէսիբօլէ անուանեալ ախտի: Է սորա և այլ տեսակ, զոր լատինք կոչեն՝ պէհէն ռուպռում, որոյ ծաղիկն նման է նռնենւոյ, արմատն կարմրերանգ, և շողգամաձև, իսկ տերևն երկայնաձև իբրև վերնոյն. որպէս և ներգործութ՞ին նման է ներգործութ՞ի նորա: Երկոքին սոքա առատ բուսանին 'ի լեառն լիբանան, զորոց արմատսն կտրատեալ դալարավաճառաց 'ի մանր հատորս՝ առաքեն 'ի վաճառ:

Պէնէվօլուս, լտ: քօռտիալէ, իտ: Է անուն ընդհանուր՝ ո՛ր և իցէ հեղանիւթոց, որք են դեղք օգտակար և զօրացուցիչ սրտի, որպիսի են՝ աքգուա նաֆէ, աքգուա չինամօմօ, լիգուօռ անօտինօ, սբիռիթօ տի մէլիսսէ, և՝ն:

Պէնծօէ, կամ քռօթօն պէնծօէն, լտ: պէլծուինօ, պէլճիվին, իտ: պէնժուէ, գղղ: պէնճէմին, անգղ: ասըլ պէնտ, տճ: և ըստ մեզ՝ կնդրուկ: Է խէժ սաստկահոտ՝ բղխեալ յոստոց կարծրաբուն ծառոյ իրիք հնդկայնոյ և արաբիոյ, որ լինի մեծ, երկայն, և կարծրափայտ. ունի և տերևս երկայնաձևս՝ ըստ նմանութ՞ի տերևոյ կիտրոնի: Այս խէժ ազնիւ հա-

մարի, եթէ իցէ կարմրերանգ, մաքուր, փայլուն, թափանցիկ, սպիտակաբիծ, և դժուարաբեկ. համով ըստ մասին դառն է, և ըստ մասին քաղցր, յորմէ կազմեն սպեղանի ինչ օգտակար վիրաց, և երբեմն ևս դեղ վասն այտուցից թոքի, և շնչարգելութեան: Վարի և 'ի ծխանելիս, զոր արկեալ 'ի հուր՝ բուրէ զհոտ անոյշ, բայց առթէ զհազ:

Պէռպէռիս, լտ: պէրպէրրի, անգղ: պէռպէռօ, կամ քրէսբինօ, իտ: էբին վինէթ, գղղ: ամպէր պարիս, տճ: մուղիթ, կամ պէռպարիս, արբ: Է ծառ ինչ փոքրիկ և փշալից, որոյ կեղևն է նուրբ, և յղկեալ: Ծաղիկ նորա մանր է և բազմաթերթ. պտուղն փոքրիկ, և ձուաձև և շեկակեղև. մէջն թամբալից, կարմրերանգ, և թթու. յորմէ կազմեն դեղ 'ի դիպուածս փորհարութեան, սուր տենդից, և զայրացման ախտի. զի է թուլացուցիչ և զովացուցիչ բնութեան: Զկեղև այսր պտղոյ՝ որ է տտիպ համով, 'ի կիր արկանեն ընդդէմ դալկան, և հոսման արգանդի, յորում դիպուածի փոխանակ տեռատեսական արեան՝ հեղու հիւթ սպիտակ: Զափն կէս ունկի՝ եդեալ 'ի մէջ մի լիտր ջրոյ, թո՛ղ եռալ մինչև ցմնալ կիսոյ մասին, և 'ի գո՛րծ արկ: Ունի և կորիզ երկայնաձև կարծր, և մթին կարմիր, և բնութեան սեղմիչ: Իսկ արմատն փայտային, դեղնագոյն և տարածողական: Բուսանի յեւրոպիա 'ի ցանկապատ և յանհեթեթ տեղիս:

Պէքքապունկա. յայս անուն կոչեցեալ 'ի գերմանացւոց, յորմէ և լատինացիք՝ վէռօնիքա պէքքապունկա, և գաղղիացիք՝ վէռօնիգ քռէսօնէ, իսկ անգղիացիք՝ պռուքլայմ սբիտուվէլլ: Է բոյս ինչ ջրային, որոյ ցօղունն սփռեալ է զերեսօք գետնի, և է բոլորակ, ստուար, սպնգային, և կարմրերանգ: Տերև նորա է լայն, բոլորշի, թանձր, յղկեալ, թուխ, և շուրջանակի սղոցաձև ատամնաւորեալ: Ծաղիկն կապտագոյն և հասկաձև, պտուղն երկայնաձիգ, և սերմնաւոր: Իսկ արմատն երկայն, օձապտոյտ սպիտակ, և թելալից: Բուսանի յամենայն ուրեք, մանաւանդ 'ի գերմանիա. լի է իւղով և գոյացական աղիւ, օգտաւէտ է ընդդէմ ախտի սքօռպութօի, և միզարգելութեան. զի է մեղմօրէն թուլացուցիչ բնութեան:

Պիանքօ տի պալէնա. տե՛ս սբէրմաչէթի:

Պիանքօ տի ուօվօ. տե՛ս օվում:

Պիթումէն եուտաիքում, կամ պապիլօնիքում, և կամ առբհալթում, լտ: պիթումէն տի ճիուտէա, և կամ ասֆալթօ, իտ: շամաքէ, պր: և ըստ մեզ թարգմանագրի՝ ասֆալ, կամ ասփալթ: Է կուպր ինչ սեաւ, կարծր իբրև զկպրաձիւթ, թեթև, մաքուր, մածուցիկ, պարարտ, ծծմբային, և դիւրավառ և սաստկահոտ, որ սովորաբար գտանի 'ի մեռեալ ծովու, և տատանի իբրև զփայտ ըստ երեսս ջուրց: Ասի թէ 'ի հնումն եգիպտացիք սովաւ օծանէին զմարմինս մեռելոց, առ 'ի մնալ զերծ 'ի փտութէ, և յապականութէ. ունի նաև զմասնաւոր գործունէութի 'ի զօրացուցանել և 'ի մաքրել զփտեալ վէրս, և կցեալ միաւորէ զայնս, յորս յապահովապէս 'ի վար արկանի արտաքուստ և 'ի ներքուստ:

Պիլէ. տես պիլիս:

Պիլէ նէռա. տես աթրա պիլիս:

Պիլիս, լտ: պիլէ. իտ: խօլիէս, յն: սաֆռա, տճ: լէվ, պր: Է անուն ընդհանուր նշանակիչ մաղձի՝ թէ՛ մարդոյ, և թէ կենդանեաց. որոյ իսկաբուն բնակարանն է պաղակն լերդի: Բաժանի 'ի բնականն, և յանբնականն. բնականն է կարևոր, որ ըստ արեան տարածի յերակսն 'ի տալ սնունդ մարմնոյ: Իսկ անբնականն, որ սովորաբար գոյանայ յապականութէ կերակրոցն, և 'ի դրտից քառից հիւթոցն, առթէ զզանազան կերպ խօթութիւն և հիւանդութիւն, և մանաւանդ ստամոքաց:

Պիսթօռթա, կամ բօլիկօնում պիսթօռթա, լտ: ռէնօնէէ պիսթօռթէ, գղղ: սնէյքէուվիտ, կամ կրէթըր պիսթօրթ, անգղ: գուռտ բէնչէսի կամ չիանչիք, տճ: Է բոյս, որ սովորաբար բուսանի 'ի լերինս եւրոպիոյ իբր երկու ոտնաչափ բարձրութիւն: Տերև նորա լայն է, և երկայնաձև՝ ըստ նմանութեան տերևոյ թրթնջկի, 'ի վերուստ պայծառ կանաչ, իսկ 'ի ներքոյ սպիտակ, զորմէ ասեն տնկաբանք լինել թունաւոր: Ծաղիկն մանր, և մսագոյն, ունի և սերմունս մանունս, և յղկեալս: Իսկ արմատն երկայն, ստուար իբր բթաչափ, օձապտոյտ, թելալից, պարարտ, արտաքուստ թուխ կամ սեաւ, իսկ 'ի ներքուստ կարմիր, յորմէ յօրինեն դեղ ազդու փորհարութեան, հոսման թանչից առթելոց 'ի տկարութէ փորոտեաց. զի է խթիչ կամ գրգռիչ բնութեամբ: Այլև արգելու զվիժումն, և զհոսումն արգանդի:

Չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց60՝ երեք կամ չորս ան-
գամ յաւուրն: Նոյնպէս փարատէ զվէրս լնտերաց,
եթէ եռացուցեալ ջրովն ողողեսցի բերանն՝ բայց յա-
րատևել արժան է առ քանի ինչ շաբաթս:

Պիսօն, լտ: Է տեսակ մի վայրենի եզին եղջերա-
ւոր, որոյ եղջիւրք թեքեալ են և սայրասուր. գլուխ
նորա կարճ է, այլ լայնաճակատ. աչքն մեծ, և
կարմրափայլ. հայեցուածքն դաժան. լեզուն խոր-
տաբորտ, իսկ պարանոցն երկայն, և մշկահոտ: Գը-
տանի 'ի լերինս հնդկաց, որոյ եղջիւրքն լոսեալ 'ի
փոչի և արբուցեալ, դեղէ թունից, և ջերմախտից,
զի է քրտնաբեր և թուլացուցիչ բնութ՟: Չափն 'ի
10 ցորենոյ մինչև ց60 երեք անգամ յաւուրն: Սորա
քակորն ունի զգործունէութիւն 'ի մեղմել զցաւս
դժնեայս, դնելով միայն 'ի վշտացեալ մասունս:

Պլէնօռռհաճիա. է բառ յունական, որ ելանէ առ
նոսա 'ի ծորել բայէն, յորմէ և լատինացիք կօնօռէա
կոչեն, և ըստ մեզ՝ ծորումն կամ հոսումն ո՛ր և իցէ
հիւթոց՝ հոսելոց յարգանդէ, 'ի ծննդական անդա-
մոյ. և ըստ այսմ ծորումն սերման կոչի՝ սերմնակա-
թութի՟, որ առթի 'ի տկարութենէ բնութ՟, և 'ի
թուլութ՟ ջղաց, և սաղմնարանի. և ծորումն ար-
գանդի, և սերական անդամոյ կոչի 'ի լատինացւոց՝
մէտօռռէա. տե՛ս անդ:

Պլէնօռռհաճիա վէնէռէա: Աստ 'ի նոսա երկու
բառքն միացեալ են. քանզի պլէնօռռհաճիա է բառ
յունական, և ստուգաբանի՝ ծորումն, կամ լաւ ևս՝
հոսումն: Իսկ վէնէռէա՝ է բառ լատինական, և
թարգմանի՝ վավաշոտական, կամ գաղղիական. որ
ըստ լատինացւոց գրի՝ լէուքօռռհէա վէնէռէա. ը՟
իտալացւոց՝ սքօլամէնթօ. ը՟ արաբացւոց՝ գուռհաթ
իլ մէսանէ, կամ սաֆրահ. ըստ պարսից՝ սուզակ:
Իսկ ըստ մեզ թարգմանագրի՝ հոսումն վավաշոտա-
կան, կմ գաղղիական, և է նոյն՝ որ տաճկերէն ասի՝
պէլ սօվուկլուղու. տե՛ս զայսմանէ հտ. ա՟. եր. 364:

Պլէնօռռհաճիա վէնէռէա վիռուլէնթա: Է անուն
հոսման ժահրալից վավաշոտական հիւթոց, և կոչե-
ցաւ այսպէս վասն յառաջանալոյ 'ի վավաշոտական
ախտէ: Սա ըստ նախնեաց գրի՝ կօնօռէա վիռուլէն-
թա. բայց ըստ նորոց առաւել հաւանական երևի
գրել պլէնօռռհաճիա վէնէռէա վիռուլէնթա, կամ
ըստ իտալական բարբառոյ՝ սքօլամէնթօ վիռուլէն

Թօ. զրոմՀ տէս Հտ. ա. եր. 364։

Պուլթխուում, կամ մէտուլլա լամթխա, լտ։ պուլթխ-
ռօ, կամ պուռռօ, և կամ ֆխօռ տի լամթթէ, խտ։
պուռռ, գաղղ։ Թէրէ եաղը, տճ։ զինպոռէ, կամ զին-
պէռԹ կամ տուռմալ, ալբ։ Թեճճէ տէլուն, կամ
մէպքէ, պր։ և ըստ մեզ՝ կոգի, կամ լ-ղ։ Ի պա-
րարտուԹի կի՛ իւղ կաԹին, որ բնուԹէ Թուլացու-
ցանէ և անօսրէ զԹանձրամածուԹի տուլունից, մեղ-
մէ զցաւս կրծոց, քաղցրացուցանէ զտտապուԹի հիւ-
Թոց, և միանգամայն նպաստէ լուծման որովայնի։

Պուլթխուում անԹխմճնի լուննատէ, լտ։ պուլթխ-
ռօ տ՛անԹխմճնիօ, խտ։ տէմիր պօզան եաղը, տճ։ և
ըստ մեզ՝ իւղ անգուրի, կամ յունաքարի, կազմեալ
՚ի տուպլիմաԹօ քօռռօզիվէք, և ՚ի յունաքարէ, որ
նպատեալ ծախէ զաւեյորդ միան և զնեխեալ ոս-
կերա։ մաքրէ և վուռԹապէս զկարծրացեալ և զկոշ-
տացեալ վէրս խղճայնի և քաղցկեղն, և միանգա-
մայն Թափանցեալ ցրուէ զկարծրապինդ այտուց-
ատանց հատանելոյ։ Բայց ՚ի կիր արկանել պարտ է
այնոցիկ որք վարժեալ էցեն։ զի քաղցուի վիրաբոյժք
անպիտանան։

Պուլթխուում քաքաուում, լտ։ պուլթխռօ տի քաքաօ,
խտ։ հինտ բակլասընդն եաղը, տճ։ և ըստ մեզ՝ իւղ
պադաւոյի, որ է սպիտակ և անուցողական բնուԹէ-
էլուզեալ ՚ի պադաւոյ ոնդոց։ Սա բառնայ զկարծ-
րապնդուԹիւն մորթոյ՝ եԹէ օճանկէք յաճախակի։
ջիւրս սրածայրս. իսկ միսն կակուղ է և ախորժա-
կան ճաշակելեաց, միանգամայն և օգտակար դեղ
շնչարգելուն, խոյլից պարանոցի, և միզարգելուն.
լուծանէ նաև զքար՝ եթէ գտցի ընդ անցս միզի:

Սգուինանցիա. տես չինանքէ:

Սէբիա, լտ: սէբբիա, իտ: սիւպիա կամ միւրէ-
քէպ պալըղը, տճ: և ըստ մեզ՝ մելանահոս: Է վեցոտ-
նեայ ձուկն ինչ ծովային 'ի ձև պարկի, որ ստէպ
հեղու յիւրմէ զհիւթ սեաւ 'ի ծածկել զինքն յորսո-
ղաց. երկայնութի՝ նորա է իբրև երկու ոտնաչափ.
իսկ լայնութի՝ն ձեռաչափ: 'Ի թիկնամէջն ունի ոսկր
մի սպիտակ՝ մեծ իբր ձեռաչափ, ամբողջ, կարծր,
անկալից, դիւրափխրելի, և աղէհամ, զոր լատինք՝
օս սէբիէ կոչեն. որոյ փոշին լինի դեղ միզարգելու-
թի՝, և սերմնակաթութի՝. այլև սրբէ զբիծս երե-
սաց, և զաղտս ատամանց: 'Ի ստորին կողմն գլխոյ
ունի երկու կնճիթս, կամ թիակս, որք ծառայեն
նմա յուտել և 'ի լողալ: Իսկ միսն համեղ է և ախոր-
ժական ճաշակելեաց:

Սէմէն գուաթթռօ ֆռէճիթի մաեօր. տես սէմէնցէ
ֆռէտտէ մաճճիօռի:

Սէմէն գուաթթռօ ֆռէճիթի մինօռ. տես սէմէն-
ցէ ֆռէտտէ մինօռի:

Սէմէն մօսքի, լտ: Է երիկամնաձև, և մշկահոտ
սերմն ինչ 'ի չափ կորեկի, որ սովորաբար գտանի 'ի
կողմանս եգիպտոսի, զոր բնակիչք տեղւոյն 'ի գործ
ածեն 'ի դեղ տկարութի՝ ջղաց, սրտի, ստամոքսի,
և ուղղոյ. զի է խթիչ, կամ գրգռիչ բնութի՝:

Սէմէն պատիան. տես անիզում քինէ:

Սէմէ տի լինօ, իտ: քէթէն թօհումու, տճ: պիզիր
քէթհան, արբ: և ըստ մեզ՝ կտաւատ. տես զայս-
մանէ զբառն լինօ:

Սէմէն քօնթռա վէռմէս, լտ: սէմէ սանթօ, իտ:
խօրասանի, տճ: պիզիր խատտէսին, արբ: թըրա-

մանի, պր: Է սերմն ինչ երկայնաձև, նուրբ, կա-
նաչագոյն, դառնահամ, և ախորժահոտ, միանգա-
մայն և դեղ հալածիչ ճճեաց և որդանց որովայնի:
Չափն 'ի 20 ցորենոյ միչև ց60:

Սէմէնցէ Ֆռէտտէ մաճճիօռի, իտ: սէմէն գուաթ-
թռօ Ֆռրճիթի մաեօռի, լտ: տէօրթ պէօիւք սէրին-
լէտիճի չէքիրտէքլէր, տճ: պիզուրաթի առպա,
արբ: Անուամբս այս ցուցանի՝ քառեակ տեսակ զո-
վացուցիչ և միզաբեր սերմանց կամ ընդոց, որպիսի
են դդմոյ, մեղրապոպի, վարնգոյ, և սեխի: 'Ի սո-
ցանէ ելուզանեն զհեղանիւթ ինչ սպիտակ իբրև ըզ-
կաթն, և 'ի կիր արկանեն ընդդէմ միզարգելութեան,
և տապագին տենդից. զի են միզաբեր, և զովացու-
ցիչ բնութեամբ:

Սէմէնցէ Ֆռէտտէ մինօռի, իտ: սէմէն գուաթթռօ
Ֆռէճիթի մինօռի, լտ: տէօրթ քիւչիւք սէրինլէտիճի
չէքիրտէքլէր, տճ: Այսու անուամբ նշանակին քառ-
եակ տեսակ փոքրիկ զովացուցիչ և միզաբեր սեր-
մանց. որպիսի են անմեռուկի, եղերդի, հազարի,
և վայրի հազարի:

Սէմինէռվօզօ. այսու անուամբ իմանի՝ կիսա-
ջղեան, և է մկան ինչ սրունից:

Սէմիսբինաթօ. բառիւս այս նշանակի՝ կիսողնեան:
Է մին 'ի մկանանց ողին:

Սէնաբէ. տե՛ս սինաբիս նիկռա:

Սէնաբիզմօ, կամ էմբիասթռօ տի սէնաբէ, իտ:
հառտալ եաքըսը, տճ: և ըստ մեզ՝ սպեղանի մա-
նանխոյ: Է ազդու և օգտաւէտ զանգուած ինչ բա-
ղադրական, կազմեալ 'ի մանանխոյ, 'ի չոր թզոյ, և
'ի բարկ քացախոյ. որ լինի դեղ սաստիկ և հրատապ
տենդից՝ արկանելով 'ի ներբանս: Բայց 'ի դիպուածս
անդամալուծութեան, յօդուածացաւութեան, ոտնառու-
թեան, ջղացաւութեան, գլխացաւութեան, փորհարութեան,
ցաւոց ստամոքսի, և որովայնի օրէն է դնել 'ի վե-
րայ վշտացեալ մասին մարմնոյ, և թողուլ այնպէս
իբր ժամս 24. այլ եթէ ոչ փարատէ զցաւս նախայի-
շատակեալս, յայնժամ վերստին պարտ է վերակրկ-
նել ըստ նախաւանդեալ կերպի:

Սէնիչի: Է անուն իրիք ուռուցից կամ խոյլից 'ի
վեր երևելոց 'ի մսանուտ մասունս կոկորդին:

Սէննա, կամ քասսի սէննա, լտ: սէնէ, գղղ: սի-
նամէքի, տճ: և ըստ մեզ՝ աճալ: Է բոյս յաճախեալ

'ի վերին եգիպտոս. որոյ ցօղունն բարձրանայ յերկրէ մինչև ցմի և կէս ոտն, և տրձակէ ստեղունս նուրբս և երկայնաձիգս և դառնահամս, և տերևս փոքրիկս երկայնաձևս և կանաչս: Բանայ և ծաղիկս բոլորակաձևս և հինգթերթեանս: Բերէ և պատեան ինչ աղեղնաձև տափարակ, և թաղանթային, յորում բաղկանան սերմունք բոլորշիք, և թուխք: Տերև այսր բուսոյ ազնիւ համարի՝ եթէ իցէ թարմ, անախորժահոտ, 'ի վերին կողմն կանաչ, իսկ 'ի ներքոյ դեղին. յորմէ յաճախ կազմեն զդեղս մաքրողականս կամ լուծողականս. զի է լուծողական և թուլացուցիչ բնութ՟ : Չափն 'ի չորս տրամէ մինչև ցվեց, զոր օրէ՛ն է եռացուցանել վեց կամ եօթն ունկի ջրով. յաւելլով 'ի նոյն մի տրամ՝ անիսօն. երկու կամ երեք տրամ՝ քռէմօռ տի թառթառօ. և երեք ունկի՝ մանանայ. և առեալ լինի ըմպելիս այս 'ի պահ առաւօտուն 'ի ծոմուստ: Երբեմն հնար է փոխան քռէմօռօ տի թառթառօի դնել զմի և կէս տրամ՝ խաշնդեղ, որպէս և փոխան անիսօնի դնել զկինամոն: Ընդ այսոսիկ գիտել արժան է՝ զի յառնուլ քո 'ի կիր զտերևս զայս, պարտ է նախ մաքրել զկանթս և զշեղս որք գտանին 'ի նա. ապա թէ ոչ՝ կարէ պատճառել զփուքս և զխիթս որովայնի:

Սէսամում, լտ: սէսամօ կմ սիսամօ, իտ: սէսամ, գղղ: սուսամ, տճ: սիմսիմ, արբ: բէիշէ, կամ կիւճիւթ, և կամ սուսէն, պր: և ըստ մեզ՝ կնճիթն, կամ շուշմա: Է ունդ կամ սերմն ինչ մանր, բոլորշի, դեղնագոյն, քաղցրահամ, և իւղալից, որ լինի 'ի կերակուր թռչնոց, միանգամայն և մարդկան դեղ ցաւոց որովայնի, և կրծոց. զի է մեղմիչ բնութ՟ : Չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի՝ խառն ութ ունկի ջրով: Զնոյն գործունէութ՟ ունի սորա իւղն: Բոյս սորա հասարակօրէն բուսանի 'ի վերին եգիպտոս, և 'ի հնդկաստան, որոյ ցօղունն է ուղիղ, ստուար, երկայն իբր մի և կէս ոտնաչափ, կարծր, բազմաճիւղ, և հիւթալից: Տերև նորա է երկայնաձև սրածայր, պարարտ, և կարմրախառն կանաչ. յորմէ կազմեն դեղ կշտացաւութ՟, շնչարգելութ՟, և նուազութ՟ ամսական պարտուց կանանց:

Սէվում. տե՛ս կրասումէ:

Սէտում մաեուս, կամ սէմբէռվիվում, լտ: սէմբռէվիվօ մաճճիօռէ, իտ: ժուպառպ տէ թուա, գղղ:

ախփել, կամ հօուզլլիք, անգլ: սաքսը կխուզէլի, տճ: Է բոյս մշտապալար յաճախաեալ 'ի վերայ որմոց կիր ու կէս տանաչափ բարձրութիբ: Տերև սորա է երկայն, լայն, պարարտ, սրածայր, մշտականաչ, հիւթալից, և տտպահամ: Ծաղիկն ծխրանագոյն, և բազմաթերթ: Պտուղն դնտակաձև, և նուրբ սերմամբ: Իակ արմատն փոքր է և թելալից: Սա կոչի և հօվին պարպաս. որոյ տերևն գեղ է լուանոտուբ և ախտի ցնցականի՝ որ 'ի վերայ գայ մանկանց, զոր պարտ է լուել 'ի ատնդի, և տալ լուանոտաց մի փոքրիկ գրգալ երկեցս յաւուրն: Նոյնպէս գեղ է բորբոքման, կիզուլութե, յօդուածոցաւութեան, և խոլ խեցգեանուոյ, օծելով այնու վրէժատնեալ մա տունս մարմնոյ:

Սէտում մինուս, կամ սէմբէռվինում մինուա, լտ: տատ կամ քաեա գօռուղու, տճ: հայիլ աւէմ, արբ: լինքա կամ հէմիշին, պր: Է բոյս բուսեալ 'ի վերայ պարապաց, որմոց, քարանց, և 'ի մէջ պարտիզաց. որոյ ցօղունն է փոքրիկ, տարածուլական, պարարտ, թաւթալից, և տտպահամ: Տերև տրտ է մանր, բուրաշէ, թանձր, պարարտ հէւթալից, կապտագոյն, և տտպահամ. Ծաղիկն փոքրիկ, բազմաթերթ. պտուղն փոքրիկ և սերմնաւոր. իակ արմատն մանր է և թելալից: Սոյս բոյս ունի մասնաւոր գործուն էութի 'ի փարատել զքաղցկեղ և զխոլ խեցգետի: Հիւթ տորա խառնեալ ընդ հայկուղոյ լինի դեղ վիրաց, նոյնպէս շահաւէտ է երախայից և պարարտ անձանց, որոց տովորաբար յոռնութիս և յայլ անդամս 'ի վեր երևի պիսականման պալար ինչ պատճառեալ 'ի քրտանց:

Սէրբէնթաուխա վիռճինիանա կամ արխաթօլքիա սէռբէնթաուխա, լտ: լա սէռբանթէռ, գլլ: վէրճինէլ սնէյքռուութ, անգլ: Է բոյս ինչ ամերիկեան՝ յատպէ սղնգան. որոյ ցօղունն է երկայն կիր բազկաչափ, ծնրաւոր, և ճիւղալից: Տերևն նման է սերևոյ բալղեղման, բայց կակուղ և հոտաւէտ քան զնա: Ծաղկին մանր և բոլորշի՝ ըստ նմանութե ծաղկանց սղնգան. դոյն նորա երբեմն մթին կանաչ է, և երբեմն գեղին որ 'ի վեր երևի տտ. կանթիւ սերևոյն: Պտուղն մեծ է և տանձաձև, յորում է սերմն նուրբ, և սեաւ: Իակ արմատն մանր, թեթև, մթնագոյն արտաքուստ, և բաժանի 'ի բազում թելանման ոստս, ունելով

զհոտ վաչեռնանաւն, և զհամ քաղրոյ. զոր ամերիկաց ցնք ժողովեն, և չորացուցանեն ՚ի հովանաւորս տեղիս, և առաքեն ՚ի վաճառս. որ է գեղ ազդուլական և կարի գործածելի ՚ի դիպուածս փոսախառնութեանց, քաղցկեղի, ջերմախտից, մանաւանդ թիֆօ անուանեալ ջերմախտի, և միջահատական տենդից. զի է խթիչ, թափանցիկ, զօրացուցիչ, և քրտնաբեր բնութեամբ: Ձափն ՚ի կէս սրամէ մինչև ցերեկ, զոր օրէն է եռացուցանել մի լիտր ջրով, և տալ հիւանդաց ժամէ ՚ի ժամ մի սկահակ արձոյ, մինչև լցցի տասն ունկի չաւուրն: Եւ ՚ի մանաւորի ՚ի յարգի ունիմք զայս ՚ի դիպուածս տկարութեանց ջղայց, և աւիշեան անօթոց, թաղկութեանց, թմբրութեանց, և իջուածոց ՚ի միանուն մարմնոյ, մանաւանդ յորժամ խառնի ընդ երեք տրամ՝ քինաքինաի, և ընդ կէս ունկի՝ քօնֆէքցիոնէ աղքէուզէզի: Ձայս արմատ ամերիկացիք վարեն և ՚ի դեղ հարուածոց թունաւոր օձից:

Սէրբէնա, կամ անկուխա, և կամ քօլուպէռ, լտ: սերբէնեձէ, կամ անկուէ, և կի ալիշխա, իտ: երլան, տճ: էֆֆա, կամ թաւապան, կամ հայիէ, կամ հանէշ, արբ: խալմ, կամ մատ, կամ շարմատ, կամ շիպա, և կամ պէտախամանն, պր: և ըստ մեզ՝ օձ: Է ուսլան ինչ խորամանդ և նենգաւոր, որոց ոմանք են փոքր երբոր բազկացեալ, իսկ ոմանք յոյժ մեծ և դժնդակ, որք և յաշխարհն հնդկաց այնչափ առին, մինչ զի լինին երբեմն զվիշապս առնկատեսիլս: Ոմանք են անթիւնք, իսկ ոմանք չարաթիւնք: Թէպէտ թոյնք սոցա մահաբերք են, այլ միոքն չահաւէտք. յորոց փոշիացուցեալ, կամ եփեալ ՚ի ջուր և արբուցեալ, դեղ է ընտիկար հիւթոց, ապականութեան արեան, ախտից թոքոց և կրծոց, և միզարգելուե. զի են գրգռիչ, և մաքրիչ բնութեամբ: Ձափն ՚ի քան ցորենոյ մինչև ցճօ յաւուրն: Ջնոյն գործունէութիւն ունին սոցա լեարդքն, և սիրտքն: Իսկ ձարպքն ունին զմանաւոր գործունէութիւն ՚ի մեղմել և ՚ի փարատել զցաւս յօդուածոց, օծելով միայն զվշտացեալ մասունս մարմնոյ:

Սէրբիլլում, կամ թհիմուս սէրբիլլում, լտ: սէռ բնլլօ, իտ: թէն սէռբօլէ, գղլ: մրտհըր օվ գայմ, կամ ուվայլտ գայմ, անգլ: գէքբնք օթու, տճ: սահ թէռ, կամ նեզլտ, արբ: սվիշ, կամ գինաքինի և կամ շինթիւրբա, պր: և ըստ մեզ՝ կաքաւախոտ:

Ե խոտ քաղցրահոտ. որոյ ցօղունն է փոքրիկ, քառանկիւնի, կարծր, կարմիր, և Թաւիշաւոր: Տերևն փոքրիկ, և լայն՝ նման ըստ իմիք սերևոյ ծոմերինի: Ծաղկին փոքրիկ, և գոյն նորա սովորաբար սպիտակ է, բայց լինի և ծիրանագոյն, բերդ և սերմն բոլոր չի: Իակ արմատն մանր է և Թեքլիկ: Բուսանի 'ի լերինս, 'ի քարուտս, 'ի յատազուտս, և 'ի յարգաբակս իբրև Ձեռաչափ բարձրութեամբ. որոյ տերևն լինի դեղ ցաւոց արգանդի, ստամոքսի, և գլխոյ, և նուազուցանէ ամսականն պարտուց կանանց. զի է խմիչ և զօրացուցիչ բնութեամբ: Ջնոյն գործունէութեամբն ունի տորս իւրն:

Սէքալէ չէռէալէ, կամ սէքալէ, լտ: սէկալա, իտ: սէկլ, գղզ: ռայ, անգղ: չավտար, տճ: ալէս, կամ զնէնէյալս, արբ: գէնքէրան, կամ տէվքէնամամ, պր: և ըստ մեզ՝ աչարայ, կամ հաճար: Ե ծոյս երկայն իբր 'ի չափ մարդոյ. զորոյ տունգն կամ տերևն փոշիացուցեալ վարեն 'ի պէտս զանազանաւանակ մեղմացուցիչ և կակղացուցիչ Թանձրամթանից. լինի սա և 'ի կերակուր անասնոց, և 'ի ժամանակս սովու նաև մարդկան, որ է յոյժ չիասաստկար. զի բազում անգամ պատճառէ զմեմբրութիւն, զպատոյտ գլխոյ, զկարուութիւն ստամոքսի և ջղաց, և երբեմն և սա ցնցուծն մեռանից, զքաղցկեղ, և զկապՌուսածս, բայց եռացուցեալ կորուսանէ զչիասաստկար որակութիւնս իբր: Իակ Թեքին՝ որ է կակղացուցիչ բնութեամբ, 'ի կիր արկանի 'ի գրեխա 'ի դեղ Թանձրից, և կրծոց:

Սէքսունատէ մուլիէռիա, լտ: սէքսնտինա, իտ: մէչիմէթ, կամ օլլան տուվալը, և կամ էշ, տճ: խաշտա, արբ: Ասյտս անուսամբ նշանակի ծինն կամ աղան. որ է մաշկեղէն մսալից գնատակաձև և արիւնաշատախ պարկն, յորում պարունակի մարմին երտխային՝ մինչ ծնանի: Սա ըստ ոմանց ունի զգործունէութիւն 'ի սրբել զբիծս երեսաց, 'ի լուծանել զայտուցս և զցաւս արգանդի, և 'ի վարատել զլուանոտութեն, զոր մարթ է 'ի կիր առնուլ եթէ 'ի ներքուստ 40 յօրենաչափ ըմպելով, և եթէ արտաքուստ օծելով:

Սէքսունատէ մուլիէռիա, լտ: սէքսնտինա, իտ: մէչիմէթ, կամ օլլան տուվալը, և կամ էշ, տճ: խաշտա, արբ: Ասյտս անուսամբ նշանակի ծինն կամ աղան. որ է մաշկեղէն մսալից գնատակաձև և արիւնաշատախ պարկն, յորում պարունակի մարմին երտխային՝ մինչ ծնանի: Սա ըստ ոմանց ունի զգործունէութիւն 'ի սրբել զբիծս երեսաց, 'ի լուծանել զայտուցս և զցաւս արգանդի, և 'ի վարատել զլուանոտութեն, զոր մարթ է 'ի կիր առնուլ եթէ 'ի ներքուստ 40 յօրենաչափ ըմպելով, և եթէ արտաքուստ օծելով:

Սթաբէատէ. այսու անուամբ իմանամք զմին 'ի փոքրիկ ոակերաց 'ի փորոք ունկան:

Սթաբհա ակռեա, կամ տէլքհինհուա սթաբհա

ակռեա, լտ: սթաֆիս ակռեա, իտ: սթաֆիսէկամ էռւօփու, պղծ: սթէյվն սէբր, անգլ: մէվզէկ, տաճ: զեպնիպ ճէպէլ, արբ: է: բոյս յատզէ լօտա անուանեալ տնկոյ. որոյ պտուղն է երկայն իբր եղ կու ոտնաչափ, ուղիղ, սեաւ, և ճիւղալից: Տերև նորա է լայն, ցաւտաեալ, եղերահերձ, թաւիշաւոր, և երկայնականք: Ծաղկին եղանէ առ կանթիւ տերևոցն, և 'ի ծայրս ճիւղոց, և է կապտագոյն, և խորտաքորա: Արտաքրէ պտուղս կանաչագոյնս, յորս են սերմունք սեաւք, երանկիւնաձեւք, և անհարթք, և մէջ նոցա դեղին, և դառնահամ, միանգամայն և տաքուկ. զոր փոշիացուցեալ 'ի վար արկանեն 'ի դեղ վատթարագոյն բորոտութենէ, քոտոտուե. զի է ուժգին լուծողական բնութեամբ: Սակայն տատակէ զորդուն և զճճիս որովայնի: Ձափն 'ի մի տրամէ մինչև ցերկու խաւն մի բննթա ջրով: Պարբ ձնալ, ստէպ լուանան սովաւ զպաշարս բորոտից:

Սթաննուամ, լտ: սթանեօ, իտ: պալայ, տճ: լնմին, յն: էթէն, գաղ. և ըստ մեզ՝ անագ: Է հրահալել լի ինչ սպիտակ, գոյացեալ 'ի խորս երկրի 'ի հանքս արծաթոյ այլ և այլ ձևով. որոյ ընտիր և մաքուրն գոանի յանգլիա. զոր ժոլովեալ փոշիացուցանեն 'ի ձեռն նուրբ խարտոցի. և 'ի կիր առնուն 'ի գեղս բայս 'ի սատակել զճճիս և զորդուն որովայնի: Եւ ըստ ոմանց՝ ունի և զգործունէութեն 'ի փարատել ցախտս լերդի, և արգանդի: Ձափն 'ի մանն կշիռ ցորենոյ մինչև ցքսան խաւն ունկի մի մեղրիւ: Վարի և 'ի զանազան պէտս:

Սթանիոում, լտ: սթանեօ, իտ: պալայ, տճ: լնմին, յն: էթէն, գաղ. և ըստ մեզ՝ անագ: Է հրահալել լի ինչ սպիտակ, գոյացեալ 'ի խորս երկրի 'ի հանքս արծաթոյ այլ և այլ ձևով. որոյ ընտիր և մաքուրն գոանի յանգլիա. զոր ժոլովեալ փոշիացուցանեն 'ի ձեռն նուրբ խարտոցի. և 'ի կիր առնուն 'ի գեղս բայս 'ի սատակել զճճիս և զորդուն որովայնի: Եւ ըստ ոմանց՝ ունի և զգործունէութեն 'ի փարատել ցախտս լերդի, և արգանդի: Ձափն 'ի մանն կշիռ ցորենոյ մինչև ցքսան խաւն ունկի մի մեղրիւ: Վարի և 'ի զանազան պէտս:

Սթէաթօչէրէ. այսու անուամբ իմանի՝ ազգ ինչ փոշեանկութենէ, կամ այտուցի պարկի ամորձեաց:

Սթէննիքէ. է քան նորոց, և ստուգաբանի՝ ուժեղ ղութենի. որոյ ներհակին կոչի սաթէննիքէ, կամ աթօնիա, այսինքն ուկարութենի:

Սթէռիլէ. ըստ մեզ՝ ամուլ. կամ սթէռիլիթա. ըստ մեզ՝ ամլութենի, 'ի յոյնն՝ լիմեռօս, սթիռօսի: Է ամլուեն, կամ անպտղուեն. որ առ Թուրքս անուանի՝ գըսըր. կամ հասըլսըզ. կամ առ արաբացիս՝ ահղր. տե՛ս զայսմանէ ա. կո. երես 203:

Սթէռնօփուտ: Է մին 'ի վկանաց հոգագին:

Սթէքիատէ, իտ: սթհօէքհաս տուտպէքա, կամ լանտուա սթօէքաս, լտ: սթէքաս տուտպէք կամ լավանտ սթէքատ, դպղ: Ֆրէնչ լէվէնտըր, անգլ:

գառապաշ օթու, տճ: Է բոյս բուսել՝ 'ի գաղղիա, 'ի սպանիա և 'ի փօրթօկալ իբր մի և կէս ոտնաչափ բարձրութ՝ : Տերև սորա սրածայր է և մթին կանաչ: Ծաղիկն հասկաձև, ծիրանագոյն, հոտաւէտ, և դառնահամ. զոր եփեալ 'ի ջուր և արբուցեալ, դեղ է փսխման, և ցնցման ստամոքսի: Չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի և կէս: Այլև օգտէ ընդդէմ ցաւոց դլխոյ, և արգանդի. մեղմէ նաև զչարութի՝ թունից:

Սթիթիքէցցա. տե՛ս տուռիթիա ալվի:

Սթիլօֆառինճէօ. անուամբս նշանակի՝ մին 'ի մկանանց, որք նպաստեն 'ի կլանել:

Սթիպիում. տե՛ս անթիմօնիում:

Սթիռաքս, լտ: սթօռաչէ, իտ: պուհուրմէյրէմ, կամ գառակիւնլիւք, և կմ գառա պուհուր, տճ: և ըստ մեզ՝ ստորաքս, կամ ստորակս, և կամ տիւռակիթ: Է խէժ՝ որոյ կրկին է տեսակ. մթին սպիտակ, և կարմիր. մթին սպիտակն՝ զոր ածեն յամերիկոյ, ջերմահամ է իբրև զբալասան, որ կոչի յիտալաց՝ սթօռաչէ քալամիթա. յորմէ կազմեն դեղ անդամալուծուե՝ և ախտից ջղաց առթելոց 'ի տկարութե՝, զի է խթիչ կամ գրգռիչ բնութ՝:

Սթիռաքս լիգուիտուս, կմ լիգուիտամպառ սթիռաչիֆլուա, լտ: սթօռաչէ լիգուիտօ, իտ: գառակիւնլիւք եաղը, տճ: տիհնի գլէֆէ, կմ մէա, արբ: Է գոյացուի՝ ինչ հանեալ 'ի ստաշխնէ. յորմէ կազմեն դեղ ընդդէմ բորոտութե՝, և քոսոտութե՝:

Սթռամօնիում, կամ տաթուռա սթռամօնիում, լտ: սթռամօնիա, իտ: բօմ էբինէիւս, գղղ: թհօրն էբբըլ, անգղ: Է բոյս ինչ ծանրահոտ, բուսեալ 'ի բազում տեղիս ամերիկոյ իբրև երկու ոտնաչափ բարձրութ՝: Տերև նորա լայն է և անկիւնաձև, նման ը՝ իմիք տերևոյ շնխաղողոյ: Ծաղիկն սպիտակ և զանգակաձև. իսկ պտուղն բոլորշի՝ մեծութ՝ 'ի չափ ընկուզոյ. ունելով 'ի վերայ փուշս մանունս, սրածայրս, և համս անախորժս. և 'ի միջի ունի քառեակ խորշս նուրբս, յորս բաղկանան սերմունք փոքրիկք և երիկամնաձևք: Տերև այսր բուսոյ, որպէս և պտուղ նորա, թէպէտ են թունաւոր և թուլացուցիչ բնութ՝, լինին դեղ ազդու ընդդէմ խելագարութե՝, ախոնդանոտուե՝, ցնցականաւոր ախտից և անդամալուծութե՝ առթելոց յու-

ժեղուԹէ։ Ձաչին ՚ի ջորւոյդ մնանէ մինչ ցորեննոյ մինչև ցվեց ցորեան։ Եւ եԹէ ոք առաւել կերիցէ ՚ի սմանէ արտաքոյ քան զչաչին պայմանեալ, յայնժամ առԹէ զԹմբլուսն, զպտղոյ գլխոյ, զքնաւրուԹիւն. զցուրտ քիլոն, զրջծուն, զևԹս որովային, զնչ ցուն մկանանց, և երբեմն և ա զմահ։ Ա՛յլ գործման սորա գիւրին է, քանզի օրէն է իակոյն մատուցանել նմա յարբուն զևՀոնոաԹա, զքացախ, զկաԹն, ըզջուխան մածուն և։

ՍԹռանկուրիա, կամ սօքբուէսաիօնէ ոի օռինա, կամ տիֆնքօլԹա ոի օռինէ, իտ։ տիզուռիա, լտ։ սլոիկ զօռու, տճ։ իակինւ լիլ պէվլ, արբ։ և ըստ մեզ՝ գժուարամիզուԹի, կամ միղագրաւուԹիւն։ Է ախտ լինչ միզելոյ չԹի առ չԹի. տե՛ս և զայսմանէ հտ. ա. երես 141։

ՍԹօմաքհուս, կամ վէննԹռնքուլուս, լտ։ սԹօմաքօ, կամ վէննԹռնքօլօ, իտ։ մատէ, կամ գլԹնէ, կամ գլոպէ, արբ։ ՃէվազէՀ, կամ գխիա, կամ գէաեկ, և կամ լնբա, պր։ մէյսէ, տճ։ և ըստ մեզ՝ ստամոքս։ Անուն այս ըստ անդամոցն կոչի և իսխասդոց, որով նշանակի, անօԹ լինչ պարկաձև, մաշկեղէն, ծոցաւոր, և չլալից, զեռեղեալ ընդ միջ լերդի և վայծելոյն ընդ ատօծանուով։ Արդ՝ անօԹս այս ունի զերկեակ Ճեղքուածս, կամ ծակս, որք են նորա իբր պաշտօնեայք. մինն հասատալ կայ ընդ. ատորին ծագիւ որկորոյն, որ կոչի՝ էսօֆագօ, և. միւսն՝ ընդ. ծագիւ փորոտեաց։ Բայց գիտել արժան է, եԹէ կերակուրք ժամանեալք ՚ի ստամոքսն մնան ընդ Ճանապարհ որկորոյն, կարեն յամենալ անդէն երբեմն առաւել, և երբեմն նուազ. որով հեռև ՚ի Ճեռն վերոյիշեալ Ճեղքուածոցն երբեմն ընդլայնեալ տարածանի, և երբեմն անՃկացեալ կծկի ստամոքսն. ուստի անձինք որք վիՃակեալք են քաջառողջ կազմուածոց, առաւել զօրաւոր է ՚ի նոսա գործիքն երկրորդ Ճեղքուածոց. այսինքն այնմ՝ որ հասատատեալ կայ ընդ ծագիւ փորոտեաց, և ՚ի Ճեռն այսր զօրուԹե բուռն կծկեալ զստամոքսն, ՚ի Թոյլ տան կերակրոցն խՃողելոց ՚ի ստամոքսի իակ և իակ Թափիլ յաղիսն, մինչև բարւոք եփեալ փոխարկիլ նոցա ՚ի հեղանիւԹ։ Ա՛յլ պատշաճագոյն համարիմք յաւելուլ և զայս, եԹէ յընդլայնիլ անդ ստամոքսի ընկալեալ կերակրովք, մարԹ է տանիլ մինչև ցչորս

ոխայ ծանրութեն կերակրոյ և ըմպելոյ :

Սիաշակօկա : Է անուն ընդհանուր՝ որով իմանամք զդեղոյս, որք կարի առատացուցանեն զլորձոնս, զտողունս կամ զթուքս բերանոյ, որպէս ակ են անդիկն, հօտիւր.քահարն ևն :

Սիէռօ ակ լաթէխ, իտ : սէռում լաքթիս, լտ : բէթիլէ, գլլ : սիրուեթիա, տճ : Է անուն ընդհանուր՝ որով իմանի չինկային և զտապոյն մանկանէին՝ եւուզեալ տորտով, կամ հիւթովն լեմոնի, որ բնութէ թուլացուցանէ և զովացուցանէ զտապ արեան, և սրտի, անօսրէ զթանձրամածուն տողուցից. և մաքրէ զարիւն ի տապային աղի հիւթոց, և միանգամայն ապաքինէ զլջգողութեն, զբորոտութէ, զյաւս յօդուածոց, զոտնատուն, զդալուկն, զցաւս աչաց, և զաքօսպութեօ անուանեալ ախան. մանաւանդ յորժամ խառնի ընդ խաշնդեղի : Ջափն ի մի լիտրէ մինչև յերկու և կէս յաւուրն : Ջայս եթէ կամիս առնել, առ մի լիտր պկաթն կովու, և հեղ զայն յապխկած պոյան, մերձեցո ի հուր ածխոյ. և յորժամ սկիզբն առնէ եփիլ, արկ ի նա երկու կամ երեք տրամ՝ զզուեալ և աշնիւ տորտն՝ կոչեցեալ յիտալացւոց՝ քուէմօռ տի թառթառօ. ընդ նմին և երեք կամ չորս դրգալ ջուր հասարակ. և միանգամայն մեղմ և հանդարտ խառնեա զայն փայտեայ դրգալիւ. և վերատին եռացո զայն մինչև ելցէ թանձրատեսիլ նիւթ յերեսս կաթին, և ինքն փոխարկեացի ի չինուկ : Եւ յետ քամելոյ զայն ընդ խիտ կտաւ, առ զսպիտակուցն ձուոյ, փրփրեցո զայն փոքր ինչ չինկաւ յայլ անօթ. և հեղ զայն ի վերայ չինկին, դիր զամենեսին միւսանգամ յեփ. և յետ եռալոյ նորա քամեա վերատին ընդ թաւղթ գորշ. և ահա այն է չինուկն կաթին զոր խնդրես : Վարի և ի գեղ օրիւնոյ, և ախտից թոքոց, նաև ի բանալ զխցանս ուխլիեան անօթոց : Ի սուրն կարգա գաստ և սիէռօ ակ լաթէխ քօն ալլուամէն՝ այն է չինուկն կաթին խառն ընդ պաղչեղի. և լաւ գլղ, վրեթի լէ ավէք ք՝ ալէօն. որ լինի գեղ յարմար ի հաւաճուն սրեան սեռաստեսականի :

Սիէռօ ակ լաթէխ վինօզօ, իտ : սէռում լաքթիս վինօզում, լտ : բրեթի լէ ավէք լըվկին, գլլ : ուվէյ օմիլք ուվիս վայն, անգլ : շուտաթլը սիրուեթիա, տճ : Է ուրախ ինչ չինկի կաթին, որ կազմի լաւ նա-

խաւանդեալ կերպի խառնելոյ ընդ սպիտակ գինւոյ փոխան տորտոյ, զոր ստէպ 'ի կիր արկանեմք 'ի բժշկութիւն ջղական կամ հրատապ տենդից. զի է թեթև խթիչ և սնուցիչ բնութ: Եւ առեալ լինի շիճուկս այս փոխանակ հասարակ ըմպելեաց՝ մինչև լցցի լիտր մի յաւուրն: Կայ և այլ տեսակ շճկի կաթին. զոր յօրինեն նոյն կերպիւ, ընդ որում խառնեն և մի և կէս ունկի՝ լոսեալ մանանխոյ, զոր 'ի վար արկանեն 'ի բժշկութիւն նուրբ ջղական տենդի, հնագոյն յօդուածացաւութեան, անդամալուծութեան, ջրգողութեաց, և ոտնառութեան: Չափն մի դրգալ սրճոյ չորս կամ հինգ անգամ յաւուրն, յաւելլով 'ի նոյն փոքր ինչ շաքար:

Սիլիգուա տօլչէ, կամ չէռաթօնիա սիլիգուա, կամ քառռուպա, իտ: չէռաթօնիա սիլիգուա, լտ: քառուժ կամ քառուպ, գղղ: քէրօպ թրի, անգղ: գէչի պոյնուզու, ամ: խառուպ, արբ: թէռմիշ, կամ թէմի, պր: և ըստ մեզ ստուգաբանի՝ եղջիւրամիրգ: Պտուղ ինչ երկայն իբրու թզաչափ, տափարակ, և սևակեղև, և 'ի միջի պարունակէ զդորշադոյն գոյացութիւն ինչ 'ի խորշս խորշս մաշկատեսակ. յիւրաքանչիւր խորշս ունի և կորիզս կարծրս, տափարակաձևս, և կարմրագոյնս, և այն գոյացութիւն է կարծր, և համեղ յոյժ յորժամ կատարեալ հասունանայ. միանգամայն և պատուական դեղ հազից, շնչարգելութեաց՝ առթելոց 'ի տտիպ հիւթոց, քնափութեան, և տկարութեան ստամոքսի. զի է կակղացուցիչ և քաղցրացուցիչ բնութ: Չափն մի ունկի, զոր պարտ է եռացուցանել մի լիտր ջրով:

Սիմառուպա կամ դուասսիա սիմառուպա, լտ, և իտ: սիմառուպ, գղղ: պիթթըր տէմսըն, անգղ: Է բազմաթել և անհոտ կեղև ինչ թեթև, երկայն, լայն, մթին դեղին, և դառնահամ, զոր կորզեն յարմատոյ իրիք ծառոյ կոչեցելոյ լատինական բարբառով՝ դուասսիա սիմառուպա, որ սովորաբար բուսանի 'ի հնդիկս, և յամերիկայ. լինի 'ի սեպս ձորացեալ վայրաց: Չայս կեղև արմատոյ լոսեալ 'ի փոշի մանրամաղ, կամ եփեալ 'ի ջուր՝ և արբուցեալ, դեղ է փորհարութեան, և հոսման արեան պատճառելոց 'ի յուժգնութեան, զի է սեղմիչ և թուլացուցիչ բնութ: Չափն յերկու տրամէ մինչև ցչորս յաւուրն՝ խառն մի և կէս լիտր ջրով:

Սիմբիթեում կի. քննասիտա մուեօր, լտ: քննասիտա մաձձիօռէ կամ սինֆիլթօ, իտ: կռանտո քննառա դղլ: պօմմըն քըմֆրկ, անգլ: պառաքաֆէս, տձ: Է բայս ինչ խժաչամ. որ սովորաբար բուսանի 'է կոլմանա բարիզու և իտալիոյ մէջ երեք տանտաչափ բարձրութ֊ը, և մտանտաչափ տառստրութ֊ը: Տերև նորա է երկայն, լայն, սրածայր, թաւիշաւոր, և անհարթ: Ծաղիկն բաժակաձև, կամ լաւ ևս ձագաձև, սպիտակ հարեալ 'ի գոյն կարմիր: Սերմն սեաւ և փայլուն 'ի ձև դլխոյ լժի: Խակ արմատն էրկայն, ատուար, դիւրաբեկ, արտաքուստ սեաւ, խակ 'ի ներքուստ սպիտակ, և խժային. յորմէ կազմեն դեղ փորհարուճ, հոսման թանչից, երիկամնա֊ ժեռուվ֊ճ, և թքման արեան. ըմ է կակղացուցիչ և ըմբռնիչ բնուք֊ը: Ջափն 'ի վեց տրամէ մինչև ցուրթ յաւուրն խառն ընդ մի և կէս լիտր ջրոյ:

Սիմիա, կամ սիմուս, լտ: շիմիա, կամ պէռթուչչիա, և կամ շիմիմիօնէ, իտ: մայմուն, տձ: գըրթ, էռտ, կամ սաաէն, և կամ ռուսպպա, արբ: բուշինա, պր: և ըստ մեզ՝ կապիկ. Թէպէտև կենդանի փոքր է իրև զաղուէս, այլ առաւել ճարտար և ուշիմ քան զնա, և քան զամենայն անբան կենդանիս. մինչև մարթ է ասհմանել զնա՝ կենդանի մարդաձև կերպ: 'Ի լեղիս կամ 'ի փուշտս ումանց կապկաց գոյանայ քարինչ փոքրիկ, գնոտակաձև, և դիւրաբեկ. պըր իրը դեղթափ 'ի կիր առնուն ընդդէմ թունից, ջերմատուչըր ախտից, և ժանտախտից. այլ գործած ծուխն ար անծանօթ է եւրոպացի բժշկաց: Գտա֊ նին սոքա 'ի ջերմ գաւառս հարաւային ասիոյ, և յափրիկէ. կարեն կեալ 'ի ցրտային երկիրս, այլ ոչ ծնանին: Ջիս սոցա՝ որք լի են իւղով և ցնդական աղիւ, 'ի վար արկանեն 'ի դեղ փորհարուճ: Խակ սերան՝ օգտէ յիշողութեան և զգաստութեան մատց:

Սինաբխանիկա, լտ: սէնաբէ, իտ: մուԹատա, գղ: ջըմրըն մըսԹարտ, անգլ: հառտաշ, տձ: սիւֆֆէռ կամ հապպլ ռօշալ, արբ: խսբէնատն, կամ ջիր ջիր, ոյր: և ըստ մեզ՝ մանանեխ: Է բոյս՝ բուսեալ յապառակս և 'ի բուրաստանս իրը երեք կամ չորս ոտ֊ նաչափ բարձրութ֊ը: Տերև նորա նման է սերևոյ շուշպաճի, բայց փոքր և անհարթ քան զնա: Ծաղիկն փոքրիկ, քառեակԹերԹեան, և դեղին. բերէ և

սերմն նման կտոց թզոյ, այլ գոյն նորա երբեմն սեաւ է, և երբեմն սպիտակ. իսկ համ նորա և հոտ 'ի հասանիլն այնչափ բարկ է և ազդու, մինչ զի լոսեալ կամ ծասքեալ թորեցուցանէ յաչաց զարտասուս. և պարտ է հաւաքել զսա 'ի նուազման լուսնոյն, զի յայնժամ լինի առաւել սաստկագոյն, և պահի և ա՛ւ երկար: 'Ի սմանէ յօրինեմք դեղ ազդու ընդդէմ անդամալուծութե՛, ջղային դժուարամարսութե՛, շնչարգելութե՛, ջրդողութե՛, և միզարգելութե՛, սքօռպութօի, և քօմաթօսէ անուանեալ ախտի. զի է թուլացուցիչ և միզաբեր բնութբ՛: Այլև բանայ զխցանս աւիշկեան անօթոց: Չափն 'ի յերկու տրամէ մինչև ցչորս: Այս սերմն 'ի կիր արկանի և ա 'ի բաղադրութե՛ սինաբիզմօի:

Սինկիօցցա. տե՛ս սինկուլթուս:

Սինկուլթուս, լտ: սինկիօցցա, իտ: ընչդըռդ, տճ: հօզզէա, կամ ֆիւվակ, կամ մէաքահ, արբ: իսքէռէկ, կամ թէստէրէկ, կամ զէրու, կմ աշքէ, և կամ հէքկըչաք, պր: և ըստ մեզ՝ հեծկլտանք. տե՛ս զայսմանէ հա. ա՛. երես. 261:

Սինքօբէ. տե՛ս սվէնիմէնթում:

Սինօվիա. ըստ անդամազննաց նշանակի՝ հիւթ ինչ խժային, որ գտանի յամենայն շարժական յօդս, կամ 'ի յօդուածս մարմնոյն:

Սիռուբուս, լտ: շիռօբբօ, կամ շիռօբբօլա, և կամ շիլօբբօ, իտ: շըռօպ, տճ: և ըստ մեզ՝ շարապ: Է անուն անուշակ և ախորժելի հոսանուտ հիւթոց կազմելոց յանուշարար նիւթոց, որպէս 'ի շաքարէ և 'ի մեղրէ եռացուցանելով զնոսա ընդ բուսոց, ը՛ պտղոց և ընդ սերմանց, և ընդ այլոց նմանեաց, զորս վարեն 'ի պէտս պէսպէս դեղորէից բարեխառնութե՛ և ախորժելի քմաց:

Սիքօմօռուս, կամ ֆիքուս էճիփթիքա, լտ: սիքօմօռօ, կամ սէքքօմօռօ, իտ: ֆրաօն ինճիրի, տճ: կիւմմէզ, կամ ճիւմմէզ, արբ: հիճառ, պր: և ըստ մեզ՝ մոլաթզենի, կամ ժանտաթզենի: Է ծառ մեծ և ոստալից, որոյ բունն է կարծր, ուժեղ, սեաւ և տևական. զորոյ հերձեալ զփայտն, արձակէ հիւթ ինչ սպիտակ, կաթներանգ, յորմէ կազմեն դեղ հարուածոց օձից, կարծրապինդ ուռուցից, և վիրաց հնացելոց. զոր մարթ է 'ի վար արկանել արտաքուստ և 'ի ներքուստ: Տերեւն նման է տերեւոյ թթոյ,

բայց անհարթ քան զայն: Բերէ պտուղ երիցս ՚ի տարւոջ, և ե բոլորչի, և քաղցրահամ նման թզոյ. այլ ոչ սերմնալից իբրև զնա. մէջն խոռոչաւոր, յորս բաղկանան թեւք նուրբք. գոյացութեն այսր պտղոյ մեղմապէս լուծիչ ե բնութեաբ և զովացուցիչ, որով օգտէ կրծոց, և ստամոքսի: Բուսանի ՚ի կողմանս եգիպտոսի:

Սիֆիլիտէ. տես մօտաւոր վէնէդուէս: Դարձեալ, անուամբս այս նմանի՝ ախտն ելեփանդական, կամ ուրկուեթն, զոր թուրքք կոչեն՝ ճուտամ հիւանդութի, և արաբացիք՝ ճիտամ, կամ ճուզամ. իսկ պարսք՝ լերդի:

Սմառիա, լս: Ե ձկնիկ ինչ ծովային, զորմէ ասեն լինել ազգ ինչ ուինկայի. և ասեն թէ միա նորա դեղ ե հարուածոց կայծակի, և խածուածոց կատաղի շանց, և թէ առատացուցանէ զկաթն կանանց:

Սմիլաքս ստռոսիտուիլլա, կամ ռատիքս ստռոսիփուռուիլլե, լս: սալսափարիլլա, իս: սալսըփարէյլ, գղղ: սարսէփէրիլլե, անգղ: սոքստռնա, տճ: էշպին, արբ: Ե հռչակաւոր արմատ ինչ ստռալից կիճ վարսաւոր, սպնատակ և ալիւրալիր ՚ի ներքուստ. իսկ արտաքուստ մ՚թին կարմիր, կամ սեաւ, և կըն ճուռալից. երկայնութեն նորա ՚ի հինգ ոտնաչափէ մինչև ցեօթն. բայց համեմատութե երկայնութեն կըրն նուրբ ե. համով դառն ե միանգամայն և ոտնձայն. յորմէ կազմեալք դեղ ազդուղական ընդդեմ գաղլնական և ելեփանդական ախտից, ցաւոց յօդոցն, ոսկրաց, ուռուածոց, ոտնատութե, հոտման վատառ հիւանդոց, բորոտութեան, և ընդհանրապէս ընդդեմ ամենայն հնագոյն ախտից և վիրաց պատճառելոց յատկանութե ունէ արեան. վի ե թեթևապէս թուլացուցիչ, քրտնաբեր, և մաքրիչ բնութե: Ջափն ՚ի յերկուս դրամ մինչև 3։2, զոր պարտ ե եռացուցանել ՚ի մէջ ապխակած պուտան մի և կէս լիտր ջրով, և առնել լինի ըմպելիս այս ՚ի միջոցի 24 ժամուց: Բոյս նորա սովորաբար բուսանի յամերիկայ, և յարևմտեան հնդիկս. լինի ՚ի ջրարբի և ՚ի խոնաւուտս տեղիս: Ցօղունն երկայն, վայտային, կանաչ, փշալից, դիւրաթեք, ճիւղալից, և տարածողական: Տերևն երբեմն ըստ երկայնութե հասանէ ցտան և չորս մատնաչափս, և ե սրածայր և ջլալից: Ծաղիկն սպիտակ, և տասղաձև: Իսկ պտուղն գնտակաձև ՚ի չափ

կեռասի. մէջն թամբալից, և փոքր մի տապակած. ունի և կորկոզ կարծրա և քրքմապոյնս:

Սուբբուէասիոնէ ոմ օռինա. տես սէթռանկուռիս:

Սուլբհուռ, կամ սուլֆուռ, լտ: սօլֆօ, կամ ծօլֆօ, իտ: գիւպիւրթ, կամ գիպրիւթ, տճ, և արբ: գէնտէշ, կամ գիւկիրթ, պր: և ըստ մեզ՝ ծծումբ: Է հանք ինչ արջասպուտ, պարարտ, և ձիւթային. որ՝ի հուր մերձեցեալ վաղվաղակի լուցեալ բորբոքի, և հանէ զբոց զարդասեակիլ, և զհոտ ազդու և զզուելի, զոր վարեն՝ի նիւթ վառօդի: Ընաիրն այսր ծծմբոյ է գեղնապոյն, կարծր, թեթև, փայլուն, և դիւրափխրելի, յորմէ կազմեմք գեղ ազդուական ընդդէմ բորոտութեանէ, որքինի, գոնջուեան, և այլ ախտից մորթոյ: Ալև օգտէ՝ի դիպուածս խոնաւ ընչարգելութենէ, այսուհետև թոքոց, և իցանոց աւիշեան անօթոց. զի է մեղմապէս թուլացուցիչ բնութեանէ: Ձաին՝ի 12 ցորենոյ մինչև 18, կամ 20 յաւուրն: Ալս հանք կամ գոյացութեն գոնան յամենայն ուրեք, ձնապաղեալ և ափուել՝ի ներքոյս երկրի, որպէս վկայեն սոորերիւեայ հրայրեացք. կոչի և աբխռօթհիուս:

Սուլֆօռէ ոմ քալչէ լիկուիտօ: Ի հեղանիւթ ինչ բաղադրական, կազմեալ յերկու սրամ ծծմբոյ փոշիացելոյ, և՝ի 32 սրամ ջրոյ եռացելոյ. որ է դեղ՝ի դիպուածս յորդաուատ հոսման ըրձանաց, և թուննոց, զորօրինակ առաչնէքօի, սուպլիմանթօի, ասլ ոմ արձէնթօի, և անթիմօնի: Ձաին յուեթ սրամէ մինչև 10 յաւուրն՝ խառն ընդ փոքր ինչ ջրոյ:

Սուչչինում. տես քարապէ:

Սուապէռ, կամ բհէլլուա, լտ: սօլէռօ, կամ սուկէռօ, իտ: լիէժ, կամ չէնլիէժ, պղ: քորք թրի, անգլ: մանթար ալաճը, տճ: ճէպա, արբ: ճիվէ, կամ շամառու, և կամ սէլմէ, պր: և ըստ մեզ՝ սրճենէն, կամ սունկ: Է ծառ եւրոպիոյ՝ բարձր, և ստուար ըստ նմանութեան մերոց կաղնեաց: Կեղև նորա է թանձր յոյժ, կակուղ, անկալնը, թեթև, և դեղին հարեալ՝ի գոյն մոխրոյ. յորմէ յօրինեն դեղ հոսման արեան, փորհարուութենէ, և ցաւոց փորոտեաց աւելեալոց՝ի թանչից: Ջնոյն գործունէութեն ունի նաև պտուղ ատրա:

Սուս, կամ բօռքուս, և կամ վէռուէս, լտ: բօռ-

.քօ, կամ էնաքքօ, նա: ասմուզ, տճ: ինֆիր, կամ խըլթաւա, կամ խնզիր, և կամ հնզիր, արբ: գէտզ, կամ խուք, կամ կինարտա, կամ ատթ, և կամ վուռաս, պր: և ըստ մեզ՝ խոզ: Ի կենդանի անճև, տգեղ, ապմասէր, որկորաժէտ, և ապուշ. որոյ ատևն կարծր է, և տգեղ. յայն սակս ոչ լինի հանդերձ մարդոյ, և ոչ յայլ կարևոր իրս է պիտանի: Մ՚նա նր պարարտ է յոյժ և համեղ, այլ ծանր և դժուաթամանալեի: Սիրէ և յոյժ զորդուն երկրի, և զարմատս ինչ բուսոց, և սակս այնորիկ միշտ պեղէ զերկիր և զանիզին կնճթաւն: Ճարտ ատրա ունի զմնասնաւոր գործունէութն՝ի կակղացուցանել զուռդյա, ՚ի մեղմել զցաւս ջղաց, ոսկերաց, և երակաց: Լեղի ատրա լինի դեղ ընդդէմ ցաւոց ականջաց, և հերաթափութե: Իսկ քակորն նոյնպէս լինի դեղ փողացաւուե, բորոտութե և հոսման արեան: Էգ ատրա ծնանի երկից ՚ի տարւոջ, և յիւրաքանչիւր նուագի լբր ուղթ, կամ տան, և երբեմն աւելի և պ խոչքթակա:

Սուքօ, կամ սուքքօ, և կամ սուկօ, նա: սուքքուա, լտ: և ըստ մեզ՝ հիւթ, կամ մզեալ գոյացուե որ և ևցէ իրաց:

Սուքօ քիսաւինֆիքաթօ սէլլա սէքօնտա պօռցա ան սամպուքօ, նա: այսու անուամբ լմնանի՝ ճմլեալ և զտեալ հիւթն նեղբին կեղևոյ սամպուքօի, յորմէ կազմեն գեղ ջրգողութե, որ արտահանէ զինաստակար չինաւկա և հիւթս մարմնոյ, և բանայ զկացանս ընդերաց. զի է լուծողական, և կարի միջաբեր բնուե: Ձակին մի դրգալ սեղանոյ ջրս անգամ յաւուրն, յաւելով ՚ի նոյն երկու դրգալ գինի սպիտակ:

Սվէնիմէնթօ. տե՛ս սվէնիմէնթուա:

Սվէնիմէնթուա, կամ սէլիգուխուա, և կամ անիմո տէֆինէէուէ, նա: թռամօռթիուէ, կամ սվէնիմէնթօ, կամ զֆինիմէնթօ, և կամ սինքօջէ, նա: պայկնըք, տճ: ղըմի, արբ: և ըստ մեզ՝ նուաղուուն սրտի, կամ թալկացուուն. տե՛ս և զայսմանէ հտ. ա. երես 244:

Ս՝քամոնիուա, կամ քոնվօլվուլուս սքամոնիա, նա: սքամոնէա, նա: սքամմոնէ, գղղ: սքէմմընի, անգղ: մահմուտիէ, տճ: սաքմունի, արբ: սաղմոնի, պր: և ըստ մեզ՝ սակամունի, կամ սակամոնի: Ի հիւթ կամ ցաւ ևս գոյացութե ինչ խժային՝ թեթև՝ ս

փոքր մի մածուցիկ՝ ի գոյն մեթին մոխրոյ. զոր ար-
տադրեն յարմատոյ օձասպոյտ և ծանրահոտ բու-
սոյն յորջորջեալոյ լատինական բարբառով՝ քօնվօլվու-
լուս սիռիաքուս, որ առաւօտուց բուսանի ի կող-
մանս սիւրիոյ, բերիոյ, և զիւռնոյ՝ ելք երեք կանգ-
նաչափ բարձրութ: Ասյս գոյացուն ընտիր համարի՝
եթէ էցէ գորշագոյն, մանր՝ ուռոնալից, թեթև
դիւրափխրելի՝ անախորժահոտ՝ դառնահամ միան-
գամայն տոկոպ, զոր նախանձ առեպ ի կիր արկանէին
ի լուծողական դեղորայս. զի է հզօրեղապէս լու-
ծիչ, փսխեցուցիչ և թուլացուցիչ բնութ. իսկ առ
արդիս ոչ համարի այնքան ի կարգի, որովհետև
բազում անգամ ևս առեալ զանհնարին փուչս, և
զինեթս որովայնի և աղեաց. թէպէտ անցուցեալ
կայն ի շոգի ծծմբոյ, կորուսանէ զընտրական որա-
կութիս իւր, զոր ետացիք յայնժամ տիսակուիսիօ
սոլֆօուսթօ անուանեն: Ձափն ի 4 յորեծոյ մինչ
չև ցճ:

Սքապիէս, լտ: սքապպիս, իտ: քսօրս, յն: կէ-
ֆիկ, կամ ուլուզ, տճ: հէքքէ, արբ: և ըստ մեզ՝ քո-
րտուն, կամ քուստուն:

Սքապիօզա, լտ: սքապպիօզա, իտ: սքապիէօզ,
գլզ: սբէնիշ սքէպիըս, անգլ: գում օֆու, կամ կէ-
ֆիկ օֆու, տճ: և ըստ մեզ ատուպաբանի՝ ալիսակո-
ան: Ես խոտ, որ յարմատոյ արձակէ զտերևս լայնս,
թաւիշաւորս, և երկայնականթս, և ի միջոյ տերևոց
ելանէ ցօղուն ինչ երկայն իբր երեք ոտնաչափ, թա-
ւիշաւոր, մէջն ունայն, և բոլորչի. որ ի գագա-
թան բանալ ծաղիկ վինջաւոր՝ բոլորակ՝ և ծիրանա-
գոյն. ապա արտադրէ պատեանս գնատակաձեւս, և
սերմնաւորս: Ունի արմատ երկայն, և ուղիղ: Բու-
սանի ի պարտէզս, ի մարգագետինս, և յադարակս.
որոյ եթէ՛ տերևքն, և եթէ ծաղիկն են դեղ բորո-
ւոյ, պիսակաց, ցաւոց կրծոց, և հազի:

Սքառապէուս, լտ: սքառաֆաձիօ, իտ: օսուռ-
ղան ակօճէի, կամ պօք ակօճէի, տճ: խանֆիս, կիճ
ֆասիս, և կամ ճէլաշահ, արբ: ճիւլանէ, պր: և
ըստ մեզ՝ բզէզ: Ես ճանճ ինչ սուրար, յազգէ քա-
ռաթև միջատից. որոյ մարմինն և գլուխն նակ պա-
տեալ է կարծր սեաւ և փայլուն մորթով ըստ նմա-
նութե խեցեմորթից ծովու, որոց նմանի և ճևով
մարմնոյն: Ունի և եղջերուակս քնքուշս. նակ թևքն

ոչ երևին, բայց եթէ 'ի թռչիլն. քանզի ծածկեալ կան մին 'ի ներքոյ միւսոյն: Սա արկանէ զձուս իւր 'ի մէջ քակորի եզանց և ձիոց, զի ջերմութ՝ նոցին կենդանասցի: Եգիպտացիք 'ի գործ ածեն աստի 'ի դեղ տկարութ՝ յօդուածոց, և մանրաթելից, որք գտանին 'ի մկանունս և յայլ մասունս կենդանւոյն, և վատառողջ, և նիհար անձանց: Չափն 'ի 10 ցորենոյ մինչև ց30: Ցայս տեսակ բզեզի գտանի և ինքնալոյս, որ զլոյս ցայտէ 'ի գիշերի. և սեռ ինչ նորա որ սովորաբար գտանի յամերիկայ, այնչափ ճոխ լոյս արձակէ 'ի գիշերի, մինչև միոյն և եթ լուսաւորել զսենեակն ողջոյն:

Սքէռանցիա. տե՛ս չինանքէ:

Սքռուբուլուս, լտ: սքռուբօլօ, իտ: այսու անուամբ իմանամք զքանակութ՝ ծանրութ՝ քսան հատի մեծ ցորենոյ. ուստի յերեք սքռուբօլօն պարունակի մի տրամ ամբողջ: Գիտել արժան է, եթէ սովորաբար եգեալ (Ցյ) զայս նշան՝ իմանամք զչափ քսան ցորենոյ, զոր 'ի վար արկանեմք 'ի կշիռ դեղորէից:

Սքռուբօլօ. տե՛ս սքռուբուլուս:

Սքռօբհուլառիա, լտ: սքռօֆօլառիա, կամ էռպատա մօռօիտէ, և կամ կալէօբսիս, իտ: էռպ օզէքռուէլ, գղղ: կրէթ ֆիկ վօռթ, կամ քրռնէլ վօռթ, անգղ: սրռաճա օթու, տճ: և ըստ մեզ թարգմանագրի՝ խոզախտեան բոյս. բուսեալ 'ի հովանաւոր տեղիս, և 'ի գերեզմանատունս, իբր երկու ոտնաչափ բարձրութ՝. ցօղուն սորա է ուղիղ, ամբողջ, մէջն դատարկ, քառանկիւնաձև, և ծիրանագոյն: Տերևն երկայնաձիգ, լայն, սրածայր, և եզերահերձ՝ ըստ նմանութ՝ տերևոյ եղիճի, բայց թխագոյն քան զայն: Ծաղիկն ծիրանագոյն, և անօթաձև: Պտուղն դնտակաձև՝ սրածայր՝ և խոռոջաւոր, յորս են և սերմունք: Իսկ արմատն ստուար՝ անհարթ՝ և ծնրաւոր: Արմատ սորա և տերև եփեալ 'ի ջուր և արբուցեալ, դեղ է խոզից, խուլից պարանոցի, բորոտութ՝, և այլ ախտից մորթոյ: Չափն 'ի մի տրամ է մինչև ց4 յաւուրն:

Սքռօֆօլա, կամ սքռօֆուլա, իտ: սթռումա, լտ: սռաճա, տճ: և ըստ մեզ խոզք, կամ խոյլ պարանոցի:

Սքօլամէնթօ. տե՛ս լէուքօռռհէա վէնէռէա:

Սքօնչիաթուռա, կամ ապօռթօ, իտ: չօճուկ կէ

չիրմէսի, տճ: և ըստ մեզ՝ վիժումն զաւակի. տես հտ. ա. երես 204:

Սքօռբիուս մարիթիմուս, կամ սքօռբիօ բէշիս, լտ: սքօռպիօնէ մարինօ, իտ: սքօռպիտ պալըղը, տճ: և ըստ մեզ՝ փոր կամ կարիճ ծովային: Է ձուկն ինչ երկայն, և բոլորակաձև, որոյ գլուխն է մեծ, ստուար, բազմանկիւնի, և կարծրանիւթ, ունելով 'ի վերայ ժանտափուշս մանունս և սայրասուրս, որով հարկանէ և թունաւորէ զմերձեցեալսն յինքն, որ է զէնք նորա 'ի պաշտպանութի՞ կենաց իւրոց. բայց ձկնորսք ունին և զդեղթափ նորա, որ է թիւրակէս, զոր եթէ փութով դիցեն 'ի վերայ հարուածոց՝ բժշկին 'ի դժնդակ ցաւոց անտի: Ատամունք նր՞ փոքրիկ են, այլ սուր. յօնքն եղջերաձև, որկորն մեծ, թեփ մորթոյն կարմիր է և փոքրիկ, որովայնն սպիտակ: Իսկ միսն կարծր է և աճառուտ, այլ համեղ, և ախորժական ճաշակելեաց: Սորա լեարդն ունի զգործունէութի՞ 'ի սրբել և 'ի փարատել ըղբորոտութի՞ս, և զկոծիծս մարմնոյ, նաև գրգռէ զդաշտանս կանանց:

Սքօռբիօ, կամ սքօռբիուս, լտ: սքօռբիօնէ, իտ: ագռէպ, տճ: շիպտիա, կմ՞ շէվշէպ, և կմ՞ աճիւզ, արբ: գէլէտիւմ, պր: և ըստ մեզ՝ կարիճ: Է կենդանի ինչ հողային, և զազրատեսիլ 'ի չափ թրթրոյ, այլ 'ի ձև խեցգետնոյ, զի ունի զութ թաթուլս կամ ճանկս. որոց երկուքն են մեծ, իսկ միւսքն փոքր. գլուխ նորա լայն է. աչքն մանր յոյժ. գոյն նոցա այլև այլ է, այսինքն սպիտակ, դեղին, և սեաւ, իսկ աուտն է երկայն, բոլորշի և կարծր. յորոյ վերայ կարգաւ շարայարեալ կան յօդք գնտակաձևք. և 'ի ծայր նորին տտան՝ ունի խայթոց սուր, կարծրապինդ, և խողովակաւոր, որով հարկանէ և թիւնաւորէ զմերձեցեալսն յինքն, մինչև այտուցանել և ցաւովք տագնապել զմարդ. և եթէ ոչ առժամայն սբիռիթօ տի սալ ամմօնիաքօիւ օծցի, կամ ծծմբով այրեսցի վիրաւորեալ մասն մարմնոյն, անվրէպ պատճառէ զթմբրութիւն, զպտոյտ գլխոյ, զհեծկլտանք, զփսխումն, և երբեմն և ս զմահ: Սա դտանի յամենայն ուրեք, նա յաւէտ յերկիրս վիճակեալս ջերմագին օդոց. զոր եգիպտացիք ըմբռնեալ 'ի բաց հատանեն 'ի նմանէ զայն թիւնաւոր տուտն. և զմարմին նորա ճանկօքն հանդերձ չորացուցեալ փոշիա-

ցուցանեն՝ և 'ի կիր արկանեն իբր դեղ միզարգելութեան, մնասակար հիւթոց: Չափն 'ի 10 ցորենոյ մինչև ց30 յաւուրն: Գտանի յամերիկայ կարիճ այլազան 'ի մերոց կարճաց, զի մեծամեծք են, և անհնարին թշնամի օձից, մողեսից, և սարդից:

Սքօռպութօ, իտ: սքօռփիտ հիլլէթի, տճ: հաֆուռ, արբ: տե՛ս հտ. ա. երես 348:

Սքօռտիում, կամ թէուքռիում սքօռտիում, լտ: սքօռտիօ, իտ: ժէռմանտռէ ագուաթիք, գղղ: ուվօթըր ճէրմէնտըր, անգղ: ասկոռթիոն, յն: եապան սարմուսաղը, տճ: և ըստ մեզ՝ խստոր վայրի. այսպէս անուանեալ սակս ունելոյ սորա զհոտ խստորոյ: Է տեսակ թաւիշաւոր խոտոյ, որոյ ցօղունն է փոքրիկ, օձապտոյտ և ճիւղալից: Տերևք նորա երկայն են և փափուկ, որք երկու երկու բուսանին 'ի վերայ ճիւղոց. որք և ունին զգոյնս սպիտակս և զկողմունս սղոցաձևս: Ծաղիկն փոքրիկ, որկորաձև, հերձոտ, և կարմիր. բերէ և քառեակ սերմունս մանունս, և բոլորակաձևս: Իսկ արմատն օձապտոյտ է և թեքալից: Բուսանի յամենայն ուրեք՝ 'ի խոտաւէտ և 'ի ջրարբի դաշտավայրս, և սկըսանի ծաղկիլ յամսեանն յունիսի: Ջտերև սորա եփեալ 'ի ջուր և արբուցեալ, դեղ է փորհարութեան, և հոսման արեան. զի է սեղմիչ և խթիչ բնութեան. սատակէ նաև զորդունս և զճճիս որովայնի. չափն 'ի մի տրամէ մինչև ցերկու, խառն ընդ ութ ունկի ջրոյ: Այլև ըստ ոմանց՝ մեղմէ զչարութիւն թունից. ըստ որում 'ի կիր արկանի 'ի բաղադրութեան տիասքօռտիօի, որ այն ինքն է սարմուսաք մաճունի:

Սքօռռէնցա. տե՛ս տիարրէա:

Սքօռցա. տե՛ս քօռթէքս:

Սքօռցա վէնթէռանա. տե՛ս քօռթէքս վինթէռանուս:

Սքօռցա նէռա տ' իսբանեա, իտ: սքօռչէնա, տճ: Է կեղև ինչ ստուար իբր մատնաչափ, սեաւ արտաքուստ, և սպիտակ 'ի ներքուստ. համով քաղցր է. զոր կորզեն յարմատոյ իրիք բուսոյ սպանիոյ. զոր բնակիչք երկրին չորացուցեալ 'ի հովանաւոր տեղիս՝ առաքեն 'ի վաճառ, որ է դեղ ազդու ընդդէմ հազից, և կերկերման որկորոյ, զի է սնուցիչ և քրտնաբեր բնութեամբ: Չափն կէս տրամ խառն տասն ունկի ջրով: Եւ ըստ ոմանց նախնի հեղինակաց՝ ու-

նի և ա զարմանատաքանչ նեբտարծուԹիա ՚ի դիմակա֊ լել ժանտ ախտից, Թունից, և հարուածոց օձից և կարձաց։

Սօբբուէսանօնէ *ա՛ օուննա, կամ խաքուուխա, իտ։ սխտիկ զօուս, աՃ։ իւարիւ, արբ։ շաշէքլուխֆաէն, պր։ և ըստ մեզ՝ միզարբելուԹի֊ տեա զայամանէ հա֊ ա֊ Երեա 141։*

Սօլանում նիկուում, *լտ։ սօլանում, իտ։ մօուէլ, գղ։ նայդ շէյտ, անգղ։ գէօբէք իւզիւմիւ, կաՀ ԹիլՀ֊ քի իւզիւմիւ, տՃ։ էննէպ իլ սալէպ, կամ ֆէնա, կամ սէլասան, և կամ ուէպուաք, արբ։ պարէՃ, կաՀ սէքէննկիւս, և կամ էքէննկիւս, պր։ և ըստ մեզ՝ շըն֊ խալղղ։ Ե բոյս հասարակ՝ որ յամէնայն ուրէք ՚ի ցանկապատ տեղիս ինքնին բուսանի՝ իբրև մի և կէս տանասչափ բարձրուԹիւ։ Տերև նորա է երկայն, լայն, սրածայր, փսխուկ, կանաչահիւԹ, և տաղտկահամ։ Ծաղիկն վարդաձև, հերձատ, հինգԹերԹեան, և պէտակ։ Պտուղն տուսար ՚ի չափ գիհոյ, և կա֊ նաչագոյն, այլ ՚ի հասանելն փոխի ՚ի սեաւ, և ՚ի միջի պարունակէ զԹանձրամած հիւԹ, և մանրիկ սերմունս տափարակս, և դեղնագոյնս։ Իսկ արմատն է երկայն, նուրբ, Թելալից, և սպիտակ։ Ա֊յս բոյս բնուԹիւ է զովացուցիչ, և փոքր ի Թմբրեցու֊ ցիչ։ որ առէպ ՚ի վար արկանի ՚ի դեղոցայս առ ՚ի Թանձրացուցանել զհիւԹս մարմնոյ, և ՚ի զովաց֊ ցանել զ֊որբոքուն քաղցկեղի, և հրատապ պալարի֊ այլև մեղմ զմարմանջուն որքիւնոյ։*

Սօլանօ մէքսիքանօ։ *տես եալաբեա։*

ՍօլուԹիւօ։ *է անուն ընդհանուր, որով ՚ի չքան֊ կին դեղոցայք, որք բնուԹիւ մեղմապէս գրգռեն, և լուծանեն զհիւԹս փորոտեաց և որովայնի։ որպիսի են՝ վիօլէ, այսինքն մանուշակ, շլոր, մեղր, կեռաս, կաԹն, խաչու, միան, և ն։*

Սօլֆուռօ *ու ամմօնիաքա, կամ լինգուօռ ֆուման֊ Թէ ու պօնէլէ, իտ։ ռուբհուռէԹում ամմօնիէ, լտ։ սուլֆիւռ ու՝ ամմօնիաք, գղ։ սըֆըրէյԹ օվ էմմո֊ նիէք, անգղ։ Ե հեղանիւԹ ինչ ասատկահոտ՝ դեղին հարեալ ՚ի գոյն կարմիր, կազմեալ ՚ի կրոյ, ՚ի ծծըմ֊ բոյ, և ՚ի օսախոռուռիաԹօ ու ամմօնիաքայէ, որ է դեղ ազդու ընդդէմ ամենայն ախտից աւԹելոց ՚ի յուժգնուԹէ։ զի է Թուլացուցիչ բնուԹիւ։ Ձափն ՚ի 4 չԹէ մինչև ցուԹ խառն ընդ երկու կամ չորս*

ունկի ջրոյ:

Սօլֆուռօ տ' անթիմօնիօ կամ տի մէռքուռիօ, կամ էթիօբէ տի անթիմօնիօ, իտ: սուլբհուռէթում սթիպէի էթ մէռքուռիի, լտ: Է փոշի ինչ սեաւ և փայլուն, յօրինեալ 'ի ծծմբախառն անթիմօնիօէ, և 'ի սնդկէ. օգտաւէտ է 'ի դիպուածս խոզից կամ խուլից պարանոցի, ախտի գաղղիականի, բորոտութեան, և այլ ախտից մորթոյ. զի է թուլացուցիչ և քրտնաբեր բնութեամբ: Եւ 'ի գործածութեան պարտ է պահել զչափ քանակութեան, որով սովոր եմք 'ի կիր արկանել զփոշին կոչեցեալ յիտալացւոց՝ էթիօբէ մինէռալէ:

Սօլֆուռօ տի բօթասսա, կամ ֆէկաթօ տի սօլֆօ ալքալինօ, իտ: սօլբհուռէթում բօթասսէ, լտ: Է նիւթ ինչ մթին կարմիր, կարծր, անհոտ, և դառնահամ, միանգամայն և դեղթափ ընդդէմ հանքային թունից. որպիսի են սուպլիմաթօ քօռռօզիվօ, մկընդեղն, սնդիկն, անթիմօնիօն, և՝ն: Այլև օգտէ բորոտութեան, քոսոտութեան, որքիւնի, և այլ ախտից մորթոց, զի է դեղթափ և ճճէհալած բնութեամբ: Չափն 'ի 10 ցորենոյ մինչև ց30 յաւուրն՝ խառն ը՝ շաքարի, կամ ընդ կօմմա արապիքայի, բաղադրելոյ հասարակ ջրով:

Սօլֆուռօ տի մէռքուրիօ նէրօ. տե՛ս էթիօբէ մինէռալէ: Կոչի և 'ի լատինացւոց՝ սուլբհուռում հիտռառճիռի նիկռում: 'Ի գաղղիացւոց՝ սիւլֆիւռ տը մէռքիւռ նօառ: և յանգղիացւոց՝ պլէք սիւլբհուռէթ օվ գուիքսիլվըր:

Սօլֆուռօ տի մէռքուռիօ ռօսսօ. տե՛ս չիննապարիս:

Սօլֆուռօ տի սթանիօ, իտ: սուլբհուռէթում սթաննի, լտ: սիւլֆիւռ տ' էթէն, գղղ: սըլֆըրէյթ օվ թին, անգղ: գիւգիւրթլիւ գալայ, տճ: Է փոշի ինչ սեաւ, փայլուն, անհոտ, և անհամ, կազմեալ 'ի յանագէ և 'ի մաքուր ծծմբոյ. որ է դեղ ճճէհալած: Չափն 'ի կէս տրամէ մինչև ցմի յաւուրն՝ խառն ընդ շաքարի, կամ ընդ մակնէսիաի, և կամ ընդ լոսեալ անիսոնի:

Սօլֆօ սուպլիմաթօ կամ բուռօ, կամ ֆիօռ տի սօլֆօ, իտ: սուլբհուռ սուպլիմաթում, լտ: սուֆռ սիւպլիմէ, գղղ: սիւպլիմըտ սըլֆըր, անգղ: դիւգիւրթ չիչէի, տճ: Է զտեալ, կամ լաւ ևս վերացական մասն ծծմբոյ. որ լինի փոշի նրբագոյն, դե-

ղին, անհոտ, և անհամ, միանգամայն և դեղ թանձից, անհնարին հիւծուլթե, հնապոյն հարբխոյ, ցաւոց յօդուածոց, բորոտուլթեան, և այլ ախտից մոլեթոյ. նաև սաստկէ զորդուն և զճճիս որովայնի, ղի է մեղմասէս լուծիչ, և մաքրիչ բնուլթե: Ուն և սա մանաւոր ինն գործունէուլթե 'ի բանալ զնացանս աւիշեան անօթոց: Ջաւին 'ի 6 ցորեանոյ մինչև ցճօ յաւուրն՝ խառն շաքարաւ, կամ մեղրիւ:

ՍօլՓօ ատուաթօ ա' անթիմնիւօ, կամ թէռմօսիւտօ ա' անթիմնիւօ սօլՓուռուաթօ ուանչիաթօ, իտ: թէռմօախտում սթիպլին սուլՓհուռուաթում չինթռէում', լտ: Է փոշի ինչ նարնջագոյն, անհոտ, և անհամ, որոյ զօրուլթին և ներգործուլթին նոյն է ընդ քէռմէզ մինէրալէն, բայց փոքր ինչ մեղմ է քան զայն:

Սօտա, իտ: սալսօլա սաթիվա, լտ: սուտ քիւլթիվէ, գող: զմօլ կլէս ուլըլթ, անգլ: գալն, արբ: չորաք, տճ: Է տունկ ինչ ճիւղալից, որ սովորաբար բուսանի 'ի ծովափնեայս, և յաւազուտս իբր երկուտանաչափ բարձրուլթե: Տերև նորա է մանր, բոլորշի, երկայնաձև, հիւթալից, և աղեհամ: Ծաղիկն մանր է և կարմիր հարեալ 'ի գոյն դեղին: Իսկ արմատն կարծր է և գորշագոյն: Այս տունկ նպաստէ 'ի կազմուլթին օճառի, և ապակւոյ: 'Ի տերևոյ այսր տնկոյ արտահանեն նաև զալ ինչ սպիտակ կոչեցեալ 'ի լատինացւոց՝ սալ ալքալինում սօտէ, տէս անդ:

Սօրսուս, կամ բիւռուս սօռսուս, լտ: սօռսօ, իտ: սօռսիկ, կամ քօռմիկ գոդղ: սէրվայս Թրի, անգլ: լուվէզ, տճ: և ըստ մեզ՝ սին: Է պտուղ ինչ գնատակաձև, և հիւթալից՝ նման ըստ իմիք զղերոյ. համեղ յորժամ կատարեալ հասուննանայ, միանգամայն և դեղ փորհարուլթե, զի է սեղմիչ և զովացուցիչ բնուլթե, և 'ի մանաւորի հոսման Թանչից, կամ արեան:

Սֆէնօիտէ. այսու անուամբ ըստ անդամազննաց նշանակի՝ ոսկր ինչ զետեղեալ 'ի ներքուստ յաւուրջակոտման վերին ծնօտից:

Սֆէնօ Ֆարինձէօ. անուամբս այս իմանի՝ մին 'ի վկանանց, որք նպաստեն 'ի կլանել զկերակուրս:

Կ.

Կաեռուօլէ, կի վաեօլօ, և կի բուանթուէ, իտ: բուանթուէ, լտ: էնէք հաստատլըլը, տճ: միւճէտաէր, կամ նէպհ, և կամ ճէտրի, արբ: էնրէք, պր: և ըստ մեզ՝ պևսակ, կամ ծաղիկ: Ն ախտ ինչ որ ածէ՛ի վերայ մարմնոյ շարաւալից պալարս հանդերձ անընդհատ ուեռդիւ:

Վալէռիանա, լտ: վալէռիանա սիլվէսթռէ, կամ կաթնաուռիտ, իտ: վալէռիան, գղղ: ուվայլտ վէլէրինէնէ, անգղ: գէատ օթու, տճ: Թուռի, կամ պիւհի, և կամ խաշնէշ իլ կօթթա, արբ: Թէրէհ, կամ գիւրպէ, և կամ մէնթէնճիւվէ, պր: և ըստ մեզ կատամինթ, կամ կատուսախտ: Ն բոյս հռչակաւոր, բուսեալ ՛ի խոնաւուտս, և ՛ի լերինս նըբ մարդաչափ բարձրութէ: ցօղուն ուրա է մասլիր, դարոնագոյն, և փոքր ի Թաւիշաւոր: Տերևքն երկու երկու ելևէջ ելանեն ՛ի վերայ ճիւղոց՝ հանդէպ միմեանց, որոց ոմանք են եզերահերձ, և ոմանք անհերձ: Ծաղկքն բուրտրակ ՛ի ձև անուոյ, ամխուակ հարեալ ՛ի գոյն կարմիր, և անուշահոտ, որք վուռնջա վուռնջա վրԹԹին ՛ի վերայ ճիւղոց սերմնափակօքն հանդերձ: Իակ արմատն ստուար նըբ բնաչափ, գլանաձև, կնճռաւալից, նրբաԹել, գորշագոյն, հիւԹալից, սաստկահոտ, դառնահամ, միանգամայն և համեմային: Սա ունի համակրուԹիւն ընդ կատուի, վասն որոյ ամէն Թաւալի ՛ի վերայ սորա • յորմէ և զանուն ն առ: Գերահուչակ է ՛ի մասին օգուտաբերուԹե՛ի դեղուածս ախտից ջղաց, անդամալուծուէ, կաթուածոց, լուանուուԹե, միջահասակաց ցաւոց կիսոյ գլխոյն, և արգանդի, ախտանդամուուԹե, ախտի ցընցականի, և ընդհանրապէս ընդդէմ ամենայն ախտից առԹեալոց ՛ի ակարուԹէ ջղայ • զի է խԹիւ, զօրացուցիչ և փոքր ինչ Թմբրեցուցիչ բնուԹե: Ալև սակաւակէ զորդունս և զճճիս որովայնի, և փարատէ զախտս կուչեցեալ էմօՖԹիզի: Ջաւին ՛ի ջրս արամէ ժինչև ցմի և կէս ունկի, զոր օրէն է եռացուցանել

մի լիտր ջուռվ. կամ դնել թրմոց ՚ի ջուր ջեռմ ժամն երիս կամ չորս, յաւելուվ երբեմն ՚ի նոյն երեք սրամ քինախինա, կամ երկու սրամ սերբենթաուխա վիռ ձինիանա, կամ փոքր մի քամֆիլլա. զոր պարտ է առ հիւանդաց ՚ի միջոցի 24 ժամուց:

Վալվուլա. այսու անուամբ ըստ անդամոցն նշանակի՝ գռնակ, որ է մաշկ կամ այնպէս զետեղեալ ՚ի խողովակս մարմնոյ, որ դիւրաւ բացեալ ընդհէն անցս հեղանիւթոց, որք անցանեն ընդ այն. բայց ոչ առ նոցա անցս ՚ի դառնալ յետս:

Վակա. թափառ կնիք. ըստ անդամոցն են վեց ցերծրդ ամուք ջղաց, որք ի ջեալ ընդ ոլնայարն՝ ձապալին և թափառին ընդ բովանդակ մարմինն:

Վաճինա ուրթէուինա. փող կամ անցք արգանդի. ըստ անդամոցն է անձկագոյն ման արգանդի:

Վանէլլուս, լտ: բամպնչէլլա, իտ: Է տեսակ մի գելեցկատեսիլ և սրաթռիչ թռչնոյ ՚ի չափ աղաւնոյ, որոյ գոյն է խայտաբղետ. այսինքն սպիտակ, սեաւ, կանաչ, կարմիր, և կապոյտ. ՚ի գլուխն ունի թաց գաձև կատարս. կերակրի ճճեօք և ճանճիւք, որք գտանին յեզերս գետոց, և լճաց: Մի նորա պարարտ է և համեղ, յոռնգամային և օգտակար դեղ նուաղելոց, զի է զօրացուցիչ սրտի և ուղղոյ:

Վանիլլա առօմաթիքա, լտ: վանիլլիա, իտ: վանիլ առօմաթիք, գղ: վէնիլէէ, անգղ: Է պտուղ ինչ ամերիկոյ, որ ՚ի սուղ ժամանակի ծաւալեցաւ ընդ զանազան տեղիս եւրոպիոյ, և ասիոյ, որոյ երկայնութենն է իբր կէս տանաչափ, նուագութեն գրչաչափ խոշլնարշանի, թուխ, փափուկ, պարարտ, իւղային և դիւրաբեկ. նեղքին գոյացութեն նորա է թուխ հարեալ ՚ի գոյն կարմիր, քնքուշ, բալասանահոտ, և գոյզն ինչ կծուահամ. յորում լի են հատք մանրիկք սեաւք, և շողշողունք: Պայս պըտուղ, կամ լաւ ևս ասել պատեան՝ ՚ի սկզբան է կանաչագոյն, ապա գեղնագոյն, հուսկ յետոյ ՚ի գոյն թուխ փոխի, զոր սկսանին քաղել յամենայնն սեպտեմբերի, և չորացուցեալ օծանեն իւղով գոյալի, կամ նշոյ, զի փափկացի, և պահպանեսցի ի նեխութենէ, զոր վարեն ՚ի տալ զհոտ, և զօրութեն էութքբալաթիաի: Վարի ևս ՚ի գեղոցայս ՚ի զօրացուցանել զջիղս, և զկանուննս մարմնոյ. և ՚ի մանաւորի ընդդէմ ախոնդանոտութեան, և ցաւոց գլխոյ

ատելեալոց՝ ի սկսուցանէ, զի և խթել կամ գրգռել բնութիւն: Ցամին՝ ի տան ցորենոյ մինչև ց30 խստուն տան ունկի եռացուցեալ ջրով: Բոյս սորա է տեսակ մի վօլուպիլես կոչեցեալ անկոյ. զոր սպանիացիք՝ քամբէգէ անուանեն. իսկ հնդկացիք՝ թլիքաօքիլ. լինի սա յաճախ՝ ի մէքսիքօն, որ զօրէն բալենուց պատուոյ զծառուովք երբ 14 կամ 15 ոտնաչափ բարձրութիւն: Ցօզուն սորա է նուրբ բոլորչի, կապտակեղև, դիւրաթեք, կարծր, և ջղային. ունելով ըստ ընդարաբեր եղեգանց ծուներս երբ 6 կամ 7 բոյթ տարածայ՝ ի միմեանց: Ոչնի տերևս նման տերևոց ջղախոտի, կամ լաւ ևս դաբնեւոց. բայց երկայն, և պարարտ քան զնոսա. գոյն նոցա՝ ի վերին երեսս պայծառ կանաչ և փայլուն. իսկ՝ ի ներքոյ գոյզն լինչ դեղնափոյն: Բանայ և ծաղիկ մեծներանգ:

Վասկ, կամ լաւ ևս՝ վազն լինգամաթիչն. այսպէս կոչեն անգամազննիք զաւիշկեան անօթս կամ խոլըվակս, ընդ որս հոսէ կամ յորս պարունակի հեղանիւթ լինչ՝ ի մարմինս կենդանւոյն. յորմէ և արտացիք՝ էվսիէի լին ֆայիէ կոչեն:

Վարիքօջէլէ. այսու անուամբ ըստ բժշկաց իսմանի՝ այսուհն պարկի ամորձեաց, գոյացեալ՝ ի լայնմանէ երակաց նոցին:

Վաքքա, լա, և իա: ինէք, տձ: պատառ, արբ: և ըստ մեզ՝ կով: Ն էգ անասուն ծանօթ ամենեցուն. որոյ սակնքն օգտակար է կրծոց. որպէս և կաթն նորա: Ճարպ սորա և ուղեղ զօրատուու են ջղաց: Իսկ մեղն մեղմ զցաւս յօդուածոց, և վարատէ ըզջգռղութիւն:

Վէթռուօլա. տես բառիդ թառիս:

Վիթռուօլօ պլօ, կամ վիթռուօլօ տի ռամէ, և կամ օսխուօլֆաթօ տի ռամէ, իտ: օսխուրքհաս քուբրի, լս: օսխսիլֆաթ սը քիւիվռ, պղղ: օսխսըլֆէյթ օվ քօբբըր, անգլ: Ն սոլ լինչ երկնագոյն ելեքթռաձև, գառնաչամ, ժանգամայն և սեղմիչ. օգտաւէտ է՝ ի գիպուածս թռչքային բարակացաւութիւնք, լուանոտուութիւն, պարբերական տենդից: Կրկնակի է զօրութիւն սորա. վի եթէ առցէ ոք՝ ի ամանէ զջրրոդ մասն մինչ ցօրենոյ մինչև ցմի կշիռ ցօրեան, լինի թուլացուցիչ և ակարացուցիչ բնութիւն: Իսկ եթէ առցէ առաւելքան զչափն պայմանեալ, յայնժամ իսկ և իսկ փոսղատեալ սեղմէ զորիսորն, և ըզ-

ակրան • առնէ զվիսխուսն, զբորբոքուսն սուսմոքսի, և փորոտեաց, ընդ նմին և վքասղցկեղ • հուսկ յետոյ մահու սպանանէ : Ա՛յլ դարման սորա չէ ինչ տալ քեր 'ի դարմանոց վիճռուխօլը տի ֆէուռօի, մանաւանդ իբէքաքուսանան, և իւղն րիչինօի :

Վէճռուխօլը տի ծինքօ, կամ օսխօլֆաթօ տի ծինքօ, իտ : օսխուրքհաս ծինչն, լտ : Ի սպ ինչ բաղսդրական, կազմեալ 'ի ծինքօէ, և 'ի օսխօլֆօուկքօէ : Դանինք 'ի գործ ածէին սասի 'ի պէսպէս դեղոցայս, նաև 'ի ժայռքել տալ զքիւնն արբեալ • նսկ այժմ սակաւք 'ի վար արկանեն յարևմուտս • զի վտանան սորա սան զարմսան անուանեալ իբէքաքուսանա : Ա՛յլ մեք սովաւ սպաքինեմք վախտս աչաց : Ջայս եթէ կամիս առնել, այրկ զնուրբ փոշի սղիս ըստ կշռոյ երից կամ չորից դրեննոյ՝ 'ի վեց ունկի սամպուքօի կամ վարդի ջրոյ • և երից անգամ յաւուրն լուանալ տալով զցաւսպնեալ աչս, 'ի սկզբանն զով, և հետս զհեսկ միշտ առսւել գուրս : Տես և զայսմանէ զբսան վիճռուխօլըսմ :

Վէճռուխօլը տի ֆէուռօ, կամ օսխօլֆաթօ տի ֆէուռօ, իտ : օսխուրքհաս ֆէուռի, լտ : Ի բաղսդրական սղ ինչ կանաչապոյն, բիւրեղանման, թափանցիկ, տուպահամ մինպամայն և դառն, օգտաւէտ է 'ի դեղսուածս փորհարուսթե, թանչից, 'ի հսամուննա սերման կամ սասլմի, որք պատճառին 'ի թուլսութէ պործարանաց • չսին 'ի կէս ցորենոյ մինչև ցօ, խառն ի լիտր ջրով : Ա՛յլ եթէ առցէ ոք 'ի սմանէ առսւել քան զչսին սահմանեալ, առնէ զվիսխուսն, զցաւս սրտի և սսսմոքսի, և զբորբոքուսն սսսմոքսի, և փորոտեաց : Ա՛յլ գեղեցիկ սորա են սօլուցիօնէ տի օսխքսուպօնսթի ալքսլինի տի բօթասա կամ տի սօտա • նուրբ մսան մռխրոյ • և օսխուսսխաթօ տի բօթասա կամ տի քալչի, և թէթև լուծողականքն : Սա կոչի և վիճռուխօլը վէռսա • սե՛ս զայս 'ի բառն վիճռուխօլսմ :

Վէնա, կամ վէնէ, իտ : սսմար, տճ : ըսք, կամ չսքն, կամ սխսէ, և կամ վէճին, արբ : հռէխ, կամ սէրսորդ, պր : ֆլէվա, ին : և ըստ մեզ՝ երակ : Է անօթ արեան, ընդ որ շրջաբերի արիւն կենդանւոյն, և են բազմսթիւ, որք սկսանին 'ի ծայրէ ներդնց, և հասանեն 'ի սիրտն :

Վէշնէա կամ վէսնէա, լտ : գաղատուշտ, տճ, մեսա-

Րուպուս Փռուխիքօսուս, լտ։ ռօկօ, իտ։ ռօնս, դղ։ պռէմպել, անգղ։ պէօյիւրխէն Թիքէնի, տճ։ և ըստ մեզ՝ մօրենի։ Է Թուփ մինչ, որ յաճախ բուսանի յեզերս ճանապարհաց, և պարտիզաց, որոյ բունն է կանաչ, դիւրաթեք, բազմատատ, ուղղակեր, և փշալից։ Տերևք նորա են երկայն, սրածայր, կարծր, և եզերահերձ. գոյն նոցա ՝ի վերին երեսս պայծառ կանաչ, իսկ ՝ի ներքոյ տպիտակ։ Ծաղիկքն հինգթերթեան են և կարճականթ, որք վարդանման եւանեն ՝ի վերայ ճիւղոց՝ հանդերձ վեցանկիւնի բաժակօք, զկնի ծաղկանց յաջորդէ պտուղն քաղցրահամ նման սմենևին Թթոյ։ Իսկ արմատն նորա է և. օձապտոյտ, միանգամայն և գեղ միզարգելութեանէ, և փորհարութեանէ։ Այլ որպէս արմատ սորին Թփոյ, նոյնպէս և պտուղն է գեղ ազդու ընդդէմ ջնտաքեր հիւանդութեանց, փորհարութեանէ, փոլատցաւուանէ, և տկարութեանէ կրծոց։

Րուսթիքուլա, կամ բէռուկա, պքօլօփաքս, և կիք քէքտատա, և կամ կօլլինակօ, լտ։ պէքքաչչիա, իտ։ էչլվէ գուշու, կամ չուլլուք, տճ։ Է տեսակ մի Թուզնոյ. որոյ կատուկն է երկայն, և նուրբ. միս նո՛ր բա պտուտ է և համեղ, միանգամայն և օգտակար գեղ նուաղելոց և ուշաթափելոց. զի է գրգռիչ և զօրացուցիչ բնութեանէ. ունի և սա մանաւոր գործութիւն ՝ի յառաջացուցանել զատկին։ Իսկ բնչն տրբեկ զբիծս և զտատապատս աչաց։

Ռուս ռատնքանեմ, կամ ասմնաքօ ռատնքանեմ, իտ: ըմնուս ռատնքանա, լտ: սիւմնաք Թուռքան, գղղ: ըօյզըն Թրի, անգղ: Է ծաու ինչ բուսեաչ 'է պերմանկա 'է բուրյատանա անկաշննաց. որոյ հիւլեն տերևոյ կանաչ է և Թխանաւոր: Ի-խնաւորութիւն տրա որոշի այնու՝ զի 'ի ծաոքեըն անդ՝ տոչորէ ատատկապէս ղբերանն, և 'ի կլանելըն առաւել քան զչափն պայմանեալ առնէ զանտոկալն խիԹս և ցաւս ատամոքսի և աղեաց հանդերձ պսակարիս, և երբեմն և սա զմահ: Իսկ չափաւորապես ածբեալ՝ ապաքինէ զջղոդուԹիւն, զանդամալուծուԹիւն, զտենդ մինչահասական, և ըորբոքողական, և զախտս խոզովակաց խռչակոցն. զի է Թուլացուցիչ բնուԹեաբ: Ձաւին 'է կէս կշիռ ցորենոյ մինչև ցմի յաւուրն. և կետ քանի ինչ աւուրց առ ատկաւ ատկաւ աշխճանաւ մարԹիս առաւելուլ զքանակն մինչև ցւօ ցորեան խառն փոքր ինչ շաքարաւ:

Ռուաքուս, կամ պուսքուս, կամ ռուսքուս ատրուէանեան, լտ: պրուսքօ, կամ րուսքօ, և կամ րուսքիա, իտ: պուխսաք կամ ֆռանկօն բիգան, գղղ: պըջըպրուս, կամնիհօլըի, անգղ: Է Թուփ ինչ, որ յաշխարհ բուսանի 'ի կողմանս եւրոպիոյ յանտառս և յանհարԹ վայրս իբր չորս ոտնաչափ բարձրուԹիւբ, որոյ ոստք դիւրաԹեք են և դժուարարեկ: Տերևք տրա ըստ իմիք նման են տերևոց մրտենւոյ: Ծաղկին փոքրիկ և կարճականԹ, պտուղն բոլորչի, կարմիրագոյն 'ի չափ ոլեռան. բերկ և սերմանս կարծրա և եղջերաձև: Իսկ արմատն ստուար, ծամածուռ, խորտաբորտ, կարծր, օձապտոյտ, և Թելայից. հասմով ըստ մասին վոքր ի քաղցր է, և ըստ մասին դառն, և լինի գեղ օգտակար 'ի դիպուածս ջրգողուԹեբ, դալկան, և միզարգելուԹեբ, զի է Թուլացուցիչ և միզեցուցիչ բնուբ. յայն սակս կարգի 'ի դասս հինգ միզաբեր կամ բացողական արմատոց՝ կոչեցեալոց յիսուսացւոց՝ չինգուէ ռատիչն աբէռիչենԹի մանճիւօռ: Ձաւին 'է վեց տրամ մինչև ցուԹ խառն երկու լիտր ջրով. զոր պարտ է եռացուցանել այնքան, մինչև սպառիլ կիսոյ մասին նորա. և առեալ լինի ըմպել իսս այս 'ի միջոցի 12 ժամուց:

Ռօգա կաւրիւքա, լտ: ռօգա տօմէսԹիքա, իտ: ֆլէօռ տե ռօզ, գղղ: ռէտ օֆֆիչինէլ ռօզ, անգղ: Թրիանտաֆիլլօ, յն: վառա, կամ վէԹիւէ, արբ:

թէրէն, կամ նէսթէրէն, և կամ նէսթէռուն, պր: և ըստ մեզ՝ վարդ. ծաղիկ գեղեցկատեսիլ և անուշահոտ ծանօթ ամենեցուն. յորմէ յօրինեն քաղցրաւենի, նաև գեղ փորհարութե՛, և տկարութե՛ ստամոքսի, զի է խթիչ և սեղմիչ բնութբ՛: Չափն կէս տրամ՝ խառն ընդ ութ ունկի ջրոյ: Նոյնպէս և բուժէ զվէրս բերանոյ, և լնտերաց:

Բօզմառինուս, լտ: ռօզմարինօ, իտ: ռօմառէն, գղղ: ռօզմէրի, անգղ: պիպէրինէ, տճ: հասալիպան ախտար, արբ: և ըստ մեզ՝ խնկունի, կամ խնկահոտ: Է բոյս ինչ մշտադալար, կարծր, երկայն իբր չորս ոտնաչափ, ճիւղալից, և գորշագոյն, որոյ տերևքն են խիտ, կարծր, սակաւահիւթ, սաստկահոտ, դառնահամ, միանգամայն և համեմային: Ծաղիկ նորա է փոքրիկ, որկորաձև, սպիտակ հարեալ 'ի գոյն կապոյտ, և քաղցրահամ. բերէ և սերմունս մանունս, և բոլորշիս: Իսկ արմատն նուրբ է և թելալից: Բուսանի յամենայն ուրեք, նա յաւէտ յերկիրս վիճակեալս բարեխառն օդոց: Սովորաբար սկսանի ծաղկիլ 'ի ձմեռան: Տերև այսր բուսոյ չորացուցեալ 'ի կիր արկանի 'ի դիպուածս ջղային դժուարամարսութե՛, տկարութե՛ ստամոքսի, ախտից արգանդի, և այլ ախտից ջղաց առթելոց 'ի թուլութե՛. զի է խթիչ և զօրացուցիչ բնութբ՛: Չափն կէս տրամ խառն ութ ունկի ջրով. զոր օրէ՛ն է եռացուցանել առ հրով, մինչև 'ի սպառիլ այնր կիսով չափ. ապա անցուցեալ ընդ կտաւ՝ տո՛ւր ըմպել հիւանդին ժամէ 'ի ժամ դրգալ մի սեղանոյ: 'Ի տերևոյ ասի ելուզանեն նաև ոգի ինչ ազդու և սաստիկ հոտաւէտ, որով օծումն առնեն 'ի վերայ ցուրտ ուռուցաց, և գօսացեալ անդամոց:

Փ

Փաաբէպա, լտ: Է բոյս՝ բուսեալ 'ի պրասիլիա. որոյ ճիւղք յորժամ հասանեն 'ի սովորական ափ աճման, կամ 'ի վայր խոնարհին և ճապաղին զերկրաւ, և կամ պատատելով ելանեն զծառով իբրև զբաղեղն. բայց ո՛չ այնչափ ինչ բարձր: Տերևք նորա

պէսպէս են. զի ոմանց է բոլորակաձև, ոմանց երկայնաձև, և ոմանց սրտաձև: Ծաղիկն ելանէ առ կանթիւ տերևոց և 'ի վերայ ճիւղոց, և է սպիտակ հարեալ 'ի գոյն դեղին: Սերմն կարմրերանգ, և ստուար 'ի չափ ոլեռան: Իսկ արմատն գորշագոյն, ստուար, և դառնահամ, յորմէ կազմեն դեղ ազդու ընդդէմ թունից, խածուածոց օձից, և կարճաց. ունի ևս զգործունէութի 'ի լուծանել զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ:

Քաբբառիս, կամ քաբբառիս սբինօզա, լտ: քաբբէռօ, իտ: քաբռիէ, կամ քաբռ, գղղ: քէյբըրս, կմ քէյբըր շրըպ, անգղ: գէպէռէ, տճ: և ըստ մեզ՝ կապպար, կմ քառ, և կամ քաւառ: Է թուփ փշալից որ յաճախ բուսանի 'ի կողմանս արաբիոյ և հայաստանու, որոյ ոստք բոլորակ են փոքր մի կոր, ունելով 'ի ծայրս ընձիւղս դնտակաձևս, և կանաչագոյնս, որ այն ինքն է կապպար, զոր կտրատեալ արկանեն 'ի ջուր աղի առ 'ի տոկալ, որպէս և զտանձաձև պտուղ նորա: Տերևք նորա բոլորակաձև և փոքր մի դառնահամ: Ծաղիկքն սպիտակ են և քառաթերթեան, որ 'ի վեր երևին 'ի վերայ ճիւղոց՝ հանդերձ քառաթերթեան առէջիւք, և սերմնափակօք: Իսկ արմատն երկայն է և ստուար, ունի և կեղև դառնահամ և թեթևահոտ, յորմէ կազմեն դեղ ցաւոց յօդուածոց և խցանաց փայծեղան, զի է խթիչ և զօրացուցիչ: Չափն 'ի չորս տրամէ մինչև ցութ, զոր պարտ է եռացուցանել մի լիտր ջրով:

Քաբռա, լտ: ծէպա, կամ քաբռա, իտ: էքս, յն: շէվռ, գղղ: գէչի, տճ: մէզէ, կամ մազայիլ, կամ մառս, կամ անս, կամ թէյս, արբ: պիւս, կամ պիւսխիթ, կամ թէքէհ, և կամ չիւբիւշ, պր: և ըստ մեզ՝ այծ: Է չորքոտանի կճղակաբաշխ, թեթև և արագաշարժ քան զոչխար, բայց յամառ, և կամակոր, և կարի հեշտասէր քան զնա: Սա առաւել ևս տարբերի յոչխարէն մորթով մարմնոյն՝ որ ծածկեալ է մազիւ, ունի և մօրուս. եղջիւրք նորա չեն այնքան ոլորեալ իբրև զոչխարի, բայց գտանի և այծ անեղջիւր, որոյ միսքն դժուարամարս են: Իսկ կաթն զոր տայ առատապէս երկիցս յաւուրն՝ յառաւօտու, և ընդ երեկս, է առողջարար և պարարիչ նիհար մարդկան:

Քաբռէուս, կամ քաբռէա, և կամ քաբռէօլուս

լտ: քավռիուօլօ, կամ քավռիօլօ, կամ քաբռիօ, կամ քաբռիաթթօ, և կամ քաբռիուօլօ, իտ: եապան գէչիսի, կամ գառաճա, տճ: եաֆուր, կամ սիեաչա, պր: մէզայիլ պէռռի, արբ: և ըստ մեզ՝ այծեամն: Է տեսակ ինչ նոխազի 'ի չափ հասարակ այծի. որոյ եղջիւրք են սեաւ, երկայն, և փոքր ինչ կոր, միանգամայն և կարծրապինդ. մորթ նորա շիկամազ, միսն բարեհամ, միանգամայն և օգտակար դեղ փորհարութեան որպէս և արիւն նորա: Իսկ լեղին ունի զմասնաւոր գործունէութիւն 'ի մաքրել և 'ի փարատել զբիծս երեսաց, և զառագաստս աչաց, և 'ի մասնաւորի զցաւս ատամանց: Սա գտանի յանտառս և 'ի լերինս, և ելանէ 'ի բարձր դժուարակոխ և 'ի դահավէժ վայրս, և ննջէ ևս յայնպիսի որոգայթաւոր տեղիս. թեթև է և սրընթաց:

Քաեէբութ, իտ: մէլալէուքա, լտ: մէլալէօք, կամ պուա պլան, գղղ: Է ծառ ինչ հնդկային, որոյ բունն է սեաւ, բայց ոստքն սպիտակ: 'Ի տերևոյ այսր ծառոյ ելուզանեն իւղ ինչ կանաչադոյն և յոյժ կծուահամ և հոտաւէտ, զոր իտալացիք՝ օլիօ տի քաեէբութ անուանեն, որով ստէպ օծանեն զքունքս դիմաց առ 'ի փարատել զցաւս գլխոյ. այլ և բժշկէ զանդամալուծութիւն, զցաւս յօդուածոց, և ջլաց, օծելով և եթ զայնս. զի է խթիչ բնութ՚բ:

Քաթաբլազմա: Է անուն հասարակ նշանակիչ ամենայն բժշկական թանձրաթանից կազմելոց 'ի փոշեաց արմատոց, ընդոց, և խոտոց բաղադրելոց կաթամբ, կամ ջրով. որք կամ ցրուեն զպալարս և զայտուցս նորոդ 'ի վեր երևեալս, և կամ կակղացուցեալ հասուցանեն զնոսա: Զայս բժշկական թանձրաթան արաբացիք կոչեն՝ հարուքա, իսկ տաճիկք՝ հիւդէամա լափասը:

Քալամինթհա, կմ մէլիսսա քալամինթա, լտ: քալամէնթա կմ նէբիթէլլա, իտ: քալաման տէ մօնթանէր, գղղ: մօօթաիօ պամ, անգղ: եապան նանէսի, տճ: ա՚ և մեզ՝ դաղձ, կմ վայրի անանուխ: Է բոյս ինչ համեմահոտ, որ յաճախ բուսանի յեւրոպիա 'ի լերինս և 'ի դաշտավայրս իբր մի և կէս ոտնաչափ բարձրութեամբ. տերևք սորա բոլորակաձև են և պայծառ կանաչ, ունին զծայրս սուրս և զկողմունս ողոցաձևս. ծաղիկն ելանէ առ կանթիւ տերևոյն, և է փնջաւոր և ծիրանագոյն. պտուղն է պատեան արկ-

ջաձև, յորում բաղկանայ սերմն սեաւ, և երկայնաձև. խակ արմատն նուրբ է և թելալից: Տերև այսր բուսոյ եփեալ՝ ի ջուր և արբուցեալ, դեղ է տկարու թե ստամոքսի, և աղեաց. զի է խթիչ բնութեամբ. Ձափն՝ ի մի արմատ մինչև չորեքուս ունկի չլսով:

Կալամօ առօմաթիքօ. տե՛ս աքորուս վէրուս:

Կալլօսէ. այսու անուամբ ըմ անդամոցն նշանակի՝ փոքր մի պնդագոյն մսեղն ինչ ուղղոյն:

Կալքուլոս հունականուս, կամ լոտտուս, լտ: քալքօնէլլուէնի, իտ: պէօռլրէք թաշը, տճ: հասանթիլ գիւլահ, արբ: աէնկի մէսանէ, պր: Ն նիւթ ինչ կարծրատիպնդ իբրև զքար. որ սովորաբար գոյանայ երիկամունս ոմանց մարդկան, յորմէ՝ ի նախնի լուծուցեալ՝ պէծօատ հունականուս. նոյնպէս և յարտերացւոց՝ բանզէհիրի տաէմի. որոց ոմանք ածեցեալ՝ լինին իբրև զկորիզ ձիթապտղոյ կամ արմաւոյ, կամ ոմանք իբրև զմեծամեծ կաղինս: Ա՛յլ ոմանք իբրև զձուս հաւուս: Ոմանք են երկայնաձևք, և ոմանք գնուտակաձևք, կամ ոմանք անհարթք և խորտաբորք: Ա՛յլ գոյն նոցա այլևայլ է. այսինքն մոխրագոյն, սպիտակ, կարմիր, կանաչ, դեղնաշրթի, և քրքմագոյն: Ա՛րդ՝ նիւթս այս գոյանայ ըստ մեծի մասին՝ ի տոհմ, յաղի, և՝ ի ծծմբային հիւթոց, կամ յայլևայլ հանքային ջրոց. տե՛ս և զայսմանէ հտ. ա. երես 113:

Կալքս վիվում, լտ: քաշէննա վիվա, իտ: շը, գղզ: լայմ, անգլ: գիրէճ, տճ: կիր, արբ: գէչ, կամ կաթրէմ, պր: և ըստ մեզ՝ կիր, կամ քուռւ: է կարծր գորշագոյն քար ինչ կիզեցեալ հրով հնոցի, որ է փխալաղիչ բնութեբ, որոյ ջուրն լինի դեղ օգտակար ընդդէմ գաղղիական ախտից, և այլ պէսպէս հիւանդութեանց:

Կալօմէլանօ ատ ուիվէուօ. անուամբս այս ըստ քիմիականաց նշանակի սպիտակ նիւթն այն՝ որ կաղմի՝ ի անդիկէ բռնադրելոյ սուպլիմատեցօ քօռոզիվօիս. զոր վէց անգամ վերացուցանեն կամ բարձրացուցանեն՝ ի ձեռն հրոյ, որով և լինի թեթև և մեղմ քան զմէռքուրիս տօլչէն, և՝ ի կիր արկանի զգուշութբ՝ ի դիպուածս ՃՃիաւորութենդէց, իցանաց լերդի և ծարմանախտ գաղկնականն. և ևս ցաւոց և խոտորութեան միջոց տեղեաց՝ ի վաւաշոտական ախտէ. զի է Թո-

ըացուցիչ և լուծողական բնութիւն: Ջաւին ՚ի ջուր կչռու ցորենոյ մինչև ցյշ խառն ջաքարաւ: Եւ եթէ ականին լորձունք ընդ բերանն ելանել, յայնժամ տարա և գլխովին խափանել զդործածուին, կամ գէթ նուազել զջաւին:

Կամրուժպա օֆֆիչինաուռում, կամ մենխաբէռում բալմաթում, կամ քալրումպէ ռասիքա, լտ: քօլրում ալօ, կամ քալրումալօ, խտ: քօլօմպ, գղղ: քօլօմպէ, անգղ: Է արմատ ինչ ատուար իբր բնաջաւի, թեղեւ, ամնպային, դեղրաբեկ, թխակեղև, կիտրոնապտղի ՚ի ներքուստ, իսկ արտաքուստ մթին դեղնին, թեթեւահոտ, տտպահամ միանգամայն և դառն: Բուսանի ՚ի բազում տեղիս արևելեան հնդկաստանի և ափրիկոյ. յորմէ բնականքն երկրին ջորացուցեալ առաքեն ՚ի վաճառ. որ լինի դեղ պատուական ընդդէմ հնապղծին վտրհարուեր, արիւնային հոսման որոյ վային, և լուծման արդանդի կանանց՝ յորում դեղ ազուածն վտհանակ տեղատեսական արեան հոսի հնութ ապիտակ հարեալ ՚ի դոյն դեղչին: Ուժն և զգործողութիւնն ՚ի փարատել զչղտային դժուարամարսութեն, ՚ի բարեկարգել զգործողութիւն ստամոքսի, և փորոտեաց, ՚ի խափանել զփսխումն արեան և զջախտազանց հոսումն դաշտանի, ՚ի ամառակել զձճիս և զորդունս որովային, և ՚ի բժշկել զանենգս միջահատականս. զի և թեթևատես սեղմիչ, և խթիչ բնութիւն: Եւ զարժանս զայս տամք ըստ կերոյն փուշոյ, կամ նաև իբրև Թրմոց: Եթէ իբրև փուշն, պարտի լինել ՚ի տան կչռու ցորենոյ մինչև ցյօ ՚ի միջոցի 24 ժամուց: Իսկ եղանակն, զոր կազմեմք ՚ի Թրմոց, է այս: Առ երկու տրամ յարմատոյ տատի, և ձանր չորդելով զայն ՚ի մէջ անկանի՝ լից յանօթ կաւեղէն, և դիր Թրմոց չուրն տունկն՝ չուր չերմ զժամս 12. և յետ քամելոյ՝ ամբր ընպել հիւանդին երկու կամ երիք անգամ յաւուրն զկչռու մոյ կամ երկու տունկոյ:

Կամֆհօռա, կամ լաուռուռաքամֆհօռա, լտ: քանֆհօռա, խտ: քանֆռ, գղղ: քամֆըր Թռի, անգղ: դէաֆռուր Թաեար, արբ: քէաֆռուրի, տձ: և ըստ մէջ՝ քափուր: Է գոյացութիւն ինչ ապիտակ, կակուղ, Թեթև, տատակահոտ, խեղային, դիւրավառ, ցնդական, և դառնահամ, ունելով ընդ դառնութեան և փոքր մի տտպութիւն. ունի տա միւսանս չտտկութիւն, զի տպատուրէ զմտանատուր խիճն ցրտութիւն ՚ի լեզուն

զկնի ծասքելոյ, որ չէ ինչ անախորժ: Ծառ սորա մեծ է և ոստալից՝ ըստ իմիք նման ընկուզենւոյ, որ սովորաբար բուսանի 'ի Ճիաբօն, և յարևելեան հնդիկս. զորոյ հերձեալ զբունն, զոստս, զարմատս, և զտերևս, ելանէ գոյացութի՞ ինչ թափանցիկ, որ այն ինքն է քափուր: Հանեն նաև այլ իմն եղանակաւ, զի զծառն զայն հատանեն 'ի մանր շերտս, և եռացուցանեն 'ի ջուր յանօթ ինչ 'ի ձև փամփշտոյ, ուր քափուրն 'ի վեր ցնդեալ մածանի 'ի կափարիչ անդր անօթոյն: Ընտիր համարի՝ եթէ իցէ սպիտակ իբրև զջինջ սառն, զոր զտեն և մաքրեն 'ի կրոյ. զորոյ զազնիւն գործեն 'ի հոլանտա, ուր զտեն նովին իսկ կրով. որ լինի դեղ օգտաւէտ 'ի դիպուածս ջղական տենդից, մանաւանդ յորժամ զուգընթաց լինի ընդ ախտիս դողդոջումն և ցնորումն, հանդերձ ուժաթափութ՞ի. և 'ի մասնաւորի 'ի յարգի ունիմք զսա ընդդէմ քաղցկեղային փողացաւութ՞ի, ախոնդանոտութ՞ի, խելայուզութ՞ի, փտախտութ՞ի, անդամալուծութ՞ի, յօդուածացաւութ՞ի, արգանդացաւութ՞ի, լուսնոտութ՞ի և շնչարգելութ՞ի, և այլ սոցին նման ախտից առթելոց 'ի թուլութ՞է. զի է խթիչ կամ գրգռիչ բնութ՞ի: Ունի նաև զգործունէութ՞ի մեղմելոյ զչարութ՞ի թունից, բանալոյ զմանրամասնագոյն ծակոտկէնս մարմնոյ, և յորդելոյ զարտաշնչութ՞իս, և սատակելոյ զՃՃիս որովայնի: Չափն յերկու կշիռ ցորենոյ մինչև ցերկու տրամ, և փոքր ինչ առաւել ըստ պիտոյութ՞ի: Վարի և արտաքուստ 'ի բժշկութ՞ի քաղցկեղի, հնագոյն և նորագոյն վիրաց, շիաթիքա անուանել՞ ցաւոց յօդուածոց, ցուրտ այտուցից, գրգռման փամփշտոյ, և ցաւոց աչաց պատճառելոց 'ի տկարութ՞է: Այս գոյացութ՞ի լուծանի 'ի ձեռն կրկնահան ցքւոյ:

Քամելուս, լտ: քամելօ, իտ: տէվէ, տՃ: կէմել, կամ Ճէմել, արբ: հիւշտէր, պր: և ըստ մեզ՝ ուղտ: Է տեսակ ինչ քառոտանի կենդանւոյ, յաճախեալ յափրիկէ և յասիա, մեծութ՞ի նորա առաւել քան զձիոյ, և նուազ քան զփղաց. գլուխն և ականջքն փոքր են առ համեմատութ՞ի մարմնոյն, որպէս և տուտ նորա. տեսիլ դիմացն և հայեցուածն դաժան. պարանոցն երկայն, որպէս և որունք նորա. ողն նորա ուռուցեալ ոչ յայլ ինչ պէտս է՝ բայց 'ի բառնալ զբեռինս. ներբանք ոտիցն մսեղէն է և լայն,

՚ի գնալն յաւազուտս, և ՚ի ջուր տեղիս. բառնայ զծանրագոյն բեռինս զաւուրս 40, և 50 անընդհատ, և տակաւ ծարաւոյ աւուրս քանի մի. և ուտէ ախորժանօք զջուր փուշս և խոտս բուսեալս յաւազուտս անապատիս: Կեայ երբ ՚ի բազում առաւել քան զամս կիսոյն: Ընտակալ է բնութեբ, և հաւատացանէ զէնեան կրեալ՝ յոյժ ջունչն երկիւղ յուսէ: Սորա է տեսակ ինչ կոշեցեալ ՚ի բարբառ լատինաց՝ աւոց՝ տուօմաս. զոր խաղք՝ տուօմատուս անուանեն, և արաբք՝ բակուատել կամ էձին. և տաճիկք՝ հէձին տէվէսի. նաև հայք՝ ուղտերատեակ, կամ տաճիկ ուղտ. որ է բարեդէր մարմնով, նուրբ մոլթով, և գեղեցիկ սրունիւք. արագընթաց է յոյժ. զի ըստ ձանապարհորդաց՝ էնք երիվար, որ հաւատարեսցի նմա. և նոյնպէս կարէ ծարաւն տոկալ ՚ի ձանապարհի մինչև զաւուրս երիս: Մինչ նոցա թէպէտ և անախորժ են մերոց քմից, սակայն ոչ նոյնպէս Թուրք արաբացւոց, որք ուտեն զայն: Կաթն նոցա առողջարար է և մաքրիչ ապականութեան արեան: Ճարպք նոցա օգտեն թանչացաւութե, և կարծրապինդ ուռուցից: Լեղիք նոցա դիմակալեն փողոցաւութե. սոքունքն պատրաստեն ՚ի յոլութի դոյզն ինչ ուտելով՝ որպէս հաստատեն բազումք: Մէզքն փրատեն զընչարգելութի: Իսկ զաղտաւտքն վառեն փոխան փայտի յանփայտ անապատին հարաւոյ:

Կամէտուխ. աւն ք՚համէտուխ:

Կամմաւուս, կամ աւթաքուս աթուվիաթ՚լես, լս: Ն խաչափուռ ինչ ծովային. որոյ միան է հաստեղ և աւտրժական ճաչակելեաց, միանդամայն և դեղ Թոքացաւութե, հիւծոտական ախտին, փողոցաւութե, խոլխեցպեւոյ, և խածուածոց կատաղի շանց, և ըստ ոմանց նախնի հէղինակաց՝ ոչնի և զզօրութի հալելոյ զքարիկս երիկամանց:

Կամմիլա. աւս ք՚համմէլուս:

Կամմիլա ուսմանա. աւս ք՚համմէմէլուս ուսմանուս:

Կանթաուէլէ, իտ: մէլօք վէշխաթօուխուս, լս: քանթաուխտ, գլզ: սբէնիշ ֆլայ, անգլ: տիպպան հինտի, արբ: աէռնու, պր: գաւնաուզ պէօճէի, կամ գօսոզ պէօճէի, տճ: Ն ժկլատ ինչ ՚ի չափ բզեզի, ժահահատ, Թուռնաւոր, և երփներանգ. այսինքն կանաչ, կարմիր, ոսկեգոյն, և ոմանք երկնագոյն,

և աեաւ • որ յաճախ պատանի 'ի քաղաստան փարել-
զաւ, իպալևոյ, և գերմանիոյ • այլ հռչակաւոր քան
զամենեսին է որ լինի յապարակս և յանտառս սպա-
նիոյ՝ ուր ծնանի 'ի վերայ ծառոց հացւոյ, ուռենւոյ,
և լիանթրվենւոյ, յորմէ բնակիչք երկրին ըմբռնեալ
առաքեն 'ի վաճառ • որ վարի 'ի պէտս խարտանապե-
ղոյ կոչեցեալոյ յիտալացւոց՝ վէշէքաթօռիս, որ է մի
'ի գլխաւոր նիւթոց անոի • առանց որոյ գժուարին
է խարել կամ պաստրացուցանել զմորթս մարդոյ • 'ի
սմանէ կազմեն և ոտի ինչ ազգս կոշկեցեալ յիտալաց-
ւոց՝ թինթուառա ոտ. բանթաւխտաթօ • յորմէ վարեն
իբր գեղ ջրգոլուխէ, չնչարգելուխէ, և ախտի ջրա-
վախուխեան: Զափն յերկիւք շրէ մինչև 310 երկու
անգամ յաւուրն՝ իսան փոքր ինչ շաքարուս:

Քաննապիս սաթիվա, լտ: քաննաբէ, իտ: շանվռ,
պղ: քըմիըն հէմբ, անգղ: կպաք, կամ գէննէպ, և
կամ գըննէպ, արբ: գէնուսան, կամ շէն, և կամ
պէռ վէկ, պր: գէնսիր կամ գէննէվիր, տճ: և ըստ
մեզ՝ կանեփ: Է բոյս, որոյ ցօղունն է ուռկիլ, քա-
ռանկիւնաձև, անհարթ, բրդոտ, մէջն դատարկ, և
թեւալից, յորմէ յօրինեն զպարան, և զառաստան.
գործեն սակի նաև կտաւ: Տերևք սորա են լայն,
մեծին կանաչ, եզերահերձ, որք ձևանան իբր զթաթ
բացեալ ձեռին մարդոյ: Ծաղիկն գեղնապոյն, խակ
սերմն ձուաձև, ծանրահոտ, և խաղային. միանգա-
մայն և գեղ շահաբեր ընդդէմ հոտման հիւթոց գաղ-
ձևականի, միզարտելուխեան, և հալից աոթեւոց 'ի
հարբխոյ • զի է կակղացուցիչ, և թուլացուցիչ բնու-
թե: Զափն 'ի կէս ունկւոյ մինչև ցմի խաոն մի լիսր
ջրով: 'ի սերմանց սակի արտահանեն զիւղն, որով
օծանեն զհրով կիզեալ մասունս մարմնոյ առ 'ի զո-
վացուցանել: Նոյնպէս և կաթեցուցանեն 'ի նեղքս
ունկան 'ի բառնալ զչընջուռն նորին:

Քանէլլա • տե՛ս չիննամոմմուտ:

Քանէռ, լտ: կամպէռս, կամ կրանքիս, իտ: ա-
պուկալամպո, արբ, խարչինք, պր: չաղանոզ, լէն-
կէճ, կամ էնկէճ, տճ: և ըստ մեզ՝ խեչափուռ, կամ
խիղը, և կամ խեցգետին: Է ազգ ինչ խեցեմորթ
ձկան • որոյ գլուխն, գլխաթևն, և ոտքն են նման
կարմիր • բայց միան է ապխտակ, համեղ, և ախորժա-
կան ճաշակելեաց • միանգամայն և գեղ ընդդէմ
ապականութե տրեան, թոքացաւութե, չնչարգե-

լուԹե, և միջարգելուԹե. այլև արգելու ժամայԹքուամն երկարատև գործածմամբ: Ի գլուխս, և ի սաստիքս ոմանց ի խեցեմորԹացս գտանի քար ինչ աչաձև, կոչեցեալ լիտալացւոց՝ օքքի ոխ քանքուի, կամ կրանքիս, որոց 14 և 16 կշռէ մի տրամ, զորոյ ըներգործուԹե մարմիս տեսանել ի տառն O, ի կարգի նւրոմ:

ԿանտէլէԹէ: Ն պատրոյգ ինչ վիրատպական. որոյ են բազում տեսակք, այլ ընտրագոյնն ի նոսա կոչի՝ քանտէլէԹէ տուղէնիվէ, կամ սէմբլնչի. զոր կազմեն ի մեղրամոմէ, ի յուղոյ վարդի, և ի պիանքօճ պաչէնայի. զորոյ զվաստակս բաղադրուեն Թուղեալ ի ճարտարուԹե արուեստաւորացն, յայտ առնեմք զգործածուԹե և զօգտաւէտուԹե նորա: Ի կամիլ ուրուք վարել զպատրոյգս զայս, պարտ է նախ Թանալ զայն ի յուղ քաղցր նշոյ, և ապա հետ զհետէ մուծանել զայն ընդ միջանց խողովակին, կամ լաւ ևս ի յառնի անդամն ախտաժեւոց՝ առ ի լպրծեցուցանել, և դիւրապատրաստ յօրինել զհուսն միւն, և ի մանաւանդ ի բուժել զվէրս և զուռոյցս գոյացեալս ի նմին անդամն: Սակայն պէտ է ուշ ունել, զի եԹէ ի գործածուԹէ սորա ակամբ վչռանալ և զայրանալ ախան, հարկ է յայնժամ խակ և խակ միջահատել:

Կանքէռօ, խս: քանքէռուս, լս: կէմպել ֆաուխ, կամ աքիլէ, արբ: եէմՀՃէ, կամ երեարը, տճ: և ըստ մեզ՝ խօլխեցգեանի, կամ խլտրեննի, և կամ քաղցկեղ. տե՛ս հտ. ա. երես 357:

Կանքէռօ աբէռԹօ, կամ ուլչէռաԹօ. տե՛ս քանքէռօ:

Կանքէռօ օքքուրԹօ. տե՛ս քանքէռօ:

Կանքռէննա. տե՛ս քանկրէննա:

Կանֆօրա. տե՛ս քամբհօռա:

Կաչչիու. տե՛ս Թէրրա քամէդքում երկրաբուրԹում:

ԿասԹանէա, լս: քասԹանեօ, խս: շաԹէննեը, գղղ: չէանըլԹ, անգղ: գէհիլ կամ ասպուֆաուվա, արբ: շապարուԹ, ոկր: գէսդանէ, տճ: և ըստ մեզ՝ շագանակ: Ն պտուղ ինչ եռակելվ. որոյ առաջին կեղևն է փշալից, որ ի հասանելն ինքնին բաց ցեալ լինի ընդ մէջ: ԳոյացուԹե ատրա կամ միջուկն՝ որ է ապխատակ և կարծր՝ լինի կերակուր, նաև գեղ

լուծման արգանդն կանանց, յորում դիպուածն վռնասանակ տեռատեսական արեան հոսի հնութ ապիսակզն է անուցիչ և սեղմիչ բնութեաբ:

Կաստօռ, կամ Ֆիպէռ, լտ: քաստօռօ, իտ: քաստօռէօմ, գղղ: տէի պիվըռ, անգղ: գոնտուզ, տճ: սէկիսաղ, պր: և ըստ մեզ՝ կուղը, կամ բէշկմշկոյ: Է տեսակ մի երկաքենցաղ քաուտանուոյ՝ ի չափ վեցամսեայ խոզի, որոյ մինն կշռէ մինչև 10-20 օկայ. գլուխն նորա նման է գլխոյ լեռնային ոչխաբ, կամ չան, աչքն փոքրիկ յոյժ, ականջքն կարճ, բոլորչի, և թաւամազուտ: Բայց՝ ի վեշտասան աստղմանց կարգեցոյ՝ ի ծայրել, ունի չորս ևս մեծագոյնս հատուս. որովք կրծէ և կտրէ զփայտս, և զծառս մեծամեծս: Մորթ նորա տովտրաբար գորշագոյն. բայց պատանի և սպիտակ, որ լաւագոյն համարեալ է և տաւարել մեծագին, զի տակաւապիսա է. ունի՝ ի թիկնամէջն, և՝ ի պարանոցն է թևապոյն, փայլուն, կարծր, և երկայն իբր բմաչափ. իսկ փորն մեխրապոյն, և տաւարել կարծր. ոտքն կարճ, որոց տաւարջինքն նման են չանց, որովք վարին՝ ի տեղի ձեռաց. իսկ յետինքն իբրև զծովային խոզից ևից գրլով մատանց մնաչկաս, պատշտճեալքատ՝ ի լուլել՝ ի ջուրս. տուան ձկնաձև լերկ և կապտագոյն. համ մսոյ մանաւանդ յետին կողման մարմնոյ նորա՝ ունի զհամ մսոյ ձկան. միանուանքն պարարտ և ուժեղ. թոքն բլթակաւոր՝ որպէս և լեարդ նորա. փայծաղն փոքրիկ, բոլորակ, և կարծր, իսկ բնութենն քաղցր հեզնիկ և դիւրընտել: Ի՝ ներքոյ որովայնի կրէ քառեակ պարկս, որ է գոյացութեն ինչ թաղանթային, մէնն կարմիր, ջլաձից, խժային, ծանրահոտ և տտպահամ, միանգամայն գառն, որ լինի դեղ աղդուընդդէմ ջլային ախտանոտուածե, վերնոտուածե, արգանդացաւուածե, նուազուածե ամսական պարտուց կանանց, անդամալուծուածե, և այլոց այսպիսի ախտից առնելոց՝ ի թուլուածէ. զի է խթիչ, և խաղաղիչ բնութե: Եւ՝ ի մանաւանդ՝ ի բարեխառնել զամբոխեալ դալարչիս արգանդի, ՝ի խափանել զյղնցուածն, կամ զբռնի շարժուածն միանանց, ՝ի բուժել զառենդն որ կոչի հիսաբացուոյ՝ թիֆօ, և՝ ի նպաստել տղայոբերից: Ձափն՝ ի 10 ցարեննոյ մինչև ց30 յաւուրն՝ խառն ընդ ւ և ևցէ հաւեմայնի ջրոյ: Փոչի սորա վարի և՝ ի հաստադեղս, կամ՝ ի հաստ,

այլ թաղանթն և ջնջեք այսր գոյացութիւնն վարին յոգի գինւոյ, և՝ ի ցքուց: Ջայս գոյացութիւն խառնեցիք կոչեն՝ քաղթօռօ: Աւտապ՝ ձիւղէյտէս, կամ պէնէսաիր. և պարսք՝ օղլան աչի: Իսկ տաճիկք՝ գուռնատուզ Հաեասի: Այս կենդանի սովորաբար գտանի յեւրոպիա, և յամերիկայ, նա յաւէտ՝ ուսատան: Կերակրի՝ ի ջուրս՝ ձկամբք և խեցեմորք. իսկ՝ ի ցամաքի՝ բուսովք, ուտելով զտերևս, զպտուղս, նաև զկեղև և զփայտ ծառոց:

Քաասխա Ֆինլանդիա, լտ: քասխա, իտ: քաս, գալղ: բըրձինկ քէշլէ, անգղ: հրեաբլէմսկէ, արբ, և տճ: և ըստ մէջ՝ կասխայ: Ի եղեգնաձև պտուղ ինչ կարծրակեղև, երկայն լեր բազկաչափ, և ըստուար բնաչափ. որոյ գոյն՝ ի սկզբան՝ է կանաչ, և ապա առ սակաւ սակաւ թխացեալ սևանայ, և՝ ի միջի իւրում պարունակէ զմածուցիկ և զեաւս հիւթ ինչ թանձրամած մեղրանման քաղցր՝ ի խորշս խորշս թաղանթատեսակ, այլ խիտ անջրպետիւք բաժանեալ. յիւրաքանչիւր խորշս ունելով և կորիզս ըստուարս և ձևացեալս իբրև զկորիզս եղջերենւոյ. և այն հիւթ է դեղ ազնիւ ընդդէմ անդուրեայ որովայնի, և ամենակերպ ջերմնատուչըր տենդից, և բարբոքականութեաց. զի է զովացուցիչ, թուլացուցիչ, և մեղմապէս լուծիչ: Ձափն՝ ի կէս ունկւոյ մինչև ցերկու: Ծառ տորա բուսանի՝ ի հնդկիա, յեգիպտոս, և յամերիկա. լինի՝ ի պարտէզս և՝ ի խոնաւուտեղիս. ածի իբրև 30 ոտնաչափ. ճիւղալից է և գորշակեղև. տերև նորա թանձր է երկայնաձև և սրածայր. ծաղիկքն հինգթերթեան դեղնափոյն, և ախորժահոտ, որք փունջս փունջս վրթին՝ ի ծայրս կանթից:

Քավալլօ. տես էգուուս:

Քավավէնա. բառիս այս ըստ անդամոցն ցրցանի՝ երակ ինչ գլխաւորապէս ծագեալ՝ ի կորն թարդ մանէ լերդին, յորմէ իբրև՝ ի բնոյ չուռալ ղեն բազում երակք. որ կոչի և վէնամանա, կամ վէնա մատրէ, և կամ վէնա ռատիչէ. այսինքն երակ կաթուն:

Քարտոպէ, կամ տուչչինում էլէքթրիքում, և կամ ամուաչինթուինում, լտ: տուչչինօ, կամ տունա ճիալա, իտ: ախուքաէն, գղղ: սըքսինկ, անգղ: էլէքթրօն, յն: պէհրինպար, տճ: պահռաման, արբ: և ըստ

մեզ՝ սաթ: Ն գոյացութեն կարային, կարծր, ջոր, բեկանուտ, անպայտ, Թափանցիկ, գիւրավառ, և տապահամ. գոյն սորա սովորաբար է կարմրախատն դեղին. բայց գտանի և սպիտակ հարեալ՝ի գոյն դեղին, որ ալնուագոյն համարեալ է և առաւել Թանկագին. որ շփեալ մատամբք, արձակէ հոտ անոյշ, և յայնժամ հանգոյն մագնիսի լինքն քարշէ գլարդ և զմազ. և վասն այսորիկ անուանեցաւ քառապէ, որ է բառ պարսկական, և առաջաբանի յարդապարշ. նակ արկեալ՝ի հուր՝ վառի, և բուրէ հոտ զազիր իբրև ղհոտ կապոյ: Բազումք վկայեն և այնգեն, Թէ աա է տեսակ ինչ խիժոյ. որ սովորաբար գտանի՝ի կողմանս բրուսիոյ, նա յաւէտ յեզերս սամլանտիայ գտաւռին ընկեցեալ յալեաց պալտիկ ծովու բըռնութեամբ հիւսիսային և արևմտեան հողմոց. որ՝ի սկզբան անդ՝է լայծ, և ապա ընդերկար ծածանեալ յերեսս ջուրց ծովու այնպանայ, որ յայտ անտի է, զի յալով անգամ գտանին՝ի զանգուածն նորա միջատք տարբք, տերևք, և այլ այսպիսիք: Ն. յոյ գոյացութեան լի է իւղով, հանդերձ տապահամ և ընդական աղիւ. յորմէ յօրինեն դեղ ազդոցական ընդդէմ գլխացաւութե, սկսրութե ջղաց, և Թուխի. գ. է խթիչ բնութե: Ղափն՝ի 10 ցորեննոյ մինչև ցյ0 յաւուրն՝ խառն այլ յարմարագոյն դեղորէքսութ: Դոյնպէս և սորա ծուխն օգտակար է ընդդէմ հարբխոյ, և ցաւոց գլխոյ առնելոց՝ի ցրտոյ, յորժամ արկեալ՝ի հուր՝ ախտակիրն լինքն ձգէ ընդծուխն:

Քարեամօ. տես քհարեամուա Թինքեօռխուա:

Քարեխլակօ, լտ: քառեխլաձինէ, կամ Թէնեռւմէ, իտ: կէյրէք կամ կէմիւրաէք և կիմ գեռատակ գէմիլ, տճ: գարգուեա, տրք: և ըս մեզ՝ աճատ, կամ գեղձ: Ն ազգ մինչ մանին մարմնոյ, որ է քընքուշ քան զրտակը, և պինդ քան զմիս. տափարակ, դիւրակոր, Թաղանեթային, և անզգայ. որպիսի գտանի՝ի ունգուեն, յականջս,՝ի ծայրս կողից,՝ի խըռչափոյն,՝ի խառնուածս մարդ և՝ոսկերաց և յայլ մասունս կենդանւոյ: Բայց ոչ բնաւ տարբերի յոսկերէ, և կատարէ զգործ այնր, և բազում անգամ՝ի բարգաւաճեալ հասակին գտանոյ յոսկր:

Քարեօքհլլաեա վուլկատես, կամ ձէուժ ուռպանուժ, լտ: քառեօֆիլլաեա, իտ: սէնուաէ օֆ

Ֆիսինալ, գղղ: քէրիօքիլ, անգղ: Ե բոյս երկայն եւ բոլոր երկու ոտնաչափ, նուրբ, անհարթ, և բազմաճիւղ, որոյ տերևն է երկայն, անհարթ, կարծր, եզերատեղձ, մէջին կանաչ, և աղուամազուտ: Ծաղկին եւանէ 'ի գագաթան, և է բազմաթերնագոյն • պտուղն գնատակաձև, և երկայնականթ, ունի և կորնզս երկայնաձև: Իսկ արմատն երկայն, ալուաքուսատ թուխ, իսկ'ի ներքուստ սպիտակ, չըր չատատեալ նուրբ թելովք, զոր ճմլեալ մատամբք արձակէ զհոտ մեխակի • Հասնի է գառն մինուդայն և հասմեմային • յորմէ կազմեն դեղ միջահատական աեներից, հարբխոյ, ցաւոց գլխոյ և նուազմանարտի աւերելոց յուժգնութէ • զի է թուլացուցիչ բնութէ • և 'ի գործածութէ պարտ է պահել զչափ քանակութէ, որով սովոր եմք 'ի վար արկանել զկեղնն կոչեցեալ քինա քինա: Սա յաճախեալ է 'ի կողմանս եւրոպոյ 'ի ցանկապատս և 'ի պարարտ տեղիս՝ անդարմանի 'ի մարդկանէ • զի է ցնդական խլորիլ և աղիս:

Քարիօքհիլլուս առոմաթիքուս, կամ էուճէնիա քաւիօքհիլլաթա, լտ: կառօֆանի, իտ: ժիռօֆլէս, կամ ճէռօֆլիւէ, գղղ: քլօվըս, անգլ: արօնֆիլ, արբ: քաւանֆիլ, տճ: և ըստ մեզ՝ մեխակ: Ե փոքրիկ բևեռաձև պտուղ ինչ ծառոյ իրիք եղեալ 'ի կողմանս հնդկաց և Ճեաբօնայ, զոր ծառ մեխակաբեր անուանեն • ըստ կեղևոյն նման է ձիթենւոյ, և է բազմատեսակ, և տերևալից • արտաքրէ ծաղկիկս բազմաթիթև • որք զառաջինն սպիտակ են, յետոյ կանաչագոյն, հուսկ յետոյ 'ի գոյն կարմիր փոխին և պնդանան, և յայնժամ են ախրատէս մեխակ • զոր բնակիչք երկրին սկսանին ժողովել յամենայն հոկտեմբերի մինչև ցփետրվար, և ջրատցուցանեն յարևու, որք լինին մինչև դեղնին, անուշահոտ, և սրտհոտ, որք և ղեղու ծաւքողին կիզեն • յորոց գործեմք դեղ ազդու ընդդէմ ճնատակար հևութոց, տկարութէ ստամոքսի, և գլխոյ և կաթուածոց լեզուի, զի է խթիչ բնութ: 'ի սմանէ եղուզանեն նաև զիւղ ինչ մինչև կարմիր սատկահոտ, և կարի սրտհոտ, միանգամայն և դեղ ճեղմիչ ցաւոց ստամանց: Ձսկին յերիք չթէ մինչև ցց, զոր պարտ է կաթեցուցանել 'ի վերայ դոյզն ինչ բամբակի և դնել 'ի ծակոյին փտեալ ատամանն:

Քարպուն[illegible]լուս, լտ: քաւռպօնկօ, կամ քառ-

պունքօ, իտ: իւմուռճակ, իւմռու, տճ: գուպպէ, արբ: և ըստ մեզ՝ ելունդն կամ պալար ժատախտին. է այտուց ինչ դժնդակ, և սաստկակսկիծ, որ սովորաբար 'ի վեր երևի յաճուկս, յանթատակս, կամ յանութս, յետին կողմունս ականջաց, և 'ի խռչափողս, և տոչորեալ ապականէ զհիւթս մարմնոյ, որ և բազում անգամ սպանանէ զմարդ:

Քարվի, կամ քառում քառվի, լտ: քառվի, կամ քօմինօ թէտէսքօ, իտ: քէրէվէ, անդղ: գէֆէ քիմեօնու, կամ ֆռէնկ գիմեօնու, տճ: Է բոյս բազմացօղուն՝ բուսեալ յեւրոպիա և 'ի գերմանիա իբր մի և կէս ոտնաչափ բարձրութ՟: Տերև նորա պայծառ կանաչ է և եզերահերձ. ծաղիկն սպիտակ, հինգթերթեան և խորտաբորտ. բերէ և սերմն երկայնաձև, դարոնագոյն, տապահամ, համեմային, միանգամայն և կծանօղ լեզուի: Իսկ արմատն երկայն, պարարտ, սպիտակ, և քաղցրահամ: Այս բոյս առատ է ջերմահամ իւղով, և ցնդական աղիւ. որոյ սերմն 'ի լատինացւոց կոչի՝ սէմէն քառվի. զոր վարեմք 'ի դիպուածս փքային խթից, միջահատական տենդից, և տկարութ՟ ստամոքսի առթելոց 'ի թուլութ՟. զի է խթիչ բնութ՟: Չափն փոշւոյ 'ի 20 ցորենոյ մինչև ց60. խառն ջրով, կամ այլ յարմարաւոր դեղորէիւք: Իսկ չափ խաշուին պարտի լինել ունկի մի ը՟ լիտր մի ջրոյ, զոր օրէն է եռացուցանել խուն ինչ: Ունի և մասնաւոր ինչ գործունէութ՟ 'ի յաճեցուցանել զկաթն կանանց:

Քարտամօմում մինուս, կամ ամօմում քարտամօմում, լտ: քառտամօմօ մինօռէ, իտ: բրթի քառտամօմ, դղղ: լէսսըր քարտէմըմ, անդղ: գագուլէ, տճ: հապպէհան, արբ: հայլ, կամ հիիլ, պր: և ը՟ մեզ՝ շուշմիր կամ հիլ: Է պտուղ ինչ չոր, մաշկատեսակ, եռանկիւնաձև, սրածայր, և սպիտակ, ունելով 'ի միջի հատս մանունս, կարծրս, շիկակարմիրս, անուշահոտս, և ջերմահամս. զորս 'ի բաց հանեալ 'ի պտղոյ անտի՝ 'ի վար արկանեն 'ի դիպուածս տկարութ՟ ստամոքսի, և ջղաց, և 'ի մասնաւորի ցաւոց որովայնի առթելոց 'ի փքոտուէ՟, զի է խթիչ բնութ՟: Բոյս սորա բուսանի 'ի հնդիկս, և տճի իբրև զփոքրիկ ծառ. տերևք նորա մթին կանաչ են և սրածայր, որք երեք երեք ելանեն 'ի վերայ միոյ կանթի: Կայ և տեսակ ինչ այսր պտղոյ. զոր լա-

ինք՝ քաւուամամուամ մասեուս կոչեն, որ Թէպէտ մեծ է յոյժ, սակայն ըստ մասին ներգործուԹեանն սաուրին է քան զաւաչինն:

Քարտխաշճիա, լտ: իւրէք աղլուխը, ամ: և ըստ մեզ՝ սրատիսօԹուԹիւն. տես հա. ա. երես 344:

ՔարտիՀիատէ, լտ: իւրէք ԹուԹուշմասը կամ իւ֊ ֆիւնէԹի, ամ: մուհրիւքանի քայլպ, արբ: կիրմի տիլ, պր: և ըստ մեզ՝ բորբոքուման սրտի. տես հտ. ա. երես 93:

Քարտուս պէնէտիքԹուս, կամ չէնԹատուուէա պէ֊ նէտիքԹա, լտ: քաւսօ սանԹօ, իտ: շաւսօն պէնի, գղղ: պլէսսըտ Թհիսսըլ, անգլ: չէֆքէՀ օԹու, ամ: լահլահ, արբ: Ի բոյս ինչ, որոյ ցօղունն է երկայն եւր երեք ոտնաչափ, սուուսր, բազմաճիւղ, և բըր֊ դալից: Տերև սուր լայն է և հերձուտ՝ նման ըս խմիք տերևոյ Թարթաքսաքուամ անուանեալ բուսոյ, և է փշա֊ լից: Ծաղիկքն դեղնագոյն, և հերձուտ, որք փունջս փունջս վՀԹին՝ ի վերայ գնուտակաձև, և Թեփալից հատիկ. բերէ և սերմն բամբակալից, մոխրագոյն՝ ի ձև փոքրիկ մեխակի: Խակ արմատն փոքրիկ է և նուրբ: Բուսանի յամենայն ուրեք՝ ի լերինս և՝ ի դաչտավայրս: Ի է խաղով և գոյացական աղիս. ո֊ րոյ տերևն եփեալ՝ ի ջուր և արբուցեալ, դեղ է մի֊ ջահատական տենդից, ախտից ստամոքսի, ջրգողուե֊ նուտպուԹեանն դաչտանի և ցրտահարուԹեան. զի է մեղ֊ մապէս Թուլացուցիչ և քրտնեցուցիչ բնուԹեամբ: Ջաւին՝ ի վեց տրամ մինչև ցուԹ խառն ընդ մի֊ ևսր ջրոյ. և՝ ի մանուտրի զօրէ՝ ի ստատկել զձգիս որովայնի: Ջնոյն ունին գործունէուԹիւն սերմն և՝ ի ցքահանէ եղուզեալ ջուրն:

Քարդհարիատս, կամ քանիս մատինուս, լտ: բէչէ տի քանէ, կամ քան մատինս, իտ: ռըքէն կմ կուան չինէն տը մէռ, գղղ: հաւէ, անգլ, և սպան": գէօբէք պալըղը, ամ: գէլսպ իլ պահրի, արբ: և ըստ մեզ՝ չանաձուկն: Ի մեծ և ահապնատեսիլ ձուկն որոյ մին կշռէ մինչև 1000 օխայ, կամ ևս աւելի. գլուխ նորա նման է գլխոյ շան, յորմէ կալաւ և զանունն. բերան երկայն և լայնաբաց. ատամունքն մեծ և սա֊ փարակ, սղոցաձև և սրածայր, աչքն լայնաբաց. տուան երկայն իրը մի և կէս ոտնաչափ և երկձիղ: Երկու Թիակաձև Թևս ունի, որք ծառայեն նմա՝ ի լողալ, և է կատաղի յոյժ և գիշակեր. և սակն Թէ

ամբողջ կլանէ զձուկն, զանասունս, և զմարդ: Իսկ միսն թէպէտ պարարտ է յոյժ, այլ անհամ, զորոյ զճարպն վառեն 'ի կանթեղս փոխանակ ձիթոյ. այլ ուղեղ նորա չորացուցեալ և փոշիացուցեալ՝ լինի դեղ երիկամնաժետութեան: Չափն 'ի 20 ցորենոյ մինչև ց60. և ըստ ոմանց՝ օգտէ և տղայաբերից:

Քարօթա, կամ տաուքուս քառօթա, լտ: քառօթ, դղղ: քէրրըթ, անգղ: էլաֆօս, կամ վօսկօ, յն: կէզար, կամ լաքլավին, կամ ճէզէր կամ կէզի, կմ ճէզար, արբ: զէթզէմին, կամ կէզզէռ, պր: հավուճ, տճ: և ըստ մեզ՝ գազար, կամ ստեպղին: Է արմատ ինչ ստուար, երկայն, բոլորակաձև, սրածայր, պարարտ, մսալիր, կակուղ, և քաղցրահամ, զոր և ուտեն իսկ. գոյն նորա սովորաբար է կարմիր, բայց յոմանս տեղիս լինի և դեղին, սպիտակ, և կապտագոյն. յորմէ կազմեն և դեղ միզարգելուլութեան, և փորհարութեան առթելոց 'ի յուժգնութեան. զի է սնուցիչ և թուլացուցիչ բնութեան, և 'ի մասնաւորի 'ի լուծանել զքար գոյացեալ յերիկամունս մարդոյ և 'ի յորդել զարիւնն դաշտանի: Չափն յութ տրամէ մինչև ց12 խառն ընդ մի և կէս լիտր ջրոյ: Բոյս սորա է երկայն իբր երեք ոտնաչափ, բոլորակաձև, սակաւաբուրդ, և մէջն դատարկ. տերևն կանաչ, եզերահերձ, թաւամազուտ, և հաճոյահամ, միանգամայն և դեղ առողջացուցիչ վիրաց. իսկ սերմն հոտաւէտ, և կծուահամ. յորմէ յօրինեն դեղ ազդու ընդդէմ աղտեղալի վիրաց, և խլրդենւոյ. զի է խթիչ և ճճէհալած բնութեան:

Քաքաօ, կամ թհէօպրօմա քաքքաօ, լտ: նոյնպէս իտ, գղղ, և գերմ: չօքօլէյթ նըթ թրի, անգղ: և ըստ մեզ՝ գագաօ: Է պտուղ ամերիկեան մեծութեան 'ի չափ հասարակ սեխի, երկայնաձև, սրածայր, և աղուամազուտ. և 'ի միջի ունի նշաձև և մաշկակեղև հատս բազումս, և 'ի մէջ նոցա գոյացութիւնք սեաւք, իւղայինք, և հաճոյահամք, յորոց խածղեալ՝ և խառնեալ ընդ այլ նիւթս, յօրինեն զըմպելին կոչեցեալ չիօքքօլաթա: Կազմեմք 'ի սոցանէ նաև դեղ ազդու ընդդէմ կոկորդային հազի, ոմանց խթից, երիկամնաժետութեան, դժուարամիզութեան, վիրաց փամփշտոյ, արիւնային փորհարութեան. այլ և լուծանէ զքար եթէ գտցի ընդ անցս միզի. զի է սնուցիչ, կակղացուցիչ և լպրծացուցիչ բնութեան: 'Ի սմանէ

ելուզանեն զիւղ ինչ թանձրամած, զոր իտալացիք կոչեն պութիռօտի քաքաօ, այսինքն կոդի գագաօի. զոր մարթ է 'ի կիր արկանել 'ի դիպուածս ճեղքուածոց մորթոյ, այտուցից պտկանց ստեանց կանանց, խթից սրբանին, և կոյր թանչից: Ծառ սորա զոր կոչեն՝ քաքավէլէ, միջակ է ըստ երկայնութ̄ և ըստ թանձրութ̄. տերևն նման է տերևոյ նարնջոյ, բայց երկայն և սրածայր քան զայն, իսկ ծաղիկն լայնաբաց է և դեղնագոյն:

Քաքէսսիա, իտ: միճազսըզլը,ք, կամ հաստամիճազ, տճ: սուիլքըիէ, արբ: և ըստ մեզ՝ ախտագնութ̄, կամ դժգունութ̄. որ է երկարատև դըժգունութ̄ ինչ դիմաց հանդերձ տկարութ̄, և դըժուարաչնչութ̄:

Քաքթուս օբունթիա, կամ օբունթիա, լտ: Ֆիքօ տ' ինտիա կմ Ֆռիթթէլլէ, իտ: Ֆիկիէ տ' էնտ, կամ ռագէթ, և կամ քառտաս, գղղ: բրիքլի բէյր, անգղ: թին սառաֆէնտի, կամ թին պիշօք, արբ: թիքէնլի ինճիր, կամ հինտ ինճիրի, տճ: և ըստ մեզ ստուգաբանի՝ թուզ հնդկային կամ թուզ փշալից: Պտուղ ինչ երկայնաձև, թանձրակեղև, կանաչագոյն, և փշալից. զոր 'ի բաց հանեալ՝ զմիջինն ողջոյն ուտեն, որ է թամբալից, մածուցիկ, դեղնագոյն, և քաղցր իբրև զթութ, միանդամայն և զովացուցիչ բնութ̄. ունի և կորիզս թխագոյն, ոսպնաչափ մեծութ̄: Բոյս նորա բուսանի 'ի հնդիկս, յափրիկէ, և յեգիպտոս, լինի 'ի պարարտ և 'ի խոնաւ տեղիս. աճի իբրև զծառ փոքրիկ, այլ առանց ոստոց ամենևին, և փոխանակ ոստոց արձակէ տերևս սակաւաքանակս 'ի վերայ իրերաց, որք են մեծ լայն, և երկայն 'ի չափ ոտին մարդոյ, թանձր, ջղալից, կարծր, կանաչ հարեալ 'ի գոյն կապոյտ, պալարալից, և փշալիր. մէջ նոցա մսալիր է և խըժային, միանդամայն և դեղ ցրուիչ այտուցից, մեղմիչ ցաւոց, և ձգիչ. զոր ընդ մէջ բացեալ, դնեն 'ի վերայ վշտագնեալ մասին մարմնոյ:

Քաֆֆէ արապիքա, լտ, քաֆֆէ, իտ. և գղղ, անգղ: պուն, կամ ահուէ, և կամ պըն, արբ: քահվէ, տճ: և ըստ մեզ՝ սուրճ: Է պտուղ ինչ փոքրիկ, ոլոռնաձև, կարծր, խողովակաւոր, խժային, փոքր մի դառն, մաշկապատ, և կանաչագոյն, այլ 'ի հասանելն փոխի 'ի գոյն մոխրոյ. ունի և զիւղս առատս

և զաղս ցնդականս: Կրկնակի է որակութիւն սորա, այսինքն օգտակար, և վնասակար. քանզի եթէ չափաւորապէս արբեալ լիցի երկու կամ երեք անգամ յաւուրն, օգտէ մարսողութեան, ծանրութեան գլխոյ, և զդաստութեան մտաց, և փոխանակէ զտեղի քնոյ, մինչև յերկար տքնութեան ոչ ինչ նեղութիւն զգալ: Իսկ չափազանցն՝ վնաս է ջղաց, և ստամոքսի, երբեմն և պատճառէ զանմարսութիւն, և զջղային դժուարամարսութիւն, և երբեմն ևս զկաթուածս, և զանդամալուծութիւնս, և ևս զբաղխումն կենդանական ոգւոյ. զցնցումն մկանանց և ջղաց, և զախոնդանոտութիւնս. զի է խթիչ բնութեան: Ծառ սորա բուսանի յերջանիկն արաբիա, 'ի հնդիկս և յամերիկայ, աճի միջակ ըստ մեծութեան. կեղև նորա նուրբ է և գորշագոյն, և տարրացեալ ընդ բնոյն. փայտն թիւրաթեք, և բեկանուտ. տերևն մշտադալար, և խիտ՝ նման ըստ իմիք վայրի շագանակենւոյ. իսկ ծաղիկն սպիտակ, շքեղատեսիլ, և հոտաւէտ, որք երկու երկու բուսանին 'ի վերայ միոյ կանթի. և իւրաքանչիւր ծաղիկ արտադրէ մի միայն պտուղ կեռասաչափ մեծութեան, որ այն ինքն է սուրճ: Գտանի և յեթովպիա, որ գերազանց է քան զամենեսին, և այնչափ իւղային, զի յորժամ եփի՝ իւղն 'ի կայլակս փայլակս ծածանի յերեսս ջրոյն. վասն որոյ նոքին իսկ քաղաքապետք և մեծամեծք երջանիկն արաբիոյ զայս սուրճ ըմպեն:

Ի, Քէլիտօնիում մաեուս, լտ: քէլիտօնիա մաճճիօռէ, կամ չէլիտօնիա, իտ: էքլէռ, կամ կռանտ քէլիտուան, գղղ: սէլէնտայն, կմ կրէթըր սէլէնտայն, անգղ: մամիռան քէպիր, արբ: պէիւք հէլալիէ, կամ պէիւք գռլանկըճ օթու, տճ: և ըստ մեզ՝ մեծ ծիծեռնախոտ: Է բոյս դառնահամ՝ բուսեալ 'ի ցանկապատ տեղիս և 'ի խրամս որմոց իբր մի և կէս ոտնաչափ բարձրութեան: Տերև նորա նման է տերևոյ ագուիլէճիա կոչեցեալ խոտոյ, բայց մեծ և յղկեալ քան զնա: Ծաղիկն դեղին և չորեքթերթեան. պտուղն եղջերաձև, և 'ի միջի ունի սերմունս մանունս, որք բերեն զնմանութիւն մեկոնի: Իսկ արմատն թելալից, և ստուար 'ի չափ ճկոյթ մատին մարդոյ. միանգամայն և դեղ ջրգողութեան, դալկան, ախտագնութեան, և ախտից մորթոյ. զի է մեղմապէս խթիչ, և միզիչ բնութեան: Չափն մի ունկի՝ ընդ մի լիտր ջրոյ: Զնոյն գործունէութիւն ունի 'ի ցքահանէ

ելուզեալ ջուրն։ Նախնիք 'ի կիր արկանէին 'ի ջրոյ ատի 'ի փարատել զցաւս աչաց, և 'ի սրել զտեսութիւնս. բայց այժմ սակաւ 'ի գործ արկանի յարևմուտս։ Է նորա և այլ տեսակ, զոր լատինք՝ քէլիտօնիում մինուս կոչեն. որ ամենայն որպիսութ՟ք՟ն է նման առաջնոյն, բայց միայն փոքրագոյն լինի քան զնա։

Քէռմէզ. տե՛ս քօչ չիօնէլլա։

Քէռմէզ մինէռալէ, կամ թէռմօսսիտօ տի անթիմօնիօ սօլֆուռաթօ ռօսսօ, իտ։ թհէռմօսսիտում սթիպիի սօլբհուռաթում ռուպռում, լտ։ օսսիտօ տ՝ անթիմօան իտռօսիւլֆիւռ ռուժ, գղղ։ ռէտ սըլֆըրըտ թհէռմօզիտ օվ էնթիմընի, անգղ։ գռմզ մատանէ, տճ։ Է բաղադրական նիւթ ինչ մթին կարմիր, և անհոտ, կազմեալ 'ի յանթիմօնէ, և յիւղոյ շնչբորակի։ Կրկնակի է որակութ՟ի սորա. քանզի եթէ առցէ ոք 'ի սմանէ երեք կամ չորս ցորենաչափ երկու կամ երեք անգամ յաւուրն, լինի բնութ՟ թուլացուցիչ, միանգամայն և դեզ փարատիչ բորբոքման թոքոց, և լանջամաշկի, կշտացաւութեան, շնչարգելութ՟ն, հնագոյն հազից, և հարբխոյ իջելոյ 'ի կուրծս, և այլ սոցին նման որոգայթաւոր ախտից առթելոց յուժգնութ՟է։ Եւ 'ի մասնաւորի ախտից մորթոյ, ոտնառութ՟ն, ցաւոց յօդուածոց, և այտուցից մսանաց։ Իսկ չափազանցն՝ տաղտկացուցանէ, ործացուցանէ, և լուծանէ։

Քիլուս, լտ։ քիլօ, իտ։ քիլօս, յն։ և ըստ մեզ՝ մամաց, որով անուամբ իմանի՝ կատարելագոյն մարսեցեալ զուտ հեղուկ սպիտակորակ մասն կերակրոյ՝ որ 'ի ստամոքսէ իջեալ 'ի խախացոցն՝ անդէն ստանայ զիսկական զիւրն բնութ՟ի միջնորդութ՟ բնաւորական զօրութ՟ն խախացոցի, և լերդի, որ պատեալ կայ զխախացոցիւ. և անտի մասունքն առաւել ոգեղէն՝ նրբագոյն՝ և լոյծ, ցնդեալ մասնաւոր իմն ջերմութ՟ սպրդեալ ընդմտանեն 'ի ներքին ծակտիս մերձադիր մարմնոյ. և այդպէս ճապաղեալ տարածի ներգործութ՟ի նոցին ընդ մարմինն բովանդակ, յորմէ և զհետ գայ իսկ և իսկ ստացումն զօրութ՟ն 'ի ճաշակել կերակրոյ, կամ ըմպելւոյ. բաց յայսմանէ և երակք անուանեալ մեսերականք, և կաթնեղէնք, ծծեալ զհիւթն զայն յստակագոյն՝ գաղտնի իմն ճանապարհաւ սողեալ ընդ մէջ ողանց քամակին,

մտանեն յերակս կոչեցելս ստորանրակեանս, և խառ-
նեալ ընդ արեան, փոխին ապա առ սակաւ սակաւ
յարիւն, և արիւնն փոխի հետզհետէ 'ի մարմին.
այսինքն՝ 'ի միս, 'ի ջիղս, 'ի նեարդս, 'ի թոքս, յու-
ղեղն և 'ի կենսական ոգիս: Իսկ մնացեալ մասունքն
դրտալից, և հմագոյն՝ ընդ ոլորտս աղեաց անցեալ
վանին արտաքս: Բայց գիտել արժան է յայսմ վայ-
րի, եթէ մամացն 'ի վերոյիշեալ ստորանրակեան ե-
րակունս խառնեալ ընդ արեան բազմապատիկ շա-
ռաւիղօք, և ճիւղօք շրջշրջեալ ընդ մարմինն բովան-
դակ, և բարիոք ևս եփեալ զտի 'ի յաւելորդաց որք
անպիտան են առ սնունդ. Նախ՝ 'ի ժամանելն 'ի
լեարդ արտաքս վանէ յինքենէ զմաղձ իմն աւելորդ,
զոր ընկալեալ բուշտ մաղձին՝ հեղու յաղիսն. և այս
աւելորդ մաղձն ունի զերրեակ պաշտօնս. Նախ ծա-
ռայէ 'ի լուծանել 'ի հեղուկս զայլ մամացս: Երկ-
րորդ՝ 'ի գրգռել զաղիսն առ 'ի դուրս վայթել զյա-
ւելուածս: Երրորդ՝ հասեալ յերիկամունս 'ի բաց
մերժէ յինքենէ զհմագոյն, և զթանձրախիտ հիւթն,
և միանգամայն զայլ յաւելուածս, որք խառն ընդ
իրեարս անցեալ գնան 'ի մէզ. և սակս այսորիկ պատ-
ճառի ներհուն բժշկաց գործ է քաջայայտ ճանաչել
'ի միզէ զներքին զիարդն արեան: Դարձեալ, գտա-
նի և այլ իմն աւելորդ հիւթ անուանեալ աւիշկ,
որ ուրոյն զատեալ պահպանի յաւիշկական անօթս
մասնաւորապէս առ 'ի ոռոգանել զցամաքուն արեան
ըստ պահանջելոյ հարկին: Երկրորդ ժաման գտեալ
'ի թոքսն՝ զօրէն օդոյ արտաքս շնչին ձանձախարիթքն
կամ մեղծքն: Հուսկ յետոյ հիւթս այս եկեալ 'ի
սիրտն և 'ի լեարդն, զգենու զվերջին կատարելա-
գործութի, այսինքն զկատարեալ արիւնացումն:

Քինաէ, կամ ռատիքս քինաէ, կամ քինա, լտ: չի-
նա, կամ ռատիքա տի չինա, կամ չինա նօտօզա, և
կամ քինա նօտօզա, իտ: էսգին, կամ սգին, և կամ
սալսըբարէյլ սգին, գղղ: քինէ ռութ, անգղ: չէօբ-
չինա, տճ: խաշապսին, արբ: Է արմատ ինչ սինէաց-
ւոց՝ ստուար իբրև զբազուկ մանկան, ոստալից,
կարծր, ծնրաւոր, թիւրաթեկ, մսալիր, մոխրագոյն
'ի ներքուստ, իսկ արտաքուստ դեղին, հարեալ 'ի
գոյն կարմիր. չունի մասնաւոր ինչ հոտ: Ընտիր հա-
մարի՝ եթէ իցէ սպիտակ արտաքուստ, ծանր, և
կարծր. յորմէ կազմեմք դեղ ախտից գաղղիականի,

և ելեւիանդականի. և ՚ի մանաւորի ոտնաւորի, յօդաւածացաւութիւն, և բորոտութիւն. զի է մաքրիչ արեան՝ թուլացուցիչ և քրտնեցուցիչ բնութեամբ: Ջաւին ՚ի ջուրս տրամ. մինչև ցճ, խառն ընդ երեք լիտր ջրոյ, զոր պարտ է եռացուցանել և ՚ի կիր արկանել զօրէն սալսաբարիլիան: Բոյս սորա բուսանի ՚ի էլն, ՚ի Ճիաբօն, ՚ի պարաս, և ՚ի Հնդիկս, լինի յանտառս և ՚ի դաշտավայրս. արմատէ ոստս կամ բարձունակս փայտային, յօդաւորս և վիշաւորս, որք տարածին ընդ երկիր և պատատին զծառուովք հանգոյն բալենւոյն: Տերևք նորա մեծ են և արտաձև նման ըստ իմիք կեռասենւոյ: Ծաղիկն ելանէ առ կանթիւ տերևոյն, և է վեցթերթեան, ողկուզաձև, և ժժգոյն դեղին: Իսկ պտուղն ոսկեգոյն, մեծութեամբ ՚ի չափ կեռասենւոյ. ունի և զկորիզս ոսկնաձևս: Այս բոյս կոչի ՚ի լատինացւոց՝ սիլաքա քինա:

Քինա քինա. տե՛ս քինքհօնա օֆֆիչինալիս:

Քինքհօնա, կամ չինքհօնա օֆֆիչինալիս, կամ քինա քինա, կամ քօռթէքս բէրուվիանուս, լս: քինա, կամ քինաքինա, և կամ քինա տէլ բէռու, և կամ քինա առանչնաթա, իտ: քէնքինա, գղզ: բէրուվիկն պարզ, կամ տհիտատոք, և կամ եէանիլթ՚ս պարզ, անգղ: գնա գնա, տճ: կըշռ իլ տիւնեա ճէատ, արբ: և բատ մեզ՝ դառնիչ բերուայ, կամ կեղև բերուայ: Է գերահռչակ կեղև ինչ մեծին կարմիր, նմանեալ գոնով կինամոնի, որ բազմատեսակ է յոյժ բատ այլ և այլ օդոյ գաւառացն ակնապիտացեալ որպէս կուգէ, այլ ընտրագոյն համարի եկեալն ՚ի բերուայ և ՚ի լօսատ քաղաքէ ամերիկոյ. յորմէ և ծառ նորա առ լատինացիս յորջորջի՝ առպօռ չինքհօնա, կամ առպօռ ֆէպրիֆուկա, այսինքն ծառ տենդահալած: Գերազանց համարի, եթէ նոցէ նուրբ, մեծին կանաչ գագոյն, և իբր քարաքռասպատ արտաքուստ, և դարունագոյն ՚ի ներքուստ. ծանր, չոր, բորբոսած հոտ, և դառնահամ, միանգամայն և սեղմիչ: Այս կեղև՝ գերահոչակ է զօրութ քան զամենայն բժշկական բուսով. զի ցրուէ զախտարծարծ հիւթս խառնելը յարեան. կազդուրէ զթուլութեն ջղաց, միանաց, և ստամոքսի, զարթուցանէ զախորժակն, բարեկարգէ զդործոզութիւնս աորին որովայնի, բարեխառնէ զամբոխեալ հիւթս մարմնոյ, արգելու զյորդաուսաց հատուածս շարաւոյ, քրտանց, սալմի և մկզի. նորոգէ

զոյժն տկարացեալ յերկար հիւանդութենէ, արծարծէ զազդեցութիւն փորային հիւթոց. բժշկէ զախտս ջղաց, աւիշկեան անօթոց, և մանրամասն երակաց, և ևս զանդամալուծութիւնս, զցաւս գլխոյ, զլուսնոտութիւն, զթոքաժէտութիւն, զփորհարութիւն, և զթանչացաւութիւն. նոյնպէս և ապաքինէ զհնագոյն վէրս քաղցկեղայինս, զխլրդենիս, զարտասուաբեր ախտն աչաց, զանհնարին հիւծութիւնս մարմնոյ, զհազս խոնաւս, զարիւնային հոսումն որովայնի, և զայլ սոցին նման ախտս առթեալս 'ի տկարութէ, և 'ի թուլութէ. զի է խթիչ և զօրացուցիչ բնութբ: 'Ի վեր քան զամենայն փարատէ զտենդս միջահատականս, և պարբերականս, և 'ի մասնաւորի երկօրեայ՝ եռօրեայ՝ քառօրեայ՝ հինգօրեայ, և բէռնիչիօզա անուանեալ տենդս: Նոյնպէս և շահաւէտ է 'ի դիպուածս ջղական տենդից կոչեցելոց յիտալացւոց՝ Ֆէպպռէ նէռվօզա, կամ մալինեա, փտախտութէ, խաղաւարտաւոր ջերմախտից, և ծաղկանց, մանաւանդ եթէ ընդ ախտիցս զուգընթաց գտանիցի քիրտն խժային, գողգոջումն վկանանց և ջղաց, գարշահոտութիւն ապաւառի, սևութիւն և չորութիւն լեզուի, նուաղումն զարկի բազկի, ևն: Բայց գիտել պա՛րտ է, զի չէ՛ օրէն ախտակրին իսկ և իսկ 'ի փարատիլ 'ի նմանէ միջահատական տենդիցն՝ զանց առնել զգործածութեամբ նորին, այլ պա՛րտ է յարատևել առ քանի ինչ շաբաթս: Մ՝եք զգերակայ դեղս զայս տամք ըստ կերպի փոշւոյ, կամ նաև իբրև խաշու: Եթէ իբրև փոշի, պա՛րտ է շինել 'ի 15 կշիռ ցորենոյ մինչև ցութ տրամ՝ վեց կամ ութ անգամ յաւուրն: Որչափ առաւել լոսեսցես 'ի փոշի մանրամաղ, այնչափ ազդու, և զօրաւոր լինի ներգործութիւն: Իսկ եղանակն զոր պահեմք 'ի տալն զխաշուն, է այս: Ա՛ռ ունկի մի՝ 'ի խոշոր փոշւոյ աստի, յաւելլով 'ի նոյն զլիտր մի ջուր հասարակ, և եփեա՛ եռացմամբ իբր քառորդ մի ժամու. յետ քամելոյ տո՛ւր հիւանդաց ժամէ 'ի ժամ երկու ունկի՝ կամ ևս աւելի մինչև լիցի 75 տրամ յաւուրն: Ընդ այսոցիկ գիտել արժան է, զի եթէ այս կեղև տացի կամ իբր փոշի, և կամ իբրև խաշու, բազում անգամ վնասէ 'ի գրգռութիւն դիւրաշարժ ստամոքաց կարի իմն քընքուշ ախտաժետաց: Եւ ընդ հակառակն՝ այսպէս ախտաժէտք յօժարութբ առնուն զնոյն կեղև քինա

քննակ ինքնուզիանէ ա ֆռէտտօ. ոյսինքն թրմոց 'ի ցուրտ ջուր: Ջայս եՐէ կամիս առնել, այլ զնոշ ըր փոշի կեղևոյս ըստ կշռոյ ունկւոյ մինոյ՝ 'ի լիտր մի ցուրտ ջրոյ. զկնի 24 ժամուց՝ հեղ զդուշութիւ յայլ անօթ ապակի, այնպէս՝ զի մի խառնեսցի մրուրն ընդ պայծառ հեղանիւթոյն. ապա յաւէլ 'ի սոյն զի կամ զերկու ունկի ջուր նարնջոյ, և տուր ըմպել հիւանդին երկու կամ եռեք անգամ յաւուրն զնչնու երից ունկեաց: Դարձեալ՝ ունի ևս մասնաւոր գործուանէութի 'ի յանփութ պահել զվէրս հնացեալս, փոքր ինչ ցանելով և եթ զսոյնս երկու անգամ յաւուրն: Նոյնպէս է դեղ պահպանիչ առաջնոց, և ընաերոց 'ի նեխուածէ: Ա յլև արժան համարիմ յուշ առնել և զսոյն, զի քանիցէ տէրէնքօ անուանեալ բդեշխն բերուայ յամին 1640, և 'ի 17 մայիսի, ծանոյց 'ի սպանիա զգործածութի, և զշահաւէտութի այսր կեղևոյ. յորոց էանց յիտալիա, և 'ի գաղղիա, և ապա յանգղիա. հոլսկ յետոյ յասիա, ուր յաւելք քան զսոյն անծանօթ էին առեներէն: Ծառատոր յաճախ բուսանի 'ի կոզմանս բերուայ. լինի 'ի լերինս և յանբեր տեղիս. ածի 'ի չափ մեծութի կեռասենւոյ: Տերև նորա է բազմատիպ, նրբայլիկ, և շուրջանակի սղոցաձև առաջնատորեալ: Ծաղկին երկայնաձև, և կարմիրերանգ: Իսկ սերմն նշաձև, և սպիտակ:

Քլավալուսօռիա. ըստ անդամոցն՝ է մին յեղջերուց եղջերաց:

Քլավիքուլա. է անուն երկուց ոսկերաց կրծոց, որք են կոր օրպէս զսաուն Մ:

Քլէմատիս ուէքթա. տե՛ս Քլամուլա:

Քլօռոզի. այսպէս անուամբ իմանի՝ ախտ ինչ մարմնոյ. որ է ախտ ինչ կանանց. զորոյ զնչանակութենն մարթիս տեսանել հտ. ա. գլ. ժբ. երես 195:

Քհալինպա, կամ սինոճնիմիա, լտ: աչքհաւօ, կամ մատեէ, իտ: տոխէ, գղզ: սթիլ, անգլ: սիտէռօ: Ին: պուլատա, արբ: չէլիկ, տճ: և ըստ մեզ՝ պրոպատա, կամ պռոպատա: Է երկաթ տատիկաւէ, կարծր, դիւրաբեկ, և առաձգական, որոյ առենաւորք փընշեն՝ որ կազմի 'ի խարտուաձոյ պողպատի, լինի դեղ Ջղային դժուարամարսութէ, ախտնդանտութէ, Ջրգողութէ, սկարրութեան տամոքսի և

ջրից, նուագուԹեան ամենակեն պարտուց կանունց, Լացանաց աւիշկեան անօԹոց, լերդի, վայծեզան, և այլ ընդերաց, Թանչախատուն աքօտպուԹիւն, խուլական ուռուցկից, դալկան, ախտից արգանդի, և գործադանաց, և այտուցկից սրունկից, և ոտից. և 'ի մեծ նաւորի 'ի յարդի ունիմք զաս 'ի դեպուածս անէմիա անուանեալ ախտի, գժգունուԹեան, երկարատեւ հիւանդուԹե, և այլ ամենակերպ խօԹուԹեց առԹելոց 'ի ԹուլուԹէ կամ 'ի տկարուԹէ. զի է խըԹիչ, զօրացուցիչ, և բացողական բնուԹիւ: Այլև ցրուէ զինասաբեր հիւԹս խառնեալս յարեւն, առատիկ զործուն և զձկիս որովայնի, նորոգէ զյաճն տկարացեալ յերկար ախտակրուԹէ, և անօարէ զԹանձրամածուԹիս արեան, և տայ նոցա ազատ և համարձակ ընԹանալ 'ի շրջանս երակաց: Ձաւին 'ի 20 կշռի ցորենոյ մինչև ց30 խառն ընդ այլ յարմար ուտելոց. զայս չափ վասն չափահասից. նակ մատաղ մանկանց 'ի 6 ցորենոյ մինչև ց16, և փոքր ինչ առաւել ըստ պիտոյուԹէ: 'Ի փոշւոյ առ ախ ընդ քնաի, կամ օշինդրախառն բաղադրուԹիւ գինւոյ կազմեն զոպին, զոր առաձիկք՝ չէլիկ ուռւհուս կոչեն: Նակ խառլիք՝ ԹինԹուռւս տի ֆէուռօ կամ մարԹէ, և կամ օսախբօմաԹօ տի ֆէուռօ, և կամ վինօ աչչնաեաղօ, որ 'ի նոյն պէտս վարի:

Քհամամէլուս, կամ մաԹռնխատիս քհամօմիլլա, կամ անԹէմիտէ, և կամ քհամամէլուն, լատ: քամոմիլլա. կամ քամամիլլա, քօԹուլա ֆէԹնատա, նատ: քամոմիլլ ատվաժ, կամ մաԹռնխէտռ քամոմիլլ, գաղղ: քօյն ֆնվերֆիւ, կամ քօրնիքէմոմիլ, անգղ: նատմոմիլ, ան: բախաԹիա, տճ: պապօնէճ, կամ հուկհֆան, արբ: քէօբէլ, պր: և ըստ մեկ՝ երիցուկ: Ե բոյս ինչ սաստկահոտ, որ բուսանի անխոնի յամենայն տեղիս եւրոպիոյ իբր մի ոտնաչափ բարձրուԹիւ: Տերև ատրա նուրբ է և հերձատ. ծաղիկն մանր, ոսկեգոյն, և դառնահամ, միանգամայն և համեմային, շրջապատեալ սպիտակ և նուրբ ԹերԹիւք, որ բերէ գնամանուԹիւն ատտել. յորմէ կազմեալք դեղ ազդաւ ընդդէմ ջղային դժուարամարսուԹե, ախտից և ցաւոց արգանդի, և ատամնաքաի, խԹից որովայնի, փքաքախուԹե, ջղացաւուԹե, երկարատև փորհարուԹե, և միջնահատական տենդից, պակասուԹե հոգման քնուԹե, և ընդհանրապէս ընդդէմ ամենայն

ախտից առնելոց ՚ի ցրտութէ, և յուժգնութենէ. զի ե թուլացուցիչ և քրտնեցուցիչ բնութիւ: Ջուկն ՚ի յերկու տրամ մինչև ցերեկու յաւուրն. զոր պարտ ե եռացուցանել մի լիտր ջրով: Գոյ և տեսակ մի երեցկի ՚ի կոլմանս եւրոպիոյ և գերմանիոյ, որ և ե խըրև զառաջինն նրբատեսակ և տերևախիտ. բայց ունի զծաղիկ մեծ և կարի սաստկահոտ, զոր լսունք՝ անթէմիս նօպիլես անուանեն, իսկ իտալք՝ քամոմիլա ռօմանա. յորմէ և կազմեն դեղ ազդուղական ՚ի պիսուածս ջղական ախտից, փքախտուբեց, ջղական խթից, ախտից արդանդի, միջահատական տենդից, տանտաուութէ, և այլ սոցին նման ախտից առնելոց ՚ի թուլութէ. զի ե խթիչ բնութեամբ, մանաւանդ. թրմոցն: Ջուկն ՚ի մի տրամ մինչև ցերկու յաւուրն. զոր օրէն ե դնել թրմոց ՚ի կէս լիտր ջուր հասարակ ժամս երիս, կամ չորս. իսկ ջափ փոշւոյն պարտի լինել մի տրամ ընդ երկու ակահակ ջուց: ՚ի սոցանէ կազմեն և զատածուխն, անուանեալ յիտալացւոց՝ ֆօմէնթօ, զոր դնեն ջերմաջերմ ՚ի վերայ ախտացեալ մասին մարմնոյ առ ՚ի ռեղմել զցաւն, և ՚ի զօրացուցանել զթուլացեալ անդամն:

Ք համան տաբհնէ, կամ մէծէռէում, կամ լատ. ռէօլա, լտ: տանֆնօխուէ, կամ մէծէռէօն, և կամ թհխիմէլա, խտ: պուա ժանթի, գղղ: սբխուրճ օլի վէ, կամ սիխուռճֆլէա, և կի տուվօրֆ պէյ, անպղ: է ծոյս լինչ, որ յաճախ բուսանի ՚ի կոլմանս եւրոպիոյ և կէս ոտնաչափ բարձրութիւ: Տերև նորա ունի նմանութիւ ընդ տերևոյ ձիթենւոյ. ծաղկին փոքրիկ, և դեղնագոյն: Պտուղն թամբալից, և կանաչագոյն. այլ ՚ի հասանիլն փոխի ՚ի գոյն կարմիր, կամ թուխ, և է թխանաւոր և փայտալից, զճաշակոյն ապանանէ. ունի և երիս կորիզս երկայնաձև, և կարծր: Իսկ արմատն կարծր է և փայտային, որոյ կեղևն ըստ ոմանց՝ դեղ է ախտի գաղղնականի, և մորթոյ:

